

«Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն

«Zoravar Sepouh» historical-political analytical center

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ԹԻՎ 1(6)

HISTORY AND POLITICS

ACADEMIC JOURNAL

№1(6)

ԵՐԵՎԱՆ 2020

Հանդեսը տպագրվում է «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Ենգոյան, Արմեն Ճուղուրյան, Արմեն Սահակյան, Բագրատ Էսդուգյան (Թուրքիա,Ստամբուլ),
Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյան, Էդիկ Մինասյան,
Ժիրայր Լիպարիտյան (ԱՄՆ, Բոստոն), Համլետ Գևորգյան, Հովսեփ Աղաջանյան, Մարտին Գիլավյան,
Վալերի Միրզոյան, Վալերի Թունյան,
Ռաֆիկ Նահապետյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Արտաշես Ղազարյան

Պատասխանատու քարտուղար՝ Թամարա Սարգսյան

СТАНОВЛЕНИЕ ХРИСТИАНСТВА В АРМЕНИИ: МИФЫ И РЕАЛИИ

ВАЛЕРИЙ ТУНЯН

Ключевые слова - христианство, государственная религия, Эчмиадзин, Аштишат, мифотворчество.

Развитие Армянской Апостольской церкви осуществляется на протяжение длительного исторического времени. При этом начальная история является предметом фальсификаций ангажированных историков. Избираются значимые явления армянской церкви, после чего выстраивается логистика мифотворчества с ассиметричной фальсификацией. Значимые пазлы имеют следующий вид.

Таблица 1

Пазлы	Мотивация
1. Место принятия христианства современным армянам неизвестно, так как утеряно.	1. Эчмиадзин не место принятия христианства в качестве государственной религии.
2. Игнорирование в армянской среде значимости церкви Аштишата.	2. Несоответствие с ролью Эчмиадзина в качестве Первопрестола.[1]
3. Армяне не принимали христианства в 301 г.	3. ”Искажение” источников армянскими историками.[2]
4. Армянская церковь исповедует монофизитство.	4. Фальсификация христианского армянского вероучения.
5. Духовный центр армянской церкви вне Кавказа.	5. Перенесение духовной резиденции в раз ные места.[3]
6. Принятие Агванком христианства.	6.”Злонамеренная деятельность” Эчмиадзина.[4]

[1] **Нифталиев И.** Как Учкилисе стал Эчмиадзином. - http://news.day.az/politics /85854.htm

[2] **Мехтиев Р.** Мифотворчество армян в контексте первого в истории христианского государства, с. 24,25. - https://azertag.az/sites/default/files/Bolmeler/resmixronika/1411475348.pdf

[3] **Нифталиев И.** Как Учкилисе…- http://news.day.az/politics /85854.htm

[4] Армянская григорианская церковь на протяжении столетий испытывала неприязнь по отношению к Албанской автокефальной апостольской церкви. - http://www.kaspiy.az/news.php? id=111227#.XY2RcdIzYdU

Традиционным началом фальсификаторов является внимание к роли и значению армянской церкви: почему армяне первокрещение осуществили не на реке Аракс рядом с Эчмиадзином, согласно “Истории Армении” историка Агатангелоса (V в.), а в местечке Багаван области Тарон у реки Арацани (Восточный Евфрат),[1] где возникла первая епископская кафедра Армении.[2] Явление рассматривается тактическим ходом, имеющим цель приблизить Эчмиадзин (Вагаршапат) к “албанским” и “азербайджанским землям”.[3] Отсюда “умозаключения”, что Эчмиадзин (Вагаршапат) находится в Малой Азии либо “у берегов Ефрата, в средневековой Византии”,[4] но не в Армении и Араратской долине.

Мифотворцы также стремятся отодвинуть дату принятия христианства в качестве государственной религии в Армении, локализируя её в диапозоне между 314 и 320 годами, чтобы обосновать более раннее принятие христианства в Римской империи при императоре Константине в ”313” году.[5] Между тем христианство стало официальной религией Римской империи в 325 г.

Развивая эту тему И. Нифталиев утверждает, что современные армянские историки скрывают факт постройки первой армянской церкви в Аштишате, о котором говорят армянские средневековые историки, где св. Григорий Просветитель возвел церковь св. Троицы. Мифотворец утверждает: “Видимо, этот факт не подлежит огласке, ибо получается неувязка, несоответствие с "освещением" роли Эчмиадзина в качестве первого престола Григория Просветителя, находящегося на другой территории, достаточно удаленной как от Аштишата, так и ареала реального проживания армян в районе восточного берега Ефрата и берегов реки Тигр и озера Ван”.

Приводится мотивацией мнения: “армянская историография, искажая источники, утверждает, что в IV веке престол Просветителя Армянской Апостольской Церкви установился в столице "Великой Армении" - Вагаршапате, где, дескать, был построен Григорием Просветителем кафедральный собор, названный им в память о явленном ему чудесном

---

[1] Обращение и крещение Армении: христианство.- http://www.sacredtradition.am/Library/history.php?NM=0&iM=20901&iL=1&iA=5522

[2] **Мамедова Ф.** Причинно-следственная связь карабахской проблемы. - http://udi.az/articles/0030.html

[3] **Иманов К.** Армянские инородные сказки Баку. 2008, с.157. - http://huojiah.com/ pdfbooks/K. Imanov1.pdf

[4] **Ахундов А.**Тайна исчезновения книги Орбели раскрыта. - http://www.ng.ru/ngreli-gii/2015-09-02/7orbel.html

[5] **Мамедов И., Мусаев Т.** Армяно-азербайджанский конфликт.Тула, 2006, с.12. - http://anl.az/elru/m/miaak.pdf; **Мехтиев Р.** Мифотворчество армян…с. 25,26.

видении Эчмиадзин (арм. сошел Единородный). Что же касается локализации, местонахождения столицы Вагаршапата и Эчмиадзина, то их армянские авторы пытаются локализовать в окрестностях современного города Ереван".[1]

В этой установке - Вагаршапат - Эчмиадзин - Аштишат все подчиненно мифическому обоснованию существованию албанских земель, а затем и азербайджанских на территории Восточной Армении, игнорируя азы становления армянской христианской конфессии. Хотя св. Г. Просветитель рассылает священнослужителей в страны иберов, лазов и Агванк (Агванк) для их крещения, цари которых присутствовали при посвящении Трдата..[2]

При царе Вагарше II (185-198 гг.) город Вагаршапат в Араратской долине, на месте поселение еще 6 в. до н.э, становится столицей Армении. Решалась проблема укрепление центральной власти. Монархом была построена цитадель, где располагался XIX римский Лунный легион из Сирии, состоящий преимущественно из солдат христиан. Здесь же имелась еврейская община, как и в Арташате, Тигранкерте,Зареване и других местах. Эти факторы, деятельность апостолов Тадевоса (Фомы) и Бартугиемоса (Варфоломея) в I в., как и наличие христианских общин в соседних странах - Каппадокии, Осроенэ и Адиабене, содействовали распространению христианства в Армении.[3] В 298 г. был заключен мир между Римом и Персией.

Имели место гонения и на христиан. В 298 г. последовали два распоряжения царя Трдата III: первый, предусматривал арест всех христиан с их имуществом в Армении, а второй - грозил смертью укрывателям христиан.[4] Издание таких указов означало широкое распространение христианства в стране. Агонией гонений стала гибель части 37 святых святых дев во главе с Рипсиме и Гаяне, пришедших в Армению из римского монастыря св. Павла.[5] День памяти св. Рипсиме и Гаяне армянская церковь отмечает через неделю после Пятидесятницы.[6]

Отсутствие в Армении необходимого количества епископов для посвящения в сан первосвятителя обусловило решение св. Григория Просветителя отправиться в Кесарию Капподокийскую, где он получил хрис-

---

[1] **Нифталиев И.** Как Учкилисе….- http://news.day.az/politics/858854.htm

[2] **Агатангелос.** Об обращение страны нашей Армении через святого мужа-мученика. - http://www.vehi.net/istoriya/armenia/agathangelos/ru/04.html

[3] **Петросян Е.** История Армянской церкви. Св. Эчмиадзин, 2008, с.12,13.

[4] Каноническое устройство Армянской церкви. - https://gisher.org/armyanskaya-apostolsKaya cerkov-t6872.html#p88894

[5] Церковь св. Риписме. - https://tonkosti.ru/B5

[6] День памяти Св. Рипсимэ и Гаянэ отмечают в Армении. - https://newsarmenia.am/news/politics/arm1-20090609-42087044/

тианское образование у архиепископа Леонтия,[1] рассматриваемого преемником дела св. Тадевоса.[2] Вместо возвращения в Вагаршапат, он отправился в область Тарон в метечке Аштишат, где находился первый апостольский престол, утвержденный в одном из центре армянского язычества. Здесь епископ Себастии из Малой Армении Петр провел обряд возведения св. Григория на престол Армении, так как здесь имелась епископская кафедра (основанная св. Тадевосом).[3] Акт имел целью подчеркнуть апостольский и независимый характер армянской церкви.[4]

Здесь же у реки Арацани (Восточный Ефрат) в начале ноябре 301 г.[5] было осуществлено крещения царя Трдата III и двора,[6] призванному подчеркнуть исторический и преемственный характер торжества христианства. Гр. Просветитель в области Тарон, являвшийся царским доменом, предпринял искоренение язычества, порушил храмы Ваагна, Анаит и Астхик.[7] До этого царь Трдат III с св. Гр. Просветителем осуществили разрушение языческих храмов в Вагарша-пате, а также Тира и Анаит в соседнем г. Арташате.[8] В области Тарон св. Гр. Просветитель осушествил церковное строительство.[9] В Аштишате он возвел церковь св. Троицы - матери армянских церквей, после церковь в Багаване - месте крещения царя Трдата III.[10] Затем основал 303 г. кафедральный собор в Эчмиадзине (арм. сошел Единородный) и независимый епископский престол.

Создано духовное управление армянской церкви, состоящее из 36 епископских кафедр (вместо сведения о 402)[11], располагавшихся в значительных местах и нахарарств (представителей власти). Расклад созданных епархиальных кафедр имел следующий состав: 22 – представляли ашхаров (области) Великой Арме-нии, 10 - нахарарств (ведомств) и 4 - Диоспонтоса, от Амасии до Синопа (или Pontus Amasia, который при императоре Константине получил имя его матери-Еленопонтос).

---

[1] **Орманян М.** Армянская церковь.Ереван,1993 (Константинополь 1911), с.33,37. - На арм. яз.

[2] **Симеон Ереванци.** Джамбр. Глава II.- http://www.vostlit.info/Texts/rus14/Erevanci/frametext1.htm

[3] Национальный архив Армении (ААЦ), ф. 811, оп.1,д.31, л.8 об.

[4] **Петросян Е.** История Армянской церкви…с.18.

[5] **Орманян М.** Азгапатум.Св. Эчмиадзин.2001, т.1, с.98 .- На арм. яз.

[6] Аштишат. - http//turkey.obnowvenie.ru/places/astisat/3037/

[7] **Орманян М.** Азгатум…,с. 98, 99.

[8] **Агатангелос.** Об обращение страны нашей Армении … - http://www.vehi.net/istoriya/armenia/agathangelos/ru/04.html

[9] **Орманян М.** Азгатум…,с.99.

[10] Аштишат. - http//turkey.obnowvenie.ru/places/astisat/3037/

[11] НАА, ф. 811, оп. 1, д.31, л.8 об.

Учитывалось административное деление, управленческий аппарат Армении и нахождение 4 епархий в территориальной юрисдикции Римской империи, означающее учет местных особенностей.[1] Никейский всеенсенский собор 325 г. ввел митрополитскую систему, а Константинопольской собор 381 г. - звание патриарха для обозначения высшего церковного сана.[2] сана.[2] Глава Армянской Апостольской церкви сохранил именование католикосом - высшая духовная степень, которую принял св. Гр. Просветитель.[3] тель.[3]

Из изложенного следует, что принятие крещение в Аштишате исходило из его священного почитания как первоисточника христианства в Армении. Точно также все мусульмане совершают хадж в Мекку, где почетные гости посещают храм Каабы.[4] В Римской же империи христианство стало одной из религией в 301 г., когда Миланским эдиктом императора Константина провозгласил его равенство с другими конфессиями, а официальной – 325 г.[5]

Учитывались тенденции развития христианства. Первый национальный церковный собор Армянской церкви в 354 г. в Аштишате осудил арианство.[6] Собор рассмотрел социальные и просветительские задачи: сиротские дома, приюты для обездоленных, открытие лепрозорий, основание монастырей и их школ, проведение захоронений исключительно по христианскому обряду.[7]

При Гр. Просветителе правитель Агванка (Аран) царь Урнайр, владения которого находились по левый берег р. Куры, в 313 г. принял христианство.[8] Армения и Армянская церковь, вопреки мнению азерпропа, содействовали превращению Агванка в одно из первых государств, где

---

[1] **Арутюнян Б.** Епархиальное деление Армянской церкви в период архипастыря Григора Просветителя. // Историко-филологический журнал, 2002, N 2, с. 108, 123 - 126.- На арм. яз

[2] **Петросян Е.** Армянская Апостольская святая церковь. - http://www.armenianhouse.org/petrosyane/church-ru/part1.html

[3] Армянские церкви. - http://arm-news.info/index/0-515

[4] Кааба.- http://www.ufo.obninsk.ru/kaaba.htm; http://www.portalostranah.ru/view.php?id=154

[5] Христианская церковь и Римская имерия в IV. - http://www.law.edu.ru/doc/document.asp?docID=

[6] Локализация армянских епархий. - http://baku.eparhia.ru/history/albania/vicenture/armenia eparshies; Армянская церковь. - http://www.travelgeorgia.ru/22/36/2/1753/; **Петросян Е.** Армянская Апостольская святая церковь. - http://www.armenianhouse.org/petrosyane/church-ru/part1.html

[7] Принятие христианства армянским народом. - http://bayazet.ru/ru/culture/culture/armenian-http://bayazet.ru/ru/culture/culture/armenian- religion/religion.html

[8] **Петросян Е.** История Армянской церкви…с.21.

христианство стало официальной религией.[1] Лишь в V в., когда персы создали марзпанство Агванк (отдельную область) в его состав были включены армянские области Утик и Арцах, являющиеся северной частью Армянского нагорья. После захвата арабами коренного Агванка арабами последовала организация провинции “Армина” VIII-IX вв.[2] Однако местное местное кавказское население исламизируется, а название Агванк сохраняется за указанными армянскими территориями.

С 705 г Агванский патриархат стал зависимым от Эчмиадзинского Первопрестола, который может существовать как национальный престол под приматом верховного католикоса всех армян. Сохранение названия Агванк позволяло патриархату Гандзасара в составе армянской церкви осуществлять христианскую деятельность на левом побережье Куры. В силу чего Арцах является преемником этих территорий, а не Азербайджан, проводящий картографическую, этническую и историческую агрессию.[3]

Имеется эволюция догматики христианства, освещение которой избегают ангажированные историки. На первом вселенском соборе символ веры в г. Нике 325 г. был определен следующим образом: ”Веруем во Единаго Бога, Отца, Вседержителя, Творца всего видимаго и невидимаго. И во Единаго Господа Иисуса Христа, Сына Божия, рожденнаго от Отца, Единороднаго, т.е. из сущности Отца, Бога от Бога, Света от Света, Бога истиннаго от Бога истиннаго, рожденного, несотворенного, единосущного Отцу, через Которого все произошло как на небе, так и на земле. Нас ради человеков и нашего ради спасения сошедшаго и воплотившагося, вочеловечившагося, страдавшаго и воскресшаго в третий день, восшедшаго на небеса и грядущаго судить живых и мертвых. И в Святаго Духа”.

Иные подходы сочтены ересью, которые подлежали анафеме: “А говорящих, что было время, когда не было Сына, или что Он не был прежде рождения и произошел от несущего, или утверждающих, что Сын Божий из одной ипостаси или сущности, или создан, или изменяем, - таковых анафематствует католическая Церковь”.

Никейский собор провозгласил соборность христианской души: “Нет ни эллина, ни иудея, но во всём и во всем Христос”.[4] Постановления Никейского собора о Символ Веры были приняты Армянской церковью. Уча-

---

[1] Армянская григорианская церковь на протяжении столетий испытывала неприязнь по отношению к Албанской автокефальной апостольской церкви - http://www.kaspiy.az/news. php?id=111227#.XY2RcdIzYdU

[2] История Армении. Под ред. **Э. Л. Даниеляна**. Ереван,1999, с.83.

[3] **Тунян В. Г.** Карабах: история в контексте конфликта - Впросы Арменоведения. 2016, N 3, с.219. с.219.

[4] Первый Вселенский собор в Никее - https://www.sedmitza.ru/lib/text/434709

стник собора епископом Аристакес - младший сын Григория Просветителя привез и правила об управлении церкви, которые стали использоваться с местными канонами еще I в. [1] Каждое 9 сентября Армянская церковь отмечает День памяти 218 патриархов Вселенского Собора, содействовавших его проведению и принявших Символ Веры.[2] Осуждено арианство, находящее что Христос, сотворенный Богом “не единосущен” ему.[3]

Постановления второго и третьего вселенских соборов (Константинопольский - 381 г. и Эфесский - 431 г.), отразившие единство догматики, были приняты всеми церквями.[4] Появление разночтений отразил Халкидонский собор 451 г. Занятые национальной борьбой против зороастристской Персии, армяне в 451 г. не приняли участие в Халкидонском соборе, где был уточнен догмат веры. Иисус Христос был представлен состоящим из “двух естеств” - божественной и человеческой, которые в нем сопрягались формулой и ”неслиянно” и “нераздельно”.[5]

В постановление собора указано: “Следуя святым Отцам, все мы единогласно учим, что Господь наш Иисус Христос есть один и тот же Сын, один и тот же совершенный по Божеству и совершенный по человечеству, истинный Бог и истинный Человек, подобный нам во всём, кроме греха; рождённый от Отца прежде веков по Божеству, но Он же рождённый в последние дни ради нас и нашего спасения от Марии Девы и Богородицы по человечеству; один и тот же Христос, Сын, Господь, Единородный, познаваемый в двух природах неслиянно, неизменно, нераздельно, неразлучно… Он не рассекается и не разделяется на два лица, но Он один и тот же Сын Единородный, Бог Слово, Господь Иисус Христос; такой именно, как говорили о Нём пророки древних времён и как Сам Иисус Христос научил нас, и как передал нам Символ Отцов".[6]

Отвергнуто еретическое учение константинопольского архимандрита Евтехия, что Иисус Христос имеет лишь “одну природу после соединения”.[7] Однако собор не определил единство Христа как Божества Слова,

---

[1] **Петросян Е.** История Армянской церкви…с.21.

[2] Календарь. Св. Эчмиадзин, 2012, с.129; 2015, с.138.- На арм. яз.

[3] 325 г. Никейский собор (I Вселенский собор) осудил Арианство, принял Символ и изгнал Ария.- http://historiosophy.ru/shop/sobytija.(Никейский Символ Веры несколько отличается от т. н. Никео - Цареградского Символа Веры, используемого халкидонскими церквями. // Символ Веры Армянской церкви. - http://forum.miasin.ru/thread/25/)

[4] Армянская Апостольская Церковь и IV Халкидонский Собор. - http://www.panarmenian.net/rus/details/220533/

[5] Почему именно армянская церковь православная. - https://erevanlive.wordpress.com/tag

[6] Четвертый Вселенский собор - http://zakonbozhiy.ru/ZakonBozhij/Chast4IstoriJaCerkvi/ChetvJurtyjVselenskijSobor/

[7] Халкидонский собор - http://www.hrono.ru/sobyt/0400sob/451halki.php

что вызвало различие толкование о человеческом естестве, поскольку не может быть “безипостасная природа”.

Этот аспект встретил настороженность у представителей восточных церквей.[1] Представители армянской, агванкской и грузинской церквей на Вагаршапатском соборе 491 г. непризнали формулу Халкидонского собора“ два естества в одном лице и в одной ипостаси”, но осудили несторианство и евтихейство как ереси. Между тем в 6 в. богослов Леонтий Византийский дал толкование,что “Ипостась Слова именно как ипостась, то есть как личность восприняла человечество. Бог не стал человеком по существу, ибо Отец и Дух не воплотились”.[2]

Традиционализм армянской церкви послужил основанием для обвинения её в монофизитстве и отпадение от православия,[3] хотя на деле речь шла о восприятии ипостаси. Современные православные богословы дают следующее толкование этому явлению: ”Монофизитство - это христологическое учение, сущность которого состоит в том, что в Господе Иисусе Христе только одна природа, а не две, как учит Православная Церковь”. Дается корректировка подхода: “**Православная Церковь** исповедует во Христе одно лицо (ипостась) и две природы - божественную и человеческую”.[4]

Между тем вероучения Армянской церкви как древневосточной апостольской православной церкви также признает формулу единение двух природ - Божественной и человеческой в Иисусе Христе. Полный армянский подход представлен в работе св. Нерсеса Шнорали в “Изложении веры Армянской церкви” для византийского императора Мануил Комнина в 1166 году. Здесь говорится: “Мы исповедуем, что от двух естеств соделалось единое и что в соединении не потерялось ни которое из них”.[5] В едином естестве (“харнум”) сохраняются свойства обоих естеств - Божественного и человеческого.[6] По своей сути соответствующее постановлению Халкидонскому собору. Разница - лишь в богословских формулировках.[7]

---

[1] **Петросян Е.** История Армянской церкви…, с.137; **Огнесян Г.** “Армянская церковь и Халкидон” - http://www.aniv.ru/archive/2/armjanskaja-tserko-i-halkidon

[2] Армянская апостольская церковь и IV Халкидонский собор. - http://www.panarmenian.net/rus/details/220533/

[3] **Гусейнов Р.** Азербайджан и Армянский вопрос на Кавказе. Баку, 2015, с.196.- http://www.academia.edu/20115968

[4] В чем разница между православием и армянским христианством? - http://www.pravmir.ru.

[5] **Петросян Е.** Армянская Апостольская святая церковь. - …, с.139.

[6] **Хамада К.** Роль “Исповедания Христианской веры Армянской церкви” Иосифа Аргутинского в русской богословской науки. - В кн.: Армяне Юга России: история, культура, общее будущее. Ростов-на Дону, 2015, с. 240.

[7] **Гуайта Дж.** Православна ли Армянская церковь? - armenianlegacy.eu/ru

Обвинения в монофизитизме имеют основой не богословский аспект, а политический и исторический. Суть конфликта состояла в том, что армянская церковь как национальная церковь, адаптированная к интересам армянской государственности, являлась национальной церковью. В этом контексте она и вступила в противоречие с византийской ортодоксальной церковью, которая подталкивала имперскую власть к подчинению армянской церкви и армянской государственности.[1]

В результате начальный исторический процесс развития Эчмиадзина можно представить в виде следующих определенных периодов: 1) апостольские проповеди: св. апостол Тадевос - 43-66, св. апостол Варфоломей 60-68, когда в 68 г. основывается апостольская кафедра в Аштишате; 2) вагаршапатский 301- 484.[2] Епископскую кафедру возглавляли: Закарий - 68-72, Зементос - 68-72, Атирнерсэ - 77-92, Муше - 92-123, Шаэн - 0124-154, Шаварш - 151-171, Гевондиос - 172-190, Меружан - 240-270. Первопрестол в Эчмиадзине возглавил св. Гр. Просве-титель (302-325).[3]

Таким образом, выясняется дезинформационный характер мифов азерпропа о становление христианства I-5 вв. в Армении. В их формат входят: 1. Место принятия христианства современным армянам неизвестно: 2. Игнорирование в армянской среде значимости церкви Аштишата; 3. Армяне не принимали христианства в 301 г.: 4. Армянская церковь исповедует монофизитство: 5. Духовный центр армянской церкви вне Кавказа; 6. Истории принятие Агванком христианства.

Վալերի Թունյան , Քրիստոնեության հաստատումը Հայաստանում - Հոդվածում Քրիստոնեության հաստատումը Հայաստանում I-V դարերում դիտարկվում է զեղծարարների կողմից իրականացնող պատմահոգեբանական պատերազմի դիրքերից և հետևյալ գլխավոր միֆերից. 1. Քրիստոնեության ընդունման իսկական վայրը անհայտ է հայերին, 2. Հայկական միջավայրում անտեսվում է Աշտիշատի եկեղեցու նշանակությունը, 3. Հայերը չեն ընդունել քրիստոնեությունը 301 թ.:

Valeri Tunyan, The Formation of Christianity in Armenia - The article reveals the disinformation of Azerbaijani propaganda connected with their myths about the formation of Christianity in Armenia in the 1-5 centuries, which includes the following: 1. The place of Christianity adoption is unknown

---

[1] Взаимоотношения церквей - http://armenianchurch.vl.ru/?page id=26

[2] **Симеон Ереванци**. Джамбр. Глава I "Состояние св. Эчмиадзинского престола со времени его учреждения до его опустения и восстановления". - http://www.vostlit.info/Texts/rus14/Erevanci/frametext1.htm

[3] Официальный календарь первопрестола. Св. Эчмиадзин, 2012, с. 249. – На арм. яз.

to modern Armenians, 2. The significance of the Ashtishat in the Armenian church in the Armenian community Armenia is ignored, 3. Armenians did not accept Chrisianity in 301, 4. The Armenian Church professes Monophysitism, 5. The spiritual center of the Armenian Church is outside the Caucas

ԿԱԹՈԼԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆՈՒՄ 1915-1917ԹԹ.. ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՐԱՆՔ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ, ԶԱՐՈՒՀԻ ՕՊՆԵՑՅԱՆ

Բանալի բառեր - միսիոներություն, կաթոլիկություն, բողոքականություն, Վան, առաքելություն, բարեգործական օգնություն, կոտորածներ, քրիստոնեություն, որբանոց:

14-րդ դարից սկսած նախ, եվրոպացի կաթոլիկ, իսկ ավելի ուշ նաև ամերիկացի բողոքական միսիոներները մուտք գործեցին Օսմանյան կայսրություն և սկսեցին քրիստոնյաների, մասնավորապես՝ հայերի ծանր վիճակն օգտագործել իրենց կրոնաքաղաքական ծածուկ նպատակներն ու շահերն իրականացնելու համար[1]: Միսիոներական վարդապետությունն, ի տարբերություն այլ ազգությունների ներկայացուցիչների, գրկաբաց ընդունվեց հատկապես հայության կողմից, որը պայմանավորված էր հիմնականում Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր դժգույն իրավիճակով: Հենց միսիոներներն էին, որ առաջին անգամ հայերին հուսադրեցին այն գաղափարով որ Եվրոպան և Հռոմի պապը կարող էին օժանդակել Հայաստանի ազատագրության գործին՝ սակայն միայն կաթոլիկություն ընդունելու պայմանով: Նրանց անմիջական ազդեցությամբ էր, որ հայ կաթողիկոսները 16-17-րդ դդ. ձեռնունայն ճանապարհորդություններ կատարեցին դեպի եվրոպական մի շարք երկրներ:

Երկար ժամանակ բողոքական միսիոներներն այն համոզմանն էին, որ Հայ Եկեղեցին գործում էր «կռապաշտական» համակարգով[2]: Սակայն արևմտահայ իրականության մեջ ժողովրդի հետ երկար շփումներից հետո, կամաց-կամաց փոխվեց նրանց թյուր կարծիքը և նրանք ավելի մերձեցան Հայ Առաքելական Եկեղեցուն:

XIXդ. վերջին և XX. դ. սկզբին բողոքական քարոզիչները Կ. Պոլսում հաստատվելուց հետո փորձեցին հիմնավորվել նաև Վանի նահանգում[3]:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1120, ց. 1, գ. 93, թ. 18:

[2] **Գազանճեան Լ.**, Վերածնունդ Վան-Վասպուրականի, մշակութային ոսկեդար (1850-1950), էջ 293:

[3] Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Հարությունյան Վ.**, Արևմտյան Հայաստանում բողոքական միսիոներության քարոզչական գործունեության պատմությունից (19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ), Պատմություն և հասարակագիտություն, Տարեգիրք 2-րդ, Երևան, 2016, էջ 142-151:

Նրանց կարողություններն օգտագործելու նպատակադրությամբ էր, որ Աբրամ Մանուկյանը 1913 թ. սեպտեմբերի 6-ի իր նամակում Ս. Վրացյանից խնդրում էր աջակցել ԱՄՆ տեղափոխված դոկտոր Ռեյնոլդսին՝ Վանում ամերիկյան քոլեջ բացելու նպատակով հանգանակություն կատարելու գործում[1]:

Գերմանական միսիոներություն

Առաջին աշխարհամարտը և արևմտահայության տեղահանությունը Վանում կասեցրին միսիոներական աշխատանքները: Սակայն ինչպես գերմանացի միսիոներ Էռնստ Ջոմմերն է նշում՝ «առանձնապես մեծացավ և կարևորվեց 22 տարի առաջ մեզ Արևելք տանող կանչի նշանակությունը: Որովհետև խոսքն այստեղ միայն մարդասիրական բարեգործության մասին չէ»[2]:

Թուրքական կառավարությունը՝ հավատարիմ մնալով իր գործելակերպին, ամենուրեք, ուր հնարավոր էր, քրիստոնեական եկեղեցիները վերածում էր մահմեդական մզկիթների: Այսպիսի պայմաններում էլ ավելի էր կարևորվում գերմանացի միսիոներների աշխատանքը:

Դեռևս 1914 թ. դեկտեմբերից օրիորդ Մաք Լարենը և գերմանական որբանոցի քույր Մարթան վիրավորներն էին խնամում թուրքական զինվորական հիվանդանոցում[3]: Գերմանական կառավարության ճնշման շնորհիվ նրանք հասան այն բանին, որ իրենց օժանդակության ներքո աշխատող բոլոր հայ քրիստոնյաները ցուցակներում գրանցվեցին որպես գերմանական առաքելության ներկայացուցիչներ և խուսափեցին աքսորի կործանարար հետևանքներից[4]:

Հետաքրքրական և արժեքավոր են հատկապես գերմանական միսիոներների տեղեկությունները Վանի ինքնապաշտպանության վերաբերյալ: Այդ մասին Արևելքում քրիստոնեական բարեգործական գերմանական օժանդակության միության ղեկավար, ծագումով շվեյցարացի քարոզիչ Յ. Շպյորին, որը նաև Վանի գերմանական որբանոցի տնօրենն էր, Յ. Լեփսիուսին ուղղած իր՝ 1916 թ. հոկտեմբերի 7-ի զեկուցագրում հայտնում էր հետևյալը. «Երբ 20.4.1915 թ. իմ աչքի առաջ սկսվեցին մարտերը և մեր վրա սոսկալի կրակում էին, ես ստիպված էի գրել վալիին: Ես նրան պատմեցի, թե ինչպես են սկսվել մարտերը, տեղեկացրի, մեզ վրա գնդակների անձրև է տեղում և խնդրեցի կասեցնել նման գործողությունները,

---

[1] **Վրացյան Ս.**, Հին թղթեր նոր պատմութեան համար, Բեյրութ, 1962, էջ 36:

[2] **Ջոմմեր Է.**, Ճշմարտությունը աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի կրած տառապանքների մասին, գերմաներենից թարգմանեց Էվելինա Մարկարյան, Երևան, 2002, էջ 52:

[3] **Knapp G.,** The tragedy of Bitlis, New York, Chicago, London, Edinburg, 1919, p. 21-28.

[4] **Ակունի Ս.**, Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Կ. Պոլիս, 1920, էջ 38:

քանի որ, իմ կարծիքով, անհնար է, որ նման բան կարող է վայրի ցանկությամբ լինել: Նաև խնդրեցի վեճերը հարթել խաղաղ ճանապարհով: Իմ գրությամբ գնացի դոկտոր Ուշերի մոտ (ճանապարհը շատ վտանգավոր էր, քանի որ անընդհատ կրակում էին), ընթերցեցի նրան իմ գրությունը և խնդրեցի նույնը անել: Զևդեթի ապրիլի 23-ի նամակը մեր գրությունների պատասխանն էր: Բացի այդ, ինքնապաշտպաններին խնդրեցի ետ քաշվել մեր կայանի ճակատից, որպեսզի կրակը մեզ վրա չհրավիրեն: Ի գոհունակություն ինձ, իմ խնդրանքը կատարվեց: Սակայն դրանից հետո էլ մեր դեմ կրակը չդադարեց»[1]:

Ամերիկյան միսիոներություն

Ամերիկյան միսիոներական առաքելությունը Յ. Լեփսիուսի հավաստմամբ գտնվում էր Վանի Այգեստան թաղամասի կենտրոնական մասի հարավ-արևելյան բարձունքին և բաղկացած էր մեկ եկեղեցուց, դպրոցական երկու մեծ ու երկու փոքր նոր շենքերից, մեկ դպրոց-արհեստանոցից, հիվանդանոցից, բուժական հաստատությունից և միսիոներների համար նախատեսված չորս կացարաններից: Ամերիկյան առաքելության անդամներն էին՝ տիկին Ռեյնոլդսը (դոկտոր Ռեյնոլդսը ժամանակավորապես գտնվում էր Ամերիկայում), հիվանդանոցի գլխավոր բժիշկ Քլարենս Ըշըրը, արհեստանոցի տնօրեն տիկին Ըշըրը, տղաների դպրոցի տնօրեններ տեր և տիկին Յարրոուները[2], աղջիկների դպրոցի տնօրեն՝ օրիորդ Ռոջերսը, նախակրթարանի տնօրեն՝ օրիորդ Սիլիմանը, երաժշտության ուսուցչուհի՝ օրիորդ Ըշըրը, հիվանդանոցի ավագ քույր՝ օրիորդ Բոնդը և միսիոներուհի Քլարենը: Վանում էր գտնվում նաև օրիորդ Քնապը, որը հյուր էր եկել Բիթլիսից[3]:

Ամերիկյան միսիոներները շատ դիպուկ և կարևոր դիտարկումներ են կատարել ցեղասպանության պատճառների ու բնույթի մասին: Այսպես, 1917թ. մարտին ամերիկյան միսիոներ Ք. Ըշըրը գրում է, որ Օսմանյան կայսրության քրիստոնյա բնակչության ոչնչացումը ծրագրված է եղել Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց շատ ավելի առաջ: Ըստ նրա՝ «նրանցում (խոսքը ջարդերի մասին է, - Ա. Հ.) կրոնական մոլեռանդությունը հպանցիկ դեր է ունեցել, այն էլ՝ կոտորածները սկսելուց հետո միայն՝ իրականում այդ ծրագրի հետ կապ չունենալով»[4]:

---

[1] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 308:

[2] Հետագայում՝ 1915թ. դեկտեմբերի20-ին Էռնեստ Ալբերտի Յարրոուին տրվում է գաղթականության օգնության ամերիկյան կոմիտեի թիվ 1405 վկայականը, որը նրան հնարավորություն էր ընձեռում բնակվելու և գործելու Երևանում: Տե՛ս ՀԱԱ ֆ.50, ց. 1, գ.127,թ. 25:

[3] **Պրայս Ճ. Դերկոմս.**, Անգլիական կառավարութեան կապոյտ գիրք հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Կ. Պոլիս, 1919, էջ 56-57, նաև՝ Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 304:

[4] **Somakian M. J., Empires in Conflict; Armenia and the Great Powers, 1895-1920, London, New**

Առավել կարևոր են ամերիկյան միսիոներների տեղեկությունները Վանի նահանգի կոտորածների, ինքնապաշտպանական կռիվների և Վանի 1915թ. հերոսամարտի վերաբերյալ, որը անմիջական պատկերացում է տալիս տիրող մահասարսուռ իրավիճակի և հայ բնակչության տառապանքների մասին, մասնավորապես՝ 1915թ. ապրիլին Վանի կռիվների ժամանակ:

Վանի հերոսամարտի ժամանակ ամերիկյան առաքելության անդամներն ակամայից հայտնվել էին թուրքական և հայկական ինքնապաշտպանական դիրքերի միջնամասում և անմիջականորեն շփվել են ինչպես Վանի նահանագապետ Ջևդեթ բեյի, այնպես էլ ինքնապաշտպանության հայ ղեկավարների հետ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ, Վանը 1915թ. դեպքերի բերումով, փաստորեն, մեկուսացել էր արտաքին աշխարհից, ապա միսիոներների հաղորդած ճշգրիտ տեղեկություններն առաջիններից էին, որ, մանավանդ ԱՄՆ-ում, օգնեցին բացահայտելու Վանի հայության մտացածին «ապստամբության» իրական պատկերը[1]:

Ամերիկացի միսիոներ, բժիշկ Ք. Ըշըրի հավաստիացմամբ՝ Վանի վալի Ջևդեթը ծրագրել էրՎան քաղաքի հայերի համընդհանուր կոտորած: Սակայն նրա եղկելի մտահղացումը քաղաքի գրավման առումով ի դերև եղավ՝ մասամբ այն պատճառով, որ ամերիկյան միսիոներներն ամեն կերպ ընդդիմացան Ջևդեթի պահանջ-սպառնալիքներին՝ թույլ չտալով «միսիոներների պաշտպանության նպատակով» թուրքական զինվորներ տեղակայել ռազմավարական կարևորագույն դիրք զբաղեցնող ամերիկյան առաքելության տարածքում[2]:

Բավականին արժեքավոր են 18 տարի Վանում ապրած Ք. Ըշըրի տեղեկությունները Վանի Ապրիլյան հերոսամարտի մասին: Այդ առումով հատկանշական է ԱՄՆ-ի Փութաքեթ քաղաքում Վանի հերոսամարտին նվիրված նրա ելույթի հետևյալ հատվածը. «Հայ ժողովուրդին չարչարանքները ներկայացնելու համար ամբողջ շաբաթներ պէտք է խօսիլ անընդհատ: Բայց ես կ՝ուզեմ ձեզ ներկայացնել անոր հերոսներուն հայրենասիրութիւնը՝ քանի մը գծերու մէջ, ցոյց տալու համար, թէ տակաւին այս ցեղը ապրելու յոյս կը ներշնչէ և պիտի ապրի: Երբ Խարբերդի, Տիգրանակերտի, Մալաթիայի և ուրիշ վայրերու տեղահանութեան լուրերը կը հասնէին, Վասպուրականի հերոսները գործի վրայ էին: Վանի կուսակալը (-ՃԷվտէդ) հրաման արձակեց, որպէսզի պատրաստ ըլլան գաղթելու: Վանի

York, 1995, pp. 76-77.

[1] Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916 թթ. հայոց ցեղասպանության մասին, կազմող և ներածության հեղինակ՝ Տիգրան Զաքարյան, Երևան, 2002, էջ 6:

[2] **Clarence Douglas. Ussher, M. D., Grace H. Knapp,** An American Physician in Turkey: A Narrative of Adventures In ***Peace and*** in War, Boston and New York, 1917 (November), pp. 236, 239-240, 242-243, 261.

ժողովուրդը, փախան գաղթի պատրաստութեան, ինքնապաշապանութեան դրօշը պարզեց յաջորդ օրը... Թրքական կանոնաւոր զօրքը, ղեկավարութեամբ գերման սպաներու, ամբողջ ամիս մը կռուելէ յետոյ, չարաչար կերպով պարտուեցաւ և քաղաքը թողուց Արամներու և ուրիշ հերոսներու: Ասոնք այն հերոսներն են, որ այս ինքնապաշապանութեան փառաւոր յաղթանակին գործը կազմակերպեցին... Հապա Իշխանը... այդպիսի հերոս քիչ անգամ կը գտնուի ազգերու հերոսացանկին մէջ: Վանի այս փառաւոր յաղթանակը եզակի պիտի մնայ հայ պատմութեան մէջ: Այսպէս եղած է պատկերը նաև ներքին շատ մը գաւառներու մէջ, որոնք դիմադրեցին թուրք բարբարոս բանակին և սուղ ծախեցին իրենց կեանքը, բայց արտաքին օգնութիւն չի կրնալով ստանալ, ընկճուեցան վերջապէս»[1]:

Իր հերթին, Ք. Ըշըրի կինը Վանի ամերիկյան միսիոներության ղեկավար Ռեյնոլդսին ուղղված իր նամակում ներկայացնում է վանեցիների «հրաշալի տաղանդը» և կորովը քաղաքում ապաստանած 20, 000 թշվառներին և կարոտյալներին օգնելու գործում[2]:

Բացի այդ, Վանում ամերիկյան միսիոներական առաքելության անդամներից մեկը խոսելով 1915թ. ապրիլին Շատախում ծավալված դեպքերի մասին,վկայակոչում է անձամբ իր լսած այն կարևոր փաստարկը, թե ինչպես Ջևդեթն իր մոտ էր կանչել «քեսաբ թաբուրի» (մսագործների գունդ- Ա. Հ.) կոչված գնդի հրամանատարին և բառացիորեն հրամայել՝ գնալ Շատախ ու «ջնջել տեղի բնակչությանը»: Ապա դառնալով ամերիկացի միսիոներին ասել էր, որ «կենդանի չեմ թողնի ծնկից բարձր և ոչ մեկին»[3]:

Առաջին միսիոներական կազմակերպություններն էին, որ հոգ տարան Այգեստանից իրենց մոտ ապաստանած շուրջ 4000 վանեցիների պաշտպանության հարցը: Այդ մասին ամերիկացի միսիոները հիշում է. «Կիրակի օրը՝ 25-ին, քաղաք մտավ փախստականների առաջին խումբը՝ իրենց վիրավորներով: Մեր հիվանդանոցը, որտեղ սովորաբար 50 մահճակալ է տեղավորվում, ստիպված էր 142 հիվանդների համար տեղ պատրաստել: Փոխառնվեց սպիտակեղեն, և ամենուրեք հատակին անկողիններ պատրաստվեցին: Ամեն օր վիրակապում էինք թեթև վիրավորներին: Այգեստանից 4000 մարդ իր ունեցվածքով տեղափոխվեց քաղաք: Նրանք տեղավորվեցին մեր եկեղեցում, դպրոցական շենքերում և մեր առաքելության տների բոլոր ազատ տարածություններում: Մի կին տիկին Սիլիմանին ա-

[1] «Յուսաբեր», Կահիրե, 1916, դեկտեմբերի 24:

[2] **Երամեան Հ.**, Վան-Վասպուրական / «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1925, հունիս, թիւ 8, էջ 120:

[3] **Clarence D. Ussher, M. D., Grace H. Knapp,** An American Physician in Turkey: A Narrative of Adventures In ***Peace and*** in War, pp. 237-238:

սաց. «Ի՞նչ էինք անելու, եթե միսիոներները չլինեին: Սա արդեն երրորդ կոտորածն է, որի ժամանակ ես ապաստան եմ գտնում այստեղ»[1]:

Միսիոներների ուշադրության կենտրոնում էին նաև բնակչության սննդի և առողջապահության խնդիրները, որոնք լուծելու համար կպահանջվեր կենցաղվարության և վարչական կարողության մեծ հմտություններ[2]: Այդ մասին նշվում է. «Այս մարդկանց մեծ մասին պետք էր կերակրել, որովհետև նրանք այնքան աղքատ էին, որ իրենց հացը ամեն օր գնում էին հացթուխից, իսկ հիմա այդ հնարավորությունը չկար: Հայերը, մեծ մասամբ, իրենք են թխում իրենց հացը և հոգ տանում, որպեսզի ամբողջ տարվա անհրաժեշտ ցորենի պաշար ունենան: Այսքան շատ մարդկանց տեղավորելը, նրանց առողջության, սննդի և կարգապահության համար հոգ տանելը խնդիրներ էին, որոնք ամբողջովին կլանել էին մեզ: Պարոն Յարոուն այս գործի համար կոմիտեներ կազմակերպեց: Ամեն մի փոքրիշատե ընդունակ մարդու մի դեր հանձնարարվեց: Բոլորը հիանալի նախաձեռնություն և անձնուրացություն ցուցաբերեցին: Մի մարդ տվեց իր ունեցած ողջ ցորենը՝ իր ընտանիքի համար թողնելով միայն մեկ ամսվա պաշար: Հիմնեցին հանրային փուռ՝ բաշխելու համար ցորեն և ալյուր գնվեց, տրվեցին հացի կտրոններ, իսկ ավելի ուշ բացվեց մի ճաշարան: Օրիորդ Ռոջերսը և օրիորդ Սիլիմանը ապահովեցին անհրաժեշտ օրաբաժին կաթը, իրենց դպրոցի աղջիկներին հանձնարարեցին եփել այդ կաթը և բաժանել փոքրիկներին: Այս ձևով սնվում էին 190 հոգի»[3]:

Ըստ ամենայնի, Վանում ամերիկացի միսիոներների «անհարմար» ներկայությունն այնքան էր զայրացրել Ջևդեթին, որ վերջինս քաղաքի պաշարման ժամանակ, համաձայն օսմանյան բանակում ծառայած վենեսուելացի սպա Ռաֆայել դե Նոգալեսի վկայության, հրամայել է հրետակոծության ենթարկել նաև քաղաքի ամերիկյան առաքելությունը[4]:

Ամերիկյան միսիոներների արժեքավոր վկայությունները յուրատեսակ պատկերացում են տալիս թուրք բժիշկների անմարդկային վերաբերմունքի և հայերի ֆիզիկական տառապանքների մասին: Այսպես, ըստ գթության քույր, գերմանուհի Մարթայի հաղորդման, երբ Ռ. դե Նոգալեսը 1915թ. մայիսի 1-ին շրջայց էր կատարում նրանց զինվորական հոսպիտալում, նա տեղեկացնում է, որ գլխավոր բժիշկ Իզզեթ բեյն «ազատվել» էր բոլոր հայերից, ովքեր աշխատում կամ բուժվում էին հոսպիտալում: Ըստ նրա՝ Իզզեթ բեյը վիրահատություններն իրականացնում էր առանց վիրա-

---

[1] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 309:

[2] **Պրայս Ճ. Դերկոմս**, Անգլիական կառավարութեան կապոյտ գիրք հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), էջ 61:

[3] Գերմանիան և Հայաստանը 1914-1918. փաստաթղթերի ժողովածու, հ. II, էջ 309-310:

[4] **Де Ногалес Р., Четыре года под полумесяцем, Москва, 2006, с. 66:**

բուժական գործիքների ախտահարման, որի արդունքում շատերը մահանում էին փտախտից[1]:

Վանի Ապրիլյան հերոսամարտի ժամանակ բժիշկ Քլարենս Ըշըրը հրաժարվում է ամերիկյան հիվանդանոցի դեղատունը հանձնել իշխանություններին և իր կնոջ՝ Էլիզաբեթի հետ, ո՛չ միայն դեղորայք է բաժանում հայերին, այլ վիրահատում և բժշկում է վիրավորներին ու հիվանդներին[2]:

Թուրքական իշխանություններն ամեն ինչ անում էին, որպեսզի ամերիկացի միսիոներներն ականատես չլինեն զանգվածային սպանություններին: Այդ նպատակով, նախևառաջ, նրանց արգելվում էր աքսորյալ հայերի հետ որևէ շփում՝ ընդհուպ մինչև ամերիկյան շինությունների մուտքերի մոտ զինված պահակների տեղակայումը՝ խոչընդոտելով հայերին՝ օժանդակության համար դիմել ամերիկացի միսիոներներին:

Հաշվի առնելով Վանում անհրաժեշտ ուտելիքի հոգածության անհրաժեշտությունը և բարձր գները՝ ամերիկացի միսիոներներ՝ Էռնեստ Յարրոուն և Ք. Ըշըրը Արամին ուղղված 1915թ. հունիսի 8-ի իրենց նամակում խնդրում էին Անդրանիկի կողմից բռնագրավված հազարավոր ոչխարներից Վանում գտնվող հոսպիտալի հայ կամավորականների և ռուս զինվորների համար տրամադրել օրը 1 ոչխար, իսկ միսիոներական կացարանում ապաստանած 1000 մահմեդական գաղթականների համար՝ օրը 5 կամ ամսական 150 ոչխար: Այդ նպատակով նախնական հոգածության համար նրանք պահանջում էին 100-200 ոչխար:[3]

1915թ. Հուլիսյան գաղթի ժամանակ Ք. Ըշըրը և մյուս միսիոներները տեղափոխվեցին Արևելյան Հայաստան:

Միսիոներների հաղորդած տեղեկություններն ուշագրավ են հատկապես Վանի 1915-1917թթ. պատմության լուսաբանման առումով, քանի որ նրանք որոշակի ներդրում են ունեցել Վան-Վասպուրականի վերաշինության և գաղթականների օգնության կազմակերպման գործում: Ամերիկյան միսիոներները որոշակի դեր են խաղացել Վանում հայերին ու ասորիներին դրամական և տնտեսական բազմատեսակ օգնություն կազմակերպելու և բարեգործական աշխատանքներ կատարելու գործում: Այդ մասին է վկայում Թիֆլիսի ամերիկյան հյուպատոսության բժիշկ Ֆ. Ու. Մաքալլումի զեկուցագիրը՝ ուղղված ԱՄՆ-ի պետական քարտուղարին[4]:

Վանում 1916 թ. ապրիլի 15-ից մայիսի 15-ը միսիոներների կատարած բարեգործական աշխատանքների մասին պատմող զեկուցագրի հա-

---

[1] **Անդ, էջ 74:**

[2] Ե. Չարենցի անվ. ԳԱԹ-ի արխիվ, Հ. Ավագյանի ֆ., գ. 8, թ. 6:

[3] ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 34, թ. 1:

[4] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 274-278:

մաձայն՝ Գրեյսին, Սամուել Գրահամ Ուիլսոնը[1] և Ֆ. Մաքալլումը ձեռնամուխ են լինում գաղթականների օգնության կազմակերպման գործին: 1916թ. ապրիլի 15-ին Գրեյսին և Մաքալլումը Պարսկաստանից ժամանում են Վան, իսկ Ս. Գ. Ուիլսոնը մնում է Խոյում՝ Վանի բնակչության համար եզներ, կովեր, սերմացու գնելու և ուղարկելու գործով[2]:

Ռուսական քաղաքացիական և զինվորական իշխանությունները չափազանց բարյացակամ էին տրամադրված միսիոներների հանդեպ և ստեղծում էին անհրաժեշտ բոլոր հնարավորությունները աշխատանքները հաջողությամբ ի կատար ածելու համար: Միսիոներական գործունեությանը մեծապես նպաստում են նաև նրանցից առաջ գործունեություն ծավալած հայկական և ռուսական բարեգործական այլ ընկերությունները, որոնք հիմնադրել էին որբանոց, հիվանդանոց, սննդամթերքի պահեստ[3]:

Ամենահրատապ խնդիրը՝ եզների, գութանների ու սերմացուի ապահովումն էր, քանի որ բանակի կարիքների պատճառով Վանի նահանգում արգելված էր անասուն և սերմացու գնելը: Հայոց Ձորի շրջանում միսիոներներին հաջողվեց գոմեշներ գնելու թույլտվություն ստանալ, քանի որ դրանք որպես սննդամթերք չէին օգտագործում: Արդյունքում՝ դոկտոր Ս. Գ. Ուիլսոնի միջոցով միսիոներները Պարսկաստանի նախրապաններից գնեցին մեծ քանակությամբ եզներ, կովեր և գոմեշներ: Գրեյսիի և նրա թիկնապահ ամերիկացի մի հայ կամավորի կողմից բաժանված կտրոնների դիմաց յուրաքանչյուր երեք ընտանիքի տրվում էր մի զույգ եզ: Ընդ որում, խմբում ընդգրկված էին միայն այն ընտանիքները, ովքեր կաշխատեին համաձայնեցված ձևով: Սակայն անասունները տրվում էին ոչ թե որպես նվեր, այլ դրամական փոխհատուցման պայմանով: Յուրաքանչյուր գյուղացի ձեռքբերելով անասուն ստացական էր տալիս այն մասին, որ նա խոստանում էր սկսած 1917թ. նոյեմբերի 1-ից կոմիտեին կամ ներկայացուցչին տարեկան եռակի մուծումով վճարել ստացած կենդանու իրական արժեքի 25-50%-ը, քանի որ այդ ժամանակ եզները 3-6 անգամ ավելի թանկ էին[4]:

Կովերը բաժանվում էին հիմնականում որբերին, այրիներին և այն ընտանիքներին, որտեղ կային փոքր երեխաներ: Բացի այդ, Վանի նահանգապետի և գլխավոր հրամանատարի կողմից անասուն ստացողներին

---

[1] Սամուել Գրահամ Ուիլսոնը մինչ այդ պաշտոնավարել էր Թավրիզում: 1915թ. նոյեմբերի 19-ին նա տեղափոխվում է Էջմիածին և ներկայանում կաթողիկոսին: Տե՛ս ՀԱԱ ֆ. 1289, ց. 2, գ.57,թ.72:

[2] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 275:

[3] Անդ:

[4] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 276:

տրվեց նաև պաշտոնական մի փաստաթուղթ, որը հաստատում էր անասունների պատկանելիությունը և արգելում դրանց օգտագործումն այլ նպատակներով:

Նշված ժամանակահատվածում 600 ընտանիքների տրվեց 400 եզ, 200 այրիներին, որբերին, հաշմանդամներին ու մանուկներին՝ 100 կով, 75 ընտանիքներին՝ 50 գոմեշ: Նախատեսվում էր միջին հաշվով հատկացնել նաև 150 ռ.՝ գոմեշներ, 120 ռ.՝ եզներ, և 80 ռ.՝ կովեր ձեռք բերելու համար[1]:

Քանի որ անհնարին եղավ Պարսկաստանից ձեռք բերել մեծ քանակով սերմացու հացահատիկ, միսիոներները որոշակի գրությունների դիմաց ֆերմերներին տրամադրեցին գումար՝ շրջակա գյուղերից սերմացու գնելու և բերքահավաքին այն վերադարձնելու պայմանով: Արդյունքում՝ 10000 ռ. դիմաց Խոյից ձեռք բերվեց 3000-4000 բուշել ցորեն ու գարի և Վանի շրջանի գյուղացիներին բաժանվեց նաև բավարար քանակությամբ կարտոֆիլի, լոբու, ոսպի, եգիպտացորենի և տարբեր տեսակի բանջարեղենների սերմեր[2]:

Խոյից հացահատիկի, հագուստի և այլ իրերի տեղափոխումը կազմակերպելու համար՝ միսիոներները ձեռք բերեցին եզասայլեր և ավանակներ[3]:

Մինչև 1916 թ. հունիսի սկիզբը Վանի 60 գյուղերում միսիոներները գյուղացիներին են բաժանում 1700 գլուխ անասուն, 2176 փութ ցորեն, 3298 փութ գարի, 4914 փութ տարեկան և 258 փութ կորեկ, մեծ քանակությամբ զանազան բանջարեղենի սերմ, 470-ական խոփ և բահ, 400 մանգաղ[4]: Միաժամանակ, Կովկասից բերվեց և բաժանվեց 30000 կտոր անկողին ու հագուստ[5]:

Քանի որ Վանի պտղատու և խաղողի այգիների մի մասը պատկանում էր թուրքերին, որոնք չէին կարողացել վերադառնալ Վան, իսկ մյուս մասը հայերին, ովքեր գաղթերի ժամանակ մնացել էին Կովկասում, կամ մահացել էին, միսիոներները յուրաքանչյուր այգուց կառավարությանը տրվելիք 2-5 ռուբլի նոմինալ վարձի դիմաց իրականացնում են Ծվստանի ու Արտամետի պտղատու և խաղողի այգիների խնամքը[6]:

---

[1] Անդ, էջ 276-277:

[2] Անդ, էջ 277:

[3] Անդ, էջ 278:

[4] ՀԱԱ ֆ.314, ց. 1, գ.176,թ.88 շրջադ., նաև «Աշխատանք», Երեւան, 1916, սեպտեմբերի 14, թիվ 39, նաև «Վան-Տոսպ», Վան, 1916թ.հունիսի 26, թիւ 31:

[5] Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915-1918 թթ.). Օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու, կազմող, առաջաբանի հեղինակ՝ պատ. գիտ. դոկտոր Լ. Բարսեղյան, հ. 2-րդ, Երևան, 2011, էջ 373:

[6] Ամերիկայի միացյալ նահանգների պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության մասին, էջ 277-278:

Միսիոներների օգտաշատ գործերից մեկն էլ այն էր, որ նրանք ամերիկյան առաքելության շենքում աշխատանքի են տեղավորում բազմաթիվ մարդկանց՝ քաղաքի ավերածությունները վերացնելու, այգիներ տնկելու և այլ գործեր իրականացնելու համար: Նրանք՝ նահանգապետի համաձայնությամբ 50 հոգու տեղավորում են աշխատանքի՝ փողոցները բարեկարգելու և ջրային առուները մաքրելու համար[1]: Բացի այդ, Վան է գործուղվում բուժակ Կարապետ Թորգոմյանը՝ քաղաքի բուժական գործը կազմակերպելու նպատակով:

1917 թ. սեպտեմբերի 23-ին Պարսկաստանից Վան են ժամանում ամերիկացի երկու գործիչներ՝ դոկտոր Մ. Ի. Էլիսը և ամերիկյան մեծահարուստ գերդաստաններից մեկից սերող Չ. Ի. Բյուրին, որոնց ընկերակցում էր Գրեյսին[2]: Հայտնի լրագրող Մ. Էլիսը, որն աշխատակցում էր բազմաթիվ ամերիկյան թերթերին, ինչպես նաև Չ. Ի. Բյուրին Արևմտյան Հայաստան էին գործուղվել Ամերիկյան կառավարության հանձնարարությամբ՝ մոտիկից ծանոթանալու Ռուսաստանի ներքին գործերին, Կովկասյան ռազմաճակատում տիրող կացությանը և ռուսական զորքերի դասավորվածությանը:

Վանի «Ազատության լույս» գրադարան-ընթերցարանում կայացավ հանդիպում ամերիկացի հյուրերի հետ, որտեղ նրանք իրենց սերն ու համակրանքն արտահայտեցին հայերի նկատմամբ:

Հյուրերը եղան նաև Դատվանում:

Այդուհանդերձ, կատարված որոշակի գնահատելի աշխատանքներին զուգահեռ ժամանակակիցների աչքից չի վրիպել նաև ամերիկյան միսիոներների հակահայկական և սուտ մարդասիրական կեցվածքը: Այսպես, դեպքերի ականատես և ժամանակակից Եղիշե Բուրանյանը հայտնում է, որ իր հիշողության մեջ տպավորվել է մի էական հանգամանք, մի ցավալի իրողություն, որ կատարվեց Վանի 1915թ. ահավոր կռիվների ընթացքում: Երբ թուրքական թնդանոթները որոտում էին քաղաքի հայկական թաղամասերի գլխավերևում հայ կանայք և երեխաներն ապաստան գտնելու հույսով սարսափահար դիմում են Վանի ամերիկյան բողոքական առաքելության ներկայացուցիչներին: Սակայն ամերիկյան միսիոներ՝ «այծամորուք հրեշ» դոկտոր Ռեյնոլդսը, որը միշտ մարդասիրություն էր քարոզում բնակչության շրջանում, անգթաբար և առանց խղճի խայթ զգալու մերժում է նրանց և վռնդում: Նույնը կատարում են նաև անգլիական և գերմանական հյուպատոսները[3]:

---

[1] Անդ, էջ 278:

[2] «Արեւ», Բաքու, 1917, հոկտեմբերի 7, թիւ 211:

[3] **Բուրանյան Ե.**, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, Երևան, 2013, էջ 26:

Ֆրանսիական միսիոներություն

Վանում Իտալիայի հյուպատոսական գործակալ Ժ. Սպորտոնի 1915թ. մայիսին 30-ի նամակը՝ ուղղված Պետրոգրադի ֆրանսիական դեսպանին, լույս է սփռում 1914թ. օգոստոսից մինչև 1915թ. մայիս ընկած ժամանակահատվածում Վանում ֆրանսիական Դոմինիկյան միաբանության վիճակի վրա:

Վանի ֆրանսիական դերհյուպատոս Սանֆոռը 1914թ. նոյեմբերի 8-ին Վանից մեկնելու ժամանակ, քաղաքում ամերիկյան հյուպատոսության բացակայության պատճառով, ֆրանսիական շահերի պաշտպանությունը հանձնում է իտալացի հյուպատոս Ժ. Սպորտոնին, որի մասին նա տեղեկացնում է Կ. Պոլսի ԱՄՆ-ի դեսպանին և Վանի նահանգապետին: Սակայն, պատերազմը սկսվելուն պես, Ժ. Սպորտոնը, ճանապարհների անապահովության պատճառով անկարող է լինում այդ մասին տեղյակ պահել ինչպես Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանին, այնպես էլ՝ Տրապիզոնի իտալական հյուպատոսին[1]:

Ըստ Ժ. Սպորտոնի վկայության՝ Վանի կուսակալության քարտուղարը և հանրային կրթության տնօրենը ոստիկանական պաշտոնյաների հետ՝ առանց ֆրանսիական հյուպատոսության գործակալության ներկայացուցչի, Սանֆոռի մեկնումից մեկ շաբաթ անց՝ 1914թ. նոյեմբերի 15-ին ներկայանում են Վանի Դոմինիկյան միաբանություն (որի մի մասը գտնվում էր Վանի հայկական, մյուս մասը՝ մահմեդական թաղամասում) և պահանջում իսկույն Օսմանյան կառավարությանը հանձնել միաբանության վանքերը, դպրոցները, բարեգործական հաստատությունները և հեռանալ Վանից: Ֆրանսիացի միսիոներների արտաքսումը կատարվեց 1914թ. նոյեմբերի 20-ին՝ Բաղեշ-Տիգրանակերտ-Հալեպ-Մերսին ճանապարհով:

Հիվանդության պատճառով Վանում մնաց միայն միաբանության ղեկավար Հ. Բեռնար Կորթմաղթիզը:

Ֆրանսիական միսիոներների հեռանալուց հետո դոմինիկյան հայրերի և քույրերի շենքերը բռնազավթվեցին, թալանվեցին ու վերածվեցին համապատասխանաբար, արական և իգական մեդրեսեների[2]:

Վանի Ապրիլյան հերոսամարտի ժամանակ Դոմինիկյան հայրերի շենքը դարձավ թուրքական, իսկ դոմինիկյան քույրերի շենքը՝ հայկական դիրք: Ինչպես Ժ. Սպորտոնն է վկայում. «Մէկ ամսուան իրենց բնակութեան միջոցին, թուրք և քիւրտ պաշըպօզուքները, որոնք Տոմինիկեաններու շէնքին մէջ դիրք բռնած էին, թալլեցին ինչ որ խուսափած էր թուրք պաշտօնատարներու աւարէն, և երբ Հայերը յաջողեցան հոն մտնել, այնտեղ գտան

[1] **Պառպի Հ.,** Սարսափի երկրին մէջ, Նահատակ Հայաստան, էջ 150-151:

[2] Անդ:

միայն մէկ քանի կարասիներու խլեակները: Քոյրերու հաստատութիւնները, Հայերու հսկողութեան ներքև ըլլալով, զերծ մնացին թալանէ»[1]:

Ռուսական զորքերի և հայ կամավորների կողմից 1915թ. մայիսի 6-ին Վանի գրավումից հետո Դոմինիկյան քույրերի շենքը դարձավ Վանի նահանգապետության կառավարչատունը:

Անշուշտ հարց է առաջանում, թե՛ կաթոլիկ և թե՛ բողոքական միսիոներությունը Վանում ավելի շատ վնաս, թե օգտակարություն է ունեցել: Եթե բողոքականների գործունեությանը նայենք Հայ Առաքելական Եկեղեցու բարոյական նախանձախնդրության տեսանկյունից, նկատվում է, որ մեր եկեղեցին վնասվել է նրանց գործունեությունից, քանի որ բնակչության մեջ առաջացել էր դավանական պառակտում: Նոր վարդապետության հետևորդները, ներկայանալով իբրև «վերանորոգուած, սրբացած և երկնքի յաւիտենական թագաւորութեան փառքը վայելելու միակ արժանիք ունեցողներ», իրենց «անուղղեայ, խաւարի մէջ խարխափող, ամբարիշտ» հայրենակիցների վրա նայում էին իբրև «գեհենի արժանի ժառանգների վրա»[2]: Այս առումով մատնանշելի է նաև ՀԲԸՄ-ի Ամերիկայի Շրջանային հանձնաժողովի ատենադպիր Տ. Վ. Մ. Քյուրքչյանի 1915թ. նոյեմբերի 19-ի նամակը, որտեղ նա ներկայացնելով Նպաստամատույց ընկերության հետ համագործակցող Սամուել Ուիլսոնի միսիոներական նպատակները, մտավախություն է հայտնում որ «մենք վստահ ենք թէ Կովկասի նպաստամատոյց մարմինը պիտի գործէ սօսկ կարոտեալներու պէտքերը հոգալու, առանց յարանուանական պրօպականտի, որովհետև Ամերիկայի նուիրատու ժողովորդը աչքի առջեւ ունի միմիայն քրիստոնեայ հայերու և այլ ցեղերու տառապանքը և երբեք պիտի չը յօրարի, որ ուղղապէս կամ անուղղապէս վիրաւորուին տեղական հոգևոր իշխանութեանց զգացումները[3]:

Վանի Հերոսամարտի ավարտից հետո, երբ Վանի նորաստեղծ նահանգում ծավալվեց վերաշինության քաղաքականություն, կաթոլիկ կղերը և բողոքական միսիոներներն իրենց կեղծ մարդասիրության անվան տակ՝ որպես «դավանանքի գող որսորդներ» և օգտվելով ստեղծված հանգամանքներից, դրամանակ օժանդակության անվան տակ փորձեցին իրենց կողմը գրավել հայկական այն ընտանիքներին, որոնք կորցրել էին իրենց անդամներին, տունը, կայքը և կարոտ էին օգնության: Եվ կաթոլիկ կղերները «լեշի սովոր ուրուրների նման» սկսեցին թափառել հայկական գյուղերում: Ն-րանք, ինչպես Վարազդատ Տերոյանն է նկատում, նախնադարյան առաքյալների նման «Աստուծո խոսք» կամ «կենդանի խոսք» էին բերում մոլո-

[1] **Պառպի Հ.,** Սարսափի երկրին մէջ, Նահատակ Հայաստան, էջ 152:
[2] **Ծերուկ**, Վանի նահանգը ներկայումս, XXV, «Մուրճ», Թիֆլիս, 1904, թիւ 12, էջ 61:
[3] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1289, թ. 71:

րության, տգիտության, թշվառության և բարբարոսության մեջ թաղված ժողովուրդներին և կոչ էին անում նրանց, ովքեր կարոտ էին օգնության[1]:

Կաթոլիկ անամոթ և սրտմտած կղերականները փողով որսում էին հայ չքավոր և արյունաքամ ժողովրդին՝ առանց ամոթի ու խայտառակության[2]: Նրանք իրենց զոհերին շահագրգռում էին «Փարա վար, կաթոլիկ վար, փարա յոխ, կաթոլիկ յոխ»՝ «Փարա [փող] կա, կաթոլիկ կա, փարա չկա, կաթոլիկ չկա» կարգախոսով: Նույնը սկզբունքը կիրառվում էր նաև բողոքական քարոզիչների կողմից: Արդյունքում՝ գտնվեցին գյուղացիական բազմաթիվ ընտանիքներ, որոնք նյութական կարիքից դրդված ընդունեցին կաթոլիկական կեղծ գաղափարները, բայց երբ բարելավեցին իրենց բարեկեցությունը, հեռացան միսիոներական քարոզչությունից և հետ վերադարձան իրենց նախնյաց առաքելական եկեղեցի:

Բացի այդ, միսիոներները հանդես էին գալիս որպես լրտեսներ՝ արժեքավոր տեղեկություններ հաղորդելով իրենց երկրներին: Այսպես, ցարական հետախուզությունը Փարիզից ուղարկված 1916 թ. հունիսի 1/14-ի միանգամայն գաղտնի № 583 հեռագրում տեղեկացնում էր, որ Ցյուրիխում բնակվող, գերմանական ծագումով շվեյցարահպատակ միսիոներ Սպորին, որը Վանի միսիոներական դպրոցի նախկին վարիչն էր և Ֆրանկֆուրտում գտնվող «Դեոյչ-Արմենիե Վեյզենհաուզեն» միսիոներական ընկերության գործակալը, մտադրվել էր մեկնել Վան: Ընկերության ղեկավար պաստեոր Լոմանը 1916 թ. մայիսին Ցյուրիխում գերմանական կառավարության հանձնարարությամբ կազմակերպել էր միսիոներների ջոկատ՝ ռուսական զորքերի կողմից գրավված Վանի, Բիֆլիսի, Էրզրումի, Տրապիզոնի շրջաններում քարոզչական գործունեություն ծավալելու նպատակով: Սակայն ջոկատի բուն նպատակը հայ բնակչության մեջ հօգուտ Գերմանիայի գաղափարախոսական աշխատանք կատարելն էր[3]:

Միսիոներության մասին հետաքրքրական է դեռևս 1908 թ. Արամ Մանուկյանի հնչեցրած տեսակետը: Վեր հանելով ամերիկյան միսիոներության գործունեության լավ կողմերը, որ «անոնք արեան ու արցունքի օրերին փողոցներից հաւաքելով անտէր մանուկներ ապաստանարան տուին», նա միաժամանակ մատնանշում է նաև նրանց արտահայտման զզվելի դրսևորումները. «Ի հարկէ, երբէք չէ կարելի մոռանալ միսիօնարների այն ստրկացուցիչ և ռէակցիօն դերը, որ խաղացին ազատ երկրների ստրուկ ներկայացուցիչներ մեր թշուառ երկրին մէջ. ամբողջ սերունդներ անոնք ստրկացուցին, քամեցին անոնցից այն՝ ինչ կենսունակ էր ու հիւ-

[1] **Տերոյան Վ.**, Իմպերալիստական ծիծեռնակներ. միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Երևան, 2008, էջ 25:
[2] **Բուրանյան Ե.**, Իմ անցյալի հուշերից. Վասպուրականի ողբերգությունը, էջ 25-26:
[3] «Ազդակ» շաբաթաթերթ, Բեյրութ, 1980, ապրիլի 27, թիւ 15, էջ 323-324:

թող և միայն կմախք թողուցին, ըմբոստ ուժերն հալածեցին, վռնդեցին, և ստրկութեան պաշտամունքը հաստատեցին. ազատ և ուժեղ խոսքը բռնաբարեցին և աղաչանք ու լացը միայն թողին»[1]:

Միսիոներների գործունեությունն իրավամբ ճիշտ է գնահատել միսիոներական պաշտոնաթերթ «Աւետաբերը»: Խոսելով միսիոներության ինչպես դրական, այնպես էլ բացասական դրսևորումների մասին՝ պարբերականը գրում է. «Ահա մինչ ասկէ 20-30 տարի առաջ Ամերիկ-միսիոնարները սուտ առաքեալներու և Բողոքականութիւնը անաստուածութեան արժէք ունէին յաչս Վանի Հայ ժողովրդեան մէկ ստուարագոյն մասին, այսօր, շնորհիւ ուսման և կրթութեան պարգևած լուսաւորութեան, այն հին համոզումներն ու ըմբռնումները իսպառ տեղի տուած են նոր գաղափարներու առջև, ինչպէս վերջերս նոյն ժողովրդի կողմէն եղած պատուի ու երախտագիտական ցոյցերով ապացուցուեցաւ հանդէպ Վանի երեք բազմարդիւն միսիոնարներու»[2]:

Այսպիսով, չնայած միսիոներները Վանում ներդրեցին նյութական, հոգևոր և բարոյական զգալի միջոցներ և բացեցին կրթական որոշակի հաստատություններ, այդուհանդերձ, նրանց այդպես էլ չհաջողվեց ձեռք բերել անհրաժեշտ համակիրներ:

Avetis Harutyunyan, Hasmik Simonyan, Zaruhi Tspnesyan, Catholic and Protestant preaching in Van from 1915-1917 - From the 14th century onward, European Catholic and later American Protestant missionaries entered Ottoman Turkey and began to use the harsh conditions of Christians, particularly Armenians, to pursue their secret religious-political goals and interests.

In the late 19th and early 20th centuries, after settling in Constantinople, Protestant preachers attempted to substantiate themselves in the province of Van.

Particularly interesting and valuable are the observations of German, American, and French missionaries on the causes and nature of the Armenian Genocide, the physical suffering of Armenians, and Van's 1915 self-defense.

The missionaries made some contributions to the organization of the rebuilding of Van-Vaspurakan from 1915 to 1917 and in organizing refugee assistance.

However, Catholic and Protestant preaching has damaged the functions of the Armenian Apostolic Church, causing a religious split among the population.

Although the missionaries in Van invested considerable material, spiritual, and moral resources, they did not succeed in obtaining the necessary supporters.

[1] «Գործ», Թիֆլիս, 1908, սեպտեմբերի 23, թիւ 10:

[2] «Աւետաբեր, Կ. Պոլիս, 1912, նոյեմբերի 16, թիւ 46:

Аветис Арутюнян, Асмик Симонян, Заруи Цпнецян, Католическая и протестантская проповедь в Ване с 1915 по 1917 год - С 14-го века европейские католические, а затем и американские протестантские миссионеры вошли в Османскую Турцию и начали использовать суровые условия христиан, особенно армян, для достижения своих тайных религиозно-политических целей и интересов.

В конце 19 и начале 20 веков, после заселения в Константинополе, протестантские проповедники попытались обосноваться в провинции Ван.

Особенно интересными и ценными являются наблюдения немецких, американских и французских миссионеров о причинах и характере Геноцида армян, физических страданиях армян и самообороне Вана в 1915 году.

Миссионеры внесли определенный вклад в организацию повстанцев Ван-Васпуракана с 1915 по 1917 годы и в организации помощи беженцам.

Однако католическая и протестантская проповеди повредили функции Армянской Апостольской Церкви, вызвав религиозный раскол среди населения.

Хотя миссионеры в Ване вложили значительные материальные, духовные и моральные ресурсы, им не удалось найти необходимых сторонников.

ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՆԻ (ԱՐԱՐԱՏ - ՈՒՐԱՐՏՈՒ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀԱՅԿԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր - թեոկրատիա, միապետ, քրմապետ, նվիրապետություն, թագավորական նախնիների պաշտամունք, պատգամախոս, թագադրություն, կրոն։

Վանի թագավորության հոգևոր դասի գործունեության որոշ ոլորտներ կարիք ունեն առավել հանգամանալի հետազոտման։ Բաց է մնում այն հարցը, թե ինչպիսին էր հին հասարակարգում մեծ դեր կատարող հոգևոր դասի փոխհարաբերությունները աշխարհիկ իշխանության հետ, այն ժամանակ, երբ «կրոնական հավատալիքները իշխում էին ամենուրեք»[1]։

Ուրարտուն թեոկրատիկ միապետություն էր, այնտեղ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները արդեն իսկ որոշակիորեն ձևավորված էին։ Ուրարտուի միապետության թեոկրատիկ բնույթը երևում է նրանից, որ արքայական դինաստիայի ձեռքում էր կենտրոնանում ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանությունը։ Այդ փուլում տվյալ հարաբերությունները արդեն անցել էին տոհմատիրական, ցեղային, ցեղային միությունների կազմավորման փուլերը և հասել թեոկրատիկ պետականության ձևավորման շրջանին։ Այդ շրջանում գլխավոր ղեկավար անձը պահպանում էր հին հասարակարգից եկող առաջնորդի բազմաֆունկցիոնալ գործառույթները, սակայն արդեն տվյալ գործառույթների արդյունավետ իրականացման համար ձևավորում էին հատուկ մարմիններ, որոնք ստանձնում էին համապատասխան ոլորտների պարտականությունները, սակայն նրանց գլխավոր ներկայացուցիչը դեռևս համարվում էր արքան։

Կարծիք կա, որ Իշպուինիի ու Մենուայի համատեղ գահակալության ժամանակ, երբ թագավորության հարավ-արևելքում գտնվող Արդինի-Մուսասիրը ներառվում է տերության սահմանների մեջ[2], այդտեղի ղեկավար է նշանակվում Մենուայի եղբայրը[3]։ Սա պետք է որ Սարդուրի անունով մեկը լինի, ում արձանը դրված է եղել Խալդիի տաճարում՝ որպես

[1] Տե՛ս **Ն. Ադոնց,** Քննական պատմություն հայոց, Երկեր, Դ հատոր, Երևան, 2009, էջ 256։

[2] Տե՛ս **Ն. Վ. Հարությունյան,** Ուրարտուի վերելքի սկիզբը, Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, էջ 291։

[3] Տե՛ս **Р. Б. Рыбаков,** История Востока. Восток в древности, том I, Москва, 2000, с. 319.

քրմապետի[1]: Սակայն, եթե անգամ արքայի եղբայրն էր իր վրա վերցնում քրմապետի պարտականությունները, միևնույնն է, թագավորն էր համարվում բարձրագույն քուրմը: Պատճառն այն է, որ թագավորն իր տերության ներսում չէր կարող լինել նույն ասպարեզում գործող անձի ենթակայության տակ: Ինչպես օրինակ՝ թագավորը չէր կարող պատերազմի ժամանակ զորքերի ղեկավարի ենթակայության տակ գործել, որովհետև ինքը նաև զորավար էր և այդ պատճառով համարվում էր ուրարտական բանակի գլխավոր հրամանատարը[2]: Այսինքն, այդ շրջանում ձևավորվում է հոգևոր իշխանության պարտականությունները ստանձնող մարմին, սակայն այդ իշխանության գլուխը դեռևս համարվում է թագավորը: Այդ ժամանակաշրջանում պետության կառավարման թեոկրատական համակարգը տարածված երևույթ էր նաև Արևելքի այլ երկրներում: Օրինակ՝ Ասորեստանի թագավոր Սալամանասար Ա-ն Ուրարտուի վրա հարձակվելու մասին իր արձանագրությունում գրում է, որ ինքը արշավանքը սկսել է իր «քրմության սկզբում»[3]:

Կարելի է պնդել, որ կրոնն էր այդ ժամանակի հասարակական կենսակերպի շարժման հիմնական աղբյուրը: Մհերի դռան արձանագրությունում հիշատակվում են 70 աստվածներ և սրբություններ, նրանց գլխավորը համարվում էր Խալդին, ամենայն հավանականությամբ այդ աստվածը տեղական ծագում ուներ և համարվում էր իշխող վերնախավի աստվածը: Սակայն Խալդին, ինչպես նշում է Ս. Հմայակյանը, այդ արձանագրությունում ունի երկակի դրսևորում և սովորական պաշտվող աստվածների օրինաչափությունից դուրս է[4]: Խալդին այդ արձանագրությունում հանդես է գալիս «և՛ որպես Վանի թագավորության դիցարանի աստվածություններից մեկը (առաջինը հավասարների մեջ), և՛ որպես վերդիցարանային, «բարձրյալ» մի երևույթ»[5]: Խալդիի երկվության արդյունք է նաև այն, որ նա մի կողմից ընկալվել և պատկերվել է անդեմ, որպես ուրարտական մտածողությանը ծանոթ անընկալելի արարիչ[6], իսկ մյուս կողմից հանդես է գալիս որպես մարդակերպ աստված, կանգնած առյուծի վրա[7]: Այդ երկվությունը հնարավոր է կապված լինի իշխող տոհմի վաղ

---

[1] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** Урарту. Древнейшее государство Закавказья, Ленинград, 1939, с. 16.

[2] Տե՛ս **К. А. Софроненко,** Обшественно-политический строй Урарту, Москва, 1961, с. 37.

[3] **Ա. Խաչատյան,** Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 25:

[4] Տե՛ս **Ս. Հմայակյան,** Մհերի դուռը, Մշակույթ, թ. 3, Երևան, 1990, էջ 84:

[5] **Վ. Ա. Իգումենով, Հ. Հ. Կարագյոզյան, Ս. Հմայակյան,** Օձասարի սեպագիր արձանագրությունը, ՊԲՀ, թ 1, Երևան, 1997, 199:

[6] Տե՛ս **Ս. Ս. Եսայան, Ս. Դ. Հմայակյան,** Ուրարտական զգեստը, ՊԲՀ, թ. 3, Երևան, 1980, էջ 204:

[7] Տե՛ս **Մ. Գավուքճյան,** Ուսումնասիրություններ Հայոց հնագույն պատմության, Երևան, 2010, էջ 328: **Մ. Կատվալյան,** Խալդի, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր

ժամանակների ներկայացուցչի հետ, որն աստվածացվել է և այդ անձի պաշտած աստծու հետ, որի պաշտամունքը սինկրետիզմի արդյունքում միացվել է արքայատոհմի նախնու հետ: Հոչակավոր նախնու (հիմնականում՝ տոհմի կամ ցեղի սկզբնավորողի) աստվածացման օրինակ կա թե՛ հունական հեթանոսական կրոնում և թե՛ մեզ մոտ՝ հետագա դարերում Վահագնի պարագայում: Այդպիսի դեպքերում հենց աստվածացված անձի հետնորդներն էլ դառնում էին նրա քրմերը: Դրանով կարելի է պայմանավորել նաև Ուրարտուի արքայի հատուկ դերը Խալդիի պաշտամունքում: Խալդիի վերդիցարանային հատկանիշները կարող են կապվել պրոտո-հնդեվրոպական հնագույն աստծու՝ Երկնքի հոր (Dyeus pater) պաշտամունքի հետ: Այդ պաշտամունքը գոյություն է ունեցել մինչև հնդեվրոպական ցեղերի տարածումը, որից հետո որպես երկնքի կերպարանավորումներ պահպանվել հույների[1], հռոմեացիների, գերմանական ցեղերի[2], հնդիկների և այլ ազգերի կրոններում[3]: Հայկական լեռնաշխարհը, համարվելով հնդեվրոպական ցեղերի բնօրրանի հնարավոր տարբերակներից մեկը, իսկ ժողովուրդը՝ հնդեվրոպացիներ, անշուշտ պետք է պահպաներ այդ աստվածության պաշտամունքի տարրերն իր կրոնական համակարգում: Բացի այդ, Խալդին նույնպես հանդես է գալիս որպես երկնքի աստված, իսկ նրա անվան ծագումը ենթադրվում է, որ կապված է երկնքի հետ[4]: Շումերերենում Խալդիի անվան առաջին Hal վանկը արտահայտվել է եռաբաղադրիչ աստղի տեսք ունեցող գաղափարագրով, որը նշանակել է լուսավորել[5], իսկ Dyeus pater-ը համարվում էր հենց պայծառ կամ լուսավոր երկնքի աստվածը:

Ուրարտուում անշուշտ կար զգալի նշանակություն ունեցող քրմական դաս, որի մասին պատկերացում ենք կազմում պատկերագրությունից, այդ մասին տեղեկություն հայտնող սակավաթիվ սեպագիր արձանագրություններից, հնագիտական գտածոներից, հարևան երկրների որոշ գծերով նման կրոնական համակարգերից, տերությունում պաշտվող աստվածների հարուստ ցանկից ու նրանց նվիրված բազմաթիվ պաշտա-

---

4, Երևան 1978, էջ 705: **Ա. Գրիգորյան, Գ. Գրիգորյան,** Ուրարտու Վանի թագավորություն. Կատալոգ-Ալբոմ, Երևան, 2018, էջ 62-63:

[1] Տե՛ս **J. N. Bremmer,** Greek Religion, Cambridge, 1999, p. 98.

[2] Տե՛ս **R. Paterson,** Anthropological Glossary, Florida, 1985, p. 7.

[3] Տ՛ես **S. M. Winn,** Heaven, Heroes and Happiness. The Indo-European Roots of Western Ideology, New York, 1995, p. 81.

[4] Տե՛ս **Ե. Գրեկյան, Մ. Բադալյան,** Բիայնիլի-Ուրարտու. Աստվածներ, տաճարներ, պաշտամունք, Երևան, 2018, էջ 18-19:

[5] Տե՛ս **Ա. Մովսիսյան,** Haldi դիցանվան գրության, նշանակության և հարակից հարցերի շուրջ, Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը. Գիտաժողով (Զեկուցումների թեզեր), Երևան, 2000, էջ 33:

մունքային վայրերի առկայությունից: Քրմական դասը ղեկավարվում էր Ուրարտուի արքայի կողմից, որն անձամբ զոհաբերություններ էր կատարում[1], սակայն մեր կարծիքով դա կատարվում էր միայն հատուկ դեպքերի առիթով, ինչպիսին էր օրինակ՝ պատերազմում տարած հաղթանակը: Այդպիսի օրինակ կա նաև ասորեստանյան պատկերագրության մեջ, որտեղ Սալմանասար Գ-ը հաղթանակի ժամանակ երկու քրմերի ներկայությամբ զոհ է մատուցում[2]: Արմավիրից հայտնաբերված երեք քարերի վրա գրված 13 տողանոց արձանագրությունից[3] երևում է պաշտամունքի անցկացման կարգ և արդեն իսկ ձևավորված քրմական հիերարխիայի մի մաս:

Այդ արձանագրությունից և այլ տվյալներից կարելի է ենթադրել, որ Ուրարտուի հոգևոր դասը ուներ հետևյալ նվիրապետական կառուցվածքը՝ Ուրարտուի թեոկրատ միապետ, արքայի հարազատներից (հիմնականում՝ եղբայրը) կամ նշանավոր դաշնակիցներից քրմական պարտականությունները ստանձնած, այդ ոլորտի խնդիրներով զբաղվող տերության քրմապետ: Գրավված տարածքների տեղական ցեղային առաջնորդ թագավոր-քրմեր, տարբեր աստվածների տաճարների գլխավոր քրմեր, զոհաբերություն կատարողներ ([LU]urbikani), որոնք իրենց ձեռքով կատարում էին նվիրաբերված կենդանու մասնատումը, ողջակիզումը և զոհաբերումը: Պատգամախոսներ, ովքեր ժողովրդին հայտնում էին աստվածների կամքը. ենթադրվում է, որ նրանք սեպագրերում հանդիպող ([LU]aueiteni)-ներն են: Քրմական դասի գիտունները ([LU]palagi), որոնք զբաղվում էին տոմարական հաշվարկներով, կատարում էին եղանակային կանխատեսումներ գյուղատնտեսական աշխատանքների համար և դրանց համապատասխան փուլերով կազմակերպում կրոնական տոնակատարություններ: Հենց այդ խմբին է վերագրվում ասսուրական գրի հիման վրա ուրարտական սեպագրի ստեղծումը և կրթության տնօրինումը[4]: Տաճարներում կային նաև քրմերի օգնականներ: Այդ թվին կարելի է դասել նաև տաճարներին ծառայող մարդկանց ([LU]seluini, [LU]purunurdani, [LU]iriuni, [LU]siarkira)[5], որոնք զբաղվում էին տաճարապատկան հոտերով, տաճարին անհրաժեշտ արհեստավորական գործերով, առևտրով և հողատարածքների մշակությամբ: Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձվեր խաղողի այգինե-

[1] Տե՛ս **Գէորգ-Մեսրոպ,** Հայաստանի նախաբնիկները եւ իրենց քաղաքականութիւնը, Կ. Պոլիս, 1911, էջ 141:

[2] Տե՛ս **Բ. Բ. Պիոտրովսկի,** Ուրարտու պետության կազմավորումը. Ցեղային միություններից դեպի պետություն, Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, էջ 285:

[3] **Գ. Ղափանցյան,** Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 90:

[4] Տե՛ս **Ս. Գ. Հմայակյան,** Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 74, **Լեո,** Երկերի ժողովածու, Ա հատոր, Երևան, 1966, էջ 214:

[5] Տե՛ս **Գ. Ե. Գրեկյան,** Բիայնիլի - Ուրարտու. Պետություն և հասարակություն (պատմահնագիտական հետազոտություն), ատենախոսություն, Երևան, 2016, էջ 224-225:

րի մշակությանը և դրանցից ստացվող գինու պատրաստմանը: Այդ այգիներից շատերը տնկվում էին արքաների նախաձեռնությամբ և ունեին նաև սրբազան նշանակություն[1]:

Ճիշտ է, արքան թագադրությունից հետո դառնում էր նաև հոգևոր առաջնորդ, սակայն մինչ այդ նա պետք է ստանար քրմաց դասի հաստատումը և օրինավոր կերպով հռչակվեր նոր գահակալ, քանի որ Ուրարտուում համարվում էր, որ միայն Խալդին կարող էր իշխանություն շնորհել: Լուվրի թանգարանում պահպանված Սարգոն Բ-ին պատկանող մի սալիկի վրա արձանագրված է տեղեկություն այն մասին, որ Մուսասիրի տաճարում պահվում էր մի կնիք, որով հաստատվում էին աստվածային կամքի արդյունք ներկայացվող արքայի թագավորության, իշխանության հաստատման, կարևոր ծիսական արարողությունների և քրմապետի այլ կարևոր հրամանները[2]:

Գահ բարձրանալիս Ուրարտուի արքաները թագադրվում էին հատուկ արարողությամբ: Թագադրության վայրը Արդինին (Մուսասիր) էր՝ ուրարտացիների[3] համար նշանավոր պաշտամունքի վայր, որտեղ գտնվում էին գլխավոր աստված Խալդիի տաճարն ու արձանը, որի առջև էլ կատարվում էր գահակալությունը: Ուրարտական թագադրման արարողության մասին պատմվում է Սարգոն Բ-ի արձանագրություններից մեկում. «...նրա որդիներից, որը պիտի ժառանգի նրա գահը, ոսկով, արծաթով և ամեն թանկարժեքով և պալատի հարստությամբ Մուսասիր, Խալդիի առջև են առաջնորդում, և նա տալիս է նվերները՝ պարարտ եզներ ու ոչխարներ անհաշիվ նրա առջև զոհ է մատուցում: Ամբողջ նրա քաղաքի համար խնջույք է կազմակերպում, Խալդիի առջև, նրա աստծո, նրան օծում են տիրակալության խույրով [և] իշխանական թիկնոցով, նրան տալիս են կրելու Ուրարտուի թագավորական գայիսոնը, իսկ նրա մարդիկ բարձրաձայն գոչում են նրա անունը»[4]: Մեր կարծիքով, այս արձանագրությունում տրվում է գահակալության արարողակարգի մոտավոր նկարագրություն և դեպքերը հստակ հաջորդականությամբ չեն նշվում: Տրամաբանությանը և ընդունված սովորություններին հակասող է թվում խնջույքի անցկացումը մինչև գահակալության արարողությունը: Թե՛ խնջույքը, և թե՛ արձանագրությունում նշված գահակալի կողմից կատար-

[1] Տե՛ս **Ե. Գրեկյան, Մ. Բադալյան,** Բիայնիլի-Ուրարտու. Աստվածներ, տաճարներ, պաշտամունք, Էջ 20-21:

[2] Տե՛ս **Ա. Ս. Փիլիպոսյան,** Հայկական լեռնաշխարհի կնիքները Հին Արևելքի կնքագործության համակարգում, Երևան, 1998,էջ 86-87:

[3] «Ուրատու» և «ուրարտացի» եզրույթները գործածում ենք ոչ թե էթնիկ, այլ ժամանակագրական իմաստով:

[4] **Ս. Գ. Հմայակյան,** Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին, ՊԲՀ, թ. 1, Երևան 1975, էջ 163:

վող զոհաբերությունը, ըստ մեզ, կատարվել է Խալդիի տաճարի քրմապետի կողմից թագադրվողին խույրի և գայիսոնի հանձնումից հետո: Խույրն ու գայիսոնը իրենց հերթին խորհրդանշում էին նաև հոգևոր իշխանություն, իսկ թիկնոցը աշխարհիկ իշխանության սիմվոլ էր, որոնք ստանձնելով Ուրարտուի արքան բարձրացվում էր հատուկ դիրքի և դառնում էր ժողովրդի առաջնորդն ու Խալդիի հովանավորյալը: Նորընծա արքաների առաջին երեք գործերը բովանդակում էին իրենց զբաղեցրած հատուկ դիրքը, որոնք էին՝ այգիների տնկումը, տվյալ ժամանակ տերությանը սպառնացող թշնամու դեմ արշավանքը և տաճարների կառուցումը[1]:

Ասորեստանյան մեկ այլ արձանագրությամբ Սարգոն արքան հիշատակում է, որ Խալդի աստծու մեհյանը կողոպտելու ժամանակ այնտեղ տեսել է Արգիշտի արքայի արձանը, որը աջ ձեռքով օրհնում էր և որի գլխին դրված է եղել աստվածների խույրը [2]: Աջ ձեռքով օրհնելը հոգևոր գործառույթ է, որի մինչև այսօր էլ կիրառվում է հոգևոր դասի կողմից, իսկ տաճարում մահացած արքայի արձանը աստվածների խույրով կանգնեցնելու փաստը վկայում է թագավորական նախնիների պաշտամունքի մասին: Այդ սովորությունը հետագայում փոխանցվում է Երվանդունիների հայկական թագավորությանը: Դա մի ուրույն եղանակ էր քրմության համար հասարակության առաջ թագավորի սակրալ կերպարի ձևավորման գործում, որի վրա էլ քրմերը կառուցում էին իշխող դասի գաղափարախոսությունը[3]:

Ուրարտուի հոգևոր դասը Մերձավոր Արևելքի ժամանակի այլ քրմերի նման իրականացրել է գուշակություններ և հանդես եկել հատուկ պատգամախոսներով: Այդ մասին հուշում են մեզ հասած պատկերագրական որոշ դրվագներ և տեքստեր: Գուշակություններ իրականացվել են հենց նշանավոր պաշտամունքի վայր հանդիսացող Մհերի դռան մոտ[4], Արգիշտիխինիլիում[5], որի մասին հիշատակություն ունի անգամ Մովսես Խորենացին Անուշավան Սոսանվերի առիթով և այլ վայրերում: Կարծում ենք, որ տերության գլխավոր պատգամախոսը համարվում էր արքան: Արքայի գլխավոր պատգամախոսի դերակատարությունը կշեշտադրեր ժողովրդի և աստվածների միջև եղած միջնորդի նրա հատուկ դիրքը, որով արքան իր ենթակաների համար դառնում էր աստվածային կամքի թարգմանիչը, իսկ նրա արձակած ամեն մի հրամանին և կատարած ամեն մի քայլին վերագրվում էր վերերկրային ներշնչում: Սակայն, ի տարբերութ-

[1] Տե՛ս **Ա.Մովսիսյան,** Արարատ-Ուրարտու թագավորությունը, Երևան, 2018, էջ 107:
[2] Տե՛ս **Վ. Հացունի,** Պատմութիւն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 20:
[3] Տե՛ս **Գ. Խ. Սարգսյան,** Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգը հելլենիստական դարաշրջանում, Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, էջ 663:
[4] **Մ. Ս. Բադալյան,** Ուրարտու դիցարանի գերագույն եռյակը, էջ 63:
[5] Տե՛ս **Մ. Գավուքճյան,** Ուսումնասիրություններ Հայոց հնագույն պատմության, էջ 330:

յուն քրմաց դասի այլ պատգամախոսների, արքայի «աստվածային կամքի հայտնությունները» ենթակա էին պարտադիր իրականացման, որովհետև նրան էր պատկանում նաև վարչական իշխանությունը: Այդպես ձևավորվում էր նաև արքայի օրենսդրական իշխանությունը, որով մեկ անձի ձեռքում, տերության ներսում կենտրոնանում էր չափազանց մեծ իշխանություն: Մեզ են հասել այդ երևույթը հաստատող բավականին փաստեր: Ուրարտուում պատգամախոսի դեր կատարած անձինք հիշատակվում են արքայական անուններով, հայտնի է նաև այդ ժամանակահատվածում կենդանու լյարդի միջոցով կատարվող գուշակությունների սովորության մասին, իսկ ուրարտական տեքստերում նշվում է, որ զոհաբերվող կենդանիների լյարդը և սիրտը տրվում էին արքային[1], իսկ որմնանկարներում պատգամախոսություն կատարողի խույրը շատ նման էր արքայականին[2]: Կավե տախտակների վրա պահպանված, Շամաշ աստծուն ուղված Ասարհադոն արքայի արձանագրությունը ցույց է տալիս, որ Ասորեստանում նույնպես արքան հանդես էր գալիս որպես պատգամախոս և իրեն անծանոթ ներկա որոշակի իրավիճակի ու ապագայի վերաբերյալ հարցումներ էր կատարում իր պաշտած աստվածներից[3]: Ուրարտական պատկերագրության մեջ հանդիպում են արքաների պատկերներ սրբազան համարվող ծառերի պաշտամունք իրականացնելիս[4], իսկ այդ ծառերը, ինչպես գիտենք, կապված էին գուշակությունների հետ:

Ուրարտական սեպագիր արձանագրությունների վերջում աստվածների անունից հնչող սպառնալիքի տեքստերը հուշում են, որ շատ դեպքերում այն քայլերի դիմաց, ինչի համար անեծք էր գրվում, պետք է մեղավորը դատի ենթարկվեր նախ և առաջ աստվածների երկրավոր ներկայացուցիչների կողմից: Իսկ այդ ժամանակ պաշտվող գլխավոր աստծու առաջին ներկայացուցիչը համարվում էր արքան և նրանից հետո մնացած քրմերը: Այդ կերպով նշմարվում է թագավորի գլխավորությամբ և քրմաց դասի ավելի ցածր ատյաններից բաղկացած դատական համակարգի կառուցվածքը: Նման մի արձանագրություն համարվում է ուրարտական արքունական-տաճարային օրենսգրքից պահպանված մի մաս. «...Ով գողանա (կամ) ձի վարի, թող տա (մեկ) կանգուն մորթի (և) սանձը: Սարդուրին ասում է. - Ով գողանա, թող ոչնչացնե՛(ն) Խալդին, Թեյշեբան, Շիվինին (և)

---

[1] Տե՛ս **Գ. Ե. Գրեկյան,** Բիայնիլի - Ուրարտու. Պետություն և հասարակություն, էջ 23, 40, **Ն. Վ. Հարությունյան,** Կարմիր-բլուրի ուրարտական նոր արձանագրությունները, ՊԲՀ, թ 2-3, Երևան, 1967, էջ 225:

[2] Տե՛ս **Ռ. Ա. Իշխանյան,** Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան 1988, էջ 27:

[3] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** Урарту. Древнейшее государство Закавказья, с. 29.

[4] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** Ванское царство (Урарту), Москва, 1959, с. 229.

աստվածները (նրան) արևի տակից»[1]: Եթե պատերազմները, շինարարությունները, այգիների տնկումը և այլ բաները կատարվում էին աստվածների անունից, նրանց ներկայացուցիչների կողմից, ապա դատավարության գործը ևս չպետք է բացառություն կազմեր: Սակայն, եթե թվարկված դեպքերի համար, աստվածների անունից, թագավորի առաջնորդությամբ հասարակության ռազմիկների, արհեստավորների և հողագործների դասերն էին իրագործում այդ ամենը, ապա դատավարության համար թագավորին կարող էր ծառայել քրմաց դասը: Քրմերը Ուրարտուի գրավոր մշակույթի ստեղծողն ու հիմնական կրողն էին[2], ինչը շատ կարևոր է հասարակական նորմերի և արքայական հրամանների արձանագրման ու իրավական կարգավորման հարթությունում կիրառման համար: Բացի այդ, նրանք էին պաշտվող աստվածների պաշտոնյաները և ժամանակի պատկերացումների երկնային կարգերին ծանոթ անձինք: Ե. Գրեկյանի կարծիքով, Վանի թագավորությունում, Ասորեստանի նմանողությամբ դատական խնդիրների դեպքում վերնախավի ներկայացուցիչները իրավավճիռ ստանալու համար դիմում էին թագավորին[3]:

Վանի թագավորությունում պատերազմի ժամանակ աշխարհիկ և հոգևոր իշխանության ուժերը կողք կողքի, արքայի գլխավորությամբ իրենց մասնակցությունն էին բերում ռազմական գործողություններին: Դեռևս Ք. Ա. XII դարի ասսուրական աղբյուրներում նշվում է, որ արշավանքների ժամանակ Նաիրյան ցեղերի ռազմիկների հետ մասնակցում էր նաև քրմաց դասը[4]: Մինչ ճակատամարտի սկիզբը արքան քրմերի ուղեկցությամբ կատարում էր հատուկ արարողություն: Դրա ընթացքում արքան դիմում էր Խալդիին և մյուս աստվածներին, խնդրում նրանց հովանավորությունը և ըստ երևույթին կատարում նաև ճակատամարտի արդյունքի վերաբերյալ կանխատեսումներ: Դրանից հետո արքան դիմում էր զորքին, ոգևորում նրանց և ռազմական կոչերով շարժվում էին առաջ[5]: Ասսուրական արձանագրություններում կա տեղեկություն այն մասին, որ նրանք Մուսասիրի Խալդիի տաճարը թալանելուց վերցրել էին բրոնզից պատրաստված 25212 վահաններ, 1514 նիզակներ և 305412 թրեր[6]: Ուրարտարտական պաշտամունքի վայրերում մեծաքանակ զենքերի առկայութ-

[1] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Հնագույն ժամանակներից մինչև Ք. Հ. 298, էջ 174:
[2] Տե՛ս **Ս. Գ. Հմայակյան,** Վանի թագավորության պետական կրոնը, էջ 74:
[3] Տե՛ս **Գ. Ե. Գրեկյան,** Բիայնիլի-Ուրարտու. Պետություն և հասարակություն, էջ 25:
[4] Տե՛ս **Р. Б. Рыбаков,** История Востока. Восток в древности, с. 318.
[5] Տե՛ս **Ս. Գ. Հմայակյան,** Վանի թագավորության պետական կրոնը, էջ 76:
[6] Տե՛ս **Б. Б. Пиотровский,** Урарту. Древнейшее государство Закавказья, с. 27-28.

յան մասին խոսում են նաև հնագիտական գտածոները[1]: Կարծիք կա, որ այդ հսկայական քանակությամբ զենքերը հավաքվել էր տաճարին տրվող ռազմավարի և նվիրատվությունների արդյունքում[2]: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ տաճարական արհեստանոցները զենքեր էին պատրաստում թագավորական բանակի համար և տաճարներում գործում էր զինանոց: Մհերի դռան արձանագրությունում հիշատակվող աստվածների ցանկում կա նաև սրբությունների շարք: Այդ շարքում կա տեղեկություն «Խալդի զորքերի» մասին, որը Վանի թագավորությունում նշանակում էր նաև տվյալ աստծուն նվիրված հատուկ զորամասեր[3]: Խալդիի տաճարում պահվող հսկայական քանակությամբ զենքերը գուցե և պահվում էին հենց այդպիսի զորամասերի համար: Սակայն զենքերի քանակական լուրջ տարբերությունը հուշում է, որ դրանք կանոնակարգված, հստակ սահմանված զորամիավորների սպառազինություն չէին: Ք. Հ. Դ դարում, Փավստոս Բուզանդի վկայությամբ հայկական բանակում կար սովորություն ճակատամարտից առաջ զենքերը օրհնելուն, ըստ երևույթին, դա ուներ հին արմատներ, որոնք հասնում էին մինչև Վանի թագավորություն, հավանաբար, ավելի վաղ: Մեր կարծիքով ռազմիկները իրենց զենքերը թողնում էին Խալդիի տաճարում, որպեսզի դրանց վրա իջներ այդ աստծու օրհնությունը և դրանց փոխանցվեր զորություն: Դրա հետ կարող էր կապվեր Մհերի դռան սրբությունների շարքում հիշատակվող «Խալդիի զենքը», որի համար զոհեր էր մատուցվում: Եթե հաշվի առնենք զենքի ուժի դերը տվյալ հասարակարգում, ապա պարզ կդառնա, որ ժամանակի պետական գաղափարախոսության հիմնադիրները ջանք ու եռանդ չպիտի խնայեին դրան վերերկրային աղերսներ կատարելու համար, որպեսզի աստվածների հովանավորությամբ ոգեշնչեին զորքին: Մի բան հստակ կարող ենք ասել, որ քրմաց դասի մասնակցությունը էական է եղել պատերազմական գործերին, ինչի պատճառով հաղթականների ժամանակ միայն Խալդիի տաճարի քրմերին բաժին էր հասնում ամբողջ ավարի և ստրուկների մեկ վեցերրորդ մասը[4]:

Վերոնշյալ բոլոր գործոնները լուրջ դեր ունեին Ուրարտուի արքաների վարած քաղաքականության մեջ: Գրաված նոր տարածքները տերության անբաժան մի մասնիկը դարձնելու համար, գործադրվում էին մեծ ջանքեր, որպեսզի ստեղծվեր ընդհանրական մի համակարգ: Դրանում տնտեսական, գրային, ռազմական մասերի հետ մեկտեղ մեծ կարևո-

[1] Տե՛ս **Մ. Խորայելյան,** Ուրարտական մի հուշարձան Երզնկայի մոտ, ՊԲՀ, թ. 4, Երևան, 1967, էջ 313:

[2] Տե՛ս **Ե. Գրեկյան, Մ. Բադալյան,** Բիայնիլի-Ուրարտու. Աստվածներ, տաճարներ, պաշտամունք, էջ 23:

[3] Տե՛ս **Ս. Հմայակյան,** Մհերի դուռը, էջ 86:

[4] Տե՛ս **Գէորգ-Մեսրոպ,** Հայաստանի նախաբնիկները եւ իրենց քաղաքականութիւնը, էջ 141:

րություն էր տրվում նաև կրոնին: Կրոնը կազմում էր ուրարտական արքաների տերության միասնականության ամրապնդման քաղաքականության էական բաղկացուցիչ մասը: Այդ քաղաքականության արդյունքն էր Ուրարտուի արքա Իշպուինիի ու նրա որդի Մենուայի ռազմական, գրային[1], չափ ու կշռի, տոմարի ռեֆորմների հետ մեկտեղ իրականացրած կրոնական ռեֆորմը[2]: Ուրարտուի կրոնական պանթեոնում ներառված էին դաշնակից ցեղերի[3]ու գրավված տարածքների պաշտվող աստվածները, որոնց գլուխը համարվում էր Խալդին: Խալդին համարվում է Ուրարտուի իշխող վերնախավի էթնիկ աստվածը, որի բարձրագույն քուրմը համարվում էր հենց ինքը՝ արքան: Գրաված շատ տարածքներում հիմնադրվում էին Խալդիին նվիրված պաշտամունքի վայրեր, որով ուրարտական արքաները «ամենուրեք տանում են Խալդ աստծու պաշտամունքը, որ նշանակում է պետական միութեան գաղափարը»[4]: Այդ նախաձեռնությունը, բացի տերության ներքո ապրող ժողովրդին համախմբելու գործից, նաև ուժեղացնում էր արքայի թեոկրատիկ և բացարձակ իշխանությունը[5]:

Նախիջևանի Ջուղայի շրջանում, հայկական լքված Խոշակունիք բնակավայրի մոտ՝ Օձասար լեռան[6] վրա, 1988 թ. գտնված ուրարտական սեպագիր մի արձանագրությունում ասվում է. «Խալդյան զորությամբ Իշպուինե Սարդուրորդին ասում է (՞). Մինուա Իշպուինորդին Արծինե (քաղաքի) երկիրը (գրավեց) ... Վերադարձին հիմնեց Խալդեի կոթողը Բալուա (լեռան) վրա: Հաստատեց կարգ. Գանձերն (՞) այս Խալդեին թող զոհաբերվեն, (մեկ) ցլիկ Խալդե տիրոջը բարձրյալ (թող զոհաբերվի՛) Բալուա (լեռան) վրա»[7]: Արձանագրությունում տեսնում ենք, որ Իշպուինիի և Մենուայի համատեղ կառավարման ժամանակ Արծինեն գրավելուց հետո, այլ տեղերի նման հաստատվում էր Խալդիի պաշտամունքի վայր: Հետաքրքրական է, որ հաստատվում էր կարգ, ըստ որի, գրաված տարածքի մարդիկ բացի կենդանիների և այլ զոհաբերություններից նաև գանձեր պետք է

---

[1] Տե՛ս **Հ. Ամառյան,** Հայոց պատմություն. Հյուսված ընդհանուր պատմության հետ, Երևան, 2004, էջ 30, **Ա. Մովսիսյան,** Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 26:

[2] Տե՛ս **Ա. Մովսիսյան,** Հայոց պատմության աշխարհակալությունները, Երևան, 2008, էջ 35:

[3] Տե՛ս **Լեո,** Վանի Ուրարտու թագավորութիւնը. Նաիրի եւ Ուրարտու, Թիֆլիս, 1915, **Զ. Գրիգորյան,** ԽՍՀՄ-ի տերետորիայի հնագույն ժողովուրդները (Ուրարտու պետությունը, Միջին Ասիան, Վրաստանը և Ադրբեջանը մինչև X դարը), Երևան, 1940, էջ 88:

[4] **Գ. Գիւզալեան,** Հայաստանի պատմութեան շրջանները, Պէյրութ, 1946, էջ 33:

[5] Տե՛ս **А. Г.Сукиасян,** Очерк истории государства и права Биайнили-Урарту (880-590 гг. до н. э.), Ереван, 1975, с. 63.

[6] Այն գտնվում է պատմական Հայաստանի Սյունիքի Երնջակ Վասպուրականի Գողթն գավառների սահմանագլխին:

[7] **Վ. Ա. Իգումենով, Հ. Հ. Կարագյոզյան, Ս. Հմայակյան,** Օձասարի սեպագիր արձանագրությունը, 194:

ընծայեին պաշտամունքի վայրին: Դրանից կարելի է ենթադրել, որ ուրարտական արքաները իրենց համար կարևոր նշանակություն ունեցող, նոր նվաճված տարածքներում, պատերազմի դաժանություններից հետո, իրենց տերությանը այն հիմնավորապես միացնելու համար, գուցե սկզբնական ժամանակահատվածում հաստատում էին այսպես ասած «սրբազնագործված հարկահավաքություն»: Արձանագրությունում շեշտվում է, որ նվաճված տարածքի բնակչությունը պե՛տք է անպայման նյութական միջոցներ տրամադրեին նոր հաստատված պաշտամունքային վայրին, քանի որ դա արքայի կողմից սահմանված կարգ էր: Արձանագրությունում նշվող Խալդիին նվիրաբերվող նյութական միջոցները համապատասխանում էին նվաճված տարածքներից Ուրարտուին որպես հարկ տրվող միջոցներին: Ենթակա իշխանություններից որպես հարկ գանձվում էին խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձիեր ու այլ կենդանիներ, գյուղատնտեսական ու արհեստավորական ապրանքներ, ինչպես նաև կապար, բրոնզ, արծաթ ու ոսկի[1], ինչն էլ հավանաբար նկատի էր առնվել արձանագրությունում գանձեր ասելով: Այդ կերպով, մի քայլ առաջ էր մղվում նոր տարածքը ուրարտական թագավորության մեջ ընդգրկելու, միասնական պետության մի մասը դարձնելու գործը: Մյուս կողմից, նյութական միջոցների, այդ թվում գանձերի պարբերական, կանոնակարգված տրամադրումը, պետք է թագավորին տրվող հարկերի պատկերը փոխարիներ ամբողջ տերության համար հաստատված Խալդիի պաշտամունքի համար կատարվող զոհաբերության ավելի ընդունելի պատկերով: Արդյունքում այդ բոլոր հասույթները պատկանում էին արքային, քանի որ նա էր համարվում տերության գլխավոր հոգևոր առաջնորդը, իսկ տաճարները կատարում էին նաև արքայական գանձարանի դեր[2]:

Արմավիր (ժամանակի Արգիշտիխինիլին) քաղաքից գտնված, կիսով չափ պահպանված 13 տողանոց արձանագրությունում տեսնում ենք սահմանված նման կարգի իրականացումը: Տեղի իշխանը նվիրատվություններ և զոհաբերվող կենդանիներ էր մատուցում Խալդիի տաճարին: Արձանագրությունում գրված է, որ զոհաբերությունը Արգիշտիի անունով էր սահմանված[3]: Անունը հին արևելյան լեզվամտածողության մեջ ուներ չափազանց կարևոր նշանակություն, այն բացի կոչելու համար միջոց հանդիսանալը արտահայտում էր նաև անձի էությունը: Արարողության մեջ Արգիշտիի անվան կիրառությունը ոչ միայն նշանակում էր, որ դա կատարվում էր նրա հրամանով, այլ կրում է այլ իմաստներ ևս: Դրանով հայտարարվում է տեղի արարողակարգի մասնակիցների կողմից Ուրար-

[1] Տե՛ս **К. А. Софроненко,** Обшественно-политический строй Урарту, с. 41.
[2] Տե՛ս **Р. Б. Рыбаков,** История Востока. Восток в древности, с. 322.
[3] Տե՛ս **Գ. Ղափանցյան,** Ուրարտուի պատմությունը, էջ 91:

տուի արքայի աշխարհիկ և հոգևոր իշխանության ընդունումը և նրա համար կատարվող մաղթանքը, ինչը մինչև օրս կարելի է տեսնել կրոնական արարողությունների մեջ։ Ուրարտուի արքայի անվան կիրառությունը արարողության մեջ կարող էր ունենալ նաև ավելի խորքային նշանակություն։ 1828 թ. Վանի քարաժայռի արևմտյան մասում Ֆ. Է. Շուլցի կողմից հայտնաբերված, միչև այժմ հայտնի ամենաերկար ուրարտական արձանագրության մեջ, որը գիտության մեջ հայտնի է «Խորխոռյան տարեգրություն» անվամբ, Արգիշտին ասում է. «Աղոթում էի Խալդի տիրոջը, Թեյշեբային, Շիվինի(և) աստվածներին Բիահինիլի (երկրի)՝ իշխանական մեծությամբ, որի վերևում լսում էին ինձ աստվածները...»[1]։ Դա կարող է հաղորդել Ուրարտուի հասարակական, կրոնական պատկերը, որտեղ հատուկ կերպով չէր ընդգծվում շարքային անհատի դերը։ Այդ ժամանակի կրոնը ենթադրում էր ոչ թե անհատական հոգևոր ապրում, այլ համայնական դրսևորում, որը իրականացվում էր զոհաբերություններով ու ընդհանրական արարողակարգերով։ Այն կյանքի էր կոչվում քրմաց դասի միջոցով, որի գլուխ կանգնած էր արքան։ Այսինքն՝ արքան համարվում էր ժողովրդի և աստվածների կապող հզորագույն օղակը, որին լսում էին աստվածները իրեն տրված օրինական իշխանության ու աստվածային կամքի իրագործողի հատուկ դերի շնորհիվ։ Ըստ ժամանակի պատկերացումների՝ արքայի հենց այդ դերի շնորհիվ էր ժողովրդին տրվում օրինաղրությունը, արդարությունը, հաղթանակները և բարօրությունը։ Այդ իսկ պատճառով արարողության մեջ նշվող արքայի անունը կարող էր ծառայել որպես միջնորդի վկայակոչում Խալդիին դիմելու համար, որովհետև արքան հանդիսանում էր նրա երկրավոր, սակրալ հովանավորյալը։

Եթե Ուրարտուի առաջին արքաների ժամանակ միանշանակ էր քրմապետ-արքայի միանձնյա դերը, ապա ավելի ուշ՝ Ք.ա. 714-ին մենք տեսնում ենք Արդինի-Մուսասիրում առանձին առաջնորդ՝ Ուրզանային, որի անունը, ի դեպ, հաշվի առնելով սեպագրության մեջ տարածված ա-ու անցումը, նույնական էր հայոց վերջին քրմապետ Արձանի անվան հետ (վերջինս զոհվեց 301 թ. քրիստոնյաների դեմ Տարոնի պատերազմում)։ Այս դրվագից կարելի է արձանագրել մի նոր փուլի սկզբնավորում, երբ արքայի և քրմապետի պաշտոնները սկսում են առանձնանալ։ Սակայն, այդ փուլում նկատվում է ևս մի նշանակալից փոփոխություն՝ թագավորական նախնիների պաշտամունքի հետ սկսում են պաշտել նաև ապրող արքային։ Այդ մասին վկայում է Ռուսա Ա-ի երկլեզվյան արձանագրությունը, որտեղ նշվում է, որ Խալդիի տաճարի գլխավոր քուրմ Ուրզանան

[1] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. Հնագույն ժամանակներից մինչև Ք. Հ. 298, էջ 162։

աստվածների հետ մեկտեղ զոհ է մատուցում նաև արքայի համար[1]: Արքան այլևս ոչ թե գլխավոր հոգևոր պաշտոնակատարն էր, այլ նա՝ ում համար պաշտամունք էր մատուցում ողջ հոգևոր դասը: Այդ կերպ, մեկ աստիճան էլ էր բարձրացվում արքայի դերը և նա արդեն հոգևոր առաջնորդ լինելու կարիք չէր ունենում: Հին կրոնական մտածողության մեջ աստվածները հոգևոր պաշտամունք չէին կատարում, այլ ընդունում էին այն: Արքայի պաշտամունքը արմատավորելու համար պետք էր այն ամենաբարձր մակարդակով իրականացնել: Արքան ինքն իրեն չէր կարող պաշտամունք մատուցել,հետևաբար գլխավոր քրմապետի պաշտոնը հանձնվում էր մեկ ուրիշին: Այդ հիմքով, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առաջնորդության պաշտոնները բաժանվում էին: Արքայի և քրմապետի պաշտոնների առանձնացումը կարող էր կատարվել երկու կերպ՝ առաջին դեպքում հոգևոր պարտականությունները ստանձնում էր արքայի եղբայրը կամ մտերիմներից մեկը:Սակայն, այս պարագայում արքան դեռևս համարվում էր գլխավոր հոգևոր առաջնորդը: Երկրորդ դեպքում արքան աստվածացվում էր և քրմապետության պաշտոնը անցնում էր մեկ ուրիշին, այս պարագայում արքան այլևս չէր կատարում հոգևոր:

Այսպիսով, Վանի (Արարատ-Ուրարտու) թագավորության հոգևոր և աշխարհիկ իշխանության փոխհարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս՝

• Վանի թագավորությունում առաջին արքաների ժամանակ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները գտնվում էին արդեն որոշակի զարգացման աստիճանի վրա:

• Այդ շրջանում ձևավորվում և հզորանում է միայն հոգևոր ոլորտի գործառույթները իրականացնող դասակարգ, որի գլուխը դեռևս համարվում էր արքան:

• Կազմավորվում է քրմական դասի նվիրապետական աստիճանակարգը, որն ընդգրկում էր նաև տերության նորանվաճ վայրերը: Դրա միջոցով ոչ նյութական կերպով փորձ էր կատարվում նորանվաճ տարածքները դարձնել ընդհանրական համակարգի մի մասը:

• Տերության միասնականության ուժեղացման համար արքայի և քրմական դասի կողմից ակտիվորեն տարածվում էր նաև Խալդիի պաշտամունքը: Նրա հանդեպ հատուկ վերաբերմունքը, ինչպես նաև վերդիցարանային ու երկակի բնույթը, մեր կարծիքով, կապված էր իշխող տոհմի վաղ ժամանակների ներկայացուչի հետ, որը աստվածացվել էր և այդ անձի պաշտած աստծու՝ հին հնդեվրոպական Երկնքի հոր (Dyeus pater) հետ, որի պաշտամունքը սինկրետիզմի արդյունքում միացվել է արքայատոհմի նախնու հետ:

[1] Տե՛ս **Ս. Գ. Հմայակյան,** Ուրարտական դիցարանի աստվածությունների մասին, էջ 163:

• Բազմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ Ուրարտուի արքան հանդես է եկել նաև որպես տերության գլխավոր պատգամախոս:

• Գոյություն ուներ արքայական նախնիների պաշտամունք, որն օգտագործվում էր թագավորի սակրալ կերպարի ձևավորման համար և որի հիմքի վրա հետագայում նույն սովորությունը զարգանում է Երվանդունիների թագավորությունում:

• Որոշակի դեպքերի համար ուրարտական տեքստերի աստվածների անունից հնչեցվող սպառնալիքները ենթադրել են տալիս, որ մեղավորներն այդ արարքների համար նախ պետք է պատասխանատվություն կրեին աստվածների երկրավոր ներկայացուցիչների՝ թագավորի ու քրմերի ատյանների առաջ:

• Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունները լրջորեն ազդում էին ուրարտական արքաների վարած քաղաքականության վրա:

• Ուրարտուի թագավորության վերջին շրջանում թագավորական նախնիների պաշտամունքի հետ մեկտեղ տեղի է ունենում ապրող արքայի աստվածացում:

• Թագավորության վերջին շրջանում բաժանվում են արքայի և քրմապետի պաշտոնները:

Айкарам Акобян, Взаимоотношения между духовными и светскими властями в королевстве Ван (Арарат-Урарту) - В IX-VI веках до Р. Х., была чрезвычайно важна роль религии в жизни общества, и в этой статье исследуется проблема объяснения многих исторических явлений того периода. Предпринята попытка прояснить вопрос о взаимоотношениях между духовными и светскими властями в Королевстве Ван с точки зрения религиозной, идеологической, традиционалистической, военной, дипломатической, правовой и экономической сфер. В статье представлены эти взаимоотношения во времена правления первых царей и их развитие и изменения у последующих представителей царской династии.

Показана определенная связь между праиндоевропейским верховным богом (Dyeus pater) с богом королевской элиты Халидом, и обусловленная этим особая роль светского правителя в религиозной жизни. Представлена роль взаимоотношения духовной и светской власти в политике урартских царей. Во время правления последних царей Урарту был отмечен новый этап этих отношений: разделение должностей между королем и верховным жрецом и типы этого разделения.

Haykaram Hakobyan, The Relationship between Spiritual and Secular Authorities in the Kingdom of Van (Ararat-Urartu) - During IX-VI ages B. C The role of religion in the life of society was extremely high and this article explores the problem of explaining many historical phenomena of that period. An attempt is made to elucidate the question of the relationship between the spiritual and the secular authorities through religious, ideological, traditional, military, diplomatic, legal, economic spheres in the kingdom of Van. This relationship is presented during the reign of the first kingsand its development and change during the reignof future representatives of the royal dynasty.

There is some connection between Proto-Indo-European (Dyeus pater) and the royal elite god Khaldiand the king's special role in religious life.The role of the relationship of spiritual and secular authorities to the policy of the Urartian kings is presented.During the last reigns of Urartu, marks the new phase of those relationships distribution of king's and high priest's positions and the types of that division

1994 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ

ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բանալի բառեր - Արցախյան ազատամարտ, ԵԱՀԽ, Վ. Կազիմիրով, «Բիշքեկյան արձանագրություն», Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնք, «Ֆաքսային դիվանագիտություն», միջազգային դիտորդներ, զինադադար

1994 թվականի գարնանը, որքան թեժանում էին մարտական գործողություններն արցախա-ադրբեջանական ռազմաճակատում, նույնքան էլ սաստկանում էր պայքարը դիվանագիտական հարթակում: Ադրբեջանական կողմը մեկը մյուսի ետևից կորցնելով վերահսկողությունը նախկին ԼՂԻՄ-ի հարակից շրջանների նկատմամբ լուրջ մտավախություն ուներ, որ ի վերջո հայկական զինված կազմավորումները, կառաջանան մինչև Կուր-Արաքսյան միջագետք: Ահազնացող պատերազմի ֆոնին՝ մայիսի սկզբին Բաքվից երկու պաշտոնական պատվիրակություններ մեկնեցին. առաջինը՝ նախագահ Հեյդար Ալիևի գլխավորությամբ Բրյուսել՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում ստորագրելու Հյուսիսատլանտյան դաշինքի հավելյալ ենթակառույցին՝ «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրին Ադրբեջանի անդամակցության արձանագրությունը, երկրորդը՝ Գերագույն խորհրդի փոխնախագահ Աֆիյաթդին Ջալիլովի գլխավորությամբ Բիշքեկ՝ ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի շրջանակներում բանակցություններ վարելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցի շուրջ[1]:

Ադրբեջանը միանալով «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագրին՝ փորձեց այն օգտագործել որպես հակակշռող սպառնալիք, ակնկալելով համապատասխան արձագանք-զիջում ստանալ Բիշքեկում: Բրյուսելում Հ. Ալիևը պահանջում էր ՆԱՏՕ-ին օգնել վերադարձնելու հայերի կողմից «գրավյալ» տարածքները: Ի պատասխան՝ Հյուսիսատլանտյան դաշինքի գլխավոր քարտուղարի տեղակալ Սերջո Բալանցինոն ադրբեջանական պատվիրակությանը հասկացրել էր, որ ՆԱՏՕ-ն այդպիսի հարցերում ինքնագլուխ նախաձեռնություն չի կարող հանդես բերել:

Մայիսի 4-5-ին Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում հավաքվեցին ԱՊՀ Միջխորհրդարանական խորհրդաժողովի ներկայացուցիչներն, Արցախի Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, ներկա էր անգամ Ալանդյան կղզիների ներկայացուցիչ Ռոջեր Յանսոնը: Բանակցությունների հենց սկզբից պարզ դարձավ, որ դյուրին

[1] «Ազատամարտ», Ե., 1994, N 19 (162), էջ 7:

ընթացք այն չի ունենալու: Համաժողովի բացմանը Միջխորհրդարանական խորհրդաժողովի Խորհրդի նախագահ Վլադիմիր Շումեյկոն հայտարարեց, որ Միջին Ասիայում և Անդրկովկասում Ռուսաստանի ամենագլխավոր շահը խաղաղությունն է:

Նիստին ներկա ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը ողջունեց հենց բուն հանդիպման փաստը, դրական գնահատեց ԱՊՀ Միջխորհրդարանական խմբի միջնորդների ջանքերն ուղղված արցախյան հակամարտության կարգավորմանն ու նշեց, որ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը նույնիսկ նվազագույն երաշխիքների առկայության պարագայում պատրաստ են գնալ խաղաղության ռիսկի[1]:

Հանդիսավոր ճառերից հետո, հանդիպում եղավ նաև Ղրղզստանի նախագահ Ասքար Ականի հետ: Այնուհետև սկսվեց երկօրյա թեժ վեճերի շրջանը: Բանակցություններ էին ընթանում մեկ հանձնաժողովի ողջ կազմով, մեկ ղեկավարների նեղ շրջանակներում, իսկ հանդիպման մնացած անդամները միջանցքում սպասում էին խոսնակների քննարկումների վերջնական արդյունքին: Ի վերջո առարկություն չեղավ՝ կրակի և բոլոր տեսակի ռազմական գործողությունների դադարեցման մասին՝ ԱՊՀ ղեկավարների ընդհանուր հայտարարության վերաբերյալ:

Այսպիսով, հակամարտող կողմերը համաձայն էին գլխավոր հարցի՝ կրակի դադարեցման վերաբերյալ, բայց որոշակի հակասություններ ունեին կապված երկրորդային հարցերի նկատմամբ: Մասնավորապես պարզաբանման կարիք ունեին հետևյալ հարցերը.

1. արդյո՞ք Արցախը համարվում է հակամարտող կողմ,
2. արդյո՞ք արցախահայության փաստացի ղեկավարության մակարդակին պետք է հավասարեցնել «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի» ղեկավարությանը՝ Նիզամի Բահմանովի գլխավորությամբ,
3. ի՞նչ պետք է նշվի Կ. Բաբուրյանի անվան տակ՝ ԼՂԻՄ-ի ներկայացուցիչ, թե՞ այլ կերպ:

Այս առնչությամբ կողմերը եկան հետևյալ եզրահանգմանը՝ չնշվեն ստորագրողների պաշտոնները, այլ ուղղակի ձևակերպվի «Պատվիրակության անունից» եզրույթը: Ադրբեջանական կողմը փորձ արեց նաև արձանագրության տեքստի սկզբնամասից հանել «...այլև էապես շոշափում է տարածաշրջանի մյուս երկրների շահերը» արտահայտությունը, որը սակայն մերժվեց համաժողովի մնացած անդամների կողմից[2]:

Չնայած Մոսկվայում Վ. Շումեյկոյի և Ադրբեջանի ԳԽ նախագահ Ռասուլ Գուլիևի միջև ձեռք բերված նախնական պայմանավորվածության՝ ադրբեջանական կողմը Բիշքեկում հրաժարվեց Արցախը ճանաչել

[1] «ՀՀ», Ե., 1994, N 87(951), էջ 3:

[2] **Բակուր,** Արցախյան գոյամարտի համահավաք, գ. 2 - րդ, Ե., 2008, էջ 19:

հակամարտության կողմ: Ադրբեջանի ԳԽ փոխնախագահ Ա. Ջալիլովը հայտարարեց, որ պաշտոնական Ադրբեջանը դեմ է արձանագրության այն կետին, որը նախատեսում է ԱՊՀ խաղաղարար ուժեր տեղակայել հակամարտության գոտում: Փոխխոսնակը պնդեց, որ այդ փաստաթուղթը պետք է ստորագրի նաև Արցախի «ադրբեջանական բնակչության» ներկայացուցիչը, պետք է ընդունվի Հայաստանի կողմից ագրեսիայի փաստն, իսկ զինադադարի գլխավոր նախապայման համարեց գրավյալ տարածքների ազատումը: Ի պատասխան՝ Վ. Շումեյկոն իր եզրափակիչ խոսքում ընդգծեց, որ հակամարտության խաղաղ կարգավորման հարցում առկա են երեք սկզբունքային մոտեցումներ.

1. կրակի դադարեցում,
2. հակամարտության երեք կողմերի հստակ արձանագրում՝ Ադրբեջան, Հայաստան, Լեռնային Ղարաբաղ,
3. հակամարտության կարգավորում՝ ԱՊՀ խաղաղարար զինված ուժերի շրջանակներում[1]:

Ի վերջո, քննարկումների արդյունքում, ձևակերպվեց պաշտոնական մի փաստաթուղթ, որն արցախյան հակամարտության կարգավորման պատմության մեջ մտավ՝ «Բիշքեկյան արձանագրություն» անվամբ[2]:

Սակայն Ադրբեջանի ԳԽ փոխխոսնակ Ա. Ջալիլովը հրաժարվեց այն ստորագրել: Այս կապակցությամբ ՌԴ պատվիրակության ղեկավար Վ. Շումեյկոն նշեց, որ մի գիշեր ու մի ցերեկ աշխատեցին երկու էջանոց փաստաթղթի վրա, բայց այնպես էլ համաձայնության չեկան[3]: Արդյունքում բանակցող կողմերը կրկին կանգնեցին փաստի առջև: Թեև Ադրբեջանի պատվիրակությունը շտապ կարգով մեկնեց Ղրղզստանից, այնուհանդերձ նիստին ներկա մյուս մասնակիցները ստորագրեցին այդ փաստաթուղթը, իսկ արձանագրության ադրբեջանական կողմի համար նախատեսված հատվածը որոշվեց ազատ թողնել՝ այն ավելի ուշ ստորագրելու միտումով: Հանդիպման ավարտից հետո, երեկոյան, Ղրղզստանի ԳԽ նախագահ Մեդիթխան Շերիմկուլովի անունից՝ բիշքեկյան վեհաժողովի մասնակիցների համար տրվեց պաշտոնական ընթրիք:

Ավելի ուշ, արձանագրությանն ադրբեջանական կողմի չստորագրումը Ա. Ջալիլովը պատճառաբանեց նրանով, որ այնտեղ չի թույլատրվել դնել նաև Ն. Բահմանովի ստորագրությունը, որ այդ փաստաթուղթը իրենց շահերին դեմ է, և որ առանց Հ. Ալիևի վերջնական համաձայնության ինքն իրավասու չէր որևէ փաստաթուղթ ստորագրելու:

---

[1] «ՀՀ», Ե., 1994, N 87 (951), էջ 1–3:

[2] Տե՛ս **Հակոբյան Թ.,** Կանաչ ու սև: Արցախյան օրագիր - 3-րդ հրատ., Ե., 2011, Հավելված թիվ 37:

[3] «ՀՀ», Ե., 1994, N 86 (950), էջ 1:

Ու քանի դեռ ադրբեջանական կողմը հապաղում էր ստորագրելու «-Բիշքեկյան արանագրությունը», հայկական զինված կազմավորումները շարունակում էին ազատագրական մարտերը ռազմաճակատի ողջ երկայնքով: Հատկապես թեժ բախումներ էին ընթանում ադրբեջանական վերջին խոշոր հենակետի՝ Միր Բաշիրի (Թարթառի) շրջանում: Այդ օրերին Արցախի Պաշտպանության բանակի քաղբաժնի պետի տեղակալ Սերժ Առուշանյանը նշում էր. «Մեր բանակի ոգին շատ բարձր է: …Ադրբեջանցիները մարտի դաշտը լքում են գումարտակներով, իսկ մեր զինվորը գիտակցաբար է կռվում, մենք նահանջելու տեղ չունենք: …Մենք Ադրբեջանին պետք է պարտադրենք խաղաղությունը»[1]: ՈՒ պարտադրեցին:

Անկարա ժամանած Հ. Ալիևն ու նրան Բիշքեկից միացած Ա. Ջալիլովը թուրքական բարձրագույն ղեկավարության հետ ունեցած խորհրդակցության ժամանակ մանրամասնորեն քննարկեցին Բիշքեկյան արձանագրության կետերը՝ գիտակցելով, որ Ադրբեջանի կողմից այն չստորագրելու դեպքում պաշտոնական Մոսկվայի հակազդեցությունը երկար սպասեցնել չի տա, իսկ Թուրքիան դեռևս այն ուժը չունի, որ դիմագրավի ռուսական գործոնին: Բրյուսել և Անկարա կատարած այցերը Հ. Ալիևին հասկացնել տվեցին, որ հետագա ռազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանը միայնակ պետք է դիմագրավի հայկական զինված ուժերին: Այս միտքը ևս առիթ հանդիսացավ, որ նա նույնպես մտածի զինադադարի կնքման վերաբերյալ: «Ինտերֆաքս» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Հ. Ալիևը նշեց, որ պատերազմը պետք է դադարեցվի, քանի որ այն անհեռանկարային է թե Ադրբեջանի, և թե Հայաստանի համար:

Մայիսի 8-ին, կիրակի, Հ. Ալիևը վերադարձավ Բաքու, այնտեղ մեկնեց նաև Ռուսաստանի Դաշնության նախագահի հատուկ հանձնարարություններով բանագնաց Վլադիմիր Կազիմիրովը, ով հանդիպեց Ադրբեջանի ղեկավար այրերին. մասնավորապես՝ Ադրբեջանի արտաքին քաղաքականության գծով պետխորհրդական Վաֆա Գուլիզադեին, արտաքին գործերի նախարար Հասան Հասանովին, պաշտպանության նախարար Մամեդռաֆի Մամեդովին, Ռուսաստանում Ադրբեջանի դեսպան Ռամիզ Ռիզայևին և այլն: Նրանց թվում էր և ԳԽ նախագահ Ռ. Գուլիևը, ով նոր էր վերադարձել ռազմաճակատի Թարթառի հատվածից՝ անձամբ համոզվելով, որ ադրբեջանական դիրքերը կործանման եզրին են[2]: Հանդիպման մեկնարկին Հ. Ալիևն անտեսելով դիվանագիտական էթիկայի կանոնները՝ բարկացավ Վ. Կազիմիրովի վրա պնդելով, որ այդ փաստաթուղթը դեմ է Ադրբեջանի շահերին: Ներկա ադրբեջանցի պաշտոնյաները

[1] **Բունիաթյան Ա.,** Արյան գինը, գ. 7, Ե., 2011, էջ 365-369:

[2] **դե Վաալ Թ.,** Սև այգին. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Ե., 2007, էջ 335:

համաձայնվեցին իրենց նախագահի հետ: Ու երբ թվում էր, որ այս հանդիպման ելքն արդեն կանխորոշված է, դեսպան Ռ. Ռիզայևը կողմ արտահայտվեց հրադադարի հաստատմանը, որին անմիջապես աջակցեց Ռ.-Գուլիևը: Ի վերջո առաջարկվեց կոմպրոմիսային մի տարբերակ՝ փաստաթուղթը ստորագրել որոշակի խմբագրմամբ. «դիտորդներ» բառը փոխարինվեց՝ «միջազգային դիտորդներ»ով, իսկ «զբաղեցրած տարածքներ» բառակապակցությունը՝ «գրաված տարածքներ»ով: Որոշվեց նաև թույլ տալ Արցախի «ադրբեջանական բնակչության» ներկայացուցիչ Ն. Բահմանովին

Քննարկման ավարտին փաստաթղթի ստորագրման կողմնակիցները տեսակետ հայտնեցին, քանի որ արձանագրությունը մնացած անդամները ստորագրել են խորհրդարանների խոսնակների մակարդակով, ուստի Ադրբեջանը ևս այդպիսի ձևաչափով այն պետք է ստորագրի: Հ. Ալիևն այդ առաջարկն ընդունեց լռությամբ: Թեև արդեն որոշվել էր տեքստի որոշակի խմբագրման վերաբերյալ, այնուհանդերձ Ռ. Գուլիևն իր ստորագրության տակը մակագրեց. «Ստորագրված է պայմանով, որ տեքստի 5-րդ ենթակետի 3-րդ տողում, վերևից, մինչև «դիտորդներ» բառը կավելանա «միջազգային» բառը և նույն ենթակետի 6-րդ տողում, վերևից, «զբաղեցրած» բառը կփոխարինվի «գրավյալ» բառով: Այս ուղղումները (նշված բառերը, որոնք ուղղվեցին), վերաբերվում են նաև օրիգինալ տեքստին»[1]:

Ղրղզստանի Գերագույն խորհրդի նախագահ Մեդիթխան Շերիմկուլովը՝ Վ. Կազիմիրովից ստանալով ադրբեջանական կողմից «Բիշքեկյան արձանագրությանը» միանալու լուրը, շտապ, պաշտոնական հեռագիր ուղարկեց Հայաստանի իր պաշտոնակից՝ Բ. Արարքցյանին:

Իսկ հանրության լայն շրջանակներն առաջինը ռուսական ռադիոկայաններից տեղեկացան, որ Վ. Կազիմիրովի Բաքու ժամանելուց հետո ադրբեջանական կողմը ստորագրել է այդ արձանագրությունը: Բաքվում ՋԼՄ-ների ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման ժամանակ Վ. Կազիմիրովը պատասխանեց, որ ադրբեջանական կողմից փաստաթղթի ձևափոխումն ուղղակի Ադրբեջանի հատուկ կարծիքն է այդ տեքստի շուրջ, մնացածների համար, ովքեր դեռ Բիշքեկում էին այն ստորագրել՝ համաձայնագրի տեքստը մնում է նույնը: Ռուս միջնորդը շեշտեց, որ նախագիծը բաղկացած է երեք հիմնական փուլերից.

- առաջինը՝ ներառում է հրադադարը, ռազմական գործողությունների դադարեցումը և դրանք հուսալիորեն կայունացնելը, որին տրվում է 6 օր, ներառյալ ուժերի տարանջատումը,
- երկրորդը բաժանվում է չորս ենթափուլերի, նախատեսում է բոլոր գրավված տարածքների ազատում (բացի Շուշիից ու Լաչինից), գերիների,

[1] http://www.vn.kazimirov.ru/x013.htm.

պատանդների արագ փոխանակում, հաղորդակցությունների վերականգնում, փախստականների վերադարձ հայրենի վայրեր և, որ այդ ամենին նախագծով հատկացվում է 34 օր:

• երրորդը՝ բանակցություններ, որոնց ընթացքում կնախատեսվի քննարկել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը:

Անդրադարձ եղավ նաև ամենակատարյալ տարբերակի՝ տարածաշրջան Շվեդիայի, Ֆինլանդիայի, Ավստրիայի բաժանարար ուժեր տեղակայելու հնարավորության մասին:

Իսկ հակամարտության հարցի լուծումն իրավական հարթության վրա էր, թե՞ քաղաքական կոնսպեկտում: Այս հարցը շարունակում էր օդում կախված մնալ: Վ. Կազիմիրովն իր ելույթներից մեկում անդրադառնալով այս խնդրին ասել էր. «Դուր է գալիս դա որևէ մեկին թե ոչ, ղարաբաղյան հակամարտության լուծումը երբեք չի լինի զուտ իրավաբանական, այն անկասկած կլինի առավելապես քաղաքական»[1]:

«Բիշքեկյան արձանագրության» ստորագրման փաստը միանշանակ չընդունվեց Ադրբեջանի հասարակության կողմից: Բաքվի «Զերկալո» թերթի սոցիոլոգիական հարցախույզի արդյունքների հրապարակումից պարզ դարձավ, որ հարցվածների 30, 7 %-ը դրական է գնահատում «Բիշքեկյան արձանագրությունը», 17, 8 %-ը հիմնականում դրական, 17 %-ը բացասական և 11, 5 %-ը հիմնականում բացասական[2]: Քաղաքական հարթակում Ադրբեջանի ընդդիմադիրները հայտարարում էին, որ Ռ. Գուլիևն ազգի դավաճան է, որ նա իր ստորագրությունը դնելով Կ. Բաբուրյանի ստորագրության կողքին առիթ է ընձեռում Արցախի միջազգային ճանաչմանը: Բաքվի դիտորդների կարծիքով էլ, Ադրբեջանի միանալը «Բիշքեկյան արձանագրությանը» արդեն իսկ Արցախի կարգավիճակի կանխորոշում է: Ադրբեջանցի ընդդիմադիրների «Բիշքեկյան արձանագրության» նկատմամբ որդեգրած խիստ բացասական դիրքորոշման հիմնական փաստարկն՝ այդ համաձայնագրից Շուշիի ու Լաչինի վերաբերյալ կետերի բացակայությունն է, որը նշանակում է հիշյալ տարածքների զիջում Հայաստանին: Նրանց բնորոշմամբ, Ալիևյան վարչակարգը գնում է ցանկացած քայլի, այդ թվում արցախյան հակամարտությունն ի օգուտ Հայաստանի լուծելուն՝ միայն իր աթոռները պահպանելու համար:

Հայկական կողմում ևս այն միանշանակ չընդունվեց հանրության կողմից, թեև ղեկավար շրջանակներում, համենայն դեպս իրենց բաց ելույթների ժամանակ, դրական էին գնահատում այդ քայլը: Արցախի ԱԳ նախարար Արկադի Ղուկասյանն այս արձանագրությունը համարեց

[1] **Աբասով Ա., Խաչատրյան Հ.,** Ղարաբաղյան հակամարտության լուծման տարբերակներ, մտահաղացումներ և իրականություն, Ե., 2002, էջ 28:

[2] http://www.vn.kazimirov.ru/x013.htm.

պատմական, քանի որ Արցախն առաջին անգամ ներկայացված էր իբրև լիիրավ կողմ, իսկ Կ. Բաբուրյանի ստորագրությունը դրվել էր մնացած մասնակիցների ստորագրությունների կողքին:

Համաձայն «Բիշքեկյան արձանագրության» հորդորին, Արցախի ղեկավարությունը՝ բարիադրացիականության ժեստ անելով, հրաման արձակեց ՊԲ ուժերին՝ մայիսի 9-ի 00 ժամից շփման գծի ողջ երկայնքով միակողմանի կարգով կրակը դադարեցնելու վերաբերյալ:

Ռ. Գուլիևի կողմից արձանագրության ստորագրումից հետո, Հ. Ալիևը հանձնարարեց պաշտպանության նախարար Մ. Մամեդովին Վ. Կազիմիրովի հետ ձևակերպել՝ կրակի դադարեցման վերաբերյալ փաստաթուղթը: Ռուս միջնորդը Բաքվից հեռախոսով կապ հաստատեց պաշտոնական Երևանի ու Ստեփանակերտի հետ՝ համաձայնեցնելու նոր փաստաթղթի բովանդակությունը: Մայիսի 9-ին Հ. Ալիևի նույն աշխատասենյակում նախագահի, Վ. Կազիմիրովի, Ռ. Գուլիևի, Մ. Մամեդովի, Ռ. Ռիզաևի ներկայությամբ կայացավ նոր խորհրդակցություն՝ կապված հրադադարի պահպանման մասին պաշտոնական պարտավորության փաստաթղթի ձևակերպման քննարկմանը: Ադրբեջանական կողմը կրկին պահանջեց փաստաթղթում մաս հատկացնել նաև Ն. Բահմանովի ստորագրության համար, որն այս անգամ մերժվեց Վ. Կազիմիրովի կողմից:

Ռուս դիվանագետի կազմած հրադադարի համաձայնագրի ամփոփիչ տարբերակում հակամարտության կողմեր նշվեցին Ադրբեջանն ու Արցախը: Սակայն ադրբեջանական ներկայացուցիչները հայտնեցին, որ կողմ են միայն փաստաթղթին պաշտոնական Երևանի ստորագրմանը: Հեռախոսով Երևանից հայտնեցին, որ առանց պաշտոնական Ստեփանակերտի ստորագրության, նրանք ոչ մի փաստաթուղթ չեն կնքի: Ի պատասխան ադրբեջանցիները նշեցին, որ մեկ սեղանի շուրջ, թեկուզ և փաստաթղթի ստորագրման նպատակով, առավել ևս արցախահայերի հետ դեմ առ դեմ չեն նստի:

Թեև որոշվել էր հրադադարի պահպանման մասին փաստաթուղթ ստորագրել, բայց ժամանակ չէր եղել որոշելու դրա կնքման վայրն ու ժամը, ուստի հարցը չձգձգելու համար որոշվեց դիմել դիվանագիտական ոչ ավանդական մի մեթոդի, որը Վ. Կազիմիրովը բնորոշել էր «Ֆաքսային դիվանագիտություն» եզրույթով: Հայկական կողմը շեշտեց, որ փաստաթուղթն առաջինը հաստատի ադրբեջանական կողմը: Հ. Ալիևի թույլատվությամբ Մ. Մամեդովն իր ստորագրությունը դրեց հրադադարի պահպանման մասին պաշտոնական պարտավորության փաստաթղթի տակ:

Այդ տեքստին համարժեք մաքուր օրինակներ (առանց Ադրբեջանի պաշտպանության նախարարի ստորագրման) ուղարկվեցին Երևան և Ստեփանակերտ խնդրանքով՝ արդեն ստորագրված տեքստն ուղարկել

միանգամից ՌԴ ԱԳՆ: Այսպիսով, եղավ համարժեք տեքստով երեք օրինակ, որոնցից յուրաքանչյուրում դրված էր միայն տվյալ կողմի ներկայացուցչի ստորագրությունը: Զուգահեռաբար օրինակներ ուղարկվեցին Մոսկվա՝ ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովին և իր տեղակալ Գեորգի Կոնդրատևին:

Փաստաթուղթը մայիսի 10-ին, որոշակի խմբագրմամբ, ստորագրեց ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը: Մասնավորապես բաց էր թողնվել պաշտպանության նախարարների կողմից 18.02.1994 թվականի մոսկովյան արձանագրության հղումներից մեկն ու չէր ներառվել սպասվելիք զինադադարի համաձայնագրի ստորագրմանը Մինսկի խմբի նախագահին հրավիրելու առաջարկությունը: Կազիմիրովն այդ շտկումների մասին անմիջապես հայտնեց ադրբեջանական կողմին: Ն-րանք, թեև որոշակի դժգոհություն արտահայտեցին, այնուհանդերձ համաձայնվեցին: Արցախի ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանը մայիսի 11-ին իր ստորագրությունը ևս դրեց տվյալ փասթաթղթի տակ[1]: Մայիսի 12-ին՝ Մոսկվայում, հրադադարի պահպանման մասին պաշտոնական պարտավորության փաստաթղթի իրավաբանական ձևակերպման նպատակով, տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների ու Արցախի պաշտպանության բանակի հրամանատարի հանդիպումը, որտեղ հաստատվեց կողմերի հավատարմությունը՝ կրակի դադարեցման վերաբերյալ ավելի վաղ ձեռք բերված պայմանավորվածությանը[2]:

Զինադադարի ամրագրման պահին արցախա-ադրբեջանական ռազմաճակատն անցնում էր՝ Մռավի լեռնաշղթա - Գյուլիստան - Թալիշ բնակավայրից հյուսիս - Լենինավան - Քափանլու գծով - Սեյսուլան - Նամիրլի - Շուրաաբադ գյուղերից արևելք - Թազաքենդ - Օրթա Քարվենդ-- Միրաշելլի - Ահմեդաղլի - Չեմենլի - Աֆատլի բնակավայրերից հարավ - Կուրոպատկինո - Մուղանլի գյուղերից արևելք - Կարախանբեյլի - Յուխարի Սեիդ Ահմեդլի և Յուխարի Աբդուրահմանլի գյուղերի բնագծերով – Հորադիզից հարավ - արևելք Մեխդիլի Արաքս գետ՝ Իրանի հետ սահման, հատվածներով: Փաստորեն, նշված շփման գիծն Արցախի ու Ադրբեջանի միջև դարձավ դե-ֆակտո սահմանը:

Օրեր անց ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովի կողմից փորձ արվեց հակամարտող կողմերին նստեցնելու մեկ սեղանի շուրջ և ամրագրելու ձեռք բերված պայմանավորվածությունները, ներառյալ Արցախում ռուս խաղաղապահների տեղակայում, սակայն ադրբեջանա-

---

[1] Տե՛ս **Հակոբյան Թ.,** Կանաչ ու սև: Արցախյան օրագիր - 3-րդ հրատ., Ե., 2011, Հավելված թիվ 38:

[2] **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս.,** Հաղթանակներն ինչպես եղել են. ազդականչ 44, Ե., 2008, էջ 173–174:

կան կողմը վերջին պահին ետ կանգնեց նոր փաստաթղթի հաստատումից: Ակնհայտ էր, որ Բաքվում մանրամասն քննարկումների (նաև արևմուտքի և Անկարայի հետ) արդյունքում որոշվել էր տարածաշրջանի այս հատվածում բացառել ռուսական, անգամ խաղաղապահ, ուժերի ներկայությունը: Ադրբեջանական կողմի համար ամենաձեռնատու տարբերակը կլիներ, եթե որպես խաղաղարար ուժեր տարածաշրջանում տեղակայվեին թուրքական զինվորները: Չնայած Թուրքիայի ադրբեջանամետ դիրքորոշմանը, երկրի նախագահ Սուլեյման Դեմիրելը մերժեց արցախյան հակամարտության գոտի թուրքական զորքեր մտցնելու առանձին արմատականների կոչերին՝ հայտարարելով, որ ռազմական նոր միջամտությունը ոչինչ չի տա ո՛չ Ադրբեջանին, ո՛չ էլ Թուրքիային:

ՌԴ պաշտպանության նախարարի միջնորդական գործողությունը փաստորեն էական արդյունքի չհանգեց: ՀՀ արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը «Գրաչովի պլանի» ձախողումը պայմանավորեց դրա բովանդակության բավականին հեղհեղուկ եւ անհստակ ձևակերպմամբ:

Այսպիսով, թեև մեծ ջանքերի գնով արցախա-ադրբեջանական ռազմաճակատում ի վերջո հաստատվեց հարաբերական անդորր, այնուհանդերձ կողմերի միջև կնքված զինադադարը չվերածվեց խաղաղության համաձայնագրի:

Արցախյան հիմնահարցը վերջնական լուծման առայժմ չի հանգել ու դժվար թե մոտ ապագայում այն կարգավորվի, քանի դեռ չի ընդունվել բոլոր կողմերի համար ընդունելի մի վերջնական տարբերակ և ամրագրվել «Խաղաղության մեծ պայմանագրի» ստորագրումով, թեև դա էլ խաղաղության հիմնական երաշխիք չէ: Գերտերություններն ունեն իրենց սեփական ռազմավարական շահերը, որոնց մեջ գուցե և չի մտնում արցախյան հակամարտության շուտափույթ լուծման գործընթացը, որով և հակամարտող կողմերը շարունակում են կախվածության մեջ մնալ արտաքին ուժերից:

Гагик Аветисян, Майское перемирие 1994 года - В результате Мир-Баширской операции 1994 года, большие человеческие и материальные потери с обеих сторон, так же как и сомнения в дальнейшем существовании Азербайджана, как государства с разложенной армией, вынудили сопредседателям минской группы ОБСЕ и в первую очередь представителям России предпринять действенные меры по прекращению военных действий.

В статье приводятся воспоминания политических деятелей и дипломатов, принимаюших непосредственное участие в процессе подготовки политического соглашения по установлению перемирия между противоборствующими сторонами.

Автор детально описывает и анализирует ход событий Бишкекского протокола и трехсторонного (Азербайджан, Армения, Нагорный Карабах) документа о перемирии, дает им свою оценку и делает попытку прогноза дальнейшего развития затенувшегося карабахского конфликта.

Gagik Avetisyan, May 1994 ceasefire - In the spring of 1994, the hardest battles took place on the Artsakh-Azerbaijani front.

In parallel with military operations, serious diplomatic processes were ongoing to stop the war. Both the OSCE and the CIS, and in particular Russia, were actively involved in these negotiations. As a result of lengthy negotiations, the conflicting parties in Bishkek, in the framework of the CIS Inter-Parliamentary Summit, agreed in writing on the immediate cessation of hostilities in Artsakh, which was signed a few days after the signing of the ceasefire agreement: a relative peace was established on the contact line of the Artsakh-Azerbaijani conflicting forces.

1254 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

ԷԴԳԱՐ ՎԱՐԾԱՄՅԱՆ

Բանալի բառեր - հայ-մոնղոլական դաշինք, հայ-եգիպտական հարաբերություններ, մարտահրավեր, մամլուքներ, հայ-մոնղոլական հարաբերություններ, Կիլիկիայի հայկական թագավորություն, Եգիպտոսի մամլուքյան սուլթանություն:

Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական պատմության կարևոր հանգրվաններից մեկը 1254թ. հայ-մոնղոլական դաշինքն էր: Դաշինքն արտացոլվել է հայ և օտարազգի պատմիչների երկերում, և այս կամ այն չափով արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Այնուհանդերձ, դրա հետ կապված մի շարք խնդիրներ այսօր էլ ստվերում են մնացել:

13-րդ դարի 40-50-ական թթ. Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ նոր մարտահրավերների ժամանակաշրջան էր: Որակական փոփոխությունները կապված էին պատմական ասպարեզում մոնղոլների հայտնվելով, որոնք հպատակեցրել էին այսրկովկասյան և փոքրասիական տարածքները: Հատկանշական է, որ մինչև մոնղոլների տարածաշրջան ներխուժելը Կիլիկյան Հայաստանը գտնվում էր Ռումի կամ Իկոնիայի սելջուկյան սուլթանության ենթակայության ներքո: 1243թ. Ռումի սելջուկները Քյոսեդաղի ճակատամարտում (Չմանկատուկ բնակավայրում) ծանր պարտություն կրեցին մոնղոլներից[1]: Այդ ճակատամարտից հետո Կիլիկյան Հայաստանը դուրս եկավ սելջուկյան ենթակայությունից և իր արտաքին քաղաքականությունը վերանայելու հնարավորություն ստացավ: Իսկ ի՞նչ էր կատարվում այդ ժամանակ Եգիպտոսի Այյուբյան սուլթանությունում:

1250թ. Եգիպտոսում մահացավ Այյուբյանների վերջին սուլթանը:Նրա հոմանուհին՝ Շաջարատ ադ-Դորը, մինչև սուլթանի դեռատի որդու՝ Ղայադդին Թուրան շահի ժամանումը, ստանձնեց գործերի ղեկավարությունը: Մամլուք զորապետերը դավադրություն կազմակերպեցին և սպանեցին Ղայադդին Թուրան շահին: Շաջարատ ադ-Դորը իրեն հռչակեց Եգիպտոսի թագուհի և ամուսնացավ մամլուք ամիրա Այբեկի հետ: 1250թ., երբ Եգիպտոսում մամլուքներն իշխանության գլուխ անցան, նոր փուլ բացվեց Եգիպտոսի և Մերձավոր Արևելքի ռազմաքաղաքական պատմության մեջ: Սկզբունքային տեղաշարժեր կատարվեցին նաև հայ-եգիպ-

[1] Տե՛ս **Մութաֆյան Կ.,** Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001, էջ 416:

տական հարաբերություններում[1]: Այս համապատկերի վրա Կիլիկյան Հայաստանը պետք է մշակեր իր արտաքին քաղաքականությունը, որը կուղղորդեր նրան իր հետագա տարածաշրջանային հարաբերությունները կարգավորելու համար: Դիվանագիտական նոր հայեցակարգի որդեգրումը Կիլիկյան Հայաստանի համար դարձավ անհրաժեշտություն:

13-րդ դարի կեսից Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականությունն առնչվեց երեք գործոնների հետ: Ընդ որում, այդ երեք գործոններից մեկը տարածաշրջանային գերակայություն ապահոված մոնղոլական իլխանությունն էր: Առաջավոր Ասիայում խնդիրները կարգավորելու համար Մոնղոլիայից արևմուտք էր եկել Հուլավու խանը: Հուլավուն Մանգու Մեծ խանի եղբայրն էր և այստեղ եկավ իբրև Առաջավոր Ասիայի, հետևապես նաև Հայաստանի և Վրաստանի ուլուսի կառավարիչ: 1256թ. Հուլավուն այստեղ սեփական դինաստիայի հիմնադիրը եղավ, և այդ պետությունը կոչվեց իլխանություն[2]: Երկրորդ գործոնը Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունն էր, որին վիճակված էր իր ձեռքը վերցնել իսլամի դրոշի պահպանումը: Երրորդ գործոնը տարածաշրջանում Եվրոպայի կողմից մշակվելիք քաղաքականությունն էր, որը արտացոլվեց Խաչակրաց արշավանքների տարբերակով:

Քաղաքական նոր իրադրության պայմաններում 13-րդ դարի 40-ական թթ. հայոց թագավոր Հեթում Ա-ը և նրա համախոհները որոշեցին ռազմական համագործակցության մեջ մտնել մոնղոլների հետ և համապատասխան առաջարկով դիմեցին նոր նվաճողներին:Սկզբնական շրջանում հայկական պատվիրակությունը, որը գլխավորում էր Սմբատ Գունդստաբլը, հանդիպեց մոնղոլ ղեկավարությանը: Բանակցությունների ընթացքում որոշվեց, որ Հեթում թագավորը պետք է անձամբ մեկնի Կարակորում և հանդիպի Մանգու Մեծ խանին: Հանդիպումը տեղի ունեցավ 1254թ., և կնքվեց մի պայմանագիր, որը հաճախ է քննության նյութ դարձել պատմագրության մեջ: Լ. Տեր-Պետրոսյանը նշում է, որ հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մոնղոլների հետ դաշինքը Հեթում թագավորը կնքել էր Խաչենի իշխան Հասան Ջալալ-Դոլայի միջնորդությամբ, ինչը, ըստ նրա, Կիլիկիայի հայկական թագավորության և Մեծ Հայքի հայ իշխանների համագործակցության ամենանշանակալի

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարա-բերությունները 1250-1375թթ., Ե., 2008, էջ 26-27:

[2] Տե՛ս **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Գ, Ե., 1977, էջ 239:

դրվագներից մեկը պետք է համարել[1]: Հայ-մոնղոլական դաշինքի մասին մեզ տեղեկություններ են հաղորդում միջնադարյան պատմիչները:

Կիրակոս Գանձակեցին մասնավորապես հայտնում է. «Մեծահաւատ և քրիստոսասէր արքան հայոց Հեթում, որ ի կողմանս Կիլիկեցւոց, նստէր ի քաղաքն Սիս: Նա յառաջագոյն առաքեաց զեղբայր իւր Սմբատ, որ զօրավարն էր նորին, առ ղան Գիուգ ընծայիւք և պատարագօք, և դարձավ ի նմանէ պատուով և հրովարտակօք ընդունելութեան»[2]: Միջնադարյան մյուս պատմիչ Սմբատ Գունդստաբլը շատ մանրամասներ չի հաղորդում Հեթումի և Մանգու Մեծ խանի հանդիպման մասին: Նա նշում է, որ Մանգու խանը համաձայնություն տվեց Հեթումի առաջարկներին. «Եւ յայնժամ թագաւորն առեալ զամենայն ցանկալի տեսողաց ընծայսն, գնաց առ խանն Մանգոյ և մատոյց նմա, և խանն ուրախութեամբ ընկալաւ զթագաւորն Հեթում, և զինչ և խնդրեաց ի նմանէ՝ շնորհեաց նմա, և եդ ի սպասաւորաց իւրոց ընդ թագաւորին գալ յաշխարհ իւր Կիլիկիա»[3]: Սմբատ Գունդստաբլը չի նշում, թե որոնք էին պայմանագրի բովանդակային դրույթները, և մասնավորապես Կիլիկիայի հայկական թագավորությունը պայմանագրի կնքումից հետո ինչպիսի կարգավիճակ էր ձեռք բերում: Հայ-մոնղոլական պայմանագրի բովանդակության մասին մեզ ամենաշատ տեղեկությունները հաղորդում է միջնադարյան պատմիչ Հեթումը: Այս մասին նա հայտնում է. «Յայնժամ ինքնակալն Թաթարաց խորհուրդ արարեալ ընդ իշխանս և ընդ մեծամեծս իւր՝ ետ պատասխանի արքային Հայոց. Զաղաչանս քո յանձն առնումք. զիս տաց մկրտել, ընկալայց զքրիստոսական հաւատս, և խնամակալայց՝ զի ընկալցին ամենայն հպատակք իմ. բայց առանց ամենայն բռնութեան: Ըստ երկրորդին՝ խաղաղութիւն լիցի ի մէջ մեր և ձեր մշտնջենաւոր՝ վնասողական և պաշտպանողական: Նույնպես կամիմք, զի ամենայն եկեղեցիք քրիստոնէից՝ եկեղեցականք և աշխարհականք վայելեսցեն ի շնորհս ազատութե, և ոչ ոք իշխեսցէ նեղել զՀայս:Զսբերկրին եթէ կարասցուուք՝ անձամբ յարգեսցուք, այլ քանզի մեք յայլ... Թաթարք զամենայն ձեռնտութիւն արասցեն Հայոց. և զաշխարհս որ սեփական են Հայոց, կանիմք զի անյապաղ տացին նոցա անդրէն, և ևս հրամայեմք զի ամենյնիւ ամրոցք և երկրին զորս առաք, տացին արքային Հայոց ի պաշտպանութիւն Հայաստան աշխարհի առանձին շնորհիւ»[4]:

Կարծում ենք, որ նոր քաղաքական իրադրության պայմաններում այս դաշինքը մոնղոլների առաջադրած մարտահրավերի ճիշտ պատաս-

---

[1] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** Խաչակիրները և հայերը, պատմա-քաղաքագիտական հետազոտություն, հ. Բ, Ե., 2007, էջ 291-292:

[2] **Կիրակոս Գանձակեցի,** Պատմություն հայոց, Ե., 1961, ԽՋ:

[3] **Սմբատ Սպարապետ,** Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 230:

[4] **Հեթում պատմիչ,** Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, ԻԳ:

խանն էր: Մոնղոլներն իրենց նվաճողական քաղաքականությունն իրականացնելու համար որպես հուսալի դաշնակից դիտարկում էին Կիլիկյան Հայաստանը: Այդ իրողության վառ ապացույցն է Կիլիկյան Հայաստանի՝ մոնղոլական ասպատակություններից զերծ մնալը: Սկզբնական շրջանում այս դաշինքը տվեց իր օգտակար արդյունքները: Երբ դաշինքը դիտարկում ենք արդյունավետության տեսանկյունից, կարծում ենք, որ տվյալ աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում դա ներկայացված մարտահրավերի ճիշտ պատասխանն էր, քանի որ Կիլիկյան Հայաստանին այլ ելք չէր էլ մնացել:

Ժամանակակից գիտական գրականության մեջ այս դաշինքը ստացել է իր գնահատականները: Պատմագրության մեջ այս դաշինքի մասին քննարկումները սկսվել են դեռևս 18-րդ դարից: Այդ ժամանակ վերոնշյալ խնդրի մասին խոսել է Միքայել Չամչյանցը[1]: Նա մանրամասնորեն ներկայացրել է Հեթում թագավորի ուղևորությունը Մոնղոլիա, նրա հանդիպումը Մանգու Մեծ խանի հետ, ինչպես նաև նրանց միջև կնքված պայմանագիրը, սակայն ձեռնպահ է մնացել որևէ գնահատական տալուց: 20-րդ դարի սկզբին Մ. Օրմանյանն իր հետազոտությամբ մանրամասնորեն ներկայացրել է հայ-մոնղոլական դաշինքը, սակայն կրկին որևէ գնահատական չի տալիս[2]:

Հայ-մոնղոլական դաշինքի գնահատության շուրջ քննարկումները հետագայում շարունակվեցին: Լ. Գումիլևը նշում է, որ այս դաշինքը Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական կյանքի համար կարևոր էր նրանով, որ Հեթումն առաջարկով դիմեց Մանգու Մեծ խանին, իսկ Մանգուն բոլորն էլ ընդունեց: Այդ առաջարկներից էին՝ դառնալ քրիստոնյա, եկեղեցին հարկերից ազատել, հայերի կորցրած հողերը վերադարձնել, հաստատել բարեկամական հարաբերություններ քրիստոնյաների ու մոնղոլների միջև, առաջին իսկ կարիքի դեպքում օգնության հասնել Կիլիկյան Հայաստանին, քրիստոնյաներին վերադարձնել Սուրբ հողերը, կործանել Բաղդադի խալիֆայությունը[3]: Ա. Հովհաննիսյանը նշում է, որ այս պայմանագրով Կիլիկիայի հայկական թագավորությունը մոնղոլների հլու հպատակը չի դարձել, բայց նաև պետք է փաստել, որ նրանց միջև իրավահավասար պետությունների դաշինք չի եղել, այլ հայկական թագավորությունը դարձել է մոնղոլների կրտսեր դաշնակիցը՝ պարտավորվե-

---

[1] Տե՛ս **Չամչյանց Մ.,** Հայոց պատմություն, հ. Գ, Ե., 1984, ԼԲ:

[2] Տե՛ս **Օրմանեան Մ.,** Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Բ, Էջմիածին, 2001, յուն 1924-1930:

[3] **Гумилев Л.,** Поиски вымышленного царства, Москва, 2002, с. 224, տե՛ս նաև **Սուքիասյան Ա.,** Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Ե., 1978, էջ 73-74:

լով մասնակցել մոնղոլների և նրանց դաշնակիցների՝ դեպի Սիրիա կատարվելիք արշավանքներին[1]: Շարունակելով իր դիտարկումները՝ Ա. Հովհաննիսյանը նշում է, որ հայկական թագավորությունը ստացել է մի շարք առավելություններ: Մասնավորապես մոնղոլական զորքերը չէին մտնելու Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները, մոնղոլներն օգնելու էին հայերին օտար պետությունների հարձակումների ժամանակ, Կիլիկիայի հայ առևտրականներին հնարավորություն էր ընձեռվում առևտուր անելու մոնղոլական կայսրության սահմաններում, Կիլիկիան շարունակում էր մնալ անկախ թագավորություն[2]:

Հետազոտողներից Դ. Թինոյանը նշում է, որ Հեթում Ա-ի՝ մոնղոլական կայսրության հետ ունեցած փոխհարաբերությունները և մասնավորապես նրա պատմական այցելությունը Կարակորում՝ Մոնղոլական կայսրության մայրաքաղաք, կարելի է իրավամբ համարել Հայոց պատմության կարևորագույն դրվագներից մեկը: Այն գալիս է ապացուցելու հայ դիվանագիտական մտքի ճկունության, քաղաքական նոր պայմաններին հարմարվելու ունակության մասին, ունակություն, որը հատուկ էր հայոց պատմության առավելապես կիլիկյան շրջանին[3]: Լ. Տեր-Պետրոսյանը նշում է, որ հայ-մոնղոլական դաշինքի կնքումը Հեթում թագավորի փայլուն դիվանագիտության պսակն էր, ինչի շնորհիվ Կիլիկիայի հայկական թագավորության կյանքը երկարաձգվեց տասնյակ տարիներով[4]: Ա. Սուքիասյանը նշում է, որ այս դաշինքը պետք է գնահատել որպես մի հարկադրական միջոցառում, որը նպատակ ուներ հայկական հողերի գոնե մի մասը փրկել մոնղոլների ներխուժումներից[5]: Այս խնդրի վերաբերյալ տեսակետ է հայտնել նաև Լ. Բաբայանը, ըստ որի՝ երկու պետությունների միջև կնքվել էր մի պայմանագիր, որի համաձայն Կիլիկիայի հայկական թագավորությունը դարձել էր մոնղոլական պետության վասալ մի երկիր՝ պահպանելով իր ինքնուրույնությունը ներքին ու արտաքին կյանքում[6]:

Վերադառնալով բուն խնդրին՝ նշենք, որ որքան էլ հայ-մոնղոլական դաշինքի կարևորությունը նշանակալի էր Կիլիկիայի հայկական թագավորության քաղաքական կյանքի համար, այդուհանդերձ այն բացասա-

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ա.,** 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրի գնահատության շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2014, N 3, էջ 34:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 34-35:

[3] Տե՛ս **Թինոյան Դ.,** Կիլիկիայի հայոց թագավորության ներքաղաքական և արտաքին քաղաքական իրադրությունը 1240 - ական թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, 2016, N 1, էջ 126:

[4] Տե՛ս **Տեր-Պետրոսյան Լ.,** նշվ. աշխ., էջ 291:

[5] Տե՛ս **Սուքիասյան Ա.,** նշվ. աշխ., էջ 84:

[6] Տե՛ս **Բաբայան Լ.,** Հայաստանի սոցիալ - տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Ե., 1964, էջ 211:

կան ազդեցություն ունեցավ հայ-եգիպտական հարաբերությունների վրա: Կարծում ենք, որ այս դաշինքն այն էական գործոններից մեկն էր, որն ազդեց հայ-եգիպտական հարաբերությունների փոփոխության վրա:

Հայ-եգիպտական հարաբերությունները հետաքրքիր էվոլյուցիա ապրեցին: Մի բան ակնհայտ էր, որ հայ-մոնղոլական դաշինքի պայմաններում այդ հարաբերությունները թշնամական բնույթ էին կրելու: 1254թ. հայ-մոնղոլական դաշինքը հայ-եգիպտական հարաբերությունների վրա ունեցավ որոշակի ազդեցություն, որը հետագայում Կիլիկյան Հայաստանը փոխհատուցեց: Դաշինքն ունեցավ իր բացասական կողմերը: Յուրաքանչյուր արշավանքից հետո, երբ մոնղոլները հետ էին քաշվում, մամլուքյան հակահարվածը մեծմասամբ ուղղված էր լինում Կիլիկյան Հայաստանի դեմ: Սիրիական արշավանքների ժամանակ՝ 1259-1260, 1280-1281, 1299-1303 թթ.[1], երբ դաշնակիցների զորքերը պարտվելով նահաջնում էին, տուժում էր միայն Կիլիկիայի հայկական թագավորությունը՝ մնալով միայնակ մահմեդական պետությունների դեմ պայքարում: Սա հայ-եգիպտական հարաբերություններում իրենից ներկայացնում էր որակապես նոր աստիճան: Եթե մինչ այդ մամլուքները բավարարվում էին միայն մտնել Կիլիկիայի հայկական թագավորության տարածք և կազմակերպել ավերածություններ ու թալան, ապա դրան գումարվեց ևս երկու հանգամանք՝ որքան հնարավոր է շատ տարածքներ կորզել Կիլիկիայի հայկական թագավորությունից և որքան հնարավոր է շատ բնակչություն տեղահանել, ինչը ենթադրում էր ոչնչացման քաղաքականություն:

Վերջնական եզրակացությունն այն է, որ 1254թ. հայ-մոնղոլական դաշինքը մեծ նշանակություն ունեցավ Կիլիկյան Հայաստանի քաղաքական կյանքի համար: Մոնղոլներն իրենց նվաճողական քաղաքականությունն իրականացնելու համար որպես հուսալի դաշնակից դիտարկում էին Կիլիկյան Հայաստանը: Այդ իրողության վառ ապացույցն է Կիլիկյան Հայաստանի՝ ռազմական ասպատակություններից զերծ մնալը: Հայ-մոնղոլական դաշինքի առկայությունն էականորեն փոխեց հայ-եգիպտական հարաբերությունների բնույթը և նպաստեց, որ Կիլիկյան Հայաստանը դառնա մամլուքների՝ պարբերաբար կրկնվող ավերիչ ասպատակությունների թատերաբեմ:

Едгар Варшамян, Влияние армяно-монгольского альянса 1254 года на армяно - египетские отношение - На основе первоисточников мы подвергли всестороннему анализу эту проблему. В частности, мы пришли к такому заключению, что в 1254 г. армяно-монгольский альянс имел боль-

[1] Տե՛ս **Микаелян Г.,** История Киликийского армянского государства, Е., 1952, տե՛ս նաև **Рашид-ад-дин,** Сборник летописей, Том III, Москва-Ленинград, 1946.

шое значения в политической жизни Киликийской Армении. Монголы для осуществления своей захватнической политики и в качестве надежного союзника рассматривали Киликийскую Армению. Ярким примером этого является неучастие в военных Киликийской Армении.

Существование армяно-монгольского альянса существенно изменило характер армяно-египетских отношений и подействовало тому, что бы Киликийская Армения превратилась в регулярно повторяющийся театр разрушительных военных детствий.

Edgar Varshamyan, The influence of the armenian - mongolian alliance in 1254 on armenian - egyptian relations - Baced on the source texts we made a comprehensive analysis on the problem, in more particular we have come to the conclusion that the Armenian - Mongolian alliance in 1254 had a great impact on the political life of Cilician Armenia. In order to complete their invasive policy Mongols, as reliable allies, were observing Cilicia. It proves the fact that Cilician Armenia always refrained from all these military invasions. The existence of the Armenian - Mongolian alliance changed radically the nature of the Armenian-Egyptian relations and affected on Cilician Armenia to become periodically repeated theatrical stage for the destructive invasions of Mamluks.

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր - դասընթաց, Բագրատունյաց դարաշրջան, արդիականություն, ուսումնասիրություն, գործառույթ, միջկրթանքային մոտեցում, համադրում, հետազոտական բաղադրիչ, ակտիվ ուսումնառություն, լսարանային քննարկում:

Դասընթացի նշանակությունը և արդիականությունը.

Հայոց պատմության ուսումնասիրության համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում հայկական պետականության պատմության քննությունը: Այն իր տարբեր շրջափուլերում ունեցել է զարգացման էական յուրահատկություններ, որոնց վերաբերյալ ամբողջական և համալիր գիտելիքը խիստ կարևորվում է հատկապես պատմության քաղաքակրթական-շրջափուլային ընկալման հայեցակետից: Այդ առումով Բագրատունյաց թագավորությունը խոշորագույն դերակատարություն ունեցավ ոչ միայն Հայաստանում սոցիալ-տնտեսական և մշակութային մեծ վերելք ապահովելու տեսանկյունից, այլև հայ ժողովրդին հաղորդած ազգային-մշակութային այն խոշոր լիցքով, որը նրան գոյատևելու հնարավորություն տվեց Հայկական լեռնաշխարհում օտար նվաճողների երկարատև տիրապետության պատմափուլում (1045-1918 թթ.):

IX դարը Հայոց պատմության մեջ նշանավորվեց ավելի քան չորս հարյուրամյակ առաջ անկում ապրած թագավորության վերականգնումով, որն իր պաշտոնական արձանագրումը ստացավ 887 թ., երբ Աշոտ Ա Բագրատունու թագավորությունը ճանաչվեց ժամանակակից գերտերությունների՝ Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության կողմից:

Բագրատունիները նախընթաց հարյուրամյակում մեծապես հզորացել էին և սկսել տիրապետել մարդկային, տնտեսական ու տարածքային խոշոր ռեսուրսների: Վերջին իրողությունը նրանց հնարավորություն էր տվել վերաճելու տեղական և տարածաշրջանի առաջատար քաղաքական ուժի ու ստանձնելու Հայաստանի և այսրկովկասյան երկրների առաջնորդման ղեկը: Այնուհետև Բագրատունիները այդ երկրներին ուղղորդե-

ցին զարգացման հունով՝ անգնահատելի դեր խաղալով հայ և հարևան ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության մեջ: Արաբական խալիֆայության փլուզման պայմաններում ի հայտ եկած քաղաքական անորոշ և թոհուբոհով լեցուն ժամանակաշրջանում նրանց հաջողվեց Հայաստանն ու այսրկովկասյան քրիստոնյա երկրները հեռու պահել զգալի ցնցումներից, իսկ այնուհետև դրանք միավորել մեկ տերության մեջ:

«Հայաստանը Բագրատունյաց դարաշրջանում» դասընթացը նախևառաջ արժեքավոր է հայ, վրացի և այլ ժողովուրդների քաղաքական, մշակութային և տնտեսական պատմության ընդհանուր ճանաչողության տեսանկյունից: Այն նաև մեծ կարևորություն է ներկայացնում գիտառուսումնական տեսանկյունից՝ ինչպես հայագիտության, այնպես էլ կովկասագիտության և արևելագիտության գիտաճյուղերում ուսանողների համար:

«Հայաստանը Բագրատունյաց դարաշրջանում» դասընթացն ունի նաև կարևոր քաղաքական նշանակություն: Թուրք և ադրբեջանցի պատմաբաններ, հետապնդելով հեռուն գնացող քաղաքական նպատակներ, փորձում են նենգափոխել Հայոց պատմության՝ նաև խնդրո առարկա շրջափուլին վերաբերող պատմական իրողությունները: Հետևաբար, Հայաստանի, ինչպես նաև այսրկովկասյան երկրների պատմության անաչառ ներկայացմանը և ուսանողներին համապատասխան խորը գիտելիքներով օժտելուն նպատակամետ յուրաքանչյուր դասընթաց կարող է նպաստել համապատասխան գիտելիքների կարծրացմանը և դրանց կիրառականության ապահովմանը:

Բագրատունյաց թագավորության շրջանի պատմությանը նվիրված դասընթացի արդիականության փաստման համար կարևոր է այդ պատմափուլի գնահատականը պատմական գիտության գործառույթների տեսանկյունից[1]: Այդ առումով հույժ էական է արդի փուլում պատմական փորձի և պատմության մասին գիտելիքի ազդեցությունը:

Պատմության **գիտաճանաչողական գործառույթի** տեսանկյունից «Հայաստանը Բագրատունյաց դարաշրջանում» դասընթացը ընդհանուր առմամբ կոչված է հայոց պետականության պատմության մի կարևոր շրջափուլի՝ IX-XI դդ. ստեղծված, զարգացման 100-ամյա շրջափուլ անցած և, ի վերջո, անկում ապրած թագավորության մասին ընդհանուր-ամբողջական գիտելիք հաղորդելուն, բայց, մասնավորապես, օգնում է ճանաչել պատմական անցյալի այնպիսի էական բնութագրեր և իրադարձություններ, որոնք ազդեցությունը ներկայի վրա ակնհայտ է:

[1] Պատմական գիտության գործառույթների մասին տե՛ս **Ղազարյան Ա.,** Պատմության առարկան, գործառույթները և հիմնական մեթոդները, «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, հոգեբանություն», 2017, N 3, էջ 45-57:

Պատմության՝ **հասարակական հիշողություն լինելու գործառույթի** տեսանկյունից խնդրո առարկա դասընթացը կոչված է ամբողջացված ներկայացնելու այն պատմաքաղաքական և մշակութային ավանդը, որ ներդրել է Բագրատունյաց թագավորությունը Հայոց պատմության ընդհանուր տիրույթում՝ անցյալը դարձնելով ավելի «մոտ» ու հասկանալի, ինչպես նաև ձևավորելով պատմական գիտակցություն: Այս ենթատեքստում պետք է դիտարկել պատմության մյուս՝ **դաստիարակչական գործառույթը**, երբ պատմական անցյալի հենակետային դեպքերն ու ընտրանքները և փորձն ընդհանրապես էականորեն ազդում են սերունդների դաստիարակության գործընթացի վրա: Այս առումով Բագրատունյաց շրջափուլը էական նշանակություն ունի սերունդների դաստիարակության համար՝ կապված ինչպես հասարակական-տնտեսական, այնպես էլ պատմաքաղաքական ու մշակութային ծավալուն փորձի առկայության հետ: Մի կողմից Բագրատունյաց շրջանի տնտեսական ու մշակութային մեծ վերելքը, իսկ մյուս կողմից հերոսական գահակալները կարող են բարոյահոգեբանական վերածննդի հիմք դառնալ առօրյա կյանքում և հնարավոր վտանգների պարագայում:

Բագրատունյաց շրջանի պատմության ուսումնասիրությունը նախատեսում է պատմական ժամանակի, լեզուների, աղբյուրային և հետազոտական գրականության, մշակույթի, հասարակական-տնտեսական կյանքի, ժողովրդագրության, արտաքին ու ներքին քաղաքականության և այլնի ընդհանրական-ամբողջական յուրացում:

Նախկինում հայ և այլազգի ուսումնասիրողների կողմից զգալի աշխատանք է կատարվել Բագրատունյաց շրջանի Հայաստանի պատմությանն ընդհանրապես[1] և մասնավորաբար նրա տարածքում ստեղծված

---

[1] Տե՛ս **Չամչեանց Մ.**, Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, հ. Բ., Վենետիկ, 1785; **Dulaurier Éd.**, Recherches sur la Chronologie Arménienne, Technique et Historique, Ouvrage formant les Prolégomènes de la Collection Intitulée Bibliothèque Historique Arménienne, tome I, Paris, 1859; **Ալիշան Ղ.**, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869; **Грен А.**, Династия Багратидов в Армении, "Журнал министерства народного просвещения", часть CCXC, С.-Петербург, 1893, ноябрь; **Ghazarian M.**, Armenien unter der arabishchen Herrschaft bis zur Enstehung des Bagratidenreiches, Zeitschrift fuer armenische Philologie, Marburg, 1903, **Օրմանեան Մ.**, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, Կոստանդնուպոլիս, 1912; «Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը», ծանօթութիւներով, գրեց պրոֆ. դկտ. Յ. Մարկուարտ, գերմաներէնէ թարգմանեց Հ. Մ. Հապոզեան, Վիեննա, 1913; **Laurent J.**, L'Arménie entre Byzance et I Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919; **Grousset R.**, Histoire de l'Arménie. Des origines à 1071, Paris, 1947; **Ադոնց Ն.**, Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948; **Մանանեանյան Հ.**, Երկեր, հատոր Զ, Ե., 1985; **Հարությունյան Հ.**, Հայաստանը IX-XI դարերում, Ե., 1959; **Լեո**, Երկերի ժողովածու, հ. II, Ե., 1967; **Առաքելյան Բ.**, Հայկական պետականության վերականգնումը; Երկրի

հիմնական իշխանությունների և թագավորությունների ուսումնասիրության ուղղությամբ[1], Բագրատունյաց շրջանը մշտապես տեղ է գտել համապատասխան դասագրքերում[2], սակայն ներկայումս այդ գործընթացի, ինչպես նաև ուսումնական ու մեթոդական գրականության մշակման խթանումը ավելի ու ավելի է կարևորվում, քանի որ ի հայտ են գալիս նոր սկզբնաղբյուրներ, Հայոց պատմության այդ շրջափուլի նկատմամբ բարձրանում է հասարակական և քաղաքական շրջանակների հետաքրքրությունը, իսկ թուրքական և ադրբեջանական պատմագրությունը Հայոց պատմության խեղաթյուրման նպատակով հաճախ թիրախավորում է զարգացած միջնադարի զարգացումները:

Բագրատունյաց դարաշրջանի Հայաստանի քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության, տեղական թագավորությունների ստեղծման և այլ ուղղություններով վերջին տարիներին հրատարակվել են զգալի թվով ուսումնասիրություններ[3]: Մասնավորապես, վերջին ավելի քան 10 տարիներին հրատարակվել են մեր շուրջ 40 գիտական հետազոտությունները (6 մենագրություն[4] և ավելի քան 30 գիտական հոդված[1]):

միավորման ձգտումը և պայքար օտար ներխուժման դեմ; Բագրատունյաց թագավորության բարգավաճումը, «Հայ ժողովրդի պատմություն», հատոր III, Ե., 1976; **Тер-Гевондян А.**, Армения и Арабский халифат, Е., 1977; **Юзбашян К.,** Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988; **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990 և այլն:

[1] Տե՛ս **Ղազարյան Հ.**, Սյունիքը IX-X դարերում, Ե., 1958; **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Ե., 1965; **Հակոբյան Թ.**, Սյունիքի թագավորությունը (պատմաաշխարհագրական առումով), Ե., 1966; **Վարդանյան Վ.**, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Ե., 1969; **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975; նույնի՝Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, Ե., 1981; **Մաթևոսյան Ռ.**, Տաշիր-Զորագետ (X դ.-XII դ. սկիզբ), Ե., 1982; **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Ե., 1983 և այլն:

[2] Տե՛ս, օրինակ, «Հայոց պատմություն», դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբագրությամբ պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի, Ե., 2012, էջ 89-102 և այլն:

[3] Տե՛ս **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունիներ. պատմա-տոհմաբանական հանրագիտարան, Ե., 1997; **Վարդանյան Վ.**, Արծրունիները հայոց պատմության մեջ, Ե., 2002; **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997; նույնի՝ Անի-Շիրակի պատմության էջեր, Ե., 2010; նույնի՝ Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր մագիստրոս, Ե., 2015; **Յակոբեան Ա.**, Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009; **Մանուչարյան Ա.**, Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.), Ե., 2015; **Հարությունյան Բ.**, Արծրունյաց իշխանական ընտանիքը Հայոց պատմության մեջ, Ե., 2016 և այլն:

[4] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2010; Հայ Բագրատունիների տերությունը 885-908 թթ. (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2011;

Ի վերջո հարկ է հավելել, որ գիտաուսումնական տեսանկյունից հատկապես կարևոր են Բագրատունյաց դարաշրջանի քաղաքական պատմությունը և պատմական աշխարհագրությունը: Այդ առումով մեր առաջարկությամբ 2015 թվականից «Հայոց պատմության» մագիստրատուրայում (հեռակա ուսուցմամբ) դասավանդվում է «Հայաստանը Բագրատունյաց ժամանակաշրջանում. պատմություն և պատմական աշխարհագրություն» դասընթացը, իսկ 2017 թվականից ցայսօր՝ «Հայաստանը Բագրատունյաց դարաշրջանում» դասընթացը (առկա ուսուցմամբ):

Դասընթացում կիրառվող հիմնական մոտեցումները

Դասընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվում են որոշակի մեթոդական մոտեցումներ, որոնցից նշելի են հատկապես միջկրթանքային, գիտաուսումնական համադրման և ակտիվ ուսումնառության մոտեցումները:

Միջկրթանքային մոտեցում: Դասընթացը նախատեսում է պատմական, քաղաքական, աղբյուրագիտական, տոմարագիտական, աշխար-

---

Աշոտ Ա. Բագրատունի (թագադրության թվականը և գահակալության տարիները), Ե., 2014; Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Ե., 2016; Աբաս Բագրատունի. թագավոր Հայոց, Ե., 2017; Վրաց Բագրատունիների թագավորության ձևավորման գործընթացը, Ե., 2018:

[1] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Տայքի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, N 3, էջ 197-208; Վասպուրականի իշխանութեան տարածքը և վարչաքաղաքական բաժանումը Թ. դարի վերջին և Ժ. դարի սկզբին, «Բազմավէպ», Վենետիկ, Սբ. Ղազար, 2008, N CLXVI, էջ 101-116; Տարոնի Բագրատունիների իշխանությունը IX դարում և X դ. սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, N 1, էջ 74-85; Համշենի իշխանությունը Հայ Բագրատունիների տերության համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2009, N 3, էջ 153-158; Բագրատունիների տիրույթների ձևավորումը և արքունի տիրույթները Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք, «Տարեգիրք» ԵՊՀ պատմության ֆակուլտետի, 2010, N Բ, էջ 87-105; Կղարջքի կյուրոպաղատությունը և Վիրքը Հայ Բագրատունիների տերության կազմում, «Հուշարձան տարեգիրք», 2010, N Զ, էջ 209-216; Հայոց Արևելից կողմանց իշխանությունները IX-X դարերում, «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 132.1, 2010, էջ 25-36; Հայոց Սմբատ Ա թագավորի աբխազական արշավանքը, «Լրաբեր (հաս. գիտ.)», 2010, N 1-2, էջ 119-130; Հայոց Սմբատ Ա թագավորի կողմից Աղվանից և Կղարջքի իշխանների թագադրության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 135.1, 2011, էջ 16-25; Բագրատունիները եւ Վրացական թագաւորութեան պետական գաղափարաբանութեան ձեւաւորումը, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2013, N ԼԳ, էջ 67-82; Հայոց իշխանաց իշխանը Բագրատունի առաջին արքաների օրոք, «Վէմ», 2014, N 1, էջ 62-75; Հայոց Սմբատ Ա. թագավորի գահակալության շրջանի ժամանակագրությունը, «Էջմիածին», 2014, N 5, էջ 38-51; Армянские первоисточники об образовании Грузинского царства Багратидов, «Հայագիտության հարցեր», 2014, N 3, էջ 53-61; Գահաժառանգության խնդիրը Բագրատունյաց Հայաստանում և գահակցության վարկածը, «Էջմիածին», 2015, N 12, էջ 55-68; Աշոտ Երկաթին վերագրվող «բղջախոհության» շուրջ, «Տարեգիրք» ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի, 2015, հ. Ժ, էջ 295-305; Gagik Artsruni - "King of Armenia and Georgia", «Բանբեր Հայագիտության», 2016, N 1, էջ 77-94 և այլն:

հագրական, մշակութային, հնագիտական և այլ տվյալների ու գիտելիքների համադրում: Այդ առումով Բագրատունյաց թագավորության պատմության դասավանդումը ուղեկցվում է պատմաքաղաքական, աղբյուրագիտական, տոմարագիտական, պատմաաշխարհագրական, մշակութային (հնագիտականը ներառյալ) գիտելիքների համադրական-քննական մատուցմամբ՝ հաշվի առնելով նշված գիտակարգերից յուրաքանչյուրի մեթոդական առանձնահատկությունները:

Ուսումնագիտական համադրման մոտեցում: Մոտեցման էությունն այն է, որ ուսանողների շրջանում, բացի պատմաքաղաքական, աղբյուրագիտական, տոմարագիտական, պատմաաշխարհագրական, մշակութային գիտելիքների ամրապնդումից, ձևավորվում են նաև մեթոդաբանական և կիրառական կարողություններ՝ հնարավորություն տալով նրանց կատարելու ինքնուրույն աղբյուրագիտական քննություն, տոմարագիտական հաշվումներ և այլ բնույթի հետազոտական աշխատանքներ:

Ակտիվ ուսումնառության մոտեցում: Այս մոտեցման նպատակը դասապրոցեսում ուսանողի պարբերական-անընդհատ մասնակցության ապահովումն է, երբ նրա ներգրավումը ուսումնառության գործում ավելի ուղղակի է, քան այլ մոտեցումների կիրառման պարագայում: Ուսանողն ընդգրկվում է առանձին աշխատանքներում, և նրան հնարավորություն է տրվում մտածելու, թե ինչ է անում: Մոտեցումը վերաբերում է իմացությունների առնչվող ուսուցման այնպիսի ոլորտների, ինչպիսիք են գիտելիքը, կարողությունը, աշխարհընկալումը՝ երևույթներ, որոնք ընդհանրաբար կարող ենք կոչել «ուսումնառման գործընթացի նպատակներ»: Ընդհանուր առմամբ, ակտիվ ուսումնառությունը նախատեսում է, որ ուսանողը պետք է անի ավելին, քան միայն լսելն է. նա պետք է ընթերցի, գրի, քննարկի, մասնակցի խնդիրների լուծման աշխատանքներին: Դրա համար դասընթացին մասնակից ուսանողների շրջանում զարգացվում են մտածողության այնպիսի բարդ մակարդակներ, ինչպիսիք են անալիզը, սինթեզը և գնահատումը:

Մոտեցման շրջանակներում հատկապես խրախուսվում է *քննարկումը*՝ որպես ակտիվ ուսումնառության կարևոր ռազմավարություն: Ուսանողներին առանձնաբար կամ խմբային հանձնարարություններ են տրվում պատմական տեքստերի լուսաբանման, տոմարական հաշվումներ կատարելու, պատմական իրադարձության բացահայտման, գնահատման և այլ ուղղություններով:

Դասընթացի հետազոտական բաղադրիչը

Դասընթացի շրջանակներում տարբեր մեթոդական մոտեցումների միջոցով իրականացվում է ուսանողների հետազոտական կարողությունների զարգացում՝ թիրախում ունենալով միջնադարյան Հայաստանի

պատմության սկզբնաղբյուրների տեղեկությունների և հիմնական գիտական ուսումնասիրությունների արդյունքների համաբերումը, ուսումնասիրության բնորոշ եղանակների ներկայացումը, հիմնահարցերի սահմանումը, լուծման ձևերի հստակեցումը և այլն:

Սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների համաբերում: Հաշվի առնելով այն, որ Բագրատունյաց շրջանին վերաբերվող պատմական սկզբնաղբյուրները բազմաթիվ են, բազմազան ու բազմալեզու, ապա առաջին հերթին ուսանողների շրջանում հետազոտական կարողությունների զարգացման համար անհրաժեշտ է Բագրատունյաց Հայաստանի ժամանակակից և հետագա սկզբնաղբյուրների համակողմանի ճանաչողությունը: Ուսանողներին պարբերաբար հանձնարարվում է ըստ առանձին թեմաների սկզբնաղբյուրային տեղեկությունների համաբերման և համակարգման մեթոդական աշխատանք: Այն հնարավորություն ուսանողներին հնարավորություն է տալիս տիրապետելու աղբյուրային նյութին՝ ըստ Բագրատունյաց դարաշրջանի տարբեր ենթափուլերի:

Ուսանողը նաև սկսում է տիրապետել դարաշրջանին վերաբերող գիտական գրականությանը, դրանց՝ հիմնականի և օժանդակի ստորաբաժանմանը, այնտեղ տեղ գտած դրույթների օգտագործման և հղման կանոններին և այլ կարևոր կարողությունների:

Թեմատիկ հետազոտություններ: Սկզբնաղբյուրային նյութի և գիտական գրականության արդյունքների համաբերման հիմքով ուսանողները կարող են անցնել գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը: Նման աշխատանքներում հատկապես շեշտադրվում են վերլուծական-համադրական մոտեցումները, երբ առանձին թեմայով իրականացվում է աղբյուրային և գիտավերլուծական նյութի համաբերում, ըստ ենթաթեմաների համակարգում, հեղինակային վերլուծություն և ամփոփում: Այս առումով հատկապես կարևորվում է դասընթացին առնչվող հիմնահարցերի սահմանումը, որը իրականացվում է անհատական աշխատանքի կամ թեմատիկ քննարկման արդյունքում:

Քննարկումերի անցկացում: Թեմային առնչվող տարբեր հիմնահարցեր, ինչպես նաև ուսանողների կատարած վերլուծական աշխատանքներն առանձին-առանձին ներկայացվում և քննարկվում են լսարանում՝ հնարավորություն տալով բոլոր ուսանողներին մասնակցելու բազմաբնույթ թեմատիկ բանավեճերի, որոնց նպատակը բանավեճային-քննական մտածողության զարգացումն է:

Գիտական հրապարակումներ: Առավել հաջողված վերլուծությունները կարող են հրապարակվել գիտական հանդեսներում: Այդ նպատակով նման վերլուծությունների հեղինակների հետ կատարվում է անհատական

աշխատանք՝ կատարված աշխատանքը գիտական հոդվածի չափանիշներին և ձևավորման եղանակներին համապատասխանեցնելու նպատակով:

Դասընթացի հիմնական թեմաները

Դասընթացի թեմաները ձևակերպված են այնպես, որ ուսանողին ամբողջական և մանրակրկիտ պատկերացում տան դարաշրջանի էության, զարգացումների և հիմնահարցերի վերաբերյալ:

«Բագրատունյաց դարաշրջանի Հայաստանի պատմության սկզբնաղբյուրները» թեման ուսանողներին պատկերացում է տալիս շուրջ 250-ամյա պատմափուլին (IX դ. սկիզբ - XI դ. առաջին կես) վերաբերվող հայկական[1], վրացական[2], արաբական[3], բյուզանդական[1], ասորական[2] և

---

[1] Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010; «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմություն Հայոց», «Մատենագիրք Հայոց», ԺԱ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, Անթիլիաս-Լիբանան, 2010; «Պատմութիւն Անանուն Զրուցագրի» (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Ե., 1971; **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Ե., 1983; **Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Ե., 2011; «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Ե., 1963; **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհամջանյանի, Ե., 1961; **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898; «Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1867; **Մխիթար Անեցի**, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Ե., 1983; «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910; «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862; «Սմբատայ սպարապետի Տարեգիրք», ի Վենետիկ-Ս. Ղազար, 1956; **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն (Ադամից մինչեւ 1776 թ.), աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Ե., 2014 և այլն:

[2] Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**. Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, հատոր Ա. (Ե-ԺԲ դար), Յերեվան, 1934; **Մելիքսեթ-Բեկ Լ.**. Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն-ծանոթագրություններով յեվ հավելվածներով, հ. Բ. (ԺԳ-ԺԸ դար), Յերեվան, 1936; «Քարթլիի մատյան», թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, N 9, էջ 60-80; Քարթլիի մատյան, թարգմ. Վ. Մարտիրոսյանի և Հ. Մկրտումյանի, մաս Բ, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1989, N 11, էջ 80-96; Kartlis tskhovreba: A history of Georgia, Tbilisi, 2014 և այլն:

[3] Տե՛ս **Խալաթեանց Բ.**, Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919; «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, **Իբն ալ-Ասիր**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Ե., 1981; «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, «Արաբ մատենագիրներ (Թ-Ժ դարեր)», ներածությունը և բնագրերից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Ե., 2005; **Al-Istakhri**, Kitáb masâlik al-mamâlik,

այլ աղբյուրների մասին: Հստակեցվում են դարաշրջանի տարբեր ենթափուլերի վերաբերյալ փաստեր շարադրած ժամանակակից և հետագա պատմիչների երկասիրությունները, դասակարգվում ըստ կարևորության և հավաստիության, ներկայացվում առանձին աղբյուրներից օգտվելիս առաջ եկող խնդիրներն ու այլ կարևոր իրողություններ[3]:

«Բագրատունյաց դարաշրջանի սկզբնավորումը» թեմայի շրջանակներում ներկայացվում է արաբական տիրապետության դեմ 774-775 թթ. հայ ժողովրդի ապստամբության հետևանքները, երբ ապստամբության կազմակերպիչները՝ Մամիկոնյանները, թուլացան և կորցրեցին իրենց կշիռը, իսկ Հայաստանում առաջնակարգ դիրքի հասան Բագրատունիները, ովքեր խելամիտ քաղաքականությամբ կարողացան շահել Խալիֆայության վստահությունը: Հատուկ անդրադարձ է կատարվում IX դ. առաջին կեսին Հայաստանում և շրջակա երկրներում տեղի ունեցող իրադարձություններին, Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունու (802-826 թթ.) միավորիչ գործունեությանը, Բագարատ Բագրատունու օրոք (826-851 թթ.) Հայոց իշխանապետության զորեղացմանը, Բուղա զորավարի գլխավորությամբ Խալիֆայության բանակի ներխուժմանը և այլ կարևոր իրողությունների: Ներկայացվում են նաև թեմային առնչվող հիմնահարցերի աղբյուրները և ուսումնասիրության ներկա վիճակը:

"Bibliotheca geographorum arabicorum", p. I, Leiden, 1927; **Al-Masʿūdī**, Murūj al-dhahab wa maʿādin al-jawāhir, ğ. 1, al-Kahira, 1948; **Ibn al-Athīr**, Al-Kāmil fī al-tārīkh, ğ. 7, Beirut, 1987; **Ibn Ḥawqal**, Liber imaginis terrae, "Bibliotheca geographorum arabicorum", pars II, "Opus geographicum", Leiden, 1967; **Ibn Ḍāfir**, Akhbār al-duwal al-munqaṭiʿa, ğ. 1, Irbid, 1999; **Miskawayh**, Tajārib al-umam wa taʿāqib al-himam, ğ. 5, Beirut, 2003 և այլն:

[1] Տե՛ս «Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 15, «Բյուզանդական աղբյուրներ», Ե, **Թեոփանեսի Շարունակող**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1990; «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 6, «Բյուզանդական աղբյուրներ», Բ, **Կոստանդին Ծիրանածին**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1970: «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 10, «Բյուզանդական աղբյուրներ», Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Ե., 1979; **Лев Диакон**, История, перевод М. Копыленко, М., изд. «Наука», 1988 և այլն:

[2] Տե՛ս «Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորւոյ ժամանակագրութիւն», Յերուսաղէմ, 1870; «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի ասորւոյ պատրիարքի», Յերուսաղէմ, 1871; "Chronique de Michel le Syrien patriarche Jacobite D'Antioche (1166-1199)", Éditée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, t. III, Paris, 1905.

[3] Հայտնի է, օրինակ, որ պատմիչներից որոշները շարադրել են առանձին նախարարական ընտանիքի պատմությունը և երբեմն այլոց նկատմամբ հանդես բերել կողմնակալ վերաբերմունք: Տե՛ս **Հովհաննիսյան Պ.**, Երկու ուղղություն X դարի հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր», 2014, № 2, էջ 108-120:

«Հայոց թագավորության վերականգնումը» թեմայի շրջանակներում ներկայացվում են այնպիսի կարևոր իրողություններ, ինչպիսիք են Բուղայի ավերիչ արշավանքից հետո իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու մականի ներքո Հայաստանի և քրիստոնյա Այսրկովկասի իշխանությունների միավորումը, Հայաստանի անկախության հիմնական նախադրյալները, Բագրատունյաց թագավորության ձևավորման գործընթացը, Աշոտ Ա թագավորի օրոք (887-891 թթ.) Հայոց թագավորության, որպես տարածաշրջանային տերություն հանդես գալը[1]: Խոսվում է նաև Հայոց թագավորության տարածքում գտնվող արաբական ամիրայությունների մասին:

«Բագրատունյաց թագավորությունը Սմբատ Ա թագավորի օրոք (891-914 թթ.)» թեմայով ներկայացվում են Բագրատունյաց թագավորության առավելագույն վերելքի ժամանակաշրջանի հիմնական իրողությունները, նրա ներքին ու արտաքին սահմանները, Հայոց թագավորի արշավանքներն ու պայքարը Ատրպատականի մահմեդական ամիրայության դեմ: Ամենայն մանրամասնությամբ անդրադարձ է կատարվում Վասպուրականի՝ որպես թագավորություն հանդես գալու պատմական հանգամանքներին, Բագրատունիների և Արծրունիների հակասություններին, որի հետևանքով Ատրպատականի զորքերը 909-913 թթ. ասպատակելով երկիրը՝ փորձ կատարեցին ոչնչացնել Բագրատունյաց թագավորությունը:

«Բագրատունյաց թագավորությունը Աշոտ Բ Երկաթ (914-929 թթ.) և Աբաս (929-953 թթ.) թագավորների ժամանակաշրջանում» թեման հստակեցնում է երկու՝ հաջորդաբար թագավորած եղբայրների գործունեությունը, որոնցից առաջինին 15-ամյա պայքարի շնորհիվ հաջողվեց ի չիք դարձնել Ատրպատականի տիրակալի՝ Բագրատունյաց թագավորությունը ոչնչացնելու նկրտումները և ազատագրել երկրի մեծ մասը, իսկ երկրորդը հետևողական քաղաքականությամբ կարողացավ վերականգնել Հայաստանի ներքին միասնությունը և ամրապնդել պետության հզորությունը: Լուսաբանվում է այն իրողությունը, որ Աշոտ Երկաթը և Աբասը, փաստորեն, կարողացան վերականգնել այն վիճակը, որ կար Ատրպատականի զորքերի հարձակումից առաջ և սկիզբ դնել երկար տասնամյակներ տևող համեմատաբար խաղաղ՝ մշակութային և տնտեսական ձեռքբերումներով լեցուն պատմաշրջանի:

---

[1] Տե՛ս **Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988, с. 66; **Մաթևոսյան Ռ.**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Ե., 1990, էջ 52, 80; «Հայ ժողովրդի պատմություն», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հ. III, Ե., 1976, էջ 24; **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը 885-890 թթ. (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Ե., 2011; նույնի՝ Հայ Բագրատունիների տերության քաղաքական կարգավիճակին վերաբերող մի կարևոր հարցի շուրջ, «Տարեգիրք» ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի, 2008, N Գ, էջ 391-400:

«Հայաստանը Աշոտ Գ Ողորմած (953-978 թթ.) և Սմբատ Բ Տիեզերակալ (978-990 թթ.) արքաների օրոք» թեմայի շրջանակներում ներկայացվում են Հայոց թագավորության հետագա զարգացումը[1], Հայաստանի տարածքում նոր թագավորությունների հանդես գալու պատմական հանգամաքներն ու Բյուզանդիայի ծավալապաշտական քաղաքականությունը Հայոց թագավորության նկատմամբ: Հատուկ ուշադրություն է դարձվում Անիի՝ մայրաքաղաք հռչակման նախադրյալներին, երկու արքաների օրոք մայրաքաղաքի ծավալմանն ու կառուցապատմանը, ինչպես նաև Հայաստանի մշակութային կենտրոն դառնալու իրողությանը:

«Գագիկ Ա-ն (990-1018 թթ.) և Բագրատունյաց թագավորության հզորացումը» թեման ներկայացնում է Բագրատունի ամենաեռանդուն գահակալներից մեկի միավորիչ գործունեությունը, որի արդյունքում թագավորությունը մեծ վերելք արձանագրեց, և զսպվեցին տեղական թագավորնեերի ու այլ ավատատերերի կենտրոնախույս ձգտումները: Կարևորություն է տրված նաև Գագիկ Ա-ի արտաքին քաղաքականությանը[2]:

«Բագրատունյաց թագավորության անկումը» թեման ընդգրկում է 1018-1045 թթ. ժամանակահատվածը, երբ Հովհաննես-Սմբատ (1018-1041 թթ) և Գագիկ Բ (1042-1045 թթ.) թագավորների շրջանում Բագրատունյաց պետությունն աստիճանաբար մասնատվեց, թուլացավ և հեռացավ պատմության թատերաբեմից: Այստեղ ներկայացվում են նաև Բյուզանդիայի առաջխաղացման պայմաններում Հայաստանի արևմտյան և հարավային երկրամասերի կորստին առնչող պատմական իրողությունները:

«Բագրատունյաց թագավորության վարչաքաղաքական համակարգը» թեմայի շրջանակներում ներկայացվում են թագավորության կառուցվածքը միասնության (887-908 թթ.) և մասնատվածության (908-1045 թթ.) փուլերում, նախարարական-իշխանական համակարգը, գոյություն ունեցող աստիճանակարգը, Բագրատունի արքաների տիտղոսները և դրանց նշանակությունը, պետական գործակալությունները, բանակի կառուցվածքը, գահաժառանգման կարգը և այլ կարևոր իրողություններ:

«Հայ մշակույթը Բագրատունյաց դարաշրջանում» թեման ընդգրկում է մշակութային վերելքի և մասնավորապես հայ կրթական կյանքի, պատմագրության, փիլիսոփայության, գեղարվեստական գրականության, ճարտարապետության, արվեստի և այլ բնագավառներում խոշոր տեղաշարժերի մասին բաժիններ:

---

[1] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Աշոտ Գ. Ողորմածի դարաշրջանը, մաս Ա. Հայոց թագավորության վերելքը (953-966 թթ.), «Վէմ» համահայկական հանդես, 2019, N 3, էջ 45-70:

[2] Տե՛ս **Юзбашян К.**, К хронологии правления Гагика I Багратуни, «Античная древность и средние века», вып. 10, 1973, с. 195-197; Մարգարյան Հ., Գագիկ Ա-ի արտաքին քաղաքականությունը, «Պատմություն և մշակույթ հայագիտական հանդես», 2019, N 1, էջ 28-31:

«Տնտեսական կյանքը Բագրատունյաց թագավորությունում» թեմայի շրջանակներում ներկայացվում են Հայաստանում տնտեսական վերելքի նախադրյալները, ավատատիրության խորացումն ու ժառանգական խոշոր հողատիրության ձևավորումը, տնտեսության հիմնական ուղղությունները, նոր քաղաքների ստեղծումն ու քաղաքային տնտեսության առանձնահատկությունները, առևտրական ճանապարհներն ու թագավորության արտաքին տնտեսական կապերի հիմնական ուղղությունները[1]:

Ակնկալվող վերջնարդյունքները

Դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների շնորհիվ ուսանողները կկարողանան հստակորեն ներկայացնել Բագրատունյաց դարաշրջանի հիմնական բովանդակությունը, Հայաստանի քաղաքական անկախության պատմական հանգամանքները, երկրի տնտեսական և մշակութային վերելքի նախադրյալները, քաղաքական պատմության զարգացման առանձնահատկությունները, դարաշրջանի պատմության հիմնահարցերը:

Ձեռք բերված գործնական կարողությունների արդյունքում ուսանողները ընդունակ կլինեն կատարելու տոմսական հաշվումներ, ճշգրտել առանձին իրադարձությունների ժամանակագրությունը, առանձնացնել և օգտագործել առանձնահատուկ եզրութաբանություն, ինչպես նաև իրականացնել գիտահետազոտական աշխատանք՝ հարդյունս կիրառելով ձեռք բերված մեթոդաբանական, վերլուծական և գնահատողական հմտություններն ու կարողությունները:

Арман Егиазарян, Учебно-методические принципы и ососбенности курса “Армения в эпоху Баргатидов” - Курс «Армения эпохи Багратидов» имеет не только научно-исследовательское, но и учебно-методическое и практическое значение.

Цель курса «Армения эпохи Багратидов» предоставление студентам всесторонних знаний об истории создания и развития армянского государства в IX-XI вв., и, в частности, содействие познанию существенных характеристик и событий исторического прошлого, которые влияют на современность.

В течении курса студентам преподносятся методологические знания по постановке задач и их решению, ведется активное обучение, когда студент не только слушает, но и думает, обсуждает и исследует опреде-

[1] Տե՛ս **Манандян Я.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры-XV в. н. эры), Ер., 1954; **Եղիազարյան Ա.**, Հայ Բագրատունիների տերությունը 885-908 թթ., էջ 320-352:

ленные ситуации. В течении практических работ у студентов развиваются аналитические возможности.

Arman Yegiazaryan, Educational and methodological principles and features of the course "Armenia in the era of Bagratids" - The course "Armenia in the era of the Bagratids" has not only scientific and research, but also educational, methodological and practical significance.

The goal of the course "Armenia of the era of the Bagratids" is to provide students with comprehensive knowledge about the history of the creation and development of the Armenian state in the 9th-11th centuries, and, in particular, to contribute to the knowledge of the essential characteristics and events of the historical past that affect the present.

During the course, students are taught methodological knowledge on problem setting and their solutions, active learning is conducted when the student not only listens, but also thinks, discusses and explores certain situations. During practical work, students develop analytical capabilities.

ՎԱԶԳԵՆ Ա ՊԱԼՃՅԱՆԻ «ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԱՅԵՐԸ ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼԻ ՎԵՊԻՆ ՄԵՋ» ԵՒ «ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿ» ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր - կաթողիկոս, հոդված, գրական երկեր, հայի կերպար, փիլիսոփայական, հայրենասիրություն, ստեղծագործություն, ցեղասպանություն

Վազգեն Ա հայրապետը նշանակալի ավանդ է ունեցել հայկական հրապարակագրության, գրականագիտության, իմաստասիրության և աստվածաբանության զարգացման մեջ: Իր գրական առաջին փորձերը Կարապետ Պալճյանն իրականացրել է «Մարտկոց» թերթում 1933-ին, որտեղ նա արծարծում էր ռումինահայ երիտասարդներին հուզող խնդիրները1: Հայրապետի գրական-իմաստասիրական աշխատանքներից յուրաքանչյուրն ուսումնասիրման և վերլուծման հարուստ նյութ է պարունակում: Այս հոդվածում մենք կանդրադառնանք նրանցից հատկապես երկուսին՝ «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» և «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ» գործերին: Այս երկու ուսումնասիրությունների միջոցով վեհափառը ձգտել է տալ հայի արժանի տեսակի նկարագիրը:

1940 թ. Բուխարեստում՝ «Հայ մամուլ»-ի տպարանում, լույս է տեսնում Կ. Պալճյանի՝ 62 էջից բաղկացած «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» վերլուծական ուսումնասիրության փորձը[2]: Այն հայ-

[1] Տե՛ս **Պալճյան Կ.,** Նոր սերունդին համար, «Մարտկոց», Փարիզ, 1933, թիվ 73, էջ 3-4:

[2] Այս աշխատանքը գրվել և առանձին գրքով հրատարակվել է 1940 թ. Պուքրեշում (62 էջ)՝ Կ. Պալճյան ստորագրությամբ: Այն վերահրատարակվել է 1986 թվականին: Ընդ որում, բնագրի մեջ կատարվել են սրբա-գրություններ ու աննշան կրճատումներ: Վերջինիս հիման վրա պատրաստվել է նաև աշխատության ամսագրային տարբերակը, որը ռուսերեն թարգմանությամբ և խմբագրական առաջաբանով տպագրվել է «Дружба народов» (Ժողովուրդների բարեկամություն) ամսագրում՝ Մոսկվայում (1987, N 8, էջ 227-234): Վեհափառ Հայրապետի այս երկասիրությունը թարգմանվել է նաև ֆրանսերեն և առանձին գրքույկով ու փոքրիկ առաջաբանով լույս տեսել Փարիզում 1987-ին (հրատ. Սարգիս Պետոյանի)՝ հետևյալ տիտղոսաթերթով՝ Garabed Baldjian, (Catholicos Vasken ler.).

բենասիրական շնչով գրված գրախոսական է «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի մասին, մի երկ, որը «մարդկության ընծա կուտա ողբերգության մը կենդանի պատմությունը»[1]:

Հոդվածագիրն իրավացիորեն կարծում է, որ Ֆրանց Վերֆելի հայերը հավետ պիտի ապրեն աշխարհի գիտակցության մեջ: Մեծ եղեռնի մասին առկա են բազմաթիվ հիշողություններ, պաշտոնական փաստաթղթեր, օտար վկայություններ, սակայն այդ բոլորը կարծես փոքր-ինչ ստվերվում են Ֆրանց Վերֆելի ստեղծագործության կողմից: Եվ չպիտի զարմանալի թվա, որ գուցե մի օր, երբ հայն ու թուրքը հավասար հափշտակությամբ ընթերցեն այդ վեպը՝ ողբալով իրենց նախահայրերի ճակատագիրը, քանի որ, փոխանակ Աստծուց՝ իրենց պարգևված կյանքը իմաստուն և գեղեցիկ ապրելու, նրանք ատեցին միմյանց, ու մեկը փորձեց մյուսի հոգու լույսը մարել ու նրա արյունն էլ քամել: Կ. Պալճյանը գտնում է, որ Վերֆելի վեպում երկու ազգերն էլ տառապում են, անշուշտ՝ յուրովի, այնպես, ինչպես ճակատագիրն էր սահմանել:

Գրականագետի նուրբ զգացողությամբ օժտված գրախոսը վերֆելյան վիպաշխարհը նմանեցնում է մի յուրօրինակ գեհենի, ուր հայը փրկվում է մեռնելով, իսկ թուրքը մեռնել էլ չի կարողանում[2]: Վեպում հայն ու թուրքը մարդկային հոգիների երկու բևեռներ են: Գրախոսն իրավացիորեն կարծում է, որ ավստրիացի գրողը կարողացել է հասնել այդ բևեռներին, թափանցել դրանց էության մեջ ու ներկայացնել նրանց հոգիներն իրենց իսկ էությամբ ու իսկությամբ: Ապա նա նկատում է, որ Վերֆելի վեպը, ինչպես ամեն մի աշխատանք, զերծ չէ նաև թերություններից, ունի գեղարվեստական որոշ ստվերոտ կողմեր, սակայն նրա գլխավոր առավելությունը համարում է իրական կյանքը ներկայացնելու բացառիկ ուժը Հայոց Մեծ եղեռնի օրերին: Կ. Պալճյանը Ֆրանց Վերֆելի գլուխգործոց երկը քննում է համաշխարհային գրական գործերի հետ համեմատության մեջ, հիշատակում Ֆ. Մ. Դոստոևսկուն ու Ստ. Ցվայգին և գրում է. «Տոսթոյևսքիին մասին, որ հոգեբանական վեպին մեծագույն վարպետն է, Շտեֆան Ցվայկ կ'ըսե, թե եթե զայն կարդաս, ինքնզինքդ ավելի լավ կը ճանչնաս որպես մարդ: Առանց չափազանցնելու կարելի է ըսել, թե Ֆ. Վերֆելի «Մուսա լերան քառասուն օրերը» կարդալով՝ ինքզինքնիս ավելի լավ կը

Les Armeniens du Moussa-Ler, Paris, (էջ 43): Երկրորդ անգամ վերահրատարակվել է սուրբ Էջմիածնում՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում (էջ 35-73) և վերջին անգամ՝ **Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց,** Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա, էջ 29-73:

[1] «**Էջմիածին»,** 1976, Ը-Թ, էջ 11:

[2] Տե՛ս **Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց,** Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա, «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ», էջ 31:

ճանչնանք իբրև Հայ»[1]: Այս ամենը, անշուշտ, վկայում է հոդվածագրի՝ իբրև գեղագետ մտածողի լայնախոհության ու խոր իմացության մասին:

Կ. Պալճյանը զանց չի առնում նաև վեպի կերպարային համակարգը. հիշատակում է Գաբրիել Բագրատյանին, Տեր Հայկազունին, Ավագյանին ու Թովմասյանին, զեյթունցի Իսկուհուն, բժիշկ Պետրոս Ալթունուն ու Մայրիկ Անթառամին, Չավուշ Նուրհանին, նրա աչքից չեն վրիպում նաև հայ բացասական կերպարները՝ Հրանտ Ոսկանյանն ու Սարգիս Կիլիկյանը...

Գրախոսը համեստորեն նկատում է, որ իր խորհրդածությունների նպատակն ամենևին էլ Ֆրանց Վերֆելի գործի քննությունը չէ խոսքի արվեստի տեսակետից. «Մեր նպատակն էր ճանչնալ հայերն այնպես, ինչպես ապրեցան Մուսա լերան վրա»[2]: Ինչ խոսք, գրախոսն ինչ-որ տեղ իրավացի է, բայց և այնպես ակնառու են գեղագետի նրբին զգացողությունն ու նպատակասլաց դիտումները՝ ազգն ապրում է ոչ միայն նյութական բարիքներով, արվեստով ու գրականությամբ կամ հանճարեղ մարդկանց գործերով, այլև սեփական պատվով ու արժանապատվությամբ, անձնական «մենք»-ի գիտակցությամբ և զոհաբերության ոգով, իր ազատ ու հպարտ ապրելու կամքով, այսինքն՝ բարոյական նկարագրով: Եվ պիտի հավելել, որ Վերֆելի հայերը հենց այդպիսին են, և դրա պերճախոս վկայությունն են են նաև երիտասարդ Կ. Պալճյանի վերլուծական խորհրդածություններն ու նուրբ դիտարկումները: Նաև՝ ազնիվ միտումը. գրախոսը մեծ ցանկություն ունի ամեն գաղութահայի մեջ տեսնելու Գաբրիել Բագրատյանի: «Հավատա՞նք հայ մարդու բարոյական ուժերուն: Հավատա՞նք հայ հայրենիքի ապագային: Եվ հպարտություն՝ հայ ըլլալնուս համար»[3],- լավատեսական ու մշտապես արդիական այսպիսի տողերով է ավարտում իր ազդեցիկ գրախոսությունը հայրենի եզերքի արժանավոր զավակը:

1943 թ. Բուխարեստում՝«Սկյուինցա» տպարանում, լույս է տեսնում Կ. Պալճյանի՝ «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ» վերտառությամբ մանկավարժական ուսումնասիրությունը, որը հեղինակը նվիրել է իր ծնողներին:

Հեղինակն առաջաբանում մեկնում է իր աշխատանքի գլխավոր նպատակը. «…համարձակ փորձ մըն է այս հանճարեղ մարդուն գործը տարրալուծել, անոր մտքերը դասավորել ու սիսթեմատիք ձևով ներկայացնել»[4]: Նա Խրիմյան Հայրիկին[1] տեսնում է ո՞չ որպես հասարակ մարդ և

---

[1] Նույն տեղում, էջ 35:

[2] Նույն տեղում, էջ 70:

[3] Նույն տեղում, էջ 71:

[4] **Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց**, Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա, «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ», էջ 86:

ո՞չ էլ որպես սովորական մանկավարժ. նրան համարում է մեծագույն դաստիարակ հայոց համար և նրան դասում աշխարհի մեծ մանկավարժների շարքին:

«Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ» գիրքը բաղկացած է տասնմեկ ենթագլուխներից, որտեղ հանգամանալից ուսումնասիրվում են Մկրտիչ Ա Վանեցու մանկավարժական գործունեությունն ու վաստակը: Այդ ենթագլուխներն են՝

Հառաջաբան
ա. Խրիմյան որպես մտածող,
բ. Լույս, գիտություն, տնտեսություն,
գ. Կրթության ըմբռնում,
դ. Անհատի կատարելագործում,
ե. Կնոջ դաստիարակությունը,
զ. Համայնքի ըմբռնում,
է. Հողի սեր,
ը. Խրիմյան և հայ գաղութները,
թ. Քննական ակնարկ,
Ժամանակագրական ուրվագիծ Հայրիկի կյանքեն[2]:

«Խրիմյան որպես մտածող» ենթագլխում Կ. Պալճյանը նպատակասլաց բացահայտում է ժողովրդի դաստիարակի ազնիվ միտումը՝ ազգի առաջընթացի համար բարոյակրթական միջոցներով հեղաշրջել կարծրատիպերը, հայ սերունդների երակներում ներարկել ազատության ու անկախության ավիշներ, մատնանշել գալիքի լույսի ճշմարիտ ուղին: Ուշագրավը, սակայն, այն է, որ, ըստ աշխատության հեղինակի, Մկրտիչ Խրիմյանի դաստիարակչական գրականության մեջ ոչ մի տեղ շարադրված չէ այդ նպատակն ամբողջական ու պարզ կերպով, ինչն ուղղակիորեն արտահայտվում է նրա գրվածքների առաջին էջից մինչև վերջինը: Հայոց Հայրիկի մտքերը, ծրագրերն ու նպատակները սերտ կապ ունեն հայ ժողովրդի պատմական, հասարակական և մշակութային զարգացման աստիճանի հետ: Կ. Պալճյանը գտնում է, որ մեծ դաստիարակի մտքերը քննելու և գնահատելու համար երբեք չպիտի մոռացության տալ տվյալ ժողովրդի հասարակական, տնտեսական ու մշակութային մակարդակը:

---

[1] **Մկրտիչ Ա Վանեցի (Խրիմյան Մկրտիչ),** Խրիմյան Հայրիկ (4.4.1820, Վան- 29.10.1907, Վաղարշապատ), Ամենայն հայոց կաթողիկոս է 1892-ից: Հաջորդել է Մակար Ա Թեղուտցուն: Մանրամասն տե՛ս երկերը՝ Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929: Երկ., Ե., 1992թ: Գրկ.՝ Աճեմյան Հ., Հայոց Հայրիկ, Թավրիզ, 1929: Գյուզալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Բեյրութ, 1954: Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան, հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000 և այլն:

[2] Կ. Պալճյանը նշում է, որ այս հատվածը քաղված է Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանի «Խրիմյան Հայրիկ» գրքից:

Հեղինակն իր վերլուծական խորհրդածությունները կառուցել է նաև պատմական մեթոդի կիրառման հիման վրա: Սրա մասին են հուշում նրա հետևյալ տողերը. «Մտքերը, գաղափարները, բարենորոգման ծրագրերը բացարձակ արժեքներ չեն, այլ զանոնք պետք է դատել պատմական զարգացման տվյալ պայմաններու առնչությամբ: Խրիմյանի դաստիարակչական մտքերեն ոմանք, գուցե, մեզի հետաղիմական թվին, սակայն իր ժամանակին համար և, մանավանդ, հայ գավառական իրականության համար անոնք ոչ միայն հառաջադիմական են, այլև ուղղակի հեղափոխական»[1]:

Սակայն գիրքը, լինելով 19-րդ դարի հայոց մեծ պատրարքի և կաթողիկոսի՝ Խրիմյան Հայրիկի ընկերային, մանկավարժական հայացքների խոր ու համակողմանի ուսումնասիրություն, միաժամանակ ընդգրկում է Կ. Պալճյանի խիստ արժեքավոր մտքերն ու խոհերը մանկավարժության, անձի զարգացման ու դաստիարակության վերաբերյալ[2]:

Կ. Պալճյանի այս ուսումնասիրությունը նորություն էր իր տեսակի մեջ և դրանով իսկ կրկին արժեքավոր, հետաքրքիր ու այժմեական:

Վեհափառ հայրապետի գրչին են պատկանում նաև 1938 թ. հոկտեմբերին Բուխարեստում Հ. Մկրտիչ Պոտուրյանի «Գաղութահայ տարեգիրք»-ի մեջ (Ա տարի, 1939, էջ 33-50) լույս տեսած՝ «Անձնավորության գաղափարի մասին (մտածումներ)» խորագիրը կրող փիլիսոփայական ուսումնասիրությունը[3], 1945 թ. Բուխարեստի «Ալֆա» տպարանում լույս տեսած «Խոսք հայրենիքի մասին»[4] գրքույկը, 1954թ. Բուխարեստի «Նոր կյանք» տպարանում լույս ընծայված «Հայրենի արևին տակ»[5] հուշերը,

---

[1] **Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց,** Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա, «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ», էջ 88:

[2] **Հարությունյան Ն., Բիշարյան Հ.,** Հայ մանկավարժ կաթողիկոսները, Եր., «Զանգակ» հրատ., 2012, էջ 53:

[3] Երկրորդ անգամ վերահրատարակվել է սուրբ Էջմիածնում «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 15-31, իսկ երրորդ անգամ՝ **Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց**, Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հրատարակչություն, ս. Էջմիածին, 2008, էջ 7-28:

[4] Նույնն անփոփոխ տպագրվել է «Գալիքի տեսիլքով» ժողովածուի մեջ (Էջմիածին, 1988, էջ 252-262)

[5] Ուղեգրությունն ամբողջությամբ առանձին գրքույկով լույս է տեսել 1954 թ.՝ հայերեն և ռումիներեն անվանաթերթով՝ **Վազգեն եպիսկոպոս Պալճյան** (Առաջնորդ ռումինահայ թեմի), Հայրենի արևին տակ, «Նոր կյանք», Պուքրեշ, 1954, էջ 5-109: Այս հրատարակությունից է արվել նաև **Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց,** Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հրատ., էջ 258-356: Գրքում ամփոփված են հեղինակի՝ 1945, 1948, 1951 և 1953 թվականների այցելությունների ժամանակ Խորհրդային Հայաստանից ստացած տպավորությունները՝ բաժանված տասնչորս գլուխների: Առանձին հատվածներ վերահրատարակվել են ս. Էջմիածնում՝ «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 191-209:

«Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը» աշխատությունը, «Էջմիածին» հանդեսում 1948 թ. տպագրված «Ռումիանահայ թեմը երեկ և այսօր»[1] պատմական ուսումնասիրությունը, 1954թ. «Էջմիածին» հանդեսում հրապարակված «Բուլղարահայ գաղութը այսօր»[2] հոդված-ուսումնասիրությունը, «Ճամփորդական նոթերը»[3], 1945 թ. Բուխարեստում լույս ընծայված «Մեր պատարագը»[4] աշխատանքը, «Հոգեբանության դասեր»[5] և այլն:

Վազգեն Ա վեհափառ հայրապետի գրական ստեղծագործություններն իրենց էությամբ բազմաբնույթ են, սակայն բոլոր գործերի կենտրոնում հայ մարդու կերպարն է: Այդ աշխատություններն ընթերցողին օգնում են դառնալու ավելի պարկեշտ, հայրենասեր ու պիտանի՝ ի փառս ազգի, ի նպաստ նրա բարօրության ու գալիքի:

Лилит Погосян, Критический анализ словесно-художественного творчества Вазген А Пальчяна «Армяне Муса-Дага в романе Франца Верфелья» у «Хримян Айрик как воспитатель» - Целью статьи является освещение литературной деятельности Католикоса Вазгена I, в частности, путем анализа двух работ. «Армяне Муса Дага в романе Франца Верфеля» и «Хримян Айрик как воспитатель»: написанные с превосходным знанием отцов армянской церкви и мировой литературы. Наша задача – проанализировать патриотические выражения в литературных произведениях, сравнив их параллельно.

В статье использовали исторические, аналитические и сравнительные методы при представлении исследования.

В нем делается вывод о том, что литературная деятельность Вазгена А в основном включает исторические, аналитические, философские и

---

[1] Առաջին անգամ այն հրատարակվել է՝ «Էջմիածին», 1948, N 7-9, էջ 66-70: Երկրորդ անգամ վերահրատարակվել է «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 267-274:

[2] Երկրորդ անգամ այն վերահրատարակել են «Գալիքի տեսիլքով» ժողովածուի Ա հատորում՝ էջ 275-285, երրորդ անգամ՝ **Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն հայոց**, Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա, էջ 243-257

[3] Տե՞ս «Էջմիածին», 1954, N 12, էջ 50-55:

[4] Առաջին անգամ այն հրատարակվել է Բուխարեստում 1945 թ. «Ալֆա» տպարանում, 104 էջ: Շապիկի վրա դրոշմված է եղել միայն համառոտ խորագիր՝ «Մեր պատարագը», իսկ անվանաթերթի վրա՝ նաև ընդարձակ ենթավերնագիրը. «Հայաստանյայց եկեղեցվո Ս. Պատարագի խորհուրդը՝ բացատրված հավատացյալ ժողովուրդին համար»: Գիրքը նվիրված է շապինգարահիսարցի հայուհի Վերոնիքա Ա. Տեր-Մեսրոպյանի հիշատակին (1875-1944):

[5] Առաջին անգամ հրապարակվել է «Հոգեբանության դասեր», Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, 1961, 119 էջ, իսկ երկրորդ անգամ՝ հեղինակի կատարած լեզվաոճական մասնակի փոփոխություններով՝ Բեյրութ, 1963, 128 էջ:

педагогические исследования. В этих работах подчеркивается образ достойного армянина, любовь и служение родине.

В нем живут и действуют мудрость познания, горечь опыта и беспощадность предвидения, причем написана она, как это и подобает большому армянину, не назойливо, а с той долей естественной правдивости, которая делает ее духовным явлением времени. Эти работы разоблачили и самих палачей человечества и их кровавую философию.

Lilit Poghosyan, A critical analysis of Vazgen A Palchyans works of verbal creativity: «The armenians of Musa Dagha on Franz Werfel's novel» and «Khrimyan Hayrik as a master» - The purpose of this article is to present the literary activity of Catholicos Vazgen I: by analyzing especially two works. These works are «The Armenians of Musa Dagha in Franz Werfel's Novel» and «Khrimyan Hayrik as a Master», which are written with deep knowledge of Worldwide and general literature and also with the knowledge of Armenian churches' clerical works.

Our task is to analyze the patriotic expressions in literary works with comparing with each other in parallel.

We used both historical and analytical and comparative methods to present the research.

As a result of the research we came to the conclusion that Vazgen I's literature activities mainly include historical, analytical, philosophical and pedagogical studies.

The image of a worthy Armenian, love and service to the homeland are emphasized in these works. The wisdom of science, the bitterness of experience and ruthless prediction live and work in his works, and it is not written intrusively but with truth that makes it a spiritual phenomenon of the time. These works exposed both the executioners of mankind and their bloody philosophy.

ԱՐՔԵՏԻՊԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՄԻՋՈՑ (ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆԻ «ՀՈՐՍ ՀԵՏ ԵՎ ԱՌԱՆՑ ՀՈՐՍ» ՎԻՊԱԿԸ)

ՌԻՄԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Բանալի բառեր – հայր, որդի, կերպար, Փոքր Միհեր, միֆ, արքետիպ, ինքնություն, պատմություն:

Ըստ յունգյան տեսության՝ մարդկության փորձի փոխանցման ունիվերսալ միջոց է արքետիպը՝ նախապատկերը, որ ձևավորվում է կոլեկտիվ անգիտակցության շերտերում, ձեռք բերում արխայիկ ծեսի, միֆի, խորհրդանիշի, հավատալիքի մեջ պահպանված բովանդակություն: Նկատենք՝ խոսքը զգայական բովանդակության մասին է և ոչ տրամաբանական: Որոշ արքետիպեր Յունգն առանձնացնում է՝ Մոր, Երեխայի, Անձի (կամ Դիմակի), Ստվերի, Անիմայի, Անիմուսի, Ոգու:

Արքետիպիկ մտածողության ակնհայտ օրինակ է Սերո Խանզադյանի «Հորս հետ և առանց հորս» ինքնակենսագրական վիպակը, որտեղ գերակայություն են ստանում Հոր և Երեխայի արքետիպերը: Վերջինս անհատական գիտակցության զարթոնքն է խորհրդանշում, իսկ հայրն առաջնորդ է, հեղինակություն, Աստծո համապարփակ կերպար:

«Ով իր հորն է տեսնում, նա տեսնում է աստծուն: Չէ՞ որ հայրը նախնական այն հարատև շղթայի վերջին օղակն է, որով մարդն առնչվում է Ադամի, դրանով իսկ՝ արարչագործության ծագման հետ: Բայց և որդուն տեսնողն էլ աստծուն է տեսնում: Չէ՞ որ որդին ամենամերձավոր օղակն է, որը մարդուն կապում է վերջին դատաստանի, ամենայն ինչի վախճանի հետ: Նման սրբազան պարագայում մի՞թե կարելի է վարանել կամ խոսքի մեջ ժլատ լինել»[1]: Վերֆելի այս միտքն ակնառու է Խանզադյանի վերոնշյալ վիպակում, որի խորագիրն արդեն իսկ հուշում է՝ «եղելությունների թելերից հյուսված» այս քառաճյուղ ասքի կենտրոնում հեղինակի հայրն է՝ Նիկոլայը, ով կյանքի ամենադժվարին պահերին անգամ մնաց անընկճելի, անկոտրում, հավատարիմ հայրենի հողին ու ժողովրդին: Հեղինակը, ում արդեն նշմարվում էր կյանքի մշուշոտ ճանապարհի վերջը, իր կյանքի երկու շրջափուլն է ներկայացնում՝ «Հորս հետ և առանց հորս»՝ ներկայելով և իր կյանքի եղանակները բոլորող չորս ճյուղերը, որտեղ առանցքային դերակատարում ունի հայրը՝ իր ֆիզիկական և հոգևոր ներկայութ-

[1] **Վ.Ֆրանս,** Մուսա լեռան քառասուն օրը, Ե., «Լույս», 1990, էջ 25:

յամբ: Հիշողությունների միջոցով կենդանանում, որոշակիանում է գրողի անցյալը՝ «մոխրացած ժամանակների հեռավորությունից» մեր առջև բացելով «Զագեձորի՝ Բաբելոնի տարիքի ավերակ բերդի մեջ խորացած» Խանզադենց տոհմատունը, որը «մի ժամանակ կոչվել է Քրմանց»՝ տոհմի նախնու՝ Քուրմ Անձավի անունով: Նկատենք՝ հեղինակն առանձնակի ոգևորվածությամբ է խոսում իրենց տոհմի ազգանվան, ծագման մասին. «- Մեր տոհմը ծագել է Սիսակ նահապետի թոռ ձագից: Սրանից էլ մեր տոհմի բնակատեղի անունն է՝ Զագեձոր»[1]: «Ազգատոհմի գաղափարական կապերի մեջ ամենակարևորը ազգանունն էր, որը… ապրել է անընդհատ զարգացում, մինչև որ հասել է այժմյան աստիճանին»[2],- գրում է ազգագրագետ Էդիկ Բաղդասարյանը և մատնանշում այն երեք հիմնական սկզբունքները, որոնցով միջնադարում ձևավորվել է հայկական ազգանունը՝ նախնու անունով, գյուղի կամ քաղաքի անունով և զբաղմունքով կոչվելը: Ինչպես տեսնում ենք, Խանզադյանն իր տոհմի ազգանունը կապում է նախնու անվան հետ, իսկ հոր կերպարն ամբողջացնում ծննդավայրի և մանկության մասին քաղցր հուշերով, որոնցում բացահայտվում է հեղինակի, ինչպես ինքն է խոստովանում, «Մեծ Տատի փեշերի մեջ և …քարայրի մթին խորշերում ամփոփված» աշխարհը. «տոհմատան անընկճուն ոգին»՝ Մեծ Տատը՝ Նանախանում զիզան, Աթուն պապն ու նրա թոռ Արսենը, Մեծ Մաման, Արմենակ քեռին, հորեղբայրներ Խաչին, Սերգոն, Մարդին…, հեղինակի մայրը, հայրը: Հետագայում՝ իր կյանքի համառոտ ուղին ներկայացնելիս, հեղինակը խոստովանում է. «Իմ հիշողություններից երբեք չջնջվեցին մեր թաղի անձավաբնակ մարդիկ, խորունկ ձորերը, ձորերի մթին այգիները, կապույտ սարերը և հոգսերից ընկճված հայրս՝ բարձրահասակ, ժամանակից շուտ ծերացած և նյարդային, գրգռված»[3]:

Անդրադառնալով Վահագն Դավթյանի պոեզիային՝ Է.Մեժելայտիսը գրում է. «Եվ չկա բանաստեղծ, որ ժամանակ առ ժամանակ չվերադառնա դեպի իր մանկության ոսկե մայրցամաքը: Եվ դա փախուստ չէ իրականությունից: Ոչ մի դեպքում փախուստ չէ: Դա մեր մեջ նստած ինչ-որ խորհրդավոր բնազդ է, որ կանչում է մեզ դեպի իր ակունքները, որոնցից, եթե մանկան աչքերով նայելու լինենք, ծագում է իսկական գեղեցկությունը և հոգևոր մաքրությունը»[4]: Այս «խորհրդավոր բնազդը» մեր ինքնությունն է, որը, ըստ Յունգի, անհատականացման գործընթացի նպատակն է.

---

[1] **Ս.Խանզադյան,** Հորս հետ և առանց հորս, Ե., «Սովետ. գրող», 1986, էջ 238: (Այսուհետև Ս.Խանզադյանի գրքից կատարված մեջբերումների մոտ կնշենք միայն էջը):

[2] **Է.Բաղդասարյան,** Հայկական ընտանիք, Տորոնտո, «Լույս», 2016, էջ 47:

[3] **Ս.Խանզադյան,** Սերո Խանզադյանն իր մասին, «Սյունյաց երկիր», 2015, 3 դեկտեմբերի, թ. 32 (374), էջ 6:

[4] **Է.Մեժելայտիս,** Պոեզիա, որ մաքրում է արյունը, Վ.Դավթյան. երկու հատորով, հ. 1, Ե., 1985, էջ 7:

անհատականացումն էլ մարդու կողմից սեփական էության գիտակցումն է: Յունգի համոզմամբ՝ ինքնության հասնելը մի գործընթաց է, որը տեղի է ունենում մարդու ամբողջ կյանքում, ինքնության ճանաչումը՝ առավել հասուն տարիքում: Կարդում ենք Խանզադյանի հյուսվածքում. «Նաև սկսել եմ նշմարել կյանքիս ճանապարհի մշուշոտ վերջը: Անցած-գնացածները դարձել են առասպելներ: Նրանց հիշատակներն օր ու գիշեր կանչում են ինձ: Ես շտապում եմ վերջացնել իմ այս գործը, որ ինձնից հետո եկած իմ տոհմակիցները ճանաչեն իրենց դյուցազն նախնիների ոգին: **Մարդ չպիտի կորցնի իր արմատը: Լույսը չգոյից չի ծագում**» (էջ 5) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.): Հեղինակի առաջադիր նպատակն ինքնաճանաչումն է, որը փորձել է բացահայտել հատկապես հոր և երեխայի արքետիպերի օգնությամբ:

Հյուսվածքն ինքնակենսագրական է, ինչը հուշում է նրա վավերականության մասին: Թվում է՝ իրական-վավերական են բոլոր դեպքերն ու դեմքերը. հեղինակն էլ կարծես թե զուսպ տարեգրողի դիրքերում է: Բայց իրականում գրողը վավերականին հավելել է կարոտի, սիրո, ատելության չափ (թուրքի և ներքին թուրքի նկատմամբ), ինչպես նաև միախառնել է իրականը, առասպելականը, բանահյուսականը. սահմանազատումն անգամ հաճախ անկարելի է թվում: Վիպակի ներքին շերտերում մեր էպոսն է՝ կառուցվածքը (տարին բոլորող չորս եղանակները ներառող ճյուղեր), քարայրի քարե դուռը, ոսկեգույն ձին, ձիու վրնջոցը, Սասունցի Դավիթը և վերջապես Մասիսի վիհի մեջ փակված Փոքր Մհերը, որը շրջանակում է հյուսվածքը: Կարելի է ասել՝ երկը գեղարվեստավավերական է, որտեղ նույնական են պայմանական գեղարվեստական իրականությունն ու պատմական իրականությունը: Ներկայացվում է հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի հերոսական ոգորումներով լի պատմության ընթացքը՝ անկումներով, վերելքներով, որտեղ իրենց հայրենանվեր, հայանվեր ու անձնանվեր գործունեությունն են ծավալել Խանզադենց տոհմի այրերը: Սա Քրմանց տոհմի էպոսն է՝ շաղախված վավերական ու էպիկական տարրերով, որտեղ Դավթին ու Փոքր Մհերին փոխարինելու են եկել Նիկոլայն ու որդին՝ մասնակի արտահայտությամբ: Հյուսվածքում բացվում է քարայրի դուռը, և իրենք իրենց գտած նժույգն ու թոռնիկը թռչում են դեպի իրենց նախնիների սկիզբը: «Ամեն ինչ վերադառնում է իր նախնական ծագումին, որպեսզի նոր սկսվի» (էջ 254), - գրում է Խանզադյանը:

Պատումում Փոքր Մհեր - Արտավազդ - Արշակ Երկրորդ - հեղինակ կերպարային հաջորդականություն է տեղի ունենում, որն արմատավորվում է նշյալ միֆերի ու հեղինակ-կերպարի սահմանախախտ վիճակներով: Հեղինակը, Ալեքսան պապի Արտավազդը և միֆական Արտավազդն այնքան են նույնանում, որ հաճախ ենք տարակուսում՝ միֆի հետ գործ ունենք, թե իրականության: Միֆական Արտավազդն ընթերցողին հիշեցնում

է մեր առաջին ավանդավեպի՝ «Վիպասանք»-ի մասին, որտեղ Արտաշես և Արտավազդ (հայր-որդի) ժառանգորդական կապն է:

«Հայրս ինձ ու Արտավազդին տանում է: …Ես ու Արտավազդը հռհռացինք:

-Եկեք օգնեցեք:

-Չե՛նք օգնի: Մենք քեզ անհարազատ անձնավորություն ենք:

Հայրս մեզ հայհոյեց:

-Գնացեք մի ուրիշ քաղաքում ապրեցեք: **Կարող եք անեծքով հիշել ինձ:** Ես չկարողացա ձեզ համար լուսավոր դուռ բացել» (էջ 225-226) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.): Միֆական ներքին շերտերում հոր կերպարով հայտածվում են Արտաշես Առաջինի, Սասունցի Դավթի միֆերը: Նույնանում են հեղինակի հայրն ու միֆական Դավիթը՝ սխրանքով, Ոսկեկ ձիով, անեծքով և վերջապես ողբերգական վախճանով: Եթե Դավիթն ընկավ հարազատ դստեր նիզակից, ապա հայրը՝ իր հարազատ երկրի «հարազատ» զավակի կրակոցից: Նկատենք՝ կերպարային հաջորդականություն է տեղի ունենում նաև այստեղ՝ Արտաշես Առաջին – Սասունցի Դավիթ - Նիկոլայ հայր:

Էպիկական է հոր կերպարի մուտքը հյուսվածք: Պատերազմը վերջացել է, մերոնք վերադարձել են հաղթանակած: Զորքի մեջ է նաև հեղինակի հայրը՝ Քուռկիկ Ջալալին հիշեցնող իր Ոսկեկով: Հոր կերպարի էպիկականությունը հեղինակն ամբողջացնում է Ոսկեկի վրնջոցով: Հյուսվածքում քանիցս լսում ենք ձիու վրնջյունը («Զորում ձի վրնջաց: Կարծես մեր Ոսկեկն է: Այո՛, նա է» (էջ 30), «Բակից դուրս գալուց մեր Ոսկեկն այնպես վրնջաց, կարծես հրաժեշտ էր տալիս մեր քարաթաղին, մեզ» (էջ 63), «Հայրս… եկավ,… իմացանք Ոսկեկի ուրախ վրնջոցից» (էջ 63)):

Իր արմատներին, իր հողին, իր հայրենի եզերքին կառչած մարդ էր Նիկոլայը: Սարդարապատի ճակատամարտում սպանվում է Խանզադենց ցեղի Գրիգորը: Նիկոլայ հոր հրամանով Գրիգորի մարմինը տանում են Էջմիածին, հողին պահ տալիս: Իսկ երբ թուրքին քշում են Հայաստանից, նույն Նիկոլայի հրամանով սպանվածի մարմինը Էջմիածնի հողից հանում բերում են Գորիս, թաղում Ատյան քարի մոտ՝ ժայռաթաղի հողում:

Նկատենք՝ հյուսվածքում փիլիսոփայական որոշակի խորհուրդ ունի հողը (հողային մասունք, հողե աչքեր, հողանյութ մարդ, հողը մարդուց կխռովի, հողի լաց («…Թաքուն լաց եղա: Անձայն: Ինձ թվաց, թե այդ լացը իմը չէ, այլ՝ հողինը: Ի՛նչ ծանր է հողի լացը» (էջ 232)))՝ պայմանավորված մեռնելու և հարություն առնելու հավիտենական արարողությամբ, որն իրականացվում է հողում. հողից է ծնվում մարդը, բայց և հող է դառնում մարդը: («Հող էիր, հող դարձիր» (էջ 9)):

Այս առումով ուշագրավ է Սերգեյ Սարինյանի դիտարկումը. «Արխայիկ հավատի ռեալությունները ցույց են տալիս, որ հեթանոսական աշխարհազգացողությունը դեռևս պահպանում է իր կենսունակությունը, հանդես է գալիս որպես գոյաբանական տրվածություն: Հողի այսօրինակ փիլիսոփայական մեկնակետը իր հիմքով սկիզբ է առնում արխայիկ խտոնեզմից, թե ամեն բան բաղկանում է հողից և կրկին վերադառնում է մայրական գիրկը»[1]: (Անվերջի շրջապտույտն է):

Վիպակում հեղինակը քանիցս կանգնում է մահվան դեմ հանդիման, «շոշափում մահվան թաթը», բայց և ամեն անգամ մերժում ճակատագրին հնազանդվելու պահանջը՝ երգելով. «Երգել եմ ուզում ես… Մի հեռավոր ձայն ճչում է՝ մի երգի: Իսկ ես երգում եմ: …Լավ եմ հասկանում ինքս ինձ, իմ արժեքը: Հպարտ եմ ինքնս ինձնով, թեև ձմեռային գիշերվա սառնամանիքը քաշում է ականջներս, շալակիս բեռն ինձ ճնշում է իր անգիտակից ծանրությամբ» (էջ 235-236):

Հիրավի, արմատներից էր սա, որ գրողին էր փոխանցել հայրը, ով երեկոները ազգատոհմի փոքր ու մեծ տղաներին հավաքում էր Ատյան քարի մոտ ու երգում՝ համոզմունքով՝ մարդն իր երգը պիտի ունենա:

Հավատ ու պատկառանք էր ներշնչում շրջապատին Նիկոլայը՝ «բարեկազմ, բարձրահասակ, մուգ դեմքով, բարակ ու թուխ բեղերով», ում գյուղում ավելի շատ էին հավատում, քան տեր Սիմոնին ու Սուրբ գրքին: Լինելով տոհմային ռազմախմբի և գյուղի ռազմական ջոկատի հրամանատար-գլխավորը՝ մեծ իշխանություն ուներ Խանզադենց տոհմի ու գյուղի բնակիչների վրա: Իսկ հոր՝ որդու վրա ունեցած իշխանությունն անսահմանափակ էր, ինչից նեղսրտում էր հայրը և հորդորում որդուն մարդ արարածին այդչափ չհավատալ: «Շատ հետո ես նկատեցի, որ հայրս մտահոգ էր այն բանից, որ ինքը կարող է կորցնել ինձ վրա ունեցած իր իշխանությունը» (էջ 20): Հասկանալի է՝ այստեղ իրագործվում է հոր արքետիպի «Երկնային Հայրության» գաղափարը: Հայրը տուն բերեց «խեղճուկրակ, կուչ եկած, հազիվ տասնվեց տարեկան» Բաղդասարին և երեխաներին հորդորեց չնեղացնել նրան: Իրավամբ, աստվածահաճո գործ է որբ երեխային ընտանիք ընդունելը, սիրով ու գուրգուրանքով շրջապատելը, կարիքավորին ձեռք մեկնելը («Միշտ անճարին օգնական էր»), փրկագնով գերությունից ընկերոջն ու նրա ընտանիքին ազատելն ու հարազատ օջախում պահելը. ենթատեքստում՝ քրիստոնեական օգնություն չունևորին և կարիքավորին:

Այսչափ իշխանություն ունեցող տղամարդն այնուամենայնիվ առանձնակի սեր ու խոնարհում ուներ իր կնոջ նկատմամբ, ով «լուսավոր երեսկիատ ուներ», շատ գեղեցիկ էր և զբաղվում էր երեխաներին գրաճա-

[1] **Ս.Սարինյան**, Առասպելաբանությունը Զորայր Խալափյանի արձակում,Լրաբեր հասարակական գիտությունների, 1988, թ. 9, էջ 37:

նաչ դարձնելու գործով: Այս առումով հետաքրքրական է ազգագրագետ Ս.Պողոսյանի դիտարկումը. «Տղամարդու սեռային իդեալը ենթադրել և ենթադրում է ամրություն, համառություն, ուղղամտություն, նախաձեռնող, առաջ մղող և տիրապետող հատկանիշներ, իսկ կնոջ վարք ու բարքի սեռային իդեալին բնորոշ են եղել և են՝ նրբությունը, հնազանդությունը, պարկեշտությունը, զիջողականությունը, հավատարմությունը ընտանիքին և այլն»[1]: Հայոց մշակութային համակարգում այսպիսին էին և են այր և կնոջ սիմվոլիկաները: Այս բանաձևով էին առաջնորդվում հեղինակի ծնողները, ովքեր իրենց վարքուբարքով օրինակ էին ծառայում իրենց զավակներին: Հասկանալի է՝ կերպարի հիմքում մոր արքետիպն է, որն իրացվում է ընտանիքի, հայրենի տան, ծննդավայրի պատկերներով: Կարևորագույն դերակատարում ունի Խանզադյանի երկում մոր կերպարը, որը հավասարակշռում է որդու անհավասարակշիռ կյանքն անգամ հոր մահվանից հետո՝ միահյուսելով և՛ կերպարները, և՛ արքետիպերը՝ հոր և մոր: Թերևս այս հնազանդ կնոջ ազդեցությամբ էր պայմանավորված Նիկոլայի նման ուժեղ տղամարդու՝ արտակարգ նրբությամբ և քնքշությամբ օժտված լինելը, որ «երևի արտառոց էր մեր լեռների քարեղեն կոշտության մեջ», թեպետ երբեք չէր հրաժարվում իր սկզբունքից. «Ակն ընդ ական, ատամ ընդ ատաման» (էջ 70):

Հյուսվածքից իմանում ենք՝ պատանի տարիներին աշխատել է ծովի նավերի վրա, ավարտել սպայական «ուչիլիշչան», ռուսերեն խոսում էր շատ վարժ: Մինչև 1921 թվականը բեռնակիր-մշակ է եղել Կրասնովոդսկ քաղաքում[2]: Խոր հարգանք ու հավատ ուներ ռուս մարդու նկատմամբ, ում հետ էլ կապում էր լեռնաշխարհի և ազգի փրկությունը՝ համոզմունքով՝ ռուսը մեր միակ բարեկամն է, միայն Մոսկվայի հրամանին պիտի վստահել ու հավատալ: «Իսկ Անկարան որևէ իրավունք չունի և չպիտի ունենա մեզ վրա: …Թուրքի ասկյարը կգա, կնստի մեր տներում ու մի սև օր բոլորիս սրի կքաշի» (էջ 91):

Չմասնակցեց Լեռնահայաստանի կառավարության կազմավորմանը՝ չհասկանալով՝ ինչ հույսով է մեր լեռներում ստեղծված գաճաճ իշխանությունը անջատված մնում Խորհրդային Հայաստանից: Երբ 1921-ի հուլիսին Զանգեզուրը հռչակվեց Խորհրդային Հայաստանի մաս, խանդավառվեց, փորձեց ծառայել իր ազգին, այս դեպքում՝ հեղկոմին, «սակայն ոչ իբրև ծառա»: Դեռ այն ժամանակ Նիկոլայը սխալներ էր տեսնում հայ բոլշ-

---

[1] **Ս.Պողոսյան,** Կնոջ և տղամարդու խորհրդանիշները հայոց մշակութային համակարգում, Հայ ժողովրդական մշակույթ, XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Ե., 2007, էջ 249:

[2] Տե՛ս **Ս.Խանզադյան,** Սերո Խանզադյանն իր մասին, «Սյունյաց երկիր», 2015, 3 դեկտեմբերի, թ. 32 (374), էջ 6:

նիկների վարած քաղաքականության մեջ. պիտի կարողանան անմեղ սխալվածին տարբերել թշնամի էլեմենտից: Գիտակցում էր՝ դասակարգային պայքար է, սակայն «պետք է շատ զգույշ լինել, որ թացը չվառվի չորի հետ» (էջ 74): Դիմելով Մախաչին, ով վիպակում հեղկոմի գաղափարակիր ու գաղափարախոս կերպարն է՝ ասում է. **«Ես ապրում եմ, որպեսզի նպաստեմ իմ ազգին՝ ապրելու իր պատկերով, իր հողի վրա, իր լեզվով ու ոգով:** Եթե դու կարծում ես, թե առանց ժողովրդի քո գաղափարը որևէ արժեք կստանա, սխալվում ես: Ես պատրաստ եմ քո իշխանությանը ծառայելու… Համոզված եմ, քո իշխանությունը փրկության դուռ է բաց անում մեր բզկտված հայրենիքի և կիսամորթ եղած հայ ժողովրդի համար» (էջ 79) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

Ինչպե՞ս չհիանար զավակը հորով. **«Այս ի՞նչ մեծ մարդ ես, իմ հա՛յր: Եվ ի՞նչ լավ է, որ իմ հայրը դու ես»** (էջ 78) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.): Իսկ հայրը դյուցազնի էր նման. «Հայրս իր սպայական զգեստի մեջ էր, իրեն շատ սազող մոխրագույն շինելով, ոսկու գույնի ուսադիրներով, որին ինքը «պագոն» էր անվանում: Նրա գլխարկը կապտավուն երանգներով կարակուլե մորթուց էր՝ «բուխարա» փափախ: Դրա ճակատին պղնձե արծիվ-կոկարդ կար, որ միշտ փայլում էր մայիսյան բզեզի պես: Ուներ թե՛ «մոսին», թե՛ «մարտիր» ու թե՛ «կարաբի» հրացան:… «շաշկա» թուր,… «մաուզեր» ատրճանակ… արծաթե կոթով խանչալ… Այդ զենք ու զրահի մեջ հայրս շատ գեղեցիկ էր ու թվում էր ոչինչ նրան չի տապալի: Ես համոզված էի, որ երբեք հորս թիկունքը տափին չի տա» (էջ 101):

Խաթարվում է հեղինակային հավատը. հուդա ժամանակներ էին («Ձմեռ է: Ձյուն է: Հուդա գիշեր է» (էջ 234)), որոնք «մի ժամանակ թևավորին» վերածում էին «հազար տեղից վիրավոր, թևերը փշրված արծվի»:

Հասարակությունից աստիճանաբար օտարվեց Նիկոլայը. դարձավ զիջող, ներողամիտ, չէր առարկում, լսում էր խոնարհ: Բայց երբեք անկում չապրեց՝ անշուշտ գիտակցելով՝ իր ընկճվելը կործանիչ կլինի ընտանիքի համար: «Ախր չէր տեսնում, որ իր որոնածը չգո բան է, ոչ միայն ինքը, այլ՝ ոչ ոք դա երկնքից իջեցնել կամ գետնի տակից հանել չի կարող» (էջ 162):

Հիասթափվեց Խորհրդային իշխանության խամաճիկներից: «Վատ բաներ եք անում:… Սխա՛լ եք, սխա՛լ եք… Թող մարդն իր խելքով ապրի, ամեն մեկն իր նման, իր ձևի: Իսկ դուք մի մկրատով բոլորին խուզում եք» (էջ 166),- անզիջում տրտնջում էր նա, իսկ մի խոր ցավ շարունակ կրծում էր նրա հոգին. «Երևի հավիտյան թաղվեց Տաճկաց Հայաստանի հարցը:… Ով մեր հողը խլեց, նա մեր թշնամին է» (էջ 166): Ստիպում էր որդիներին հավատալ սեփական ուժերին, երբեք ոչ մի ուժի առաջ տկար չզգալ, թշնամուց չփախչել: Չէր փախչում, բայց օտարանում էր ընտանիքից, շրջապատից, աշխարհից, որտեղ մարդուց հող էին խլում. «Սեփական հո-

ղից զրկվելը կյանքից զրկվելու նման բան է: Ուրիշին հող զիջելը հոգու կորուստ է» (էջ 180),- պնդում էր Նիկոլայը:

Որդին հավատացած էր՝ հայրը դեռ կվերագտնի իր երբեմնի վեհությունը, հոգեկան նախկին հավասարակշռությունը: Փոխարենը հայրը գլխարկ կհանի «մի ձախլիկ սնապարծի» առաջ. «Այն գլուխը, որ պատերազմներում երբեք չի խոնարհվել, միայն հաղթանակի պսակ է կրել, այժմ խոնարհվում է մի ակնոցավոր վարժապետի առաջ» (էջ 209): Միակ լուսավոր կետը որդիներն էին, որոնք ստիպում էին իրենց հորը «ուրախությունից հալվել», բայց վերադարձնել նրան երբեմնի հավասարակշիռ վիճակին, անկարող էին. կերպարանափոխությունն անխուսափելի էր:

Նկատենք՝ եթե մինչև հոր կերպարանափոխվելը գրողը կերպարն ամբողջացնում էր Ոսկեկով, որը, ինչպես նշեցինք, մեր էպոսի Քուռկիկ Ջալալին է հիշեցնում, ապա կերպարանափոխությունից հետո՝ մի սպիտակ, բրդոտ էշով. «Հիմա նա դաշտ ու այգի է գնում… էշի վրա նստած: Երբեք նա էշ չի նստել (էջ 203): …Էշն առաջ արած հայրս ետ գնաց այն արահետով, որով մեզ բերել էր: Նա իմ աչքին շատ փոքր երևաց, գրեթե երեխա: Ես անչափ խղճացի նրան: Ինձ թվաց, թե **նա երբեք չի կարողանալու հաղթահարել արահետի դիքը»** (էջ 226) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.): Հոր հետագա ճակատագիրն է հուշում ընթերցողին՝ նախապատրաստելով ողբերգական վախճանին: Հատկանշական է և հոր հագուստ-կապուստը կերպարանափոխությունից առաջ («…հայրս սպայական իր զուգսի մեջ էր՝ սուրը կապած, կարակուլե բարձր գլխարկի լայնքով կապույտ ժապավեն քաշած» (էջ 36)) և հետո («Այնքան ընկճված էր, որ կարծես ինքը չէր, այլ իր ստվերը: Առաջին անգամ ես նրա շորերին կարկատաններ տեսա» (էջ 213)):

Չմոռանանաք՝ 37 թվականն էր… Իշխանության գլուխ էին բարձրացել գևոները, «ուրեմս»-ները, «ի»-ները, ովքեր մարդկային ճակատագրեր ու ընտանիքներ էին խեղում-խժռում. հոշոտեցին հայրենիքի նվիրյալներին՝ Ակսել Բակունցին, Աղասի Խանջյանին… Հերթը Նիկոլայինն էր, ով նախկին դաշնակցական էր («Աղասի Խանջյանն էլ նրան հաց էր տվել») ու դեռ շարունակում էր հավատալ, թե հայիս գոյության միակ հենարանը խորհրդային իշխանությունն է, ռուսն է:

Ժողովրդի թշնամի համարվեց վիպակի հեղինակը. ստիպված հեռացավ հայրենիքից: Վերադարձավ, երբ իր կյանքի առաջին շրջափուլը՝ «Հորս հետ», հերթափոխեց երկրորդին՝ «Առանց հորս»: (1937-ի նոյեմբերին Նիկոլայ Խանզադյանին Գորիսի բանտ նետեցին, այնուհետև տարան անհայտ ուղղությամբ:)

Անդարձ կորցրեց հորը՝ կորցնելով և իր երիտասարդությունը: Իսկ նա ընդամենը քսաներկու տարեկան էր: Խախտվեց հորով պայմանավորված աշխարհի հավասարակշռությունը: Չկա հայրը, բայց կա մի աշ-

խարհ, որն անընդհատ հորն է հիշեցնում. բերդաթաղը, քարայրը, հոր բահն ու գերանդին, քույրերը, մայրը… և վերջապես ինքը՝ հորը նմանվելու, հոր կիսատ գործն ավարտին հասցնելու ձգտումով:

Ըստ Յունգի՝ հոգին չի ենթարկվում ֆիզիկական օրենքներին, դուրս է ժամանակից ու տարածությունից: Կնշանակի՝ մահն ավարտ չէ, այլ սկիզբ է… այս դեպքում՝ հոգևոր ներկայության: «Հոգին երբեք չի մեռնում և միշտ արթուն հսկում է մեզ» (էջ 242),- գրում է հեղինակ-որդին՝ այլևս ապավինելով հոր հոգևոր ներկայությանը:

Ինչպես նշեցինք, հոր արքետիպն իրացվում է և Աստծո կերպարով, ինչը նշանակում է՝ հայրն Աստծո նման միշտ «ներկա է». վիճակներն են տարբեր: Հյուսվածքում հեղինակի հորը տեսնում ենք երկու վիճակում. հայրը՝ կենդանի, հայրը՝ մահացած՝ կենդանի ներկայությամբ: Հոր ֆիզիկական չգոյությունը որդին փորձում էր լրացնել հոգևոր գոյությամբ: Ծանր էր, բայց հորից ժառանգել էր երբեք չպարտվել: «Ինքս իմ մեջ մինչ այդ անհայտ ուժեր եմ գտնում: Հաղթելու նախապայմանը ինքնազգացողության արթնացումն է՝ վճռականության հետ: Հպարտանում եմ իմ դիմացկունությամբ: Դա ծանր ապտակ էր նրանց, ովքեր ցանկանում են իմ կործանվելը» (էջ 235):

Տանը հոր մասին չէին խոսում, միայն նկատում էր՝ մայրը գիշերները դռան սողնակը չէր գցում, իրիկվա ճաշից էլ բաժին էր պահում: Անհնարին էր անշուշտ հաշտվել մեծ կորստի հետ: Բայց չհանձնվեց որդին. «-Հիշատակները սուրբ են, սակայն՝ մեռած: Մեռածները չպետք է խանգարեն ապրողներին» (էջ 242):

Հոր փոխարեն գլխատան շեմին կանգնեց մայրը՝ «վեհ, ինչպես Կարմիր մատուռ»՝ հորդորելով որդուն. «Աշխարհի կարգ է, մեկը՝ գնում, մյուսն է գալիս նրա տեղը: Երբեմն տարածի տեղը դատարկ է մնում, ա՛յ, դա վատ է: …Քո հայրն ապրեց ազնիվ ու մեծ կյանքով, մի ողջ աշխարհի կյանքով, աստվածների կյանքով: Դրանով ես դու մարդ և դրանով պետք է ապրես» (էջ 231): Նկատենք՝ հայրը «շարունակում էր» իր ֆիզիկական գոյությունը մոր միջոցով, մոր շնորհիվ և մոր օգնությամբ. մոր ֆիզիկական ներկայությունը հնարավորինս ապահովում էր և հոր ֆիզիկական ներկայությունը (հոգևոր ներկայությունն ակնհայտ էր):

Բայց ճակատագիրը դեռ շարունակում էր հեգնել գրողին: 1937-ի նոյեմբերի 28-ի ողբերգությունը կրկնվեց 1949-ի հունիսի 14-ին. աքսորեցին և անհայտ ուղղությամբ տարան հեղինակի մորն ու երկու քույրերին՝ Ռոզային ու Վերջինեին («Ծնողներիս վերջին զավակն եմ եղել, այդ պատճառով անունս դրել են Վերջինե՝ վերջինն է»[1],- այսպես է ստուգաբանում իր անու-

[1] **Վ.Խանզադյան,** Տխուր պատմություն, որ կրկնվեց, «Սյունյաց երկիր», 2015, 3 դեկտեմբերի, թ. 32 (374), էջ 153:

նը ծնողների 13-րդ զավակը՝ Վերջինե Խանզադյանը): Այս սոսկալի վիշտն այս անգամ լռությամբ քողարկել անկարող էին: «Թող անարգված հոգինե-րի աղաղակը ճեղքի երկինքը» (էջ 302),- գրում է հեղինակը՝ ձեռնոց նետե-լով ճակատագրին: Մեծ Հայրենականում արյամբ վաստակած շքանշաննե-րով 1949 թվականի հունիսի 22-ին ներկայանում է վերադասին՝ հանրապե-տության ներքին գործերի ժողկոմիսարիատին, և ռազմաճակատայինի ի-րավունքով պահանջում աքսորի ճամփան բռնած մորն ու քույրերին հետ վերադարձնել: (Տառապանքներով լի այս աքսորի և նույնքան տառապանք-ներով լի վերադարձի մասին Վերջինե Խանզադյանն իր «Դառը հուշերը» 1989-ին տպագրեց «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում):

Մայրն առաջվա նման հզոր էր, հպարտ ու պահանջում էր որդուց սրտից հանել «նստվածքները»: «Մեր տոհմը իշխանություն, պետություն հարգող ու պահպանող է... պետությունից չխռովես, չնեղանաս» (էջ 284): Չէր խռովում որդին, պարզապես գիտակցում էր՝ լեռնաշխարհից հեռա-նալ է պետք: «Երևի ցեխ կա, որ սեփական արյունովդ անգամ չես լվանա վրայիցդ»,- ցավով խոստովանում է գրողը, ով այլևս անհարազատի որդի էր և այս աշխարհում իր տեղը հարթելու համար դեռ շատ ծանրություն-ներ պիտի կրեր իր ուսերին, նաև հոր չապրած կյանքի և անորոշության բեռը: «Ամենածանր բեռը, որ դրվում է երեխայի ուսերին, ծնողների չապ-րած կյանքն է», - գրում է Յունգը:

Նիկոլայ Խանզադյանի ձերբակալության մասին որոշ մանրամաս-ներ կարդում ենք Սերո Խանզադյանի քրոջ՝ Վերջինե Խանզադյանի հար-ցազրույցներից մեկում, ով հինգ տարեկան էր, երբ տարան հորը: Ըստ նրա՝ հայրը շիտակ մարդ էր, անվախ, ճշմարտությունը երեսին շպրտող և երբեք չէր թաքցնում իր կարծիքը: Հերթական թշնամին «վաստակում է» կոլտնտեսության ընդհանուր ժողովներից մեկի ժամանակ, երբ վրդով-մունքով և առանց վախենալու իր կարծիքն է հայտնում ու տապալում իր ապագա թշնամու թեկնածությունը: Նիկոլային խորհուրդ են տալիս որոշ ժամանակով հեռանալ Գորիսից, բայց հրաժարվում է. փախչելը պատիվ չէր բերի Խանզադի Նիկոլային[1]:

Վերոնշյալ ձերբակալության մասին պատմում է և հեղինակի որդին՝ Արարատ Խանզադյանը. «Պապս Գորիսի փոստատարն էր, փոստը ձիով Գորիսից Ղափան էր տանում: 30-ականներն էին, ղաչաղություն կար… Մի անգամ շրջկենտրոնի կոլխոզի ժողովում Լևոնն ու պապս վիճում են: Լևոնն ասում է՝ Նիկոլա՛յ, Ձեր տոհմից 32 հոգու զնդակահարել են, բա դու բան չունե՞ս ասելու: Հետո Լևոնն ավելացնում է՝ Գորիսում ուրիշ տղա-մարդ չկա՞, որ փոստը վստահեք նրան և ոչ թե Նիկոլային: Պապս էլ պա-

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 153:

տասխանում է՝ երևի ուրիշ տղամարդ չկա, դրա համար էլ ինձ են վստահել: Երբ Նիկոլայ պապը տուն է վերադառնում՝ տատիս ասում է, որ հեսա գալու են իր հետևից: Դա 1937թ. նոյեմբերի 28-ին էր: Գիշերվա 3-4-ի կողմերը դուռը ծեծում են ու… նրան տանում»[1]: Կնշանակի՝ վավերական Լևոնի (խոսքը 1930-ականներին Գորիսի իշխանավորներից մեկի՝ Դադալունց Լևոնի մասին է, ում նախաձեռնությամբ էլ, ըստ շրջանառվող լուրերի, աքսորվել են Նիկոլայ Խանզադյանն ու նրա ընտանիքը՝ Ռ.Ս.) գեղարվեստական խտացումն է հյուսվածքի Գևոն, վավերական հիմք ունեն և Նիկոլայի և Գևոյի վեճերը: Նիկոլայ Խանզադյանի փոստատար լինելու մասին խոսվում է նաև երկում:

Տասնամյակներ շարունակ Խանզադյանների ընտանիքն ապրել է անորոշության մեջ: «Ես սպասում եմ իմ հորը: Չեկավ: Մի՞թե երբեք նա բաց չի անելու մեր տան դուռը» (էջ 311): Հոր արդարացման խնդրանքով որդին որոշեց դիմել վերևներին, բայց մայրը չհավանեց այդ միտքը. տոհմի արյանը պատիվ չէր բերում աղերսող լինելը: Թղթո՞վ պիտի արդարացնեին հորը: «Վերջապես ո՞ւմ է պետք թղթե հայրը» (էջ 311), երբ հիշողություններումդ կենդանի է, իր հոգևոր ներկայությամբ ուժ է տալիս՝ անպայման ապրելու: «Ես պիտի ապրեմ, ինձ սպանել չի լինի»: Պիտի ապրի՝ ոտնահարված ճշմարտությունը վերականգնելու, հոր աղարտված կերպարը լուսավորելու, հոր հիշատակը հավերժացնելու համար՝ սերունդներին թողնելով «Հորս հետ և առանց հորս» հոգևոր կոթողը: Նշենք՝ վիպակը գրեց 1982-84թթ., տպագրեց 1986-ին՝ որևէ տեղեկություն չունենալով հոր ողբերգական վախճանի մասին: Տեղեկություն կունենա շատ ավելի ուշ՝ Խորհրդային ճամբարի փլուզումից հետո, երբ կբացվեն արխիվները:

«Մինչև 1992թ. փետրվար,- պատմում է Արարատ Խանզադյանը,- բոլորս կարծում էինք, թե նրան աքսորել էին մի անհայտ ուղղությամբ: 1992թ. փետրվարի 18-ին հայրս ստացավ Հայաստանի ազգային անվտանգության ղեկավարի պատասխան նամակը: Գրված էր, որ Նիկոլայ Խանզադյանը կալանավորվել էր 1937թ. նոյեմբերի 28-ին և մի քանի օր անց՝ դեկտեմբերի 8-ին, գնդակահարվել Երևանի բանտում»[2]:

Հոր ողբերգական ճակատագրի մասին, ինչպես նշեցինք, որդին իմացավ ուշ, իսկ մինչ այդ ապրել էր պետք մոր համար, ով փոխարինել էր հորն («Հենց նա էլ ինձ համար ապրելու հենարան կլինի այս աշխարհում» (էջ 313)) ու անընդհատ հիշեցնում էր որդուն, որ Քրմանց օջախի երկու հազար տարի շարունակ պահած-շահած կրակը հանգել է: Ազգագրագետ Ռաֆիկ Նահապետյանի դիտարկմամբ. «Կնոջ անձնական կարևոր պար-

[1] **Ա.Խանզադյան,** Հարցազրույց Արարատ Խանզադյանի հետ, «Սյունյաց երկիր», 2015, 3 դեկտեմբերի, թ. 32 (374), էջ 150:

[2] Նույն տեղում, էջ 150:

տականություններից էր **տան կրակարանն անշեջ պահելը**:…Այն կինը, որի անգործության կամ անփութության պատճառով հանգչում էր ընտանիքի կրակը կամ անթեղը, անարժան էր համարվում տանտիկին կոչվելու: ...պաշտամունքային առումով օջախները նախնիների պաշտամունքի վայրն էին, ողջերի համար պահպանիչ էին ծառայում, խորհրդանշում էին տոհմի հարստությունը, հարատևությունը, առողջ սերունդը, բարեկեցությունը: Այս բոլորի երաշխավորն ու պահպանողը տանտիկինն էր»[1] (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

Մորով պայմանավորված աշխարհի հավասարակշռությունն էլ կխախտվի, բայց գլուխը չի խոնարհի. այդպես էր կամենում մայրը. «Դու պիտի վերաշինես մեր տունը, մեր աղբյուրը, փլատակների տակից հանես պապերիդ գերեզմանաքարերը՝ ի տես աշխարհին: Պարտական մնաս, եթե չկատարես կամքս» (էջ 313):

Մոր մարմինը հողին հանձնեց Գորիսի քաղաքային գերեզմանոցում: Մի քար էլ դրեց՝ հոր հիշատակը հավերժացնելու համար: Դեռ պարտական էր մորը:

Առասպելների ծանրությունից տնքացող ժայռաթաղում՝ բերդաթաղի մի բարձունքի վրա, ասքագիրը կառուցեց իր տունը՝ օգտագործելով «փլված կամարների ու պատերի քարերը, որոնց վրա դեռ մնում են ալևոր դարերի հետքերը» (էջ 314): Իրավացի է ասված. **«Ոչինչ չի կորչում: Վերընձյուղումը շոշափելի է արևի ճառագայթների նման…»** (էջ 314) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

Սա, իրավամբ, ինքնության նվաճում էր, որով և դրվում է հեղինակկերպարի անհատականացման գործընթացի վերջնաքարը:

Վերակերտելով իր տունը, իր աղբյուրը, իր հոր աղարտված կերպարը, խեղված պատմական ճշմարտությունը, հեղինակը կերտում է և իր հաղթանակը: Խոսուն է հեղինակային եզրահանգումը. «Հորս կյանքն օրինակ ունենալով՝ ես ինձնից վանում եմ հուսալքության ալիքները, որ անվերջ գրոհում են ինձ վրա: **Ով չարին դիմադրել գիտի, նա կապրի**» (էջ 310) (ընդգծումը մերն է՝ Ռ.Ս.):

Рима Степанян, Архетип как универсальный способ передачи исторического опыта (Повесть Серо Ханзадяна “С моим отцом и без него”) - Рассмотрели автобиографическую повесть Серо Ханзадяна «С моим отцом и без него», который является очевидным примером архепического мышления. С помощью архетипов отца и ребенка мы пытались показать, что

[1] **Ռ.Նահապետյան,** Կինը հայոց ավանդական ընտանիքում (ըստ սասունցիների ազգագրական սովորույթների), Պատմա-բանասիրական հանդես, 2009, թ. 1, էջ 73-74:

архетип является универсальным средством передачи не только человечества, но и исторического опыта.

Rima Stepanyan, The archetype is a universal means of transmitting historical experience ("With and without my father", a short story by Sero Khanzadyan) - I have examined Sero Khanzadyan's "With and without my father" autobiographical short story which is an obvious example of archetype thought. Through the archetypes of a father and a child I have tried to show that the archetype is not only a universal means of transmitting mankind experience but historical experience as well.

ԳՈՒՅՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

ՍԵՊՈՒՀ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր - գույն, գույնի հատկանիշներ, բնություն, բնական գույներ, գուներանգներ, սպեկտորներ, ներկապնակներ, ներկեր:

Բնության զարմանահրաշ ու գեղատեսիլ անկյունների գրավչությունը արվեստագետներին օգնել է իրենց տպավորություններն ու ներքին զգացումներն արտահայտել առանձնակի ոգևորությամբ: Այն օժտել է մարդուն մի ուրույն տաղանդով՝ տարբերել ու բացահայտել գեղեցիկը: Իմացությունն այն մասին, որ բնությունը միացնում է բոլոր գույները, չի կարող ինքն իրեն բաց անել միջավայրի գաղտնիքները: Բնության գունային ներդաշնակությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի լավ և լիարժեք օգտագործել գույնի հնարավորությունները: Մարմիններն ունեն իրենց բնական գույները, ինչի շնորհիվ մենք նրանց ճանաչում և տարբերում ենք յուրովի:

Ցանկացած մարմնի գույն մեր կողմից ընկալվում է ի շնորհիվ այն բանի, որ դրանք անդրադարձնում են նրանց վրա ընկնող լուսային ճառագայթների որոշակի մասը. «Այս կամ այն լույսի աղբյուրի ճառագայթների գույները համախմբում են առարկայական աշխարհի գույները՝ դարձնելով այն ներդաշնակ (համահունչ) և միմյանց ենթակա»[1]:

Ամեն մի մարմնի կողմից կլանվող կամ արտացոլվող որոշակի գույն, համապատասխանում է իրար մեջ տարբեր ճառագայթների ձուլմանը, որոնք մտնում են սպեկտորի մեջ. օրինակ՝ երբ մակերեսից արտացոլվում են միայն կանաչ կամ կարմիր ճառագայթներ, իսկ մնացածները կլանվում են մարմնի կողմից, ապա մենք, մարմինը տեսնում ենք միայն դեղնավուն երանգով: Երբ մարմնի մակերեսից արտացոլվում են՝ առաջնային կերպով, կարմիր, իսկ նվազ կերպով նարնջագույն և դեղին ճառագայթները, ապա մենք տեսնում ենք միայն կարմիրը: Արտացոլման շնորհիվ երևան են գալիս շրջապատող առարկաների ու երևույթների բազմապիսի հատկություններ, այն հանդիսանում է օբյեկտիվ իրականության իմացությունը[2]:

Անդրադառնալով գուներանգների հիմնական հատկանիշներին նշենք, որ գույները բաժանվում են քրոմատիկի և աքրոմատիկի: Մի խումբ են կազմում քրոմատիկ գույները՝ բոլոր գուներանգները բացի սևից, սպի-

[1] **Ներսիսյան Լ.,** Բնանկար, Ե., 2011, էջ 89:

[2] **Քեշիշյան Ա.,** Գծանկարի ուսուցման հիմունքները: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Ե., 2014, էջ 72:

տակից ու մոխրագույնից: Վերջիններս պատկանում են աքրոմատիկ գույներին՝ և համարվում են այսպես կոչված չեզոք գույներ:

Քրոմատիկ գույնի որակական հատկանիշներն են՝ գուներանգը, հագեցվածությունն ու լուսեղությունը: Վերջինս բնութագրում է, թե որքանով է այս կամ այն քրոմատիկ գույնը ակտիվ, լուսավոր կամ մուգ, հագեցված մեկ այլ գույնից, կամ տվյալ գույնը որքանով է մոտ սպիտակին:

Գույնի հագեցվածությունը բնութագրում է որակական տարբերությունը, թե քրոմատիկ գույնը որքանով է տարբեր իրեն հավասար լուսավորությամբ տվյալ աքրոմատիկ գույնից: Կարելի է նշել, որ սևը, սպիտակն ու մոխրագույնը երբեմն ունենում են քիչ ընկալելի գունային երանգներ, որի պարագայում դրանք արդեն համարվում են որպես քրոմատիկ գույներ:

Գույները գեղանկարչության մեջ բաժանվում են ըստ սպեկտորների, որոնք կազմում են արեգակնային լույսի ճառագայթները: Վերջիններս կոչվում են հասարակ կամ բնական գույներ, որոնք հնարավոր չէ ստանալ այլ գույներից, սակայն կարելի է դրանց խառնուրդից ստանալ նոր գունեբանգներ: Բնական գույներն են՝ դեղինը, կարմիրն ու կապույտը: Հենց այս երեք գույներից են գոյանում մարդու աչքին տեսանելի 125–ից ավելի գուներանգներ[1]:

Գեղանկարչության մեջ գոյություն ունի երեք տեսակի գույների խառնուրդ, որը հնարավորություն է տալիս ստանալու անհրաժեշտ նոր գունային երանգներ.

1. մեխանիկական՝ ներկապնակի վրա գույների միաձուլման եղանակով,
2. օպտիկական՝ բարակ լուսավոր շերտը ծածկելով արդեն իսկ նախորոք դրված, չորացած շերտի վրա,
3. տարածական՝ օպտիկական խառնուրդի տեսակներից մեկը:

Գույնի մեխանիկական խառնումը կատարվում է կամ ներկապնակի կամ էլ հենց բուն աշխատանքի վրա: Կանոնակարգված չափանիշ ունի ներկերի տարալուծման գործընթացը, որը միշտ չէ որ օպտիկական և մեխանիկական խառնման ժամանակ տալիս է նույն արդյունքը. օրինակ՝ կարմրի, կապույտի և դեղինի միաձուլման ժամանակ առաջանում է սպիտակ գույն, սակայն մեխանիկականի դեպքում՝ աղտոտ մոխրագույնին մոտ երանգ: Արդյունավետության համար՝ օպտիկական պահանջված տպավորիչ գունային խառնուրդ ստանալու նպատակով օգտագործում են լուսարձակ հատկություններով օժտված գույներ՝ կոբալտ կապույտ, կոբալտ կապույտ սպեկտրալ, տիոինդիգո վարդագույն, զմրուխտյա կանաչ, վալկանսկոիդ և այլն: Նաև գոյություն ունեն կիսաթափանցաներկման

[1] **Кузин В.,** Психология 3, М., 1997, ст. 98.

համար հետևյալ գուներանգները՝ սիենա բնական, մարս դարչնագույն, օքրա մուգ, մարգանեցային երկնագույն և այլն:

Գունաներկերը նախատեսված են լույսի տպավորության արտահայտման և ռելիեֆային ծածկույթի արտացոլման համար, սակայն հաճախ վրձնահարվածներով նկարված գեղանկարչական ստեղծագործությունները հասնում են գույների տարածական խառնման տպավորությանը, այնինչ օպտիկական երկու շատ մոտ իրար գույների միաձուլման ժամանակ՝ որոշ տարածությունից դիտելիս, դրանք երևում են որպես մի նոր գուներանգ:

Ավելի տիպիկ է տարածական ձուլման տեսակետից պուանտելիստական գեղանկարչությունը, որտեղ մանր կետիկների կամ վրձնահարվածների օգնությամբ տեղադրված իրար շատ մոտ գույները, որոշ տարածությունից դիտելիս ստեղծում են օպտիկական տարածական գույների ձուլման տպավորություն[1]:

Գույնի օպտիկական միաձուլմանը բնորոշ է հետևյալ օրինաչափությունը, որ խառնելով օպտիկական խառնուրդը քրոմատիկ գույնի հետ՝ կարելի է ընտրել նաև մեկ այլ քրոմատիկ գույն, որը օպտիկական խառնուրդի ժամանակ՝ առաջինի հետ, համապատասխան չափաբաժիններով, կառաջացնի մի նոր աքրոմատիկ գույն:

Գունային շրջանի մեջ իրար փոխլրացնող գույները գտնվում են շրջանի տրամագծի հակադիր հատվածում: Երկու իրար չլրացնող գույների օպտիկական խառնուրդի ժամանակ առաջանում է նոր գուներանգ, որը գունային շրջանի մեջ միշտ գտնվում է երկու ձուլվող, ոչ ավելացվող քրոմատիկ գույների արանքում: Որպես օրենք՝ գույնի հագեցվածությունը օպտիկական խառնուրդի արդյունքում ստացված՝ երկու անբավարար գույների ժամանակ, միշտ լինում է քիչ, քան թե խառնվող գույների մոտ: Ինչքան էլ հեռու միմյանցից գտնվեն գունային շրջանում ձուլվող անբավարար գույները, կամ ինչքան էլ մոտ լինեն ձուլվող գույները, միևնույնն է առավել հագեցված է ստացվում առաջացած խառնուրդի գույնը: Վերջինից էլ առաջանում են գունային պատկերները, որոնք ձևավորվում են մակերևույթային ու տարածական ձևերի բազմագույն առանձնահատկությունների հայտնաբերման միջոցով[2]:

Ներկապնակի վրա գունավոր ներկերի դասավորվածությունը խիստ կարևոր է ու պետք է լինի կանոնավորված: Դրանք բաժանվում են երկու խմբի՝ առաջին խումբը կազմում են կանաչակապտավուն գուներանգները, իսկ երկրորդը՝ կարմրանարնջավուն, դարչնագույն ու կապտամանուշակագույն երանգները:

---

[1] Տե՛ս **Дюхтинг Х.,** Сёра (1859-1891). Пуантилизм, М., 2005.

[2] **Խալաթյան Ա.,** Դիզայնի հիմունքներ, Ե., 2005, էջ 13:

Վրձնով գույները խառնելու համար պետք է հաշվի առնել ոչ միայն գույնն ու հագեցվածությունը, այլ նաև վրձնահարվածի որակը: Առհասարակ մասնագետները խորհուրդ չեն տալիս երեք գույնից ավել գույներ խառնել իրար հետ, որպեսզի խուսափվի ներկերի աղտոտված գուներանգ ստանալուց: Գույների խառնման ժամանակ պետք է հաշվի առնել այն գործընթացները, որոնք բերում են գունանյութերի փոփոխմանը՝ կախված քիմիական որոշ պիգմենտային փոփոխությունից՝ մգացում, գունաթափում, ներկանյութի շերտի ճաք և այլն:

Արտադրվող գուներանգներում հարկ է ուշադրություն դարձնել այն ներկերի վրա, որոնք արդեն իսկ խառնուրդ գույներից են ստեղծվել. օրինակ՝ բնական ումբրան, որը ստեղծվում է հողի երեք գույների միախառնման արդյունքում:

Պուանտելիստական մեթոդով ներկերի օգտագործման ժամանակ՝ ինչքան փոքր կլինեն վրձնահարվածները, բծերը կամ կետերը, այնքան ավելի ազդեցիկ կլինեն տարածաօպտիկական գույների ձուլումը: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ գեղանկարչական գործունեություն ծավալելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել գունաներկերի հարաբերություններն ու համադրությունները, քանի որ իրար կողք կողքի տեղադրված գույները ազդում են մեկը մյուսի վրա: Այդ իսկ պատճառով, սկսելով աշխատանքը, պետք է անմիջապես բոլոր հիմնական տոները դնել միանգամից, որպեսզի երևան դրված գույների միջև եղած հարաբերությունները: Դա էր շեշտում նաև Լեոնարդո դա Վինչին իր աշխատություններից մեկում. «…տե՛ս քո կողմից պատկերվող առարկան ամբողջությամբ»[1]:

Հարկ է անդրադառնալ նաև արհեստական լուսավորման ազդեցությունը գուներանգի վրա, որն ունի էական նշանակություն: Հաստ լաքի շերտով պատված նկարը, ուժեղացնում է և լուսավորությունը, և գունային ակտիվությունը, իսկ փայլ չունեցող ծածկույթը՝ բեկված ու նկարի մակերեսից արտացոլված լույսի ազդեցության պատճառով՝ ճիշտ հակառակն է՝ նվազեցնում է լուսավորվածությունը:

Նկարի գույնը դիտելիս խիստ տարբերվում է էլեկտրական լույսով լուսավորվածը՝ բնական լուսավորությունից: Դա բացատրվում է նրանով, որ բոլոր արհեստական լուսավորվածությունները համեմատած բնականի՝ տալիս են շատ աննշան պարունակությամբ կապույտ և մանուշակագույն ճառագայթներ: Այդ իսկ պատճառով արհեստական լուսավորվածության ժամանակ փոխում են իրենց գուներանգները: Սա ևս մեկ ապացույց է այն բանի, որ առավել նպատակահարմար է աշխատանքները կատարել բնական լույսի ներքո և ցանկալի է բնության գրկում: Այստեղ ա-

[1] **Леонардо да Винчи,** Книга о живописи мастера Леонардо да Винчи, живописца и скульптора флорентийского, под ред. А. Габричевского, М., 1934, ст. 107.

զատ ու համարձակ նկարելով է որ անձը հետզհետե հարստացնում է իր ճանաչողական ունակությունները, միաժամանակ հագուրտ տալիս իր զգացմունքներին ու գործնականորեն ձեռք բերված հմտությունների հետ միասին ձևավորվում է նրա գեղագիտական ընդհանուր վարքագիծը[1]:

Այսպիսով, գույնի կերպարային ուժը պայմանավորվում է ոչ թե առանձին գուներանգների գրավչությամբ ու հագեցվածությամբ, այլ գունային խնդիրների լուծման ամբողջ կերպարային կառուցվածքով, սկսած ամենախոր շերտերի պարունակությունից և վերջացրած ամենաներքին ձևերի տարրերից: Գույնի ընկալման լավագույն վարպետը միշտ էլ հանդիսացել է մայր բնությունը, որի անսահման գեղեցկությունը ոգևորել է շատերին նորովի ստեղծագործելու: Բոլոր գունային ներդաշնակությունները առկա արվեստի ստեղծագործություններում, վերցված են բնությունից, որը տալիս է անսահման հնարավորություններ պատկերման ընտրության համար:

Сепу Нерсисян, Основные характеристики цвета - Правильное восприятие цвета является важнейшим условием работы художника. Они включают в себя как натуральные, так и искусственные сорта. Лучшим мастером цветового восприятия является мать-природа, но необходимо понимать гармонию естественных цветов. Решение цветовых проблем важно для создания картин. Живопись более эффективна в природе, при естественном освещении, что помогает в правильном выборе красок.

Sepuh Nersisyan, The main features of color - The correct color perception is the most important painter's work condition. They include both natural and artificial varieties. The best master of color perception is mother nature, but it is necessary to understand the harmony of natural colors. The solution of the color problems is important for the creation of paintings. Painting is more effective in nature, in natural light, which helps in the right choice of paints.

[1] **Խաչատրյան Ս.,** Թեմատիկ նկարչության ուսուցումը, Ե., 1978, էջ 43:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ՆՈՐԻԿ ՆՈՐԻԿՅԱՆ

Բանալի բառեր – պետություն, ռազմական քաղաքականություն, պաշտպանություն, ռազմական անվտանգություն, բնակչություն, տարածք, պատերազմ, ռազմական դրություն:

Հարավկովկասյան տարածաշրջանում արդի աշխարհաքաղաքական և անվտանգային զարգացումները, Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ընդգծվող Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը, վերջինիս կողմից սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) տարեցտարի արդիականացումն ու ժամանակակից հարձակման միջոցների ձեռքբերումը պարտավորեցնում է Հայաստանին ուշադրության կենտրոնում պահել երկրի պաշտպանության նախապատրաստման հարցերը, ոչ միայն մասնակի, կոնկրետ ու մարտավարական ուղղություններում, այլ համապետական մասշտաբով:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը, միջազգային ատյանների, ազդեցիկ հովանավորների ու «նավթային գործոնի» միջոցով Արցախյան հիմնախնդիրը հօգուտ իրեն «խաղաղ կարգավորելու» ակնկալիքներին զուգահեռ, խնդրի լուծման ելք է դիտարկում նաև ռազմական ուղին: Այդ նպատակով Ադրբեջանի զինված ուժերի և ողջ երկրի մասշտաբով իրականացվում են ռազմական, տնտեսական և քաղաքական բնույթի միջոցառումներ: Մասնավորապես, Թուրքիայի գործուն աջակցությամբ կատարվում է բանակի արմատական վերակառուցում ու վերազինում, ստեղծվում են զորքերի նոր խմբավորումներ, համալրվում են զենքի, զինամթերքի ու նյութատեխնիկական միջոցների պաշարները, տնտեսության կարևորագույն ճյուղերը համապատասխանեցվում է պատերազմական խնդիրներին, ընդլայնվում է ռազմական ենթակառույցը և այլն[1]:

[1] Տե՛ս **Овсепян Л., Иванов В.,** Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии: Динамика и основные тенденции развития, Ереван, Институт политических исследований ГНКО, 2010, էջ 19:

Պետության պատրաստումը պաշտպանության կամ նախապատրաստումը հավանական պատերազմին բոլոր երկրներում համարվում է քաղաքացիական և ռազմական կառավարման մարմինների կարևոր խնդիրներից մեկը՝ պետության պաշտպանունակության և ռազմական անվտանգության ապահովման համակարգում: Պետաիշխանական համակարգի և, հատկապես, զինված ուժերի պատրաստումը պաշտպանությանը համապատասխան պետական և ոչ պետական կառույցների կողմից համադասված միջոցառումների համակարգի կազմակերպման և իրականացման բարդ, բազմակողմ և շարունակական գործընթաց է՝ ուղղված զինված հարձակումից պաշտպանությանը նրա բոլոր ոլորտների պատեհաժամ և լրիվ պատրաստության համակողմանի ապահովմանը: Երկրի առջև ծառացող տվյալ խնդիրների բարդությունն ու համազգային ծավալները պահանջում են համապետական մասշտաբով պետական կառուցակարգի բոլոր մարմինների ջանքերի միավորում, գործողությունների համաձայնեցում ու հստակ համակարգում: Այդ պատճառով պետության ռազմական քաղաքականության և ռազմական անվտանգության ապահովումը չի կարող իրականացվել միայն պաշտպանության ոլորտի կառավարական մարմնի ուժերով: Այն ամբողջ ծավալով կարող է համակարգել համապատասխան լիազորություններ, լծակներ ու հեղինակություն ունեցող մարմինը՝ անվտանգության խորհուրդը:[1] Հայաստանի համար խնդրի կարևորությունը հիմնավորվում է նաև նրանով, որ ներկայիս խորհրդարանական հանրապետության կառավարման մոդելի և առկա անմիջական ռազմական սպառնալիքների պայմաններում, սահմանադրական բարեփոխումների արդյունքում պաշտպանական ոլորտի կառավարման գործում իրավասություններ են նախատեսվել Անվտանգության խորհրդի համար (Անվտանգության խորհուրդը պետական մարմին է, որը «պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղություններին վերաբերող հարցերով ընդունում է որոշումներ», որոնք ստորագրում է վարչապետը և ՀՀ պաշտպանության նախարարը, իսկ պաշտպանության քաղաքականությանը չառնչվող որոշումները ստորագրում է վարչապետը և անվտանգության խորհրդի քարտուղարը)[2]:

Պետաիշխանական համակարգի և, հատկապես, զինված ուժերի պատրաստումը պաշտպանության կատարվում է ինչպես պետության կենսագործունեության բոլոր ոլորտներում (ոչ թե միայն ռազմական), այնպես էլ տվյալ գործընթացն արվում է մշտապես՝ խաղաղ ժամանակ,

[1] Տե՛ս Конституционно-правовой статус Совета Безопасности Российской Федерации, Под общей редакцией докт.юрид.наук **Н.П.Патрушева**, М., 2009, էջ 11-12:

[2] Լրացուցիչ տե՛ս «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2018.03.21/20 (1378), 07.03.2018, http://www.arlis.am

սպառնալից շրջանում և նույնիսկ ռազմական գործողությունների ընթացքում: Առավել դինամիկ կերպով այն կատարվում է ռազմական վտանգի աճման, կոնկրետ ուղղություններից կոնկրետ ռազմական սպառնալիքների ի հայտ գալու պահից սկսած:

Պաշտպանությանը պետության պատրաստման հիմնական նպատակներից է այն, որ անմիջական սպառնալիքի ի հայտ գալու պահին ապահովվեն հակառակորդ պետությունների նկատմամբ ավելի շահավետ սեփական դիրքը, նյութական և հոգևոր ոլորտներում ուժերի հարաբերակցության ձեռք բերված ընդունելի մակարդակը, կողմերի համախումբ հզորությունների (ներուժերի) հարաբերակցությունը կամ այնպիսի գերակշռության երաշխավորումը, որը ճիշտ օգտագործելու դեպքում երաշխավորվում է պատերազմի կանխումը կամ դրա հաղթական ավարտը:

Հետևաբար, պետության պատրաստումը պաշտպանությանը ընդգրկում է հետևյալ ուղղությունները. զինված ուժերը (խաղաղ ժամանակ՝ նաև այլ զորքերը), տարածքը, բնակչությունը, տնտեսությունը, տրանսպորտը և կապը, քաղաքական-դիվանագիտական, իրավական, տեղեկատվահոգեբանական, գիտության, կրթության, մշակույթի առողջապահության ոլորտները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման կառուցակարգերը, քաղաքացիական պաշտպանությունը: ՀՀ պաշտպանության կազմակերպման հիմնական ելակետային կարգավորումները սահմանված են Սահմանադրության մեջ, միջազգային իրավական փաստաթղթերում, օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում ու քաղաքական անվտանգային փաստաթղթերում:

Պետության և ռազմական անվտանգության համակարգի պատրաստումը պաշտպանությանը կատարվում է ինչպես համապետական մակարդակով, այնպես էլ զինված ուժերի ու այլ զորքերի, նաև ռազմական անվտանգության համակարգի այլ տարրերի կողմից՝ ըստ փոխհամաձայնեցված գործակցության տեսլականների: Պաշտպանությանը պատրաստման ամբողջ գործընթացը կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի: Առաջին փուլն իրականացվում է խաղաղ ժամանակ՝ պետության ամենօրյա գործունեության ընթացքում: Որպես կանոն, այն ավարտվում է նախքան սպառնալից շրջանի սկիզբը: Ռազմական վտանգի բացահայտումից հետո ճշգրտվում են առաջին փուլի միջոցառումները, հակառակորդի հանկարծակի հարձակումը կանխելու կամ հետ մղելու համար պայմաններ ստեղծելու նպատակով պետության պաշտպանական կարողությունները կենտրոնացվում են առավել սպառնալից ուղղություններում:

Իրադրության նման զարգացումը հարկադրում է պետաիշխանական ռեսուրսի և զինված ուժերի անցումը պաշտպանությանը պատրաստման երկրորդ (անմիջական) փուլին, որի շրջանակներում միջոցա-

ռումների բովանդակությունը, ծավալն ու ժամկետները կախված են սպառնալիքների տևողությունից: Սպառնալի շրջանի բացակայության կամ դրա կարճատևության դեպքում (ինչը ներկայումս առավել հավանական է) պետության պաշտպանությանը պատրաստման ամբողջ գործընթացը անցկացվում է մեկ փուլով: Առավել հավանական է, որ պատերազմի սանձազերծման նման անբարենպաստ պայմաններում որոշ միջոցառումներ ավարտվեն ռազմական գործողությունների ընթացքում:

Այդպիսով, պաշտպանությանը պատրաստման հիմնական փուլը առաջինն է, որի ընթացքում անհրաժեշտ է պլանավորել և իրականացնել այն բոլոր կարևոր միջոցառումները, որոնք նախատեսվում են ՀՀ համապատասխան օրենքներով[1], այլ իրավական ակտերով՝ «Ազգային անվտանգության ռազմավարությունով»[2] և «Ռազմական դոկտրինով»[3], զինված ուժերի գործունեության ծրագրային փաստաթղթերով[4], գերատեսչությունների գործունեությանը վերաբերող ռազմավարական-ծրագրային և անվտանգության տարբեր բնագավառներին վերաբերող այլ փաստաթղթերով[5]:

Պաշտպանությանը պետության պատրաստության միջոցառումները պայմանականորեն կարելի է համախմբել 2 հիմնական ուղղվածությամբ՝ բնակչության նախապատրաստում և տարածքի պատրաստում: Բնակչության հետ աշխատանքների վերլուծության համար սկզբնական քայլերից է այնպիսի հարցերի ուսումնասիրումը և պարզաբանումը, ինչպիսիք են՝ անհ-

---

[1] Տե՛ս, օրինակ, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2007/4, 17.01.2007, «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2015/23, 22.04.2015 և այլն, http://www.arlis.am

[2] Տե՛ս ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ ՆՀ-37-Ն հրամանագիր, ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, http://www.arlis.am

[3] Տե՛ս ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» թիվ ՆՀ-308-Ն հրամանագիր, ՀՀ ՊՏ 2008/1, 07.01.2008, http://www.arlis.am

[4] Օրինակ, ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիր, Հաստատված ՀՀ նախագահի 2018 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆՀ-103-Ա հրամանագրով, http://mil.am/files/LIBRARY/7-amya/cragir/ՀՀ/ԶՈՒ/2018-2024/թվականների/արդիա կանաց ման/ծրագիր.pdf, կամ, մեկ այլ օրինակ, ՀՀ Նախագահի 2017 թվականի հունվարի 31-ի «Ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-15-Ն կարգադրությունը, https://www.arlis.am/

[5] Մասնավորապես, «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2018.03.30/25 (1383), 30.03.2018, ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 65-Ա որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «**Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին**» թիվ 650-Լ որոշում և այլն, http://www.arlis.am

րաժեշտ ու առկա մարդկային ռեսուրսների հաշվառումը, պետության անվտանգության ապահովման գործում բնակչության մասնակցության ձևաչափերի ճշգրտումը, ինչպես նաև այդ միջոցառումների իրականացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների մշակումը և անցկացումը:

Ժամանակակից պատերազմում պատրաստված մարդկային ռեսուրսների առկայությունը մեծ ազդեցություն է գործում զինված ուժերի քանակական և որակական վիճակի, պատերազմի ընթացքի և ելքի վրա: Պաշտպանության պատրաստման գործընթացում իրականացվող միջոցառումները չպետք է վնասեն պետության շահերին և պետք է հիմնվեն պաշտպանության հարցերում ազգային շահերի պաշտպանության համապատասխանության սկզբունքի վրա: Պատերազմին բնակչությունը պատրաստելու խնդիրը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրա ոչ միայն քանակական, այլև որակական կողմը, այսինքն՝ զգալի թվով և պատրաստվածությամբ ազգաբնակչության պահանջարկը: Այդ պատճառով առաջին պլան են մղվում հետևյալ հիմնական միջոցառումները՝ զինվորական պատրաստումը, պատրաստումը պատերազմի ժամանակ ի շահ տնտեսության բնականոն գործունեության ապահովման, բարոյահոգեբանական և գաղափարադաստիարակչական պատրաստությունը, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ստորաբաժանումների պատրաստումը պաշտպանության բնագավառում: Բնակչության պատրաստմանն ուղղված նշված միջոցառումները սերտորեն փոխկապված են և լրացնում են մեկը մյուսին:

Արդի պայմաններում բոլոր պետություններում բնակչությանը զինվորական ծառայության պատրաստմանը մեծ ուշադրություն է դարձվում: Բնակչության որոշակի մասնաբաժնի պատրաստումը իրականացվում է պարտադիր զինվորական ծառայության միջոցով, ինչպես նաև կամավոր պատրաստությամբ: Մասնավորապես, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացիները կարող են ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքել քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին[1]: Տվյալ գործընթացում զինվորական պատրաստության նպատա-

[1] Տե՛ս ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսում-

կը պայմանագիր կնքած քաղաքացիներին հետագա զինվորական ծառայության համար անհրաժեշտ ռազմական գիտելիքներով ապահովելն է:

Զինվորական ծառայության պարտադիր պատրաստությունը նախատեսում է պաշտպանության բնագավառի գիտելիքների ձեռք բերում, զինվորական ծառայության հիմունքների ուսուցում, զինվորների, սերժանտների և ավագների պատրաստում ըստ զինվորական-հաշվառման մասնագիտությունների, բժշկական հետազոտություն, բժշկական, առողջական միջոցառումների իրականացում: Պետության պաշտպանության և զինվորական պարտականությունների նախնական գիտելիքները ստանում են միջնակարգ ուսումնական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում, վարժարաններում: Բացի այդ, 16 տարին լրացած, զինվորական ծառայության հիմունքների պատրաստությունը չանցած և կազմակերպություններում աշխատող պատանիները ուսուցումն անցնում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծած կազմակերպությունների ուսումնական կետերում: Զինվորների, սերժանտների և ավագների ըստ զինվորական-հաշվառման մասնագիտությունների պատրաստումը իրականացվում է հատուկ ստեղծված կուրսերում և ուսումնական կետերում, նախնական և մասնագիտական ուսումնական հաստատություններում: Ուսուցման ընթացքում վերջիններս անցնում են բժշկական հետազոտական, բուժական միջոցառումներ, ռազմահայրենասիրական դաստիարակություն, ֆիզիկական պատրաստություն:

Զորահավաքային պահուստի պատրաստման կարևոր տարր է հանդիսանում պահեստազորում գտնվող զինապարտների պատրաստության անհրաժեշտ մակարդակի պահպանումը: Պահեստազորում հաշվառումը զինվորական հաշվառման անբաժանելի մասն է, որի նպատակն է ապահովել խաղաղ ժամանակ պահեստազորային պատրաստության շրջանակներում քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործման և վերապատրաստման գործընթացի, իսկ պատերազմի ժամանակ՝ զորահավաքային զորակոչի պատշաճ իրականացումը: Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1) վարժական հավաքներ՝ պահեստազորի առաջին խմբում հաշվառված քաղաքացիների ռազմական ունակությունները կատարելագործելու և նրանց վերապատրաստելու նպատակով,

---

նական հաստատությունների ուսանողների՝ պահեստազորի սպաների ծրագրով ռազմական պատրաստության հիմնադրույթները և այդ բուհերի ցանկը հաստատելու մասին» N 232 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 455-Ն որոշում, ՀՀ ՊՏ 2018.04.25/34 (1392), 12.04.2018, http://www.arlis.am

2) զինվորական վարժանքներ (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումներ) կամ զորավարժություններ (զորախաղեր)՝ զինված ուժերի զորահավաքային պատրաստականության վիճակը ստուգելու նպատակով,

3) պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիների ներգրավում պայմանագրային հիմունքներով հաստիքով նախատեսված պարտականությունների կատարմանը[1]:

Ներկայումս մեծ պահանջներ են ներկայացվում նաև քաղաքացիական պաշտպանությանը (ՔՊ), արտակարգ իրավիճակներում (ԱԻ) գործելու բնակչության կարողությանը: Երկրի ցանկացած շրջանում գտնվող արդյունաբերական և վարչական կենտրոնների, հաղորդակցության ուղիների և այլ տնտեսական օբյեկտների վրա հզոր զինված ներգործության հնարավորությունը անցյալի համեմատությամբ էապես աճել է: Այս պայմաններում հուսալի քաղաքացիական պաշտպանությունն դառնում է պետության պաշտպանական հզորության կարևոր գործոն:

Ընդհանուր առմամբ՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներից պաշտպանության ոլորտում քաղաքացիների պատրաստումը այնպիսի միջոցառումների ընդգրկման համալիր է, որոնք նպատակաուղղված են բնական, տեխնածին և ռազմական բնույթի արտակարգ իրավիճակների պայմաններում արդյունավետ գործողություններ կատարելուն ղեկավար կազմի և բնակչության պատրաստմանը: Քաղաքացիական պաշտպանությունը սահմանվում է որպես միջոցառումների համակարգ՝ ուղղված բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը կամ պաշտպանության նախապատրաստմանը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում[2]: Այդ համակարգը ներառում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները:

21-րդ դարի պատերազմների բնույթը, դրանց վարման միջոցներն ու եղանակները քաղաքացիական պաշտպանության առջև դնում են ավելի լուրջ խնդիրներ: Ռազմաքաղաքական բազմապիսի գործոնների ազդեցության տակ զարգացած երկրների մեծ մասում ի հայտ են գալիս քաղաքացիական պաշտպանության զարգացման որոշակի ընդհանուր միտումներ: Հայաստանի Հանրապետության դեմ դեռևս առկա է պատերազմա-

[1] Պահեստազորում հաշվառված քաղաքացիներին վարժական հավաքների կանչելու կարգը և ժամկետները սահմանված են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), 29.11.2017, http://www.arlis.am

[2] Տե՛ս «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված, ՀՀ ՊՏ 2002.04.12/12(187), 05.03.2002, http://www.arlis.am

կան ագրեսիայի վտանգը, սակայն նվազել է զանգվածային ոչնչացման զենքի կիրառմամբ պատերազմի մեջ ներքաշվելու հավանականությունը: Պահպանվում, իսկ առանձին ուղղություններով ուժեղանում են ՀՀ ազգային անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքները: Չի բացառվում նաև, որ տարածում կգտնեն հարձակման ոչ ավանդական տեսակները, որոնց դեպքում հակամարտող կողմերը ռազմական, քաղաքական, տնտեսական և այլ նպատակների կարող են հասնել տեղեկատվական, հոգեբանական և պայքարի այլ միջոցների կիրառմամբ[1]: Նշված խնդիրների լուծելու համար պահանջվում է ունենալ մեծ թվով լավ պատրաստված կադրեր ավերածությունների, վարակի գոտիների ու այլ բարդ պայմաններում գործելու համար:

Պաշտպանությանը պետության պատրաստության շրջանակներում կարևորում են նաև արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության պաշտպանության միջոցառումները: Բնակչության պաշտպանությունն իրականացվում է հանրապետության ամբողջ տարածքում՝ տարահանման, պատսպարման և անհատական պաշտպանության ձևերով և ըստ տարիքային, բնատարածքային, ռազմավարական, տնտեսական առանձնահատկությունների[2]: Առանձնացվում են նաև բնակչության ուսուցման կազմակերպման ընթացակարգերը:

Պաշտպանությանը պետության պատրաստման առանցքային հաջորդ ուղղությունն է տարածքային պաշտպանության (ինքնապաշտպանության) կազմակերպումը: Այն առավել մեծ կարևորություն ունի փոքր տարածքով պետությունների համար, որոնք համապատասխանաբար չունեն ռազմաճակատին խորություն և ռազմավարական թիկունք: Տարածքային պաշտպանության ստորաբաժանումները, որոնք կազմավորվում են տարածքային-գոտիական սկզբունքով, նախանշանակվում են հակառակորդի՝ ռազմաճակատը ճեղքած ուժերի առաջխաղացումը կասեցնելու կամ դրանք ջախջախելու, դիվերսիոն-հետախուզական խմբերը վնասազերծելու համար: Նման ստորաբաժանումները պետք է պատրաստ լինեն տարածքի բռնազավթման դեպքում կերպափոխվելու անհամաչափ զինված պայքարի մեթոդների կիրառմամբ «պարտիզանական դիմադրությանը», որում օպերացիաների անմիջական կատարողներն օժտվում են ինքնուրույն որոշումներ կայացնելու և գործելու հատուկ լիազորություններով: Հավանական հակառակորդի հնարավոր հարձակման

---

[1] Տե՛ս ՀՀ Նախագահի 2011 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հայեցակարգը հաստատելու մասին» թիվ ՆԿ-229-Ն կարգադրություն, ՀՀ ՊՏ 2012.01.09/02(876), 27.12.2011, http://www.arlis.am

[2] Տե՛ս «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 1998.12.31/33(66), 02.12.1998, http://www.arlis.am

գլխավոր ուղղություններում տարածքային պաշտպանությունն իրականացվում է ռազմականացված բնակավայրերի ձևով: Նախկինում տարածքի նախապատրաստումը կատարվում էր միայն սահմանամերձ շրջաններում, իսկ զարգացումը կատարվում էր արդեն մարտական գործողությունների ընթացքում: Արդի պայմաններում տարածքի նախապատրաստումը իրականացվում է ինչպես զինվորական կառույցների, այնպես էլ քաղաքացիական ներուժի ակտիվ հաշվառմամբ[1]: Ուստի այն ներառում է ինչպես ողջ մարտական գործողությունների թատերաբեմը (սահմանային ուղղությունը), այնպես էլ երկրի «թիկունքային» տարածքները, որի նպատակով էլ համապետական միջոցառումների շարքում ընդգրկում է նաև զինված ուժերի կողմից անմիջական իրականավող միջոցառումներ:

ՀՀ ռազմաքաղաքական հայեցակարգային հիմքերում մշտապես ընդգծվում է տարածքի նպատակաուղղված պատրաստման անհրաժեշտությանը՝ զորքերի ծավալման, նրանց պաշտպանվածության բարձրացման և մարտական գործողությունների վարման բարենպաստ պայմանների համար: Ռազմական առումով տարածքի պատրաստումը միշտ դիտարկվում է որպես պետությանը պատերազմի պատրաստման բաղկացուցիչ մաս, որի նպատակն է ապահովել զինվորական հնարավորությունների կազմակերպված ներգրավումը պատերազմին և ռազմական գործողությունների բարեհաջող վարումը: Տարածքի պատրաստումը սկսվում է խաղաղ ժամանակ և շարունակվում պատերազմի ընթացքում:

Երկրի տարածքի նախորոք պատրաստումը բնութագրվում է խնդիրների բազմաշերտությամբ, դրանց կատարման բարդությամբ, մեծ քանակի տարբեր ուժերի և միջոցների ներգրավմամբ՝ հաշվի առնելով ինչպես քաղաքացիական հատվածի, այնպես էլ ռազմաքաղաքական համակարգի հնարավորությունները: Այս ուղղությամբ պետահիշնական մարմինների մարմինների գործունեությունն իրականցվում է ըստ վերադասության համադասմամբ և ամբողջությամբ պետք է համապատասխանի տվյալ ոլորտում համապետական գործունեության բովանդակությանը: Խաղաղ ժամանակ կարելի է առանձնացնել հետևյալ միջոցառումները՝ երկրի պաշտպանական կարողությունների ամրապնդում, զորահավաքային պատրաստության գործընթացների իրականացում, քաղաքացիական պաշտպանության կազմակերպում և պետական սահմանի ամրապնդում[2]:

---

[1] Տե՛ս Сергеев, В.В., Конституционно-правовые основы безопасности государственной границы Российской Федерации: Автореф. дис. канд. юрид. наук.. М., 2002, էջ 15, http://law.edu.ru/book/book.asp?bookID=1212909

[2] Տե՛ս **Писарев А.Н.,** Правовые основы взаимодействия высших органов государственной власти Российской Федерации в области обороны // “Право в Вооруженных Силах”, 2000, № 12, էջ 46-47, http://voenprav.ru/doc-519-1.htm

Փաստորեն, երկրի տարածքի պատրաստմանը ներկայացվող կարևոր պահանջները բխում են ժամանակակից, սպասվող պատերազմի բնույթից, նախնառաջ, դրա քաղաքական ու ռազմական նպատակներից և պետության ռազմավարությունից: Այն անընդհատ զարգանում, փոփոխվում և բխում է պետության տնտեսության հնարավորություններից, զինված ուժերի կարողություններից, տարածքի պատրաստվածության աստիճանից:

Որպես ամփոփում՝ կարելի է ընդգծել, որ պաշտպանական նշանակության համապետական ամենակարևոր խնդիրներից է երկրի բնակչության և տարածքի նախապատրաստումը զինված ուժերի ծավալման և գործողությունների համար: Այն իրենից ներկայացնում է բազմաբնույթ միջոցառումների բարդ համակարգ, որը վերաբերվում է պետության տնտեսական, գիտատեխնիկական և ռազմական բնագավառներին: Պետության պատրաստումը հնարավոր պատերազմին հանդիսանում է ռազմաքաղաքական ղեկավարության, ռազմական ոլորտի և կառավարման քաղաքացիական մարմինների գործունեության հենքային ուղղություններից:

Норик Норикян, Подготовка государства к защите как мероприятие внутренней военной политики – На основе представленного в статье анализа автором делается вывод, что главными общегосударственными задачами оборонительного значения являются подготовка населения и территории к развертыванию и соответсвующих действий вооруженных сил. Эти мероприятия представляют собой сложную систему мероприятий разного значения, которые осуществляются в военном, экономическом и научно-техническом сферах жизнедеятельности. Подготовка государства к возможным военным действиям является концептуальным направлением деятельности как военно-политического руководства, так и органов и структур гражданскои системы правления и местного самоуправления.

Norik Norikyan, State preparation for defense as an activity of domestic military policy - Based on the analysis presented in the article, the author concludes that the main national defense tasks are the preparation of the population and territories for deployment and the corresponding actions of the armed forces. These events are a complex system of events of various meanings, which are carried out in the military, economic and scientific-technical spheres of life. The preparation of the state for possible military action is a conceptual area of activity of both the military-political leadership and the bodies and structures of the civil system of government and local government.

«ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱՐՏԻՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Բանալի բառեր - «Ազգ-բանակ» հայեցակարգ, Հայաստանի Հանրապետություն, զինված ուժեր, ազգային անվտանգություն, ռազմաքաղաքական ղեկավարություն, սոցիալական երկխոսություն, զինվորական մասնագիտություն, քաղաքացիական վերահսկողություն:

Ազգ-բանակ հայեցակարգի գաղափարական հիմքերը դրվել են դեռևս 20-րդ դարի 90-ականներից, երբ շրջանառության մեջ դրվեցին Յոհան Գալթունգի, Բարրի Բուզանի և այլ հետազոտողների գաղափարները «կոշտ» և «փափուկ» անվտանգություն ապահովող կառուցակարգի մասին՝ շեշտադրելով կայունության կողմնակից սոցիալական դերակատարների արդիականացման հիմնախնդիրը[1]: Դարերի ընթացքում, մշտապես լինելով բնաջնջման վախի ու հայրենիքը կորցնելու սպառնալիքի ներքո, գոյի պահպանմամբ մտահոգված, ազգային անվտանգության հիմնահարցը հայ ժողովրդի համար դարձավ օրակարգային, ինչի արդյունքում առավել ամրապնդվեց ու սերտացավ բանակ-հասարակություն կապը: Այդ ամրապնդումն իր դրսևորումները գտավ թե՛ տարբեր ժամանակահատվածներում հայ ժողովրդի վարած ազգային-ազատագրական պայքարներում, թե՛ 20-րդ դարի վերջին Արցախյան ազատագրական պայքարի ժամանակ, երբ բանակ-հասարակություն կապի ամրացման ու ազգային անվտանգության պահպանման ու հայրենասիրական ոգու շնորհիվ հնարավոր եղավ պահպանել ազգային ինքնությունն ու կերտել հայ ժողովրդի նորագույն պատմության փառապանծ հաղթանակներից մեկը:

21-րդ դարում հայ քաղաքագիտական իրականության մեջ անվտանգության գաղափարական հիմքերն ու ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության ապահովման գործընթացը համապարփակ ուսումնասիրել է հայ ռազմական դիվանագետ, ՀՀ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) հիմնադիր-պետ, քաղաքագիտության դոկտոր, գեներալ-լեյտենանտ Հայկ Քոթանջյանը[2]՝ շեշտադրելով, որ

[1] **Գալթունգ Ց.,** Խաղաղություն խաղաղ միջոցներով. խաղաղություն և հակամարտություն, զարգացում և քաղաքակրթություն, ՄԶԱԿ, Եր., 2005, Buzan Barry. People, states and fear: the national security problem in international relations. Great Britain, Biddies Ltd., 2007:

[2] **Քոթանջյան Հայկ Ս.**, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համա-

«ազգային անվտանգությանն ուղղված ներքին և արտաքին ներդաշնակ-աններդաշնակ սպառնալիքներին համակողմանի պատասխանելու համար կարևոր է մասնակցել նոր աշխարհակարգի կայացման և լինելիության գործընթացին» [1]:

Ներկա աշխարհաքաղաքական մրցակցային հարաբերությունների զարգացման միտումները ենթադրում են, որ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության համար առավել օրակարգային է ռազմաքաղաքական իրադրության օպերատիվ վերլուծությունն ու այդ իրականության մեջ պետությանը սպառնացող խնդիրները կանխատեսելու ու մարտահրավերների դեմ պայքարելու, երկրի ազգային շահերը վերհանելու ու անվտանգությանն ուղղված սպառնալիքները չեզոքացնելու գործում արդյունավետ համակարգ մշակելու և գործադրելու պահանջը: Այսպիսի համակարգերն էլ հնարավորություն են ստեղծում ապահովելու երկրի ազգային անվտանգությունն ու հասարակության խաղաղ կենսագործունեությունը:

Այս նպատակի իրականացման համար երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունն օգտագործում է բոլոր լծակներն ու հնարավորությունները: Այդ լծակների ցանկում առանձնահատուկ տեղ ունի ռազմական ուժը՝ կարևորելով ժողովրդի ներուժն ու ներդրումը զինված ուժերի զարգացման գործում՝ հիմքում դնելով ազգ-բանակ գաղափարախոսությունը[2]:

Հայոց բանակի ստեղծումն ու ընդհանրապես զինված ուժերի գործունեությունն ու պատմությունը կապված է Հայոց պետականության ստեղծման պատմական իրողության հետ և պետություն-բանակ-ազգ հարաբերությունները եղել ու շարունակում են մնալ փոխկապակցված, քանի որ անհնար է նրանցից որևէ մեկի գոյությունն առանց մյուսի: Հայ ժողովրդի ողջ պատմության ընթացքում պետականության պահպանման և գոյատևման հարցը եղել է օրակարգային և բանակ-հասարակություն կապը միշտ եղել է ամուր, որն իր արտացոլումն է ունեցել հայ ժողովրդի տարբած հաղթանակներում բոլոր պատերազմներում, ինքնապաշտպանական մարտերում, օրհասական իրավիճակներում: Հայաստանի երրորդ հանրա-

---

տեքստում, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008; **Քոթանջյան Հայկ Ս.**, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները /Հ. Ս. Քոթանջյան, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010:

[1] **Քոթանջյան Հ. Ս.**, Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում. - Եր.: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008, էջ 301-302:

[2] **Քոչարյան Տ.,** «Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում» Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 191:

պետության հիմքը, Արցախյան գոյամարտում տարած հաղթանակն ու հայկական զինված ուժերի ստեղծումը ազգ-բանակ գաղափարախոսության ծնունդ է. երբ հասարակությունը կանգնում է բանակի կողքին ու դառնում մեկ բռունցք՝ հանուն մեկ նպատակի, հանուն ազգապահպանության:

Ազգ-բանակ հայեցակարգը ոչ միայն անվտանգության ապահովման և զինված ուժերի ներուժը զարգացնող մոդել է, այլև սոցիալական երկխոսության, սոցիալական և հասարակական համերաշխության ու նոր հումանիզմի դրսևորման լավագույն հնարավորությունն է, որի կիրառման ձևերից, արդյունավետության աստիճանից, իրականացված բարեփոխումներից հասարակական կյանքի վրա ազդեցությամբ էլ կանխորոշվում է պետության զարգացվածության աստիճանը:

Արդի հասարակությունում, յուրաքանչյուր պետություն, կախված անվտանգային հիմնախնդիրներից, կիրառում է ազգ-բանակ հայեցակարգը, կամ էլ այդ հայեցակարգին ու գաղափարախոսությանը բնորոշ տարրերը, որոնք գուցե այլ անվանում ունեն, սակայն կիրառման բնույթով, հիմնախնդիրներով ու իրենց առջև դրված առաքելությամբ գործողությունների նույն հաջորդականությունն են իրականացնում:

Ազգ-բանակ հայեցակարգն առաջին հերթին ենթադրում է քաղաքացիական վերահսկողության բարձր մակարդակ, պատասխանատվության և պարտականությունների հաջորդականություն, որի արդյունքը լինելու է երկու ոլորտների սինթեզի արդյունքում նոր մակարդակի հարաբերությունների դուրս բերումը:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անհրաժեշտության մասին առաջին անգամ խոսել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Սեմյուել Հանթինգթոնը: Զինվորականների և քաղաքացիականների հարաբերությունների մասին իր մի շարք աշխատություններում Հանթինգթոնը հանգում է այն եզրակացությանը, որ քաղաքացիական և ռազմական ոլորտների միջև փոխհարաբերությունների հավասարակշռության ապահովման հիմնական նախապայմանը քաղաքացիական վերահսկողության արդյունավետության բարձրացումն է զինված ուժերի նկատմամբ[1]:

Հանթինգթոնը քաղաքացիական վերահսկողություն երկու տեսակ է առանձնացնում՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ վերահսկողության մեջ ներառված են մի շարք էլեմենտներ, այդ թվում նաև վարքաբանական: Մասնավորապես՝ զինվորական պրոֆեսիոնալիզմի բարձր մակարդակ, զինվորականների կողմից փաստացի ենթարկում քաղաքացիական ղեկավարությանը, որն էլ պետք է ըն-

[1] **Samuel P Huntington**, «The Soldier and the state. The Theory and the Politics of Civil-military Relations», Mass Belknap Fifteenth printing, 2000.

դունի արտաքին և ռազմական քաղաքականությանը վերաբերող հիմնական որոշումները: Միաժամանակ, քաղաքական ղեկավարությունն էլ պետք է ընդունի որոշակի ոլորտներում զինվորականների պրոֆեսիոնալիզմն ու ղեկավարումը: Արդյունքում, ըստ Հանթինգթոնի, կգծվի հստակ սահմանագիծ, որտեղ զինվորականները չեն խառնվի քաղաքականությանը և հակառակը: Սակայն, միաժամանակ Հարվարդի համալսարանի պրոֆեսորը փաստում է, որ իդեալական տեսքով օբյեկտիվ վերահսկողության իրականացումն անհնար է: Հենց այդ պատճառով էլ նա առաջարկում է քաղաքացիական վերահսկողության երկրորդ տեսակը:

Սուբյեկտիվ վերահսկողությունը ենթադրում է հետևյալ բնութագրիչները. զինված ուժերի աճող ներգրավվածությունը ինստիտուցիոնալ, դասակարգային և քաղաքական պայքարի մեջ, զինված ուժերին վերապահված չեզոք ստատուսի փոխարեն կուսակցություններում ու լոբբիստական խմբերում որոշակի դերակատարում, ինչպես նաև զինված ուժերի կողմից միջամտություն երկրում ներքաղաքական ճգնաժամերի կարգավորման նպատակով, ընդհուպ ռազմական հեղաշրջման իրականացում: Զինված ուժերի կողմից սուբյեկտիվ վերահսկողության օրինակներ կան, սակայն այդ երկրներում բացակայում է ժողովրդավարությունը, մարդու իրավունքներն ու քաղաքացիական վերահսկողության տարածումը ցանկացած, այդ թվում նաև զինվորական ոլորտի վրա:

Հանթինգթոնը շեշտում է, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական, հասարակական վերահսկողության լավագույն և ամենաարդյունավետ միջոցը պաշտպանության նախարարի պաշտոնին քաղաքացիական անձի նշանակումն է, զինված ուժերի նկատմամբ օրենսդրական վերահսկողության սահմանումը, պաշտպանական համակարգի, ինչպես նաև ռազմական բյուջեի ծախսերի ու նրա կատարողականի վերաբերյալ բաց ու թափանցիկ քննարկումների անցկացումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մի շարք հոդվածներով կարգավորված է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հասարակական վերահսկողության մեխանիզմները: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են գտնվում[1]:

ՀՀ-ում Ազգ-բանակ գաղափարի, բանակի և հասարակության միջև կապի լավագույն օրինակներից մեկն է 1992թ. օգոստոսի 15-ին սպարապետ Վազգեն Սարգսյանի հեռուստատեսային կոչը՝ ուղղված հայ տղա-

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Գլուխ 1, հոդված 14 «Զինված ուժերը և պաշտպանությունը», գլուխ 6, հոդված 155:

մարդկանց՝ կամավորագրվել զինված ուժերում և հետ մղել Ադրբեջանի գրոհները Արցախի հյուսիսում[1]:

Ազգ-բանակ հայեցակարգի գործառնումը որպես բնականոն գործընթաց հասարակության յուրաքանչյուր անդամի հնարավորություն է տալիս իր մտավոր ունակությունների չափով նպաստել զինված ուժերի զարգացմանը՝ ապահովելով պետության և հասարակության անվտանգությունն ու խաղաղ զարգացումը:

2016 թվականի Ապրիլյան մարտական գործողությունները բացահայտեցին զինված ուժերում առկա խնդիրները, ուժեղ և թույլ կողմերը՝ օրկարգային դարձնելով պաշտպանության ոլորտում նոր ծրագրերի, ռազմավարական նոր լուծումների և մոտեցումների ներդրումը, ռազմավարական բնույթի փոփոխությունների իրականացումը: Այսպիսի ռազմավարական փոփոխությունների նպատակը պետք է լինի ոչ միայն Զինված ուժերն առավել մարտունակ, զարգացած դարձնելը, այլև օրենսդրական և ենթաօրենսդրական նախաձեռնություններով առավել ամրապնդել կապը հասարակության հետ, հասարակական տարբեր ոլորտներում ունեցած առանձնահատկությունները, հաջողություններն ու ձեռքբերումները ներդնել Զինված ուժերի զարգացման ուղղությամբ:

Այս համատեքստում Ազգ-բանակ հայեցակարգի զարգացման միտումները ուսումնասիրելը և գաղափարական հիմքերը ամրապնդելը բարձրացնում է ՀՀ Զինված ուժերի դերակատարությունը՝ պետության անվտանգությունը դարձնելով առավել ամուր և կայուն: Այս հայեցակարգի մեջ ներառվեցին բանակ-հասարակություն կապի ամրապնդմանն ուղղված բոլոր գաղափարները, ծրագրերը, արդիական հարցերը: Անհրաժեշտ է ընդգծել, որ «Ազգ-բանակ» հայեցակարգը չի ենթադրում հասարակության ռազմականացում, այն «ազգ-պետություն-բանակ» արժեհամակարգի համախմբված ձևն է. այն ենթադրում է կառավարման բոլոր մարմինների, քաղաքական ու հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության հարաբերությունների ներուժի ներդնում երկրի պաշտպանության գործին: Այս կերպ, հասարակական ու քաղաքական բոլոր կառույցների մասնակցությունը Զինված ուժերի զարգացման գործընթացին կամավորության սկզբունքից դրվում է պետական կառավարման հիմքում և հնարավորություն է տրվում յուրաքանչյուր քաղաքացու մասնակցություն ունենալ այդ գործընթացին: Քաղաքացու մասնակցությունը զինված ուժերի զարգացման գործընթացին չափազանց կարևոր է ինչպես բանակի, այնպես էլ հասարակության համար: «Ազգ-բանակ-պետություն» եռամիասնության արժեհամակարգի արմատավո-

[1] Սպարապետ Վազգեն Սարգսյանի ելույթն ամբողջությամբ հետևյալ հղմամբ՝ https://www. youtube.com/watch?v=5YRrU6ft86I

րումը թույլ կտա հանրային իրազեկման, բանակ-հասարակություն կապի ու զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության ընդլայնման, կոռուպցիայի և հովանավորչության դեպքերը բացառելու միջոցով լուծել արդարության ու թափանցիկության մթնոլորտի ամրապնդման, բանակում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների երաշխավորման խնդիրներն ու պաշտպանության ոլորտը դարձնել պետական կառավարման նոր մոտեցումների ձևավորման հարթակ:

«Ազգ-բանակ» հայեցակարգը ներառում է կառավարման բոլոր ոլորտները՝ մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում, կրթական նոր ծրագրերի ներդրում և ժամանակակից կրթական նոր ռազմավարության ընդունում, ռազմարդյունաբերական համալիրի զարգացման նոր տեսլականներ, հասարակություն-բանակ կապի ամրապնդման նոր լուծումներ, տեխնոլոգիական համակարգերի ներդնում, ռազմական միջազգային համագործակցության ամապնդում:

«Ազգ-բանակ» հայեցակարգը քաղաքականության հինգ հիմնական ուղղություններ ունի, որոնց իրագործման ընթացքը թույլ է տալիս ունենալ առավել հմուտ ու ժամանակակից պահանջները բավարարող պրոֆեսիոնալ բանակ, առավել մեծ դերակատարում ունեցող զինված ուժեր, որի կապը հասարակական բոլոր օղակների հետ առավել սերտ է ու փոխկապակցված:

Այդ ուղղություններն են՝

1. Զինվորական մասնագիտության արժևորում,
2. Մարտական պատրաստության և պատրաստականության աստիճանի բարձրացում, այդ թվում՝ սպառազինման և առաջնագծի կահավորման հարցերով,
3. Ռազմարդյունաբերական համալիրի զարգացում,
4. Ռազմաքաղաքական դիվանագիտության ուժեղացում
5. Արդարության և հանրային վստահության ամրապնդում[1]:

Զինվորական մասնագիտության արժևորումը զինված ուժերի զարգացման հիմնադրման հենց ամենասկզբից եղել է ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության ուշադրության կենտրոնում: Միայն հմուտ, բանիմաց և իր մասնագիտության հմտություններին տիրապետող զինվորականների՝ որակյալ սպայական և ենթասպայական կադրերի շնորհիվ է հնարավոր ունենալ զարգացած և միջազգային բոլոր չափանիշներին համապատասխանող պրոֆեսիոնալ զինված ուժեր: Հենց որակյալ սպայական կազմի

[1] Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանի ելույթը 2017թ. սեպտեմբերի 18-ին Երևանում Հայաստան-սփյուռք 6-րդ համաժողովի շրջանակում «Ազգ-Բանակ. Հավաքական ներուժի զարգացման մոդել» խորագրով նիստի ժամանակ: http://www.mil.am /hy/news/4953

շնորհիվ հնարավոր է մեծապես նվազեցնել բանակում միջանձնային հարաբերությունների պատճառով ծագած վեճերը, ժամկետային զինծառայողների մոտ սերմանել հայրենասիրություն՝ այդ կերպ փոխելով նաև բանակում բարոյահոգեբանական մթնոլորտը: ՀՀ ռազմակրթական հաստատություններում՝ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանը[1], Մարշալ Արմենակ Խանփերյանցի անվան ավիացիոն համալսարանն[2] ու Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանը[3] վերջին 20 տարիների ընթացքում հսկայածավալ աշխատանք են կատարել որակյալ սպայական կազմի պատրաստման ուղղությամբ: Կրթօջախներն առաջարկում են անվճար կրթություն, ուսումն ավարտելուց հետո ապահովում աշխատատեղով, որը մասնագիտական առաջընթացի հստակ հնարավորություններ է տալիս:

Սակայն սպայի մասնագիտությունը ոչ միայն վտանգավոր ու պատասխանատու, այլև մասնագիտական աճի ճանապարհ պահանջող մասնագիտություն է, հետևաբար, ռազմական կրթության որակի բարելավման անհրաժեշտությունը միշտ արդիական է, որպեսզի նախ սպայի մասնագիտությունը լինի գրավիչ և հնարավորություն տրվի նախ կայանալու որպես մասնագետ, առաջ շարժվելու և իրենց ծառայությունը բերելու հայրենիքին: Ռազմական որակյալ կրթության ապահովման արդյունքը հետագայում կայացած կայուն պրոֆեսիոնալ բանակի հիմքն է՝ կուռ սպայական կազմով, իրենց գործին գիտակ հրամանատարներով: Այս պարագայում պետք է արդիականանա նաև ռազմական կրթության բովանդակությունը, սպաները տիրապետեն համակարգչային գիտելիքների, օտար լեզվի, ֆիզիկական պատրաստությանը հատկացվի մեծ ուշադրություն: Այս առումով ՀՀ պաշտպանության նախարարություն արդեն սկսել է որոշակի նախաձեռնություններ կյանքի կոչվել, մասնավորապես «Թումո» կենտրոնի հետ[4], սակայն լուրջ փոփոխությունների հասնելու համար անհրաժեշտ է կանգ չառնել սկսվածի վրա և անընդհատ զարգացնել ու միջազգային մակարդակի հասցնել ռազմական կրթությունը:

Թեպետ այսօր ՀՀ զինված ուժերն ունեն հնարավոր բոլոր միջոցները վտանգի կանխման և համարժեք պատասխան տալու համար, սակայն ինչպես յուրաքանչյուր ոլորտ, այնպես էլ սպառազինությունն անընդհատ

---

[1] ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանի մասին այստեղ՝ http://www.mil.am/hy/institutions/55/p/history

[2] ՀՀ ՊՆ Արմենակ Խանփերյանցի անվան ավիացիոն համալսարանի մասին այստեղ՝ http://www. mil.am/hy/institutions/57/p/history

[3] ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի մասին այստեղ՝ http://www.mil.am/hy/institutions/59/p/history

[4] ՀՀ ՊՆ-ի և «Թումո» կենտրոնի միջև համագործակցության մասին այստեղ՝ http:/ /www. mil.am/hy/news/4585

զարգանում է, և առաջնային դերակատարում ունենալու և անհրաժեշտ հակահարված տալու համար, հարկավոր է զինված ուժերին ապահովել ամենաարդիական տեխնիկայով: Այս պարագայում ռազմարդյունաբերության զարգացումը լավագույն լուծումն է հարցի կարգավորման առնչությամբ: Հանրային միջոցների տրամադրումը ռազմարդյունաբերության զարգացմանը երկու կարևորագույն խնդիր է լուծում.

1. Զարգացնում է ռազմարդյունաբերական, ռազմատեխնիկական գիտությունը

2. Տալիս հնարավորություն ռազմարդյունաբերության զարգացման արդյունքում նպաստել երկրում տնտեսության զարգացմանն ու սպառազինություն ներկրող պետությունից դառնալ արտահանող երկիր:

ՀՀ ԶՈՒ գիտահետազոտական ինստիտուտի ստեղծումն իր շուրջ կկարողանա համախմբել երկրի լավագույն մասնագետներին, որոնց աշխատանքի շնորհիվ ռազմարդյունաբերության զարգացումը նոր թափ կստանա, ինչի արդյունքում էլ սպառազինության, ռազմական այլ տեխնիկայի, դետալների արտահանումը կնպաստի նաև երկրի տնտեսության զարգացմանը՝ աշխատատեղով ապահովել ինժեներներին, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների, ինչպես նաև սպառազինության արտադրությամբ ու վաճառքով նպաստելով տնտեսության զարգացմանը: Այդ կերպ, Զինված ուժերը կդառնա այն լոկոմոտիվը, որն իր հետևից կկարողանա տանել նաև մնացած ոլորտները: Այս ուղղությամբ տարվելիք հետևողական աշխատանքի արդյունքում, կիրառելով երկրի մեծ գիտական ներուժն ու Հայաստանի ներկայիս դերակատարումը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման գործում, պետության ռազմարդյունաբերության զարգացումը չափազանց իրատեսական նախաձեռնություն է: Ազգ-բանակ հայեցակարգի չորրորդ կարևորագույն ուղղությունը ռազմական դիվանագիտության ակտիվացումն է և միջազգային ռազմաքաղաքական համագործակցության զարգացումը: Ռազմական դիվանագիտության զարգացումը տարիներ շարունակ եղել է ՀՀ Պաշտպանության նախարարության կարևորագույն առաքելություններից մեկն ու այդ նպատակով ստեղծված ՀՀ ՊՆ Պաշտպանական քաղաքականության վարչությունն ու տարվող պաշտպանական քաղաքականության հայեցակարգը դրա լավագույն ապացույցն են: Այս առումով համագործակցությունն ու հարաբերությունների սերտացումը ինչպես ՀԱՊԿ-ի, այնպես էլ ՆԱՏՕ-ի անդամ երկրների, Իրանի Իսլամական Հանրապետության և Չինաստանի հետ շարունակում են մնալ օրակարգային: Միջազգային ռազմական համագործակցության կարևորագույն արդյունքներից մե-

կը միջազգային խաղաղապահ առաքելության շրջանակում Հայաստանի զինված ուժերի ունեցած դերակատարությունն է[1]:

Ազգ-բանակ հայեցակարգի կարևորագույն ուղղություններից մեկը զինված ուժերում արդարության և դեպի զինված ուժեր հանրային վստահության ամրապնդումն է: Հաշվի առնելով, որ զինված ուժերը առանցքային կառույց է պետության և պետականության համար, չափազանց կարևոր է, որ հասարակությունը լիարժեք վստահի զինված ուժերին: Հասարակության շրջանում վստահության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները՝

1. Պայքարը կոռուպցիայի դեմ և զինված ուժերում արդյունավետության բարձրացումը:

2. Բարեվարքության ամրապնդումը զինված ուժերում:

Այդ նպատակով կյանքի կոչված «Դիտակետում» ծրագիրը[2] առաջին լուրջ հաջողություններ է ունեցել, որտեղ արդեն զորացրված զինծառայողները ներկայացնում են այն հիմնական խնդիրները, բացթողումները, որոնց ականատես են եղել ծառայության ընթացքում և որոնց շտկումը կարող է նպաստել զինված ուժերի մարտունակության բարձրացմանը: «Դիտակետում» ծրագրով անցկացված սոցիոլոգիական առաջին հարցմանը մասնակցել է 2017 թվականի ամռանը զորացրված զինծառայողների 73%-ը: Անցկացված հետազոտության արդյունքում ստեղծվել է տվյալների ծավալուն բազա, որը պարունակում է շուրջ 560 հարց և ենթահարց, ինչպես նաև՝ դրանց համադրության արդյունքում դուրս բերված տվյալներ: Դրանք վերաբերում են բանակային կյանքի բոլոր կողմերին՝ սկսած նյութատնտեսական բազայից, առողջապահական հարցերից, կրթության ու ժամանցի կազմակերպումից մինչև կենցաղային պայմաններ ու ոչ կանոնադրային հարաբերություններ:

Արդի կերպափոխվող հասրակություններում, ժամանակակից մարտահրավերների ու հրամայականների, փոփոխությունների ու անկայունությունների համատեքստում, քաղաքագիտական, վերլուծական կենտրոնները, ուժային կառույցներն ու պետական կառավարման համակարգը փաստել են, որ աշխարհի որևէ պետություն ապահովագրված չէ պատերազմներից, ռազմական հակամարտություններից, անկայունություններից ու ներքին բախումներից.

Ցանկացած պատերազմական իրավիճակ կարող է ճակատագրական լինել ինչպես պետության ապագայի այնպես էլ հասարակության

[1] Միջազգային խաղաղապահ առաքելությանը ՀՀ զինված ուժերի մասնակցության վերաբերյալ այստեղ՝ http://www.mil.am/hy/68/230/4109

[2] «Դիտակետում» ծրագրի վերաբերյալ առավել մանրամասն հետևյալ հղումներով՝ http://www.mil.am/hy/news/5124 և http://www.mil.am/hy/news/5114

անվտանգության համար. հետևաբար, պետության կողմից պետք է անընդհատ կատարելագործվեն ժողովրդի անվտանգության ապահովման մեխանիզմները, որը ոչ միայն սահմանի ամրությունն է, այլև թիկունքի պաշտպանունակությունը, ռազմադիվանագիտական հարաբերությունները, հասարակության տարբեր ոլորտների հետ համագործակցությունն ու մարդկային ռեսուրսի մոբիլիզացնումը: Այս հարցերը չեն կարող իրականացվել միայն զինվորականների կողմից: Սրանք անվտանգային խնդիրների բազմաշերտություն են, որոնց լուծման համար անհրաժեշտ է բանակի-պետության-հասարակության փոխվստահությունն ու փոխլրացված համագործակցությունը:

Այս համատեքստում զարգացումները պետք է ընթանան բացառապես քաղաքացիական և քաղաքական վերահսկողության բարձր մակարդակի ներքո:

Հանթինգթոնի առաջադրած վերոնշյալ եզրույթները նույնպես ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ՝ որպես ժողովրդավարական արժեքների և քաղաքացիական վերահսկողության կարևորում: Մասնավորապես, պատերազմի հայտարարումը կամ խաղաղության հաստատումը վերապահված է Կառավարությանը և Ազգային ժողովին[1], պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է, պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը: Պաշտպանության նախարարն այդ հիմնական ուղղությունների շրջանակներում իրականացնում է զինված ուժերի ղեկավարումը[2]:

Պետության այս բարձրագույն պարտականությունն ու պատասխանատվությունը, տարբեր ոլորտների միջև փոխլրացված աշխատանքը հենց ծնում է բանակ-հասարակություն կապի ամրապնդման եզրույթը, որն իր տրամաբանությամբ և փիլիսոփայությամբ տանում է հասարակությանը ոչ թե ռազմականացման ճանապարհով, այլ գործողությունների հաջորդականությամբ երաշխավորում պետության ու հասարակության անվտանգությունն ու խաղաղ կենսագործունեությունը:

Ազգ-բանակ հայեցակարգի կիրառումն առաջին հերթին խորհրդանշում է պետության ռազմավարության արդիականացումը, որը ենթադրում է նոր մակարդակի վրա դնել զինված ուժերի ու հասարակության միջև կապը, ամրագրել հասարակական համերաշխությունն ու ընդհանուր քայլերի հաջորդականությամբ ապահովել պետության անվտանգությունը:

Պարունակելով բազմաշերտ ու բազմաստիճան գործընթացներ ու հարաբերությունների, գործողությունների դինամիկա, ազգ-բանակ գա-

[1] ՀՀ Սահմանադրություն, Հոդված 118

[2] ՀՀ Սահմանադրություն, Հոդված 155

դափարախոսությունը նաև ռազմավարական կառավարում ներկայացնող հայեցակարգ է, որի նպատակը, ոչ միայն անվտանգության ապահովումն է, այլև դրան զուգակցված կենսամակարդակի բարձրացումն ապահովելը, հասարակության միասնականությունը պահպանելը: Դա հատկապես կարևորագույն հիմնախնդիր է, անցումային փուլը հաղթահարած, սակայն զարգացման հաջորդ փուլ դեռևս չմտած՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական ու կարծրատիպային ճգնաժամերը չհաղթահարած պետությունների համար: Վերոնշյալ մարտահրավերների չհաղթահարումն ու արմատավորումը ցանկացած պետությունում ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները՝ քաղաքական կառավարումից մինչև իրավական բացթողումներ, ոչ լեգիտիմ իշխանությունների միջոցով կառավարող ընտրանու առկայությունը, էլիտայի հավաքագրում փակ եղանակով, ընտրական գործընթացում ճգնաժամերը, կոռուպցիայի և կաշառակերության վտանգավոր մակարդակը, անվստահությունն ու անհանդուրժողականությունը, ինչպես նաև բնական աղետները, արհավիրքներն ու պետության ներգրավումը ռազմական հակամարտություններին: Վերոնշյալ մարտահրավերների ոչ ժամանակին կանխումը, սպառնալիքներին արագ արձագանքման ու ճգնաժամերից դուրս գալու մեխանիզմների բացակայությունը լրջագույն սպառնալիք է պետության անվտանգության համար. այն ոչ միայն մաշում է պետության մարդկային ու բնական ռեսուրսներն ու ազդում հասարակության բարոյահոգեբանության վրա, այլև՝ կանգնեցնում պետության զարգացման բնականոն ընթացքը, գծային ազատականացումը:

Պատճառահետևանքային կապի միջոցով Հայաստանում ժողովրդավարական զարգացման հետագիծն այլ ընթացք է ստացել մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ մարտահրավերների, տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական զարգացումների, մարդկային գործոնի պատճառով[1]: Հետևաբար, ներքին ու արտաքին մարտահրավերներին, տարածաշրջանային սպանալիքներն դիմակայելու նպատակով ազգ-բանակ հայեցակարգային գաղափարախոսությունը կարող է կամրջել պետական իշխանության, զինված ուժերի ու հասարակական հատվածի ներուժը՝ դառնալով նոր զարգացման ու փոփոխությունների մեկնակետը: Ազգ-բանակ հայեցակարգի դրույթների իրականացման արդյունքը կարող է նպաստել հասարակական դժգոհության և անվստահության մթնոլորտի թուլացմանը, որը երկրում աղքատության վտանգավոր սանդղակի ու սոցիալ-տնտեսական վատթար պայմանների, աշխատատեղերի բացակայության հետևանքն է: Միաժամանակ, հայեցակարգից բխող դրույթների արդյու-

[1] **Մ. Մարգարյան**, **Հ. Մովսեսյան**, «Ժողովրդավարական լեգիտիմության հաստատման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» հոդված «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (47), 2013, 88

նավետությունը կարող է բարձրացնել իշխանության դերակատարումը: Հենց այս նպատակով էլ, Զինված ուժերը, որպես լոկոմոտիվ հանձն է առնում նոր հայեցակարգի և դրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի կարգավորմամբ դառնալ պետության ներքին ու արտաքին անվտանգության ապահովման երաշխավորն ու միաժամանակ լուծել ներքին կյանքին ու տնտեսությանն ու ռազմական կրթությանը վերաբերող մի շարք խնդիրներ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ անկախ զինված ուժերում առկա բացթողումներին, որոնք նաև ընդհանուր պետական կառավարման, սոցիալ-տնտեսական իրավիճակի և իրավական ոլորտում առկա մարտահրավերների հետևանք են, այսօր բանակը Հայաստանի Հանրապետությունում գործող այն կառույցն է, որը կարողանում է կատարել իր առջև դրված խնդիրն ու այդպիսով շահել նաև հասարակության վստահությունն ու հարգանքը: Որ հասարակության շրջանում զինված ուժերի հանդեպ հարգանքն ու վստահությունը մեծ է՝ փաստում են ամենատարբեր սոցիոլոգիական հետազոտություններն ու հարցումները: Օրինակ, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-ի (ՀՌԿԿ) 2015 թվականին կատարված հարցման արդյունքում Հայաստանում բնակչության 76 տոկոսը վստահում է բանակին[1]: Հետևաբար, տրամաբանական է պետության որոշակի գործառույթները, հասարակական հիմնախնդիրների կարգավորումը հենց զինված ուժերի վրա դնելը, քանի որ զինված ուժերն, ունի համապատասխան քանակությամբ մարդկային ռեսուրսներ, ինչպես նաև, բանակի յուրահատկությունը քաղաքական ու հասարակական այլ ինստիտուտների համեմատությամբ այն է, որ զինվորականներն աչքի են ընկնում պատրաստվածության, կազմակերպվածության ու կարգապահության բարձր մակարդակով, կառավարման սահմանված հիերարխիկ բնույթով ու հրամանների կատարման հատուկ մշակույթով, որը մի կողմից այդ կառույցին տալիս է պահպանողականության տարրեր, սակայն, միաժամանակ արձանագրում է կազմակերպվածության աննախադեպ արդյունավետություն[2]: Ազգ-բանակ հայեցակարգի իրականացման առնչությամբ չափազանց կարևոր դերակատարում ունի մարդկային ռեսուրսների կառավարումը: Ունենալով միմյանցից խիստ տարբերվող՝ քաղաքացիական և ռազմական բնույթ, հայեցակարգը մարդկային ռեսուրսների կառավարման հարցում պետք է կարողանա համադրել ու հարմարեցնել ռազմական կառավարման առանձնահատկությունները քաղաքացիական ոլորտում մշակված կառա-

[1] Սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները այստեղ՝ http://www.crrc.am/research-and-surveys/completed-projects?lang=hy

[2] **Эндрю Хейвуд**. «Политология», Глава 18 «Армия и полиция», 2005, стр. 463.

վարման մեթոդների հետ[1]: Այդ համադրումը կբերի հետաքրքրական և արդյունավետ լուծումների, քանի որ կսինթեզվեն և երևան դուրս կգան երկու համակարգերում առկա առանձնահատկությունները, որոնց հանրագումարումը կբերի նոր լուծումների:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ազգ-բանակ հայեցակարգային գաղափարախոսության կիրառումը ռազմավարական անհրաժեշտություն է, որը ներառում է մի շարք կարևորագույն բաղադրիչներ՝ անվտանգության ապահովման բարձր մակարդակ, սոցիալական երկխոսության և համերաշխության, քաղաքացիական վերահսկողության առավել արդյունավետ և բազմակողմանի հարթակ, որի նպատակն է լինելու, մի շարք թիրախային ոլորտների զարգացմամբ ապահովել երկրի անվտանգությունը:

Ամփոփելով՝ փաստենք, որ արդի աշխարհաքաղաքական մարտահրավերներն ու տարածաշրջանային հակամարտությունները, ներքին և արտաքին սպառնալիքները, գլոբալացման հետևանքները յուրաքանչյուր պետության համար ազգային անվտանգության ապահովման օրակարգի ձևավորման անհրաժեշտությունը դարձել է հրամայական: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում մի շարք մարտահրավերներ՝ արտագաղթ, չկարգավորված հակամարտություն, մարդկային ռեսուրսների արտահոսք, աղքատության բարձր ցուցանիշ և չկարգավորվող կոռուպցիա՝ Ազգ-բանակ հայեցակարգի զարգացման միտումների ռազմավարական նպատակադրումը ու դրանց իրագործումը պետության կարևորագույն գործառույթներից մեկն է, որն ապահովում է պետություն-հասարակություն-բանակ եռամիասնությունն ու փոխգործակցությունը:

Мартин Агаджанян, Тенденции развития концепции «Нация-армия» в Республике Армения - В этой статье рассматривается стратегическое значение концепции «Нация-армия» для поддержания национальной безопасности, укрепления социального диалога, а также обеспечения мирного функционирования общества в Республике Армения базируясь на идеологических и аксиологических оснований. В статье представлены основные направления концептуальной политики «Нация-армия» и их соответствие актуальным вызовам, стоящим перед Республикой Армения.

Martin Aghajanyan, Development Trends of the "Nation-Army" concept in the Republic of Armenia -This article explores the strategic significance of the "Nation-Army" concept in maintaining national security, enhancing social dialogue, as well as ensuring the peaceful functioning of society in the Republic of Armenia basing on the ideological and axiological grounds. The article

[1] **Օ. Գասպարյան,** Մարդկային ռեսուրսների կառավարումը «Ազգ-բանակ» համակարգի ներդրման պայմաններում, Հայկական բանակ, հանդես 1-2. 2017, էջ 20-89

presents the main directions of the "Nation-Army" concept policy and their compliance with the current challenges faced by the Republic of Armenia.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Բանալի բառեր - Ժողովրդաիշխանություն, պետություն և քաղաքացի փոխհարաբերություններ, սահմանադրական սկզբունք, քաղաքական իրավունքներ և ազատություններ, «համալիր» իրավունք, «մասնակցության» իրավունքներ:

Քաղաքացիների պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը անքակտելիորեն կապված է ազատության և ժողովրդավարության գաղափարների հետ: Իր բովանդակությամբ և էությամբ այս իրավունքը հանդիսանում է ժողովրդավարության կարևոր կամ նույնիսկ հիմնական տարրը: Պետք չէ մոռանալ, որ ժողովրդավարության ներքո հասկացվում է ժողովրդի իշխանությունը, իսկ պետական գործերին մասնակցելը ոչ այլ ինչ է, քան այդպիսի իշխանության դրսևորում:[1]

Այսպես, նույնիսկ Պլատոնը իր «Պետություն» աշխատության մեջ նշում էր, որ իշխանության մեջ պետք է լինեն լավագույնները, այսինքն՝ ազնվականությունը, իսկ ժողովուրդը պետք է զբաղվի նրանով, ինչով կարող է: Չնայած նա չէր հերքում այն, որ ժողովուրդը իշխանից ավելի լավ է ընտրում պաշտոնյաներին: Այնուամենայնիվ, ժողովուրդը ամենից հաճախ հանդես է գալիս որպես ամբոխ, որն իր գործողություններում առաջնորդվում է հույզերով և ոչ թե ողջամտությամբ: Սա հաճախ հիշատակվում է, երբ նկարագրվում են այնպիսի պատմական իրադարձություններ, ինչպիսիք են հեղափոխությունները, ապստամբությունները, որոնց արդյունքում ժողովրդի էմոցիաների ու զգացմունքայնության պատճառով իշխանության են եկել բռնակալներն ու բռնապետերը: Որպես կանոն, մարդիկ ընտրությունների նախօրեին են սկսում զբաղվել քաղաքականությամբ՝ առանց հստակ պատկերացնելու, թե ում են ընտրում: Նման մոտեցումը կարող է թույլ տալ այնպիսի մարդկանց գալ իշխանության, ովքեր հետապնդում են նեղ անձնական շահեր ու նպատակներ:

Իհարկե, Պլատոնի մոտեցումը ևս հատկանշական է, սակայն պետք է նշել, որ այս ժամանակներն արդեն անցել են: Այսօրվա իրականության մեջ հենց ժողովուրդն է ի դեմս պետության քաղաքացիների իրականացնում երկրի կառավարումը: Այնուամենայնիվ, այս կառավարումը պետք է համարել անուղղակի, քանի որ բոլոր հարցերը հնարավոր չէ լուծել

[1] **Стрыгина М. В.,** Право граждан на участие в управлении делами государства, Вестник государственного и муниципиального управления, г. Орел, 2016, стр. 91

քվեարկությամբ: Դրա համար էլ կան պետական իշխանության մարմիններ, որոնց մի մասը ընտրվում է քաղաքացիների կողմից: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդավորված՝ պետական մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով:

Ժողովրդավարական համարվում է այն պետությունը, որի կառուցվածքը և գործունեությունը համապատասխանում են ժողովրդի կամքին, մարդու և քաղաքացու համընդհանուր իրավունքներին և ազատություններին: Ժողովրդավարական պետությունը քաղաքացիական հասարակության ժողովրդավարության կարևորագույն տարր է, որը հիմնված է մարդու ազատության վրա: Պետության ժողովրդավարությունը դրսևորվում է հատկապես նրանում, որ այն հնարավորություն է տալիս քաղաքացիներին ազդեցություն ունենալ պետական կառավարման որոշումների վրա, ստեղծում է պայմաններ այդ որոշումներում հասարակական հետաքրքրությունները հաշվի առնելու համար:

Միաժամանակ, ցանկացած պետություն չի կարող գոյություն ունենալ առանց պրոֆեսիոնալ կառավարման ապարատի, բացի դրանից, որպեսզի այն չհակադրվի ժողովրդին, ժողովրդավարական պետությունում գործում է պետական ապարատի գործունեության և կառուցվածքի նկատմամբ հասարակական վերահսկողություն, որի համար էլ սահմանադրական նորմերում գործում են համապատասխան ինստիտուտներ:[1]

Հասարակության կայուն զարգացումը, ուժեղ և արդյունավետ պետության ձևավորումը հնարավոր են միայն սոցիալական համախմբման, իշխանությունների նպատակների և գործողությունների աջակցության ընդլայնման հիման վրա: Դրա հետ մեկտեղ սոցիալական համախմբումը հանդիսանում է անհրաժեշտ պայման և՛ ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդման համար, և՛ քաղաքացիական հասարակության շարունակական զարգացման համար: Իր հերթին, իշխանությանն ուղղված զանգվածային աջակցությունն ու նրա շուրջ համախմբումը կարող են տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե պետության և տնտեսության զարգացման իրական առաջնահերթությունը դառնա այնպիսի սոցիալական նշանակություն ունեցող նպատակի ապահովումը, ինչպիսին է պետության քաղաքացիների բարեկեցությունը, անվտանգությունն ու արժանապատիվ կյանքը:[2]

---

[1] Участие граждан в управлении делами государства: проблемы правового регулирования и реализации в условиях модернизации России, Международный конституционный форум, сборник научных статей, выпуск 2, Т. Г. Кононенко, Участие граждан в управлении государственными делами: исторический опыт в России и за рубежом, ст. 154, Саратов 2010

[2] **Щеголева Н. А.** Право на участие в управлении делами государства: понятие и ограничения, Среднерусский вестник общественных наук, 2011, стр. 114

Որպես պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի հասկացության և էության որոշման, հստակեցման գլխավոր խնդիր, անհրաժեշտ է արձանագրել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բացակայում է պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի իրավական սահմանումը: Կարծում ենք, այս իրավական կատեգորիայի հստակ բացահայտման, պատկերացման համար անհրաժեշտ էր ընդունել «Պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի մասին» ՀՀ օրենք, որը թույլ կտար հստակեցնել մարդկանց նման գործունեության պաշտոնական ընկալումը և որոշել պետության տեղն ու դերը այս հարցում: Ասվածը վերաբերում է, հատկապես, մինչև 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների ուժի մեջ մտնելը, երբ այդ ժամանակ գործող Սահմանադրությունը ուղղակիորեն ամրագրում էր այս իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք (30-րդ հոդված):

Անհրաժեշտ է սահմանել չափանիշներ, վեր հանել, բացահայտել նախանշաններ, որոնք թույլ կտան ձևակերպել այս իրավական կատեգորիայի դոկտրինալ սահմանումները:

Ժամանակակից իրավագիտության մեջ ընդունված է այն մոտեցումը, ըստ որի պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը բավականին ընդգրկուն իրավունք է, որը միավորում է մնացած բոլոր քաղաքական իրավունքներն ու ազատությունները: Այսինքն՝ այն քաղաքացուն պատկանող առանձին սուբյեկտիվ իրավունք չէ, այլ բոլոր այն իրավունքների ընդհանրությունն է, որոնց միջոցով քաղաքացիները հնարավորություն են ստանում իրական ազդեցություն ունենալ պետության մեջ տեղի ունեցող քաղաքական գործընթացներին և հասարակական կյանքին: Պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը հասցեագրված է յուրաքանչյուր քաղաքացու, այլ ոչ թե քաղաքացիների քաղաքականապես կազմակերպված միավորմանը (որը բնորոշվում է որպես ժողովուրդ): Ինքը ժողովուրդը չի կարող մասնակցել պետական գործերի կառավարմանը, քանի որ նա իրականացնում է իշխանությունը, հանդիսանում է նրա սուբյեկտը, կրողը:

Այս իրավունքի բովանդակության մանրամասն վերլուծությունը Ս. Ա. Կոնդրատեվին բերում է այն եզրակացության, որ եթե այն դիտվում է որպես քաղաքացիների առանձին սուբյեկտիվ իրավունք, ապա դժվարություններ են առաջանում դրա հիմնական բաղադրիչները որոշելու

հարցում, այսինքն՝ կոնկրետ իրավազորությունների: Դրա հետ մեկտեղ, հեղինակն ընդգծում է, որ եթե հիմնական իրավազորություններ համարենք քաղաքացիների առանձին քաղաքական իրավունքներն ու ազատությունները, ապա այդ իրավունքը չի ունենա ինքնուրույն նշանակություն և ամփոփելով նշում է. «Եթե, այնուամենայնիվ, ենթադրենք, որ այս սուբյեկտիվ իրավունքը գոյություն ունի և ընդգրկում է գրեթե բոլոր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք ընդունված է դիտարկել որպես քաղաքական, փաստացի փոխելով վերջիններիս կարգավիճակը ինքնուրույն սուբյեկտիվ իրավունքից որպես հիմնական քաղաքական իրավունքի (հեղ. նկատի ունի պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը) ապահովման մեթոդներ կամ իրացման ձևեր, ապա այդ դեպքում քաղաքացիների ավանդական իրավունքներն ու ազատությունները կզրկվեն իրենց գոյության և իրացման երաշխիքներից՝ կորցնելով իրենց «անքակտելի» և «հիմնարար» բնույթը:[1]

Պետության կառավարմանը մասնակցելու իրավունքի վեր հանված առանձնահատկությունները թույլ տվեցին Ս.Ա. Կոնդրատեվին սահմանել այս իրավունքի երկակի բնույթը. «Պետական կառավարմանը մասնակցելու սահմանադրական իրավունքը մի կողմից ենթադրում է այնպիսի սկզբունք, որի հիման վրա կառուցվում են պետության և քաղաքացու միջև հարաբերությունները ժողովրդավարական պետության շրջանակներում, իսկ մյուս կողմից՝ սուբյեկտիվ իրավունքների ամբողջություն, որոնք արտահայտված են այնպիսի հատուկ իրավազորություններում, ինչպիսիք են ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը, պետական պաշտոն զբաղեցնելու իրավունքը (պետական ծառայության հավասար հնարավորության իրավունքը), արդարադատության իրականացմանը մասնակցելու իրավունքը, պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու իրավունքը: Այս իրավազորությունները ձևավորում են պետության և նրա առանձին մարմինների կազմակերպման և գործունեության վրա քաղաքացիների ազդեցության միջոցառումների և եղանակների համակարգը»:[2]

Այն գաղափարը, որ քաղաքացիների պետական և հասարակական գործերի կառավարմանը մասնակցելու իրավունքը սահմանադրական սուբյեկտիվ իրավունք չի համարվում, այլ հանդիսանում է ժողովրդավարական պետության և քաղաքացու միջև փոխհարաբերությունների հիմ-

[1] **Кондратьев С. А.**. Конституционное право граждан на участие в управлении государственными делами в условияхформирования правового демократического государства, М., 1999. с. 26

[2] **Кондратьев С. А.,** նշվ. աշխ., էջ 5-6

նարար սկզբունք, մշակվել է խորհրդային որոշ գիտնականների աշխատություններում:[1]

Կարծում ենք՝ անհրաժեշտ է կողմնորոշվել, թե որ իմաստով է «սկզբունք» եզրույթը կիրառվում մի շարք հեղինակների բնորոշումների համատեքստում: Ս. Ա. Կոնդրատեվն օգտագործում է այն սահմանադրական իրավունքի սուբյեկտների միջև փոխհարաբերությունների բնույթը նշելու համար. «Մի սկզբունք, որի վրա կառուցվում են պետության և քաղաքացու միջև փոխհարաբերությունները ժողովրդավարական պետության մեջ»:

Պետության կառավարմանը քաղաքացիների մասնակցության՝ որպես սահմանադրական սկզբունքի սահմանմանը, հակված են նաև Ս.Ն. Բրատանովսկին և Օ.Վ. Կոստկովան. «Հնարավոր է, որ պետական և հասարակական գործերի կառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավունքը հանդիսանում է ոչ այնքան սուբյեկտիվ իրավունք, որը մտնում է քաղաքական իրավունքների համակարգի մեջ, որքան ժողովրդավարական պետության և նրա քաղաքացիների միջև փոխհարաբերությունների հիմնարար սկզբունք»: Բայց միևնույն ժամանակ նրանք ընգծում են, որ այդ սկզբունքն իրագործվում է առաջին հերթին քաղաքացիների քաղաքական իրավունքների և ազատությունների իրացման միջոցով, և որ պետության գործերը կառավարելու քաղաքացիների իրավունքը հանդիսանում է ժողովրդաիշխանության սկզբունքի իրացման երաշխիք:[2]

Արդյո՞ք այն համարվում է սահմանադրական իրավունքի սկզբունք, թե՞ վերաբերում է նաև այլ կարգի իրավական կատեգորիաների:

Այլ սահմանադրական իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ անձնական իրավունքների և ազատությունների վերլուծությունը թույլ է տալիս նրան ընդգրկել այն սկզբունքների թվին, որոնց հիման վրա պետության և քաղաքացու միջև կառուցվում են փոխհարաբերություններ այս կամ այն ոլորտում: Օրինակ, այդպիսի առանձնահատկություն կարելի է նկատել նաև անձնական ազատության, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի և բարի համբավի անձեռնխմելիության, բնակարանի անձեռնմխելիության իրավունքների խորքային բովանդակության ուսումնասիրման ժամանակ, որոնք հստակեցնում են ժողովրդավարական պե-

---

[1] **Новоселов Н. И.,** Участие граждан в управлении государственными и общественными делами. М., 1985. С. 3; Струцкая И.Н. Конституционное право граждан СССР на обращение с предложениями и критическими замечаниями: автореф. Свердловск, 1989. С. 4.

[2] **Братановский С. Н., Костькова О.В.** Комментарий к Федеральному конституционному закону от 28 июня 2004 года № 5-ФКЗ «О референдуме Российской Федерации», Москва, ООО «Новая правовая культура», 2006, С. 7

տության և քաղաքացիների միջև փոխհարաբերությունների կառուցման հիմնական ասպեկտները:

Այս հանգամանքը միանգամայն հասկանալի է սահմանադրական նորմերի բնույթով, նրանց բարձրագույն իրավաբանական ուժով պայմանավորված, որն ապահովում է սահմանադրական այս նորմերի անմիջական գործողությունը հանրային հարաբերությունների ցանկացած ոլորտում՝ (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված, 3-րդ մաս) նրանց վերապահելով պետության և հասարակության կյանքում հատուկ կարգավորիչների դեր: Անխոս, սահմանադրական շատ դրույթներ այն սկզբունքներն են, որոնք ծառայում են որպես գաղափարական հիմք՝ հիմնարար բնույթ ունեցող տարբեր ճյուղային, ոլորտային կարգավորումների ստեղծման համար:

Դ. Ա. Կովաչեվը նշում է, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, ելակետային դրույթներ, որոնք արտահայտում են իրավունքի էությունը և բխում են արդարության և ազատության համընդհանուր գաղափարներից:[1] Իրավունքի սկզբունքների էության գաղափարական բաղադրիչը կարևորում է Վ. Ն. Կարտաշովը՝ նշելով, որ իրավունքի սկզբունքները որոշակի հիմնարար գաղափարներ և իդեալներ են, որոնք ձևավորվել են տեսական և պրակտիկ փորձի հիման վրա:[2] Սկզբունքներին նույնատիպ գնահատական է տալիս Մ. Ի. Բայթինը. <<Սրանք ելակետային, կողմնորոշիչ գաղափարներ, դրույթներ, սահմանումներ են, որոնք կազմում են իրավունքի ծագման, զարգացման և գործողության բարոյական և կազմակերպչական հիմքերը:[3] Ս. Ա. Մոսինը սա հաշվի առնելով նշում էր, որ իրավունքի սկզբունքները ծառայում են որպես հիմք, որի հիման վրա ձևավորվում է պետության ողջ իրավական համակարգը: Սկզբունքների առանձնահատուկ նշանակությունը կայանում է նրանում, որ դրանք ցանկացած իրավահարաբերության բոլոր մասնակիցների համար առանց բացառության ունեն կարևորության և պարտադիրության բարձր աստիճան: Դրանց ամրագրումը սահմանադրություններում ապահովում է վերջիններիս կայունությունը, փոփոխություններին դիմակայելու բարձր աստիճանը:[4]

Վերոնշյալ մոտեցումները ցույց են տալիս, որ «պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի» գաղափարը, ունի իրավունքի սկզբունքներին բնորոշ հատկանիշներ՝ հաշվի առնելով նրա կայունութ-

---

[1] **Ковачев Д. А.,** Конституционный принцип: его понятие, реальность и фиктивность // Журнал российского права. 1997. № 9. С. 71.

[2] **Карташов В. Н.,** Принципы права. Теория государства и права: учебник / под ред. В.К. Бабаева. М., 2001. С. 222–223.

[3] **Байтин М.И.,** О принципах и функциях права: новые моменты // Правоведение. 2000. № 1. С. 4.

[4] **Мосин С. А.,** Презумпции и принципы в конституционном праве. М., 2009.

յունը և համապարտադիրությունը, նրա կարգավորիչ ազդեցությունը այս ոլորտի իրավահարաբերությունների վրա:

Մյուս կողմից, «պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը» ինքնուրույն սահմանադրական սկզբունք անվանելը խնդրահարույց է: Իրավական սկզբունքն իրենից ենթադրում է համընդհանուր գաղափար, որն այս դեպքում արտացոլում է միջսուբյեկտային՝ «պետություն-քաղաքացիներ» հարաբերություններ, հետևաբար «մասնակցության իրավունքը» կարող է լինել միայն սահմանադրական սկզբունքի մի բաղադրիչ, իսկ այդ սահմանադրական սկզբունքը պետք է ունենա ավելի բարդ կառուցվածք և «մասնակցության իրավունքի» հետ մեկտեղ իր մեջ ներառի դրան համապատասխանող պետության, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև պաշտոնատար անձանց պարտավորությանը՝ ապահովել քաղաքացիների իրական ազդեցության հնարավորությունը պետական կառավարման վրա:

Պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը անհրաժեշտ է դիտարկել որպես այլ սկզբունքներից ածանցյալ սկզբունք, մասնավորապես՝ ժողովրդաիշխանությունից: Ինչպես նշում է մի համահեղինակային աշխատության մեջ, ժողովրդաիշխանությունն ինքնին ժողովրդավարական ինստիտուտ լինելով հանդերձ, կարող է լիովին համապատասխանել իր սահմանադրաիրավական նշանակությանը միայն այն դեպքում, երբ դրա ամրագրումն ու գործնական կիրառությունն ուղեկցվում է հիրավի ժողովրդավարական սկզբունքներով: Ժողովրդաիշխանության ժողովրդավարական բնույթը պետք է երաշխավորվի ոչ միայն ձևական հատկանիշներով (օրինակ՝ իրավական համապատասխան դրույթներ ամրագրելով), այլև այդ սկզբունքի համալիր իրացմանն ուղղված փաստացի, իրական ազդեցություն ունեցող միջոցների գործադրմամբ:

Շարունակելով ժողովրդաիշխանության վերլուծությունը Գ. Բ. Դանիելյանը նշում է, որ ժողովրդաիշխանության ժողովրդավարական բնույթը պետք է երաշխավորվի ոչ միայն ձևական հատկանիշներով (օրինակ՝ իրավական համապատասխան դրույթներ ամրագրելով), այլև այդ սկզբունքի համալիր իրացմանն ուղղված փաստացի, իրական ազդեցություն ունեցող միջոցների գործադրմամբ:[1]

Հետաքրքրական է Վ. Վ. Կոմարովի առաջ քաշած հետևյալ դասակարգումը: Ըստ նրա՝ ժողովրդաիշխանության սահմանադրական հիմքերում կարելի է առանձնացնել (իհարկե պայմանականության սկզբունքով, քանի որ բոլոր նորմերը փոխկապակցված են) նորմերի երեք խումբ՝

[1] Ն. Այվազյան, Վ. Այվազյան, Գ. Դանիելյան և ուրիշներ, ՀՀ սահմանադրական իրավունք, Երևան, 2016:

• համընդհանուր նորմ-սկզբունքներ, որոնք բնութագրում են պետականությունը և սահմանում են ժողովրդաիշխանության իրական նախադրյալները,

• նորմ-սկզբունքներ՝ ժողովրդաիշխանության ինստիտուտի համար հիմնարար բնույթ ունեցող սկզբունքներ,

• հատուկ նորմեր, որոնք ամրագրում են ժողովրդաիշխանության բարձրագույն ձևերի իրականացման մեխանիզմի տարրերը։

Մենք առաջարկում ենք այս դասակարգման մեջ ներառել միջազգային սկզբունքները, քանի որ սահմանադրական նորմերով ամրագրված և հայրենական օրենսդրության մեջ իր զարգացումը գտած իրավական պետության հիմքում ընկած են ոչ միայն «ներքին» նորմատիվները, այլև միջազգային հանրության կողմից ընդունված կանոնները։

Ճանաչելով պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը, որպես պետության և քաղաքացու փոխհարաբերությունների սահմանադրական սկզբունք, Ս. Ա. Կոնդրատեվը գրում է, որ «այդ սկզբունքն իրականացվում է սուբյեկտիվ քաղաքական «մասնակցության» իրավունքների օգնությամբ, ինչը թույլ է տալիս ազդել պետության և նրա մարմինների կազմակերպման և գործունեության վրա»: Վերջիններիս թվին են դասվում ընտրական իրավունքը, հանրաքվեներին մասնակցելու իրավունքը, պետական ծառայության հավասար հնարավորության իրավունքը, արդարադատությանը մասնակցելու իրավունքը և հանրագիրը։[1]

Ա. Վ. Պետրուշովը հանգամանորեն վերլուծելով այս իրավունքի իրավական բովանդակությունը՝ գալիս է այն եզրահանգմանը, որ քաղաքացիների պետության գործերի կառավարմանը մասնակցության սկզբունքը կարող է դիտվել որպես հիմնարար սկիզբ, իմպերատիվ նորմ, իրավական հիմք, կայունացնող գործոն, պահպանողական կարգավորում, իրավական դիրքորոշում (պետական կարգավորում)։[2]

Պետության գործերի կառավարմանը անձի մասնակցության սահմանադրաիրավական ամրագրման ձևավորումն ու բովանդակությունը տեղի է ունեցել և տեղի է ունենում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ներքո։ Կարևորելով հասարակության և պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը քաղաքական իրավունքների, ազատությունների և պարտականությունների մեջ՝ Բ. Ա. Ստրաշունը նշում է, որ

[1] **Кондратьев С. А.,** նույն աշխատությունը, էջ 48–49.

[2] **Петрушов А. В.,** Уголовно-правовые гарантии конституционных прав и свобод человека и гражданина, Москва, Юстицинформ 2006, С. 21.

այն ընդհանուր բնույթի իրավունք է, բայց այդ ձևով սահմանադրություններում ձևակերպվում է շատ հազվադեպ:[1]

Իսկ Դ. Ա. Կովաչեվը իրավացիորեն նշում է, որ պետության գործերի կառավարմանը քաղաքացիների մասնակցության սահմանադրական իրավունքը համալիր իրավունք է, որից բխում են մյուս բոլոր քաղաքական իրավունքները: Վերջիններս լրացնում, զարգացնում և կոնկրետացնում են հիմնարար իրավունքը և, մեր կարծիքով, միաժամանակ հանդիսանում են դրա իրականացման երաշխիքները:[2] Սրա վերաբերյալ առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդ գլուխներում:

Պետական կառավարմանը մասնակցելու քաղաքացու իրավունքը ընկալվում է որպես «իրավական նորմերի և սկզբունքների համակցություն, որը կարգավորում է որոշակի գործընթաց, որն առաջանում է քաղաքացու գործողությունների արդյունքում, բացահայտում է նրա անհատական հնարավորությունները, ուղղված է պետական կառավարման գործունեության կատարելագործմանը և իր մեջ ընդգրկում է անհատի ներգրավումը պետական կառավարման գործընթացին»:[3]

Եթե մենք պետական կառավարմանը մասնակցելու իրավունքը համարում ենք որպես քաղաքացիների առանձին սուբյեկտիվ իրավունք, ապա բնականաբար անհրաժեշտ կլիներ որոշել դրա հիմնական բաղադրիչները, այսինքն՝ հատուկ իրավազորությունները: Գիտական գրականության մեջ այս խնդրի վերաբերյալ շատ կարծիքներ կան, որոնց մեծ մասը հիմնվում է այն փաստի վրա, որ այս հիմնական իրավազորությունները իրենց էությամբ հանդիսանում են քաղաքացիների ինքնուրույն քաղաքական իրավունքներ ու ազատություններ:

Այսպիսով, այս իրավունքը չունի ինքնուրույն նշանակություն: Իրոք, եթե նույնիսկ հիպոթետիկ պատկերացնենք մի իրավիճակ, որի դեպքում քաղաքացիները զրկված լինեն իրենց բոլոր քաղաքական իրավունքներից և ազատություններից, բացառությամբ պետական կառավարմանը մասնակցելու իրավունքից, ապա այդ դեպքում այս իրավունքը կունենա հռչակագրային բնույթ և չի կարող իրացվել կառավարման հետ կապված իրավազորությունների բացակայության պատճառով:

Վերոնշյալների հիման վրա կարող ենք ձևակերպել հետևյալ եզրակացությունները.

---

[1] **Б. А. Страшун,** Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть, 4-е изд., Москва 2005, Стр.187

[2] **Д. А. Ковачев,** Конституционное право государств Европы,Москва 2005, С. 127

[3] **Широбоков С. А.** Конституционно-правовые аспекты участия граждан в управлении делами государства в Российской Федерации, Екатеринбург, 2011, С. 11.

1. Պետք է փաստել պետության կառավարմանը մասնակցելու իրավունքի որպես սահմանադրական սկզբունքի առկայության մասին։

2. Քաղաքացիների համար պետական կառավարմանը մասնակցելու իրավունքի ապահովումը որպես սահմանադրական սկզբունք կայանում է նրանում, որ այն քաղաքացիներին տալիս է մի շարք քաղաքական իրավունքներ, որոնց շնորհիվ վերջիններս կարող են ազդեցություն ունենալ պետական և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում իրականացվող պետության քաղաքականության վրա, միաժամանակ հենվելով պետության, նրա մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց վրա, ովքեր պարտավոր են ապահովել այս իրավունքների գործնական իրացումն ու կիրառումը։

3. Այս սկզբունքի էության մեջ կարելի է ընդծել երկու կարևոր հիմնական բաղադրիչներ. առաջին՝ հենց ինքը պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը և երկրորդ՝ պետության, նրա մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց պարտականությունը ապահովել այս իրավունքի իրացումը օրենքով սահմանված կարգով։

4. Պետության կառավարմանը մասնակցելու իրավունքը իրենից ներկայացնում է ոչ թե քաղաքացու առանձին սուբյեկտիվ իրավունք, այլ հանդիսանում է բոլոր քաղաքական իրավունքների հիմքը, համալիր, «կոմպլեքս» իրավունք, որի օգնությամբ քաղաքացիները ազդեցություն են ունենում պետության և հասարակության տարբեր ոլորտներում իրականացվող քաղաքական գործընթացների վրա։ Այս իրավունքն ունի համակարգաստեղծ ազդեցություն բոլոր քաղաքական իրավունքների համար, որոնք ամրագրված են ՀՀ սահմանադրությամբ և օրենսդրությամբ։

Арман Тадевосян, Сущность права на участие в управлении государства – Необходимо говорить о наличии конституционного принципа обеспечения права граждан на участие в управлении государства.В структуре этого принципа можно выделить две базовые составляющие: собственно право граждан на участие в управлении делами государстваи обязанность государства, его органов, органов местного самоуправления и должностных лиц обеспечить реализацию данного права в установленных законом формах. Право граждан на участие в управлении государства представляет собой не отдельное субъективное право гражданина, а является комплексное право, слагаемым всех политических прав,с помощью которых граждане оказывают воздействие на политические процессы в государстве и обществе в различных сферах. Это право обладает

системообразующим воздействием на всю совокупность политических прав, закрепленных в Конституции РА и в законадательстве.

Arman Tadevosyan, The essence of the right to participate in the government - It is necessary to speak about the existence of the constitutional principle of ensuring the right of citizens to participate in the government. The structure of this principle can be divided into two basic components: the right of citizens to participate in the governmentand the duty of the state, its bodies, local self-government bodies and officials to ensure the implementation of this right in the forms established by law. The right of citizens to participate in the government is not a separate subjective right of a citizen, but it is a complex right composed of all political rights through which citizens influence political processes in the state and society in various spheres. This right has a system-forming effect on the entire set of political rights enshrined in the Constitutionof the RA and in legislation.

ԲՈՒՀ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Բանալի բառեր - գիտություն-արտադրություն համագործակցություն, գիտատեխնիկական բիզնես, մտավոր սեփականության իրավունք, նորարարություն, գործընկերություն, ակադեմիական արդյունավետություն

Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո՝ ինչպես ԱՊՀ բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանի հանրապետությունում տնտեսության վերակազմավորման և բոլոր ոլորտներում բարեփոխումների նոր ժամանակաշրջան սկսվեց: Կենտրոնացված պլանային տնտեսությունից անցում կատարվեց շուկայական նոր հարաբերությունների: Ազատ շուկայական տնտեսության պայմաններում կարևոր խնդիր դարձավ մասնագիտական կրթական համակարգի համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջարկին: *Համապատասխանեցման հիմքային առաջնայնությունն է բուհ-կազմակերպություն գործընկերային հարաբերությունների զարգացումը՝ մասնակցային և համագործակցային մեխանիզմի մշակման և ուղղորդման միջոցով:*

Վերջինիս համատեքստում էական հիմնախնդիրներից է այն, որ գիտությունը և արտադրությունը «խոսում են տարբեր լեզուներով»[1]: Սա ենթադրում է, որ բուհն առավելապես կողմնորոշված է գիտելիքի փոխանցման ստանդարտացված տեսական մեթոդին, իսկ կազմակերպությունը միտված է դեպի տնտեսական շահութաբերության և արդյունավետության մեխանիզմների և գործիքների կիրակմանը:

Ժամանակակից մրցակցային միջավայրում՝ տեխնոլոգիական արագընթաց փոփոխությունները, ինտենսիվ միջազգային մրցակցությունը, արտադրանքի կենսափուլի կարճատևությունը արմատապես բարդացրեցին կազմակերպությունների հնարավոր առաջընթացի հնարավորութ-

[1] **Ա. Փոխսարյան, Լ. Շաքարյան,** Բուհական կրթության կապն աշխատաշուկայի հետ համագործակցային կրթության ինտեգրացված մոդելի մշակման անհրաժեշտությունը եվ նախադրյալները (Երևանի պետական համալսարանի օրինակով, Երևան, ԲՀՀ, 2011, էջ 8, http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/

յունները: Նոր մարտահրավերներին դիմագրավելու համար որպես ուղի ընտրվեց բուհ-կազմակերպություն համագործակցությունը՝ այն ներկայացնելով որպես ինովացիոն լուծումների աղբյուր, որը տանում է կազմակերպության տեխնոլոգիական առաջընթացին, խթանում է բարձր արտադրողականությունը, նպաստում է տնտեսական աճին[1], նոր գիտելիքի և բազմակողմանի փոխազդեցությունների ավելացմանը[2], բերում է երկարատև հեռանկարային օգուտներ[3], և տանում է գիտականացված տեխնոլոգիայի տարածմանը[4]: Ուստի համալսարան-կազմակերպություն համագործակցությունը միտված է կրթության ոլորտի արդիականության բարձրացմանը, շրջանավարտների զբաղվածության բարելավմանը և գիտելիքի առավելագույնս արդյունավետ օգտագործմանը[5]: Բուհ-կազմակերպություն գործընկերության ձևավորման գործընթացի թերևս առաջնահերթ խոչընդոտող խնդիրներից են կողմերի սպասելիքների, գործողությունների և ապագայի վերաբերյալ տեսլականի տարբերությունները[6]:

Բուհ-կազմակերպություն համագործակցության ձևավորումն ըստ Է. Սանդերսի համարվում է «Նոր տարածություն» կրթության և պրակտիկայի միջև, սակայն կրթության և արտադրության համատեղ գործակցության ապահովումը միանշանակ հեշտ գործընթաց չէ և Է. Սանդերսը այս «երկու աշխարհների» միջև առկա մշակութային տարբերությունները համարում է կողմերի համագործակցությանը խոչընդոտող գործոն[7]: Այս դեպքում անհրաժեշտ է վեր հանել կողմերի համագործակցության դրդապատճառների շրջանակը՝ նախանշելով հիմնական օգուտների և հնարավորությունների տեսլականը[8]: Նման հետազոտական մոտեցումը հնարավորություն կտա խուսափել կողմերի առաջ ծառացող մարտահրավերներից և խնդիրներից[9]: րից[9]:

---

[1] **Chedid M., Teixeira L.,** Advanced Methodologies and Technologies in Modern Education Delivery /The University-Industry Collaboration, AETID, p. 702

[2] **Van Rijn R., Van Esch P., Price R., Oonk M., and Netten M., U and I:** Insights from a University-Industry, Delft University of Technology, 2018, p .3

[3] Տե՛ս նույն տեղում, p. 13

[4] **Rahm D., Kirkland J., Bozeman B.,** University-Industry R&D Collaboration in the United States, the United Kingdom, and Japan, Springer-Science+Business Media, B.Y., 2000, p. 9

[5] Linking the worlds of work and education through Tempus, Luxembourg: Office for Official Publications of the European Communities, 2007 p. 20, http://www.herdata.org/public/202007. pdf

[6] **Chedid M., Teixeira L.,** Advanced Methodologies and Technologies in Modern Education Delivery /The University-Industry Collaboration, AETID, p. 702

[7] **Sanders E.,** Design Research at the Crossroads of Education and Practice, The Ohio State University, USA; MakeTools, LLC, USA, p.4

[8] Տե՛ս նույն տեղում, p. 14

[9] **Wallin J., and Isaksson O.,** Bridging the Gap Between University and Industry: Three Mechanisms for for Innovation Efficiency, International Journal of Innovation and Technology Management, 2014, p. 6

Գիտական գրականության և կատարված հետազոտությունների արդյունքում վեր են հանվել բազմաթիվ դասակարգումներ կողմերի շարժառիթների վերաբերյալ:

Այսպես, *Թ. Բառնեսը* համալսարանական և հետազոտական կառույցների համար որպես հիմնական շարժառիթ առաջ է քաշում՝ լրացուցիչ ֆինանսավորման հնարավորությունը, լիցենզավորման և արտոնագրման եկամուտը[1]: Ըստ *Ս. Անկռայի և Ալ Թաբայի* ֆինանսական մոտիվացիան կապված է բուհերի պետական ֆինանսավորման կրճատման հետ[2]: *Դ Էստեն և Մ. Պերկմանը ևս,* ի թիվս այս հեղինակների ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավումը համարում են բուհերի համար գլխավոր մոտիվացնող գործոն[3]: *Ըստ Ջ. Վալինի* բուհի և ուսանողի համար այս համագործակցությունը աշխատաշուկա հեշտ մուտքի և անընդհատ ուսումնական ծրագրերի վերանայման և թարմացման հնարավորություն է[4]:

Վ. Արզան, ամփոփելով համալսարանների մոտիվացիայի սահմանները առաձնացնում է վերջինիս երկու ձև՝ ***1. Ինտելկտուալ*** կապված ինֆորմացիայի փոխանակման, նոր հետազոտական գաղափարների, նոր հրապարակումների և ակադեմիական արդյունավետության բարձրացման հետ: **2. Տնտեսական**՝ նոր հետազոտությունների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավման հետ: [5]

Մյուս կողմից, հարկ է առաձնացնել նաև կազմակերպությունների շարժառիթների շրջանակը, և ինչպես ցույց է տալիս գործնական փորձը, վերջիններս այս համագործակցության համատեքստում հակված են պասիվ մասնակցության և հիմնականում աշխատանքները տարվում են փորձագիտական, տեխնիկական և ֆինանսական աջակցության ուղղությամբ: Տ. Բառնեսը նշում է, այս համագործակցությունը կազմակերպության համար հնարավորություն է կիսել գործի ռիսկն ու պատասխանատվությունը և հետևապես կազմակերպության ներսում վատագույն արդյունքի վերաբերյալ արդարացման խնդիր չի լինի[6]: Ջ. Վալինը կազմակեր-

---

[1] **Barnes T., Pashby I., Gibbons A.,** Effective University –Industry Interaction: A Multi-Case Evaluation of Collaborative R&D Projects, European Management Journal, 2002, p. 272.

[2] **Ankrah S., AL-Tabbaa O.,** Universities—Industry Collaboration: A Systematic Review, Scandinavian Journal of Management, 2015, p. 387-388.

[3] **Perkmann M., Tartari V., McKelvey M. etc.,** Academic Engagement and Commercialization: A Review of The Literature on University–Industry Relations, Research Policy, 2013, p. 427

[4] **Wallin J., and Isaksson O.,** Bridging the Gap Between University and Industry: Three Mechanisms for for Innovation Efficiency, International Journal of Innovation and Technology Management, 2014, p. 5.

[5] **Arza V.,** Channels, Benefits and Risks of Public–Private Interactions for Knowledge Transfer: Conceptual Framework Inspired by Latin America, Science and Public Policy, 37(7), 2010, p. 474

[6] **Barnes T., Pashby I, Gibbons A.,** Effective University –Industry Interaction: A Multi-Case Evaluation of Collaborative R&D Projects, European Management Journal, 2002, p. 275

պությունների համար որպես առաջնային առավելություն է համարում կայուն և վստահելի համագործակցությունը և մարդկային կապիտալի հավաքագրման հնարավորությունը[1]:

Ստացվում է, որ բուհերը կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում կստանան հետևյալ առավելությունները [2]

- կրթության ու հետազոտության համապատասխանեցում հասարակության իրական կարիքներին,
- ուսանողների ձեռնարկատիրական կարողությունների զարգացում,
- ուսանողների աշխատանքի հնարավորությունների ընդլայնում,
- կրթության որակի միջազգային ստանդարտներին համապատասխանեցում,
- համալսարանի աշխատակիցների և հետազոտողների վերապատրաստում և համալսարանական դասավանդման և ուսուցման մեթոդոլոգիայի և կառուցակարգերի կատարելագործում,
- ընկերությունների տեխնիկական ռեսուրսների և փորձի օգտագործում, որոնք սովորաբար առավել գերժամանակակից են, քան համալսարանների առկա ռեսուրսները,
- մասնագիտական և ֆինանսական աջակցություն և լրացուցիչ ե-կամուտների ներհոսք.
- հիմնարար և կիրառական հետազոտության արդյունքների փոխանցում,
- համալսարանների տարածաշրջանային և միջազգային գրավչության բարձրացում

Կազմակերպությունները բուհերի հետ համագործակցության արդյունքում կստանան հետևյալ առավելությունները՝

- ընկերության դրական իմիջի ստեղծում,
- կրթության և վերապատրաստման համապատասխանեցում՝ նորարար ուսումնական ծրագրերի զարգացման միջոցով, նոր հետազոտական և ուսումնական ծրագրեր,
- ուսանողների աշխատանքային փորձի ավելացում: Առավել մրցունակ մասնագետ/ շրջանավարտների բազայի ստեղծում,
- ընկերություններում նորարար գաղափարների ներհոսք,

[1] **Wallin J., and Isaksson O.,** Bridging the Gap Between University and Industry: Three Mechanisms for Innovation Efficiency, International Journal of Innovation and Technology Management, 2014, p. 7

[2] Linking the worlds of work and education through Tempus, Luxembourg: Office for Official Publications of the European Communities, 2007 p. 25, http://www.herdata.org /public/202007. pdf

- գերարագ զարգացող տեխնոլոգիական և գիտական փոփոխությունների մասին իրազեկվածություն. հետազոտության արդյունքների անմիջական օգտագործում և դրանք շուկայամետ արտադրանք դարձնելու հնարավորություն,
- տեխնոլոգիական մրցունակության և կատարողականի բարձրացում [1]

Ցանկացած դեպքում, երբ խոսվում է կողմերի օգուտների և համագործակցության մոտիվացիաների մասին, անհրաժեշտ է հստակ տարանջատել կողմերի վնասների և օգուտների շրջանակը: Նման մոտեցումը հնարավորություն կտա վեր հանել այն հիմնական խոչընդոտները, որոնք կարող են առաջանալ այս համագործակցության համատեքստում:

Կողմերի օգուտների և վնասների վերլուծության համար, առանձնացրել ենք, 3 հիմնական չափորոշիչներ՝ ***ինտելեկտուալ, տնտեսական և կառուցվածքային:*** *Այսպիսի մոտեցումը, հնարավորություն է տալիս առավել տեսանելի դարձնել, թե որ ուղղվածությամբ է անհրաժեշտ աշխատել, հնարավոր խոչընդոտներից խուսափելու համար:*

Այսպիսով առաձնացրել ենք ինչպես բուհի, այնպես էլ կազմակերպության համար օգուտների և վնասների հնարավոր բաղադրատարրերը: (Աղ.1, 2):

Աղյուսակ 1

Բուհերի և հետազոտական կենտրոնների
օգուտների և վնասների վերլուծություն[2]

ՀԱՄԱԼՍԱՐՆԵՐ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ		
	Օգուտներ	*Վնասներ*
Ինտելեկտուալ	1.Ակադեմիական արդյունավետություն 2.Նոր գաղափարների հոսք 3.Գործնական հմտությունների ձեռքբերում 4.Հրապարակումների հնարավորություն 5.Վերապատրաստումների հնարավորություն	1. Կարճաժամկետ և ոչ մանրակրկիտ աշխատանք 2. Կողմնակալ հրապարակումներ ի շահ պատվիրող կազմակերպության 3. Մտավոր սեփականության իրավունքի խախտում 4. Գիտությունից լավագույն մասնագետներին օտարում 5. Գործնական հմտությունների կիրառելիության

[1] **Polt W., Rammer Ch., Schartinger D., Gassler H., Schibany A.**, Benchmarking Industry-Science Relations in Europe - the Role of Framework Conditions, Science and Public Policy, 2001, p. 5

[2] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

ա լ		անհնարինություն
Տ ն տ ե ս ա ս ի կ ա ն	1. Լրացուցիչ ֆինանսավորում կազմակերպության կողմից 2.Արտադրանքի շուկայավարման հմտությունների ձեռքբերում 3. Արտոնագրման եկամուտ 4. Start-up-երի կյանքի կոչում և շահույթի ստացում 5.Զբաղվածության հնարավորություն 6.Հետազոտողների ֆինանսավորման բարձրացում	1.Պետական ֆինանսավորման կրճատում կամ դադարեցում 2. Ուսանողական աշխատուժի մատչելի օգտագործում 3.Ֆինանսական ինքնուրույնության բացակայություն
Կ ա ռ ո ւ ց վ ա ծ ք ա յ ի ն	1.Մասնագիտացված կառույցների, կենտրոնների և տեխնոպարկերի ստեղծում 2.Տեխնոլոգիական հագեցվածության բարելավում համալսարաններում 3.Ֆակուլտետային հանձնաժողովների ստեղծում և գործատուների ներգրավում ուսումնական ծրագրերի մշակման և վերափոխման գործընթացում	1.Նոր կառուցվածքների/կենտրոնների գործունեության վերսկսման խոչընդոտներ 2.Բյուրոկրատական հավելյալ ծանրաբեռնվածություն 3.Ռազմավարական և մարտավարական նպատակների և գործողությունների դիսոնանս

Աղյուսակ 2

Կազմակերպություն/ձեռնարկությունների
օգուտների և վնասների վերլուծություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ/ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ		
	Օգուտներ	*Վնասներ*
Ի ն տ ե	1. Բարձր որակավորված և ոչ ստանդարտ մտածողությամբ մասնագետների ներհոսք 2. Պատրաստի աշխատողների	1. Վերջնական արդյունքի ոչ գործնական կիրառելիության 2. Սպասված և ստացված արդյունքների միջև

Լեկտորալ	հավաքագորում 3. Լայն հետազոտական փորձա-քննության և ենթակառուցվածքների հնարավորություն 4. Նորարարությունների զարգացման հնարավորություն 5. Համատեղ հրապարակումներ 6. Մասնագիտական խորհր-դատվության անմիջական ստացում	անհամապատասխանություն 3. Արդեն իսկ վերապատ-րաստված ուսանողների արտահոսք կազմակերպությունից (կրկնակի ծախս) 4. Արտոնագրման և մտավոր սեփականության իրավունքի հետ կապված տեխնիկական խնդիրներ
Տնտեսական	1.Տնտեսական շահութաբերություն 2. Մրցակցային իմիջի բարձրացում 3. Ծախսերի խնայողություն 4.Վերապատրաստումների վրա կատարվող ծախսերի կրճատում, 5. Նոր տեխնոլոգիայի առևտրայնացում և շահույթի ավելացում 6. Էժան աշխատուժ 7. Բարձր արտադրողականություն 8. Նոր կամ բարելավված արտադրանք	1.Ռիսկայնության բարձր մակարդակ 2. Ռեսուրսների օգտագործման ոչ արդյունավետություն (մաշվածքի փոխհատուցման լրացուցիչ ծախս) 3. Վերապատրաստումների ընթացքում հավելյալ ռեսուրսների ծախս և ոչ արդյունավետություն 4.Անարդյունավետ համագործակցություն /ձախողումներ և ոչ հուսալի գործընկերներ
Կառուցվածքային	1. Տեխնոլոգիական կատարողականի բարձրացում 2. Հետազոտական ենթակառուցվածքների օգտագործման հնարավորություն 3.Աշխատանքի ռիսկի և պատասխանատվության կիսում	1. Աշխատանքային բյուրոկ-րատիա 2. Ստեղծված ենթակառուց-վածքների կառավարման համար անհրաժեշտ լրացուցիչ մենեջմենտային հմտու-թյունների բացակայություն 3. Վերահսկելիության ցածր մակարդակ 4. Դանդաղ և մանրակրկիտ աշխատանք, որը հակասում է կազմակերպության արագ գործելու մոտեցմանը

Այսպիսով՝ ամփոփելով աղյուսակում տարանջատված օգուտների և վնասների շրջանակը, ակնհայտ է, որ կողմերի համար լիովին առկա է օգուտների և ձեռքբերումների բավական լայն հնարավորություն: Մյուս կողմից, առկա վնասները մեծապես կապված են համագործակցության համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառույցների և ենթակառուցվածքների ստեղծման հետ: Եվ ակնհայտ է, որ ցանկացած նորաստեղծ կառույց կարիք ունի մենեջմենտային ճկուն կառավարման: Բուհական հաստատությունների կառավարման թերևս հայտնի խնդիրներից է բյուրոկրատական կառավարումը և հավելյալ փաստաթղթաշրջանառությունը: Այսպես՝ արդյունավետ կառավարման և համագործակցության համար համապատասխան կառուցակարգերի զարգացումը և կիրառումը կօգնի խուսափել հնարավոր խոչընդոտներից:

Հնարավոր խնդիրներից է, կողմերի սպասելիքների չիրականացումը: Համագործակցությունը կողմերի միջև ենթադրում է, որոշակի արդյունքի ստացում: Սակայն ցանկալի արդյունքը ոչ միայն չի ստացվում, կամ ստացվելու պարագայում չունի գործնական կիրառելիություն: Պատճառահետևանքային կապերի բացահայտումը ի սկզբանե պետք է կապել ուսումնական ծրագերի և դասավանդվող հմտությունների բացառապես տեսական լինելու հետ: Այլ կերպ ասած, հիմնականում բուհում պատրաստվող մասնագետը չունի գործնական հմտություններ և ցանկացած հետազոտական ծրագրում նրա ներգրավածությունը չի կարող բերել ցանկալի արդյունքի: Ուստի և՛ ֆակուլտետային հանձնաժողովների ստեղծումը, և՛ կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումը ուսումնական ծրագրերի վերանայման և վերափոխման գործընթացում կարող է դառնալ վերոնշյալ խնդրի լուծման միջոց: Աշխատաշուկայի պահանջ համարվող հմտությունների ուսուցումը, անընդհատ տեսագործնական դասընթացները, վերապատրաստումները և փորձի փոխանակումը որոշակի մեխանիզմներ են, որոնք կկանխեն կազմակերպության կողմից ներդրված ռեսուրսների և ստացած արդյունքի անհամապատասխանության ռիսկը: Ուստի բուհ-կազմակերպություն մեկ միասնական ռազմավարական հայեցակարգի և գործողությունների ծրագրերի մշակումը ու համապատասխանեցումը կողմերի շահերին, և սպասելիքներին ունի երկարատև/կարճատև փորձարկումների, վերանայման և վերափոխման կարիք:

Кристине Никогосян, Предпосылки и проблемы партнерства между университетом и организацией - Быстрые технологические изменения в современном мире требуют разработки и продвижения новых идей. Партнерство между университетом и организацией в основном направлено на улучшение возможностей трудоустройства молодежи, совмещение

практики и науки, содействие научно-технического прогресса, внедрение совместных публикаций и разработку новых инновационных идей. Выявление основных мотивов, выгод и ущерб сотрудничества сторон позволит нам преодолеть масштаб возможных препятствий в будущем.

Kristine Nikoghosyan, The Prerequisites and Problems of the University-Organization Partnership - Recent technological changes make it necessary to develop and promote new ideas. University-Organization Partnership is mainly aimed to improve the youth employment opportunities, match the practice and science, foster scientific-technology progress, implement joint publications, and develop new innovative ideas. Introducing the main motives, benefits and disadvantages of parties' partnership, will allow us to overcome possible obstacles in future.

IMPACT OF SOCIAL MEDIA ON CUSTOMER BEHAVIOR [CASE STUDY IN IRAN]

MOHAMMAD SAJJAD FARZANEGAN

Keyword - Social Media, Customer Behavior, Persian Gulf, Iran

Introduction

Demand was usually more than supply in the past, but nowadays, number and variety of products has increased due to the advancement of technology leading to a much higher supply than demand overtime; hence, brand role has become more important in customer buying decisions[1].Brand represents a set of elements which are responsible for distinguishing company, products andservices, and creates sensible and logical and associations in customers and sellers' minds. Marketersare always faced with a lot of problems for proper allocation of company's resources in order to achieve the best performance and brand management is among the key factors in determining marketing strategies of a company, and thus a significant part of company's budget has always been spent on brand creation and management[2]. Brand management process is seeking to makecustomers loyal by creating brand equity. Brand equity is a summary of all variables which affect brand,and it not only indicates brand performance in the past, but also predicts brand's future. Customers usually use brand equity as a general tool for evaluation of companies and their goods and service whenthey do not have enough information about companies. Using a strong brand, we can empowercompany's competitive advantage; hence, brand equity is significantly important for companies andacademics. For instance, promotion of brand equity level affects customer buying priorities and alsoincreases customer willingness to buy[3]. In recent years, marketing strategies have undergone dramatic changes due to the growth of the Internet and evolution of communication. Social media is among these changes which have made drasticchanges in the way people and organizations communicate. Social media allows individuals to havepersonal profiles for authentication, and thus they can communicate with

[1] **Kotler, P. T., Bowen, J. T., Baloglu, S., & Makens, J.** (2016). Marketing for Hospitality and Tourism: Pearson Education.

[2] **Ahmad, A., & Thyagaraj, K. S.** (2017). An empirical comparison of two brand personality scales: Evidence from India. Journal of Retailing and Consumer Services, 36, 86-92. Doi: http: //dx.doi.org/10.1016/j.jretconser.2017.01.006

[3] **Sharma, P., Davcik, N. S., & Pillai, K.G.** (2016). Product innovation as a mediator in the impact of R&D expenditure and brand equity on marketing performance. Journal of Business Research, 69(12), 5662-5669.

other people and brands[1]. According to one of the biggest benefits of social media compared to older media such astelevision, customers can directly interact with brand or company, so that they can obtain all updatedinformation about brands by following brand pages on social networks, and they can also share thisinformation with friends. Therefore, brand information is much faster available to customers than oldmedia; and more information is available to more audiences[2]. As mentioned, socialmedia has become an integral part of individuals' lives, and it empowers companies to send theirmessages to specific customers and have a two-way communication which plays a significant role inexpansion and intimacy of communication with customers. However, the lack of brand knowledge andproper brand management in Iran results in increasing sales of foreign brands and isolation of domesticproducts, and thus the Iranian clothing industry has failed in this way despite its potential to competewith similar foreign products. Hacoupian brand is one of the well-known brands of clothing in Iran.This paper sought to investigate and analyze customer behavior while buying Hacoupian clothing brandaccording to growing importance of social media and importance of brand equity in brand management.

1. Literature review

Brand equity

Brand equity has been one of the most accepted key elements in marketing over the past decades. Themain task of branding is to add value to product or service and discover useful strategies by building,maintaining, and using brands. Ultimately, brand equity can be a summary of all various factors whichconstitute brand in order to measure previous performance of brand and predict its future performance[3]. In addition, they explain that if customers have richer knowledge about particular brands, they can give appropriate responses to marketing mix elements. Furthermore, when brand equity iscreated, customers tend to get tangible and intangible features of brand through various informationsources. This perception intensifies concept and value of brand for customers, and thus brand equityaffects customer performance and how they buy. Therefore, expansion of brand equityhas become even more important

[1] **Kaur, P., Dhir, A., & Rajala, R.** (2016). Assessing flow experience in social networking site based brand communities. Computers in Human Behavior, 64, 217-225. doi:http://dx.doi.org/10.1016/j.chb.2016.06.045

[2] **Qualman, E**.(2013). Socialnomics: How social media transforms the way we live and do business: John Wiley & Sons.

[3] **Pike, S.** (2010).Destination Branding Case Study: Tracking Brand Equity for an Emerging Destination Between 2003 and 2007. Journal of Hospitality & Tourism Research, 34(1), 124139. doi:10.1177/1096348009349820

among various competitive elements in markets.[1]introduced four dimensions that effect on Brand equity as follows: brand awareness, perceived quality,brand associations, and brand loyalty.

- **Brand awareness**

Brand awareness is the first most effective step in building a valuable brand. It can also be introducedas brand recall and recognition level. Brand recognition refers to consumer ability to distinguishproducts when brand guidance is given to him; and brand recall means consumer ability to recall brandinformation from his memory. This is a fact that customers usually buy familiar goods; hence, brandawareness is very important and affects customer buying decisions[2].

- **Perceived quality**

Perceived quality means customer judgment about superiority of a brand. In fact, customers with highbrand awareness do not necessarily understand high quality of brand. Perceived quality forms an imageof brand and increases brand value in customer's mind. Due to the impact on customer perception ofbrand service and features, brand image is the most important factor in customer's decision making for purchase. Manager need to know that their success depends on creating a strong image of their brandsleading to customer loyalty, therefore, perceived quality is considered as one of determinants of brandequity (Lahap et al, 2016).

- **Brand association**

Brand associations play key roles in brand value management. It means a potential value of brand basedon special meanings which brand image brings in mind. According to research by, mental brandassociations are classified into three general groups: Brand characteristics, advantages, and attitudes.Brand association affects customer selection and purchase, enhances competitive advantages comparedto competitors, and is one of the determinants of brand development[3].

- **Brand loyalty**

Brand loyalty refers to level of public commitment to a particular brand. Quality of relationship betweencustomer and seller can be measured by trust, commitment and satisfaction all of which are related tocustomer loyalty. Seller's loyalty is dependent variable which is among the secondary goals in

---

[1] **Aaker, D. A.** (1992). Managing brand equity: capitalizing on the value of a brand name. Journal of Marketing, 56(2), 125-128.

[2] **Gartner, W. C., & Ruzzier, M. K.** (2011). Tourism Destination Brand Equity Dimensions. Journal of Travel Research, 50(5), 471-481. doi:10.1177/0047287510379157

[3] **Chow, H.-w., Ling, G.-J., Yen, I. y., & Hwang, K.-P.** (2016). Building brand equity through industrial tourism. Asia Pacific Management Review. doi:http://dx.doi.org/10.1016/j.apmrv. 2016.09.001

marketingstrategies. Sellers' loyalty means a set of different behavior which indicates sellers' willingness tomaintain customer relationships. On the other hand, customer loyalty means a strong commitment tocontinuous purchase of desired products. Loyal customers are more valuable than new ones becausethey are less sensitive to prices and more determined in spending, and receive service with less cost.Brand loyalty is not only one of factors which affect brand equity or something that is susceptible to it,but also the most important dimension among other brand equity dimensions.

2. Social media

Social media technology such as the Internet, social networks and mobile has essentially changed theways people communicate with each other and brands. Benefits of social networks have created a newera for companies and brands, and thus they have been forced to learn new ways of attraction andcommunication with customers. Social media has provided significant opportunities for marketers toattract customers in network society and make more intimate communication with them. According toreview of previous studies, prominent features of social media are classified into four main categoriesas follows: interaction, entertainment, trendiness, and customization[1].

- **Interaction**

Interaction in social media is a fundamental change in relationships of brands with customers. Socialinteraction is the most important stimulus to content-building by customers. Social media can helpcustomers create an environment for discussing and exchanging ideas and it has organized a meetingplace for young people to exchange social services, keep existing relationships and meet new friends.Users can interact with each other by sharing messages, commenting on them, or showing their owninterests. Social media also offers online word-of-mouth (WOM) advertising among customers.Research indicates that word-of-mouth advertising has more validity and empathy than websiteinformation for customers. Social media is an ideal tool for word-of-mouth advertising as customersproduce brand information and share with friends without any limits (Muntinga et al., 2011).

- **Entertainment**

Entertainment is resulted from game and joy on social media. Various studies have found thatentertainment is a powerful stimulus for social media

[1] **Hsu, L., & Lawrence, B.** (2016). The role of social media and brand equity during a product recall crisis: A shareholder value perspective. International Journal of Research in Marketing, 33(1), 59-77. doi:http://dx.doi.org/10.1016/j.ijresmar.2015.04.004

users. Users can escape negative emotions andproblems by sharing interesting events of their lives or even ridiculous content. Pleasure-orienting viewconsiders social media users as pleasure seekers who are looking for fun and excitement[1].

• **Trendiness**

Social media shares the latest news and topics and is the main channel for product searching Customersfrequently collect information from various sources, and thus it seems that they trust more in onlineadvertising than traditional advertising. Fashion-based information includes stimuli such as knowledge,supervision and care, pre-purchase information and inspiration[2].

• **Customization**

Customization represents the extent to which a medium can be customized to reach user preferences.Brands can become personalized and exclusive by customizing their websites, and then they can buildbrands with stronger relationship with customer and take advantage of customers' more loyalty. In theworld of social media, customization refers to target audiences whose taste is taken into account whilesharing messages. Messages are customized for two groups of audiences on social media: Purposivemessages for specific people or a small group of people; and messages for all enthusiasts[3].

Hypothesises

Two standard questionnaires[4] were used to collected data, Conceptual model of research is shown in figure 1. Research hypotheses with respect to the conceptual model are defined as follows:

Hypothesis 1: Social media has a positive and significant effect on brand equity.

Hypothesis 2: Social media has a positive and significant effect on customer buying behavior.

Hypothesis 3: Brand equity has a mediating impact on relationship between social media andcustomer buying behavior.

---

[1] **Quan-Haase, A.,& Young, A. L.(**2010). Uses and gratifications of social media: A comparison of Facebook and instant messaging. Bulletin of Science, Technology & Society, 30(5), 350-361

[2] **Naaman, M., Becker, H., & Gravano, L.** (2011). Hip and trendy: Characterizing emerging trends on Twitter. Journal of the American Society for Information Science and Technology, 62(5), 902918

[3] **Zhu, Y.-Q., & Chen, H.-G.** (2015). Social media and human need satisfaction: Implications for social media marketing. Business Horizons, 58(3), 335-345. doi:http://dx.doi.org/10.1016/j.bushor. 2015.01.006

[4] **Yoo, B., & Donthu, N.** (2001). Developing and validating a multidimensional consumer-based brand equity scale. Journal of Business Research, 52(1), 1-14.




Fig 1. Conceptual model of research

Management indicator

To examine the causal relationships and estimate the conceptual model, we used structured equation modeling (SEM). SEM has changed the nature of research in international marketing and management. It is a statistical technique for testing and estimating causal relationships using a combination of statistical data and qualitative causal assumptions (Henseler, Ringle, & Sinkovics, 2009). The use of Partial LeasSquares (PLS) is suitable and was considered the most appropriate method due to: (a) the early stage of theoretical development; (b) this conceptual model has not been tested in the literature and; (c) the conceptual model is considered to be complex. In the next two subsections we firstly examine the measurement model in order to assess indicator reliability, construct reliability, convergent validity, and discriminant validity. Secondly, we test the structural model. The software used for applying the method was PLS Smart 3.0 Software (Ringle, Wende, & Will, 2005).

Measurement model

Firstly, in order to analyze the indicator reliability, the loadings should be higher than 0.7 (Chin, 1998; Hair & Anderson, 2010; Henseler et al.,2009). All the items have loadings > 0.7, confirming that the indicator reliability is achieved. Secondly, two criteria were used to examine the construct's reliability – Cronbach's alpha (CA) and composite reliability (CR). all constructs have CR and CA > 0.7, approving construct reliability (J. Henseler et al., 2009). Thirdly, in order to assess convergent validity, the average variance extracted (AVE) shouldbe at least 0.5 to be considered sufficient and explain more than half of the variance of its indicators on average (Hair & Anderson, 2010; Henseler et al., 2009). AVE for all the constructs are above 0.5, guaranteeing convergent validity. Finally, the discriminant validity has three criteria. The first criterion is the Fornell-Larcker criterion, which demands that the root square of AVE for each latent variable should be greater than the correlation with any other latent variable (Fornell & Larcker, 1981). In Table 4, we see that these criteria are

achieved. The second criterion, the loading of each indicator is expected to be greater than all of its cross-loadings (Chin, 1998). This was also analyzed and each construct has loadings with higher values than their cross loadings (Hair & Anderson, 2010); this result is available from the author upon request. The Hetrotrait-Monotrait ratio (HTMT) table is available upon request, and all values are below the threshold of 0.9 (Jörg Henseler, Ringle, & Sarstedt, 2015). Therefore, all the measures satisfy the discriminant validity of the constructs. The assessment of the construct reliability, convergent validity and indicator reliability, produce satisfactory results, indicating that the constructs can be used to test the conceptual model.

3. Research method

The present research was applied in terms of objective, and descriptive-survey according to data collection. It was correlational in terms of relationships between variables, and cross-sectional according to time. Research design was correlational through structural equation modeling which was a multivariate correlation method. The statistical population of the study included all customers of Persian Gulf complex in Shiraz city of Iran during 3 months. Research sample for testing hypotheses included 384 subjects who were selected by multi-stage random sampling method based on amount of purchase. Four ranges were first considered for purchase, and then customers were randomly selected at each of these ranges. reliability of questionnaire was established by Cronbach's alpha (a Cronbach=0.781). Respondents' comments were also assessed based on five-point Likert scale, and point 5 was considered as the middle of range.

4. Findings and analysis of research hypotheses

Table 1 shows the instrument, standard deviation and correlation scale between constructs. It should be noted that all average values are greater than two and less than 6. Therefore, the mean values at both ends of the scale are not incompatible. In addition, all standard deviations are greater than 0.83, indicating significant variance.

Table 1: Descriptive and correlation statistics

Variable's	SD.	Mean	1	2	3
SM	0.69	3.21	1.00		
BE	0.71	3.69	0.54	1.00	
CSB	0.96	4.63	0.51	0.67	1.00

